715
716
717
82
9-76

0011

ՊԱՒԼՈՍ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԸ

ԳՈՐԾ

ԲԵՌՆԱՐԴԻՆ ԴԸ ՍԱՆ-ՊԻԵՌ

ՖՐԱՆՍԻԱՑՈՒ։

Որպէս յաւելուած փոքրիկ պատմութիւնը

«ՀՆԴԿԱԿԱՆ ԽՈՒՂ»

ԱՆՈՒՆՈՎ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՆԱԳՐԻՑ

Թարգմանեալ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

աշխատութեանով։

ՄՈՍԿՎԱ,

Գերմանացի Բարիքներհի տպարանումը։

1858.

150

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 25 Февраля 1857 года.

Цензоръ *Кайтмазовъ.*

27102-62

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

ՏԵՐՈՆ ՄԵՏԹԻՈՍԻ

ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՇՏԱՐԻՒԱՆՈՒ ՀԱՑՈՑ

ԽՈՀԱԿԱՆ

և

ԸՕՂԴԱՍԻՐ ՀՈԳՈՒՐԳԵՏԻ

ՄԵԾԱՐԱՆՔՈՎ ՆՈՒԻՐՈՒՄԷ

ՀԵՂԻՆԱԿԸ·

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ,

Այս իմ որպիսի և իցէ աշխատութիւնը նուիրելով Ձեր գեղեցիկ անուանը, պարտականութեան հարկ եմ համարում իմ վերայ հրապարակով խոստովանել այս տեղ, թէ Ձեր Հայրական քաջալերութեամբն է ածել ու հասուցանել այս գրաւոր վաստակը, որ այժմ ընծայվում Ձեր սիրելի ազգին։ Մի անսովոր, սակաւագիւտ բան է տեսանել մեր օրերումը, որ Թուրաստանումը եղած Հայերի մէջ մի հոգևոր իշխան ճանաչելով լուսաւորութեան յարդ ու պատիւը, Հայոց ազգի այժմուս բարոյական և իմացական պիտոյքը, բանագէտ մարդերի հրաւէր մատուցանէր ջանք գործ դնելու, հնար հնարելու որ և իցէ չափով օգնել Հայազգի զաւակների դաստիարակութեանը պիտանի պիտանի գրուածներով և ընտիր ընտիր եւրոպական գործերի թարգմանութեամբ դէպ ի մեր Հայկական բարբառը։ Այսպիսի, լուսաւորութեան սիրող հոգևոր իշխան, այսպիսի խոհական առաջնորդ ազգի Ձեզ ճանաչելով գիտենք հեռուից ու մօտուց։ Քանի՛ և քանի՛ անգամ թէ յայտնապէս և թէ առանձնապէս յանձնարարութիւն է եղել ինձ Ձեր Սրբազնութեան կողմից, եւրոպական ընտիր աղբիւրներից կրթութեան նիւթեր քաղել և պիտանի կացուցանել մեր ազգի զաւակներին, այնպիսի ոճով ու ձևով որ տանելի են մեր ժամանակին. քանի՛ անգամ լսած եմ ես Ձեր պատուական բերանից, թէ պատրաստ էր Ձեր Սրբազնութիւնը իւր վերջին դահեկանը ծղել ազգի դանձանակի մէջ, նորա աւեր ու ամայի անդաստանը շինելու և բարեզարդելու համար։ Ուրախ եմ, Սրբազան Հայր, որ կարող եմ անարատ խղճմտանքով այսպէս բացախօսել ազգի առաջև։ Ձեր գործը այսօր ջատագով է Ձեզ և վկայ իմ ասութեանը։ Բեռնարդէն դը Սան-Պիեռ Ֆրանսիացի հեղինակի ականաւոր վաստակը մի առաւել պատշաճաւոր հայկական զգեստով երևումէ այսօր հանդէսի մէջ Ձեր ազգասէր հոգալարձութեամբ։ Թող Ձեր ազգի հասկացող որդիքը երախտագէտ սրտով ընդունեն այս իմացական պարգևը և վայելեն արժանապէս. այս է ահա իղձ ու փափաքը

ՁԵՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

պատուող ու մեծարող որդու

Ստեփանոսի Նալբանդեանց

--- Dieser kleinen Schöpfung verdankt Bernardin de St-Pierre den schönsten Theil seines literarischen Ruhms. Paul und Virginie, ein Werk, wie es kaum eine andre Literatur aufzuweisen hat, ist das einfache Naturbild einer Insel mitten im tropischen Meer, wo, bald von der Milde des Himmels beschirmt, bald von dem mächtigen Kampf der Elemente bedroht, zwei anmuthsvolle Gestalten in der wilden Pflanzenfülle des Waldes sich malerisch wie von einem blüthenreichen Teppich abheben. Hier und in der indischen Bananen-Hütte sind der Anblick des Meeres, die Gruppirung der Wolken, das Rauschen der Lüfte in den Bambusgebüschen, das Wogen der hohen Palmengipfel mit unnachahmlicher Wahrheit geschildert. — Bernardin de St.-Pierre's Musterwerk «Paul und Virginie» hat mich in die Zone begleitet, der es seine Entstehnng verdankt. Viele Jahre lang ist es von mir und meinem theuren Begleiter und Freund Bonpland gelesen worden. Dort nun (man verzeihe den Anruf an das eigene Gefühl) im stillen Glanze des südlichen Himmels, oder, wenn in der Regenzeit am Strande des Orinoko, der Blitz krachend den Wald erleuchtete, wurden wir beide von der bewundernswürdigen Wahrheit durchdrungen, mit der in der kleinen Schrift die mächtige Tropennatur in ihrer ganzen Eigenthümlichkeit dargestellt ist.

A. v. Humboldt.

«Kosmos» B. II. pag. 67 ff.

---Այս փոքրիկ գրաւոր վաստակն է, որով Բեռնարդէն դը Սան-Պիեռը ստացել է իւր մատենագրական պարծանքի առաւել պատուական բաժինը։ «Պաւլոս և Վիրգինիա», մի այնպիսի գործ, որի նմանը դժուար թէ ունի ցուցանելու մի այլ գպրութիւն քան թէ ֆրանսիականը, պատկերացնումէ մեր առաջև պարզ, անսեթևեթ նկարագիրը մի կղզու որ գրած է արևադարձեան ծովի մէջ, ուր երկու քաղցր ու ախորժելի կերպարանքներ երբեմն հովանաւորութիւն գտանելով բարեխառն երկնակամարի տակ, երբեմն մօտահաս վտանգի մէջ լինելով տարերքի ահաւոր պատերազմի երեսից, անտառի վայրենարոյս աճեցականների լեռութեան մէջ, կենդանագրարար ներկայանումեն մեր առաջև, ասես թէ մի ծաղկալից օթոցի (խալիչայի) վերայ։ Այս գրուածի և «Հնդկական բանանազարդ խուղի» մէջ, ծովի տեսութիւնը, ամպերի դասակարգութիւնը, օդերի շառաչիւնը բամբուսեան մացառների մէջ, բարձրահասակ արմաւենիքի ծայրերի ալիքանման տարուբերվելը նկարագրած են մի աննմանելի ճշմարտութեամբ։—Բեռնարդէն դը Սան-Պիեռի ճարտարապետական գործը «Պաւլոս և Վիրգինիա» ուղեկից էր ինձ դէպ ի այն գաւառը, ուր այդ գործը յառաջացել է։ Շատ տարիներ դորան կարդացած եմ ես և իմ քաղցր ընկերակից ու բարեկամ Բօնպլանը։ Այն տեղ (թող ներէ մեզ ընթերցողը, եթէ մեք վկայ ենք բերում մեր յատուկ սրտի խոստովանութիւնը), հարաւային երկնակամարի հանդարտ փայլողութեան տակ, կամ թէ երբ որ անձրևի ժամանակին, Օրինոկոյի գետափի վերայ, կայծակը ճայթելով լուսաւորումէր անտառը, մեք երկուքս մեր սրտի խորքումը խելամուտ էինք լինում այն զարմանալի ճշմարտութեանը, որով այս փոքրիկ գրքի մէջ արևադարձեան աշխարհների հոյակապ բնութիւնը պատկերացրած է իւր բոլոր առանձին տեսարաններով։

Ալէքսանդր Ֆոն Հումբոլդ.

«Կոսմոս». Հատ. 2, էջ 67.

Դ՝ ԵԼԲԱՆԵՍ ԳՐԱՆՍԻԱՑՈՒ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՒՂԱՐԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԵՌՆԱՐԴԻՆ ԴԸ ՍԱՆ-ՊԻԵՌԻ ՎԵՐԱՑ։

«Պաւլոս և Վիրգինիա» գրուածի հեղինակը իւր բոլոր գաղափարները, իւր բոլոր զգացողութիւնքը քաղել է բնութեան փառահեղ պատկերից, որ նորա շողշողուն միանգամայն և քաղցր երևակայութիւնը սիրումէր կերպարանել իւր աչքի առաջև։ Նա միշտ գտանումէր բնութեան մէջ նոր նոր մտածելի նիւթեր իւր հոգու համար, նոր նոր վայելչութիւններ, որովք սնանումէր նորա հոգին և սիրտը։

Երկու մատենագիրք նորանից յառաջ, Բիւֆոն (*) և Ռուսօ (**), քանքարաւոր մարդեր շատ տարբեր բնաւորութեանով, թէպէտ առաջին

(*) Ժորժ Լուի լը Քլերք կոմս դը Բիւֆոն. այս հռչակաւոր բնագիտնը, ծնած 1707 թուականին, Բուրգունդիայի Մոնբարդ քաղաքումը, սկզբից շատ հակամիտութիւն ունէր դէպ ի երկրաչափութեան ուսումը։ ապա 19 տարեկան գնաց նա Խուսէա, յետոյ Ենգլէա, վերջումը ուրն ու տեղ հաստատեց Փարիզի մէջ, ըստ որում նշանաւոր զոյգի տէր մարդ էր, և կամենումէր այս տեղ իւր անձը բոլորովին նուիրել բնապատում գիտութեանը։ 8ատն տարի հաւաքելով այս գիտութեան պատկանելի նիւթերը, և նորա բաղդը այնպէս բերելով, որ օգնական գտանվեցաւ նորան հռչակաւոր բնագիտնն Օբանթոնը, հրատարակեց նա իւր բնապատում գրուածների առաջին հատորը և գրանով հիացք բերեց բոլոր Եւրոպայի վերայ, և նորա համբաւը այնպէս տարածվեցաւ, ինչ քան որ մի գիտնական մարդու համբաւ երբ և իցէ տարածված էր։ Բիւֆոնի գրուածովը զարթեցաւ մի ընդհանուր սէր դէպ ի բնապատում ուսումը, որին այնուհետև բոլոր Իշխանաւորքը սկսեցին յաջողութիւն և նպաստաւորութիւն տալ։ Բիւֆոնը մեռաւ որպէս Փարիզի գիտնական Ակադեմիայի գանձապետ 1788-ին։ Նորա երևելի գրուածքը տպած են շատ անգամ 35 հրատարակ և 52 երկոտասանանդամ հատորներով։

(**) Ժան Ժակ Ռուսօ, ծնած Ժենեվումը 1712 թուական. մի ժամագործի որդի։ Սա մի կրակոտ խառնուածքի և անշեղելի հաստատամիտ բնաւորութեան տէր լինելով, չունէր ոչինչ հակամիտութիւն դէպ ի իւր հօր արուեստը, և 16 տարեկան հասակում

կարգի պատկանաւոր հեղինակներ, միայն էին եղած, որ խօսել են բնութեան վերայ որպէս մարդիկ, որ իւրեանց ուսումնասիրութիւնը նուիրել էին բնութեանը, ոչ թէ այնպէս, որպէս մարդիկ պարապումն ամենայն բանի, որովհետև սովորութիւն կամ հարկ կար տեղեակ լինել նոցա, այլ մի անյաղթելի ձգտողութեանով դէպ ի բնագիտութիւն։ Բիւֆֆոնի քանքարը շողշողումէ օգնական ունենլով իւրեան արուեստի զարմանալի և գիտնական ուսումնասիրութիւնը. նորա հոգին լցված է երկնքի և երկրի մեծապայծառ վայելչութեանովը։ Նորա շատ կենդանի և գիտնական նկարագրութիւնը, ասես թէ գլորվելով աճումէ և մեծանումէ նորա գրչի տակ, որ չէր դադարում, բայց միայն շունչը սպառվելով և հեալով։ Միւսը, Ռուսօն, աւելի պարզ է, և ասես թէ արհամարհումէ արուեստը, որ այնքան յառաջ է տարել Բիւֆֆոնը. բայց նորա մտածութիւնը յանկարծ ըմբռնումէ մեզ, զարմացնումէ մեզ, կալանաւորումէ մեզ և փայլեցնումէ մեր աչքի առաջև մի լուսի ճառագայթներ, որ անյայտ էր մեզ։ Պատճառ, նա խօսելով բնութեան վերայ, մի և նոյն միջոցին ուսուցանումէ մեզ մարդու պատմութիւնը, կարճ ասեմ, մարդկեղէն սրտի, ընկերական յարակցութեանների և այն

հրաժարվեցաւ իւր հայրենական անից և դնաց Սավոյիա։ Շատ տարակուսելի դժուարութեան հանանելով, թողից նա իւր բնիքորմատեան հաւատը և ընդունից կաթոլիկութիւն. բայց Տուրին քաղաքումը չկարողացաւ առաւել արժանաւոր պաշտօն գտանել քան թէ մի հասարակ ապասաւորի։ Սորանից յետոյ, որպէս ուղեցոյց առաջնորդից իւր պաշտպան Վարենս անունով ազնիվը դէպ ի Փարիզ և ապա յանձն առաւ մի պաշտօն Վենեսիկի մէջ եղած ֆրանսական դեսպանի մօտ, բայց և այս տեղից շուտով վերադարձաւ կրկին դէպ ի Փարիզ, ուր չքաւորութեամբ ապրումէր երաժշտութենից. յետոյ 1753 թուակ. դարձեալ լինելով Դենիֆումը, ընդունից Բնիքորմատականութիւն։ Այս միջոցին սկսել էին ահա բազմագիմի տառապանք և անախորժութիւնք նորա մատենագրական գրուածների պատճառով. վատթար հոգեորների դարանագործութիւնքը և ուսումնականների նախանձաւորութիւնը հալածումէին նորան ամենայն կողմից։ Ենգլիայի մէջ անցամ, ուր գնացած էր 1766 թուակ. չկարողացաւ նա մնալ։ Իւր կեանքի վերջին տարումը միայն վայելից նա մի քանի ուրախ ամաններ, մի ազարակում ոչ հեռի Փարիզից. բայց նա մեռաւ ահա 1776 թ. Վոլտերից մի փոքր յետոյ։ Դարձիք կայ, որպէս թէ նա մեռած է անձնասպանութեամբ, բայց սուտ գրած չէ այդ կարծիքը։ 1769 թուակ. ամուսնացաւ Թերեզիա Լըվասես հնոց հետ, թէպէտ սորա և Ռուսոյի մտածութեան կերպը ամենեին հակառակ էին միմեանց. բայց այդ զուգաւորութիւնը եղած էր որպէս չնորհակալութեան հարկ։ Օտարոտի բան է, որ մի մարդ, որով Ֆրանսիան և Գերմանիա պատճառունէին պարծենալու, որի գրուածքը ամենայն ազգերի կրթեալ դասակարգերի մէջ գտած էին ջերմեռանդ գովասանողներ, այնու ամենայնիւ արտաքսված, վատահամ-

բաղմօրինակ կարիքների խառնակութեան պատմութիւնը, որ այնքան տառապանքների, այնքան արտասուքների աղբիւր էին։ Նորա ճարտարախօսութիւնը չէ համոզարանութիւն. այդ խօսքը շատ թոյլ էր. Նորա ճարտարախօսութիւնը է մի հրամայողական պատուէր թողուլ սուտը, խարէականը և հետևել ճշմարտին։ Ռուսօն լինելով մի անչափ զօրաւոր հոգի, փակումէ մեզ չափի ու սահմանի տակ. լինելով մի շատ քնքուշ սիրտ, փոխաբերումէ մեր մէջ իւր զգացողութիւնը և շինումէ նորանց մեր սեփականը։ Այս է ահա պատճառը, որ Ռուսօն յառաջացուցել է այնքան օգտակար յեղափոխութիւնք Ֆրանսիացոց բարքերի մէջ, որ նա ուսուցել է նաև շատ մեծատուն տիկիններին թէ ինչ ասել էր մայր լինել, որ նա ուսուցել է մեզ խանդակաթ սիրով սիրել երեխայքը, նոցա առաջնորդել կեանքի այնքան դժուար ճանապարհի վերայ, դաստիարակել այնպիսի մարդիկ, որ խելամուտ էին իւրեանց պարտականութեանը և հասկանումէին ընկերութեան վախճանը. վեսմակա՞ն ուսմունք, որ իմաստասիրութիւնը ունելով իւր օգնական քանքարաւոր մարդերի խորամուխ հանճարը, կարող էր միայն գլուխ բերել։

բաւված, ցաւակցութիւն է գտել միայն։ Բայց սորա պատճառը պիտոյ է որոնել Ռուսօյի անձնական բնաւորութեան մէջ. Ռուսօն շատ անգամ խաբված, շատ անգամ դարհուրելի փոքձերով խրատված, իւր պզտիք ծանրարարութեան ժամերի մէջ լինումէր խաւարամիտ թշնամի մարդկութեան։ Նորա գրուածքը, որոնց մէջ խօսումէր միշտ մի խորին վկայութիւն սրտի, որոնց մէջ թագաւորումէր միշտ մի ազնիւ, զմայլեցուցիչ ոճ, ամենայն տեղ գտած են հաւանութիւն։ «Նոր Հելոյիզէն,» մի ճարտարապետաբար սկսած ու աւարտած բոլոր. «Էմիլը»։ այսինքն դաստիարակութեան կարգ, որ այնքան ձեռնտու է եղած դաստիարակութիւնը ուղղելու. «Խոստովանութիւնքը իւր մասին յատկապէս». այսինքն է իւր գլխի եկած բաների և իւր բնաւորութեան ազատամիտ նկարագրութիւնը, ընթերցողների առաւել շատերի համար մեծապէս գրաւիչն։ Մի քանի ճառերով երաժշտութեան վերայ, Ռուսօն որ իւր շքաւորութեան միջոցին ապրումէր երաժշտական խաղեր օրինակելով, զայրացրեց իւր վերայ բոլոր երաժիշտների բազմութիւնը, որովհետև ասումէր թէ Ֆրանսիացիք տեղեակ չեն ճշմարիտ երաժշտութեանը։ Բայց առաւել ցաւ և ահաճութիւն պատրաստեցին նորան իւր ճառերը Քաղաքական դաշնաւորութեան (Contrat social) և մարդերի մէջ եղած անհաւասարութեան վերայ (Inégalité entre les hommes) թէպէտ այս գիրքը գրած յեսոյ Ֆրանսիական Բնվոլիցիայի դաւանութիւնը, որ և յառաջաց ամենեին անձանօթ և անընթերց մնացած, այնուհետև պաշտելի դարձաւ մի նոր աւետարանի պէս։ Նոքա Ռուսօյի յիշատակը ամենայն կարելի կերպով մեծարվեցան. Նորա այրին սաստկաւ արքունի թոշակ և 1799 թուականի. Նորա հողեղէն նշխարները տեղափոխվեցան Փարիզումը եղած Պանթէոն անունով պատուատաճարի մէջ։

Երկու այսպէս լնաւորված քանքարաւոր մարդերից յետոյ մի թէ կարելի էր դեռ ևս ականաւոր անուն ստանալ. այս մասին ահա պատրաստ է պատասխան տալ մեզ շատահանճար, սիրտ շարժող Բեռնարդէն դը Սան-Պիեռը, նորա պատուական նկարագրութիւնքը որ գունաւորված են այնքան զմայլեցուցիչ վայելչութիւնով և ճշմարտութիւնով։ Հոգիազգեաց մարդը կարող է միշտ այն տեղ, ուր մի հասարակ մարդ չէ տեսանում ոչինչ, հրաշագործել վսեմական ստեղծուածներ։ Արդարև, Պաւլոս և Վիրգինիա գրուածի հեղինակը իմացել է Բիւֆոնից և Ռուսոյից յետոյ ստանալ իւր համար մի այնքան ևս փառաւոր, ինչքան անմահ պարծանք. պատճառ, հոգիազգեաց մարդուն սեփական է մի նոր ճանապարհ բանալ իւր համար և գործ կատարել ոչ թէ լրացուցանելով, որ միշտ կարելի է, այլ բաղմապատկելով այն ճշմարտութիւնների գումարը, որ էին միշտ մի բարձր բարոյական դպրոց, մի վերին դաստիարակութիւն մարդկային ազգի համար։

Ինչութեան խորամուխ և իմաստասիրական ուսումնասիրութիւնը է այն հաստարանը, որ կրում է իւր վերայ Բեռնարդէն դը Սան-Պիեռի բոլոր գրուածքը. սոցա մէջ առաւել հասարակվածը, այն որին տեղեակ էր ամենայն մարդ աշխարհիս վերայ, առանց հակառակութեան, է Պաւլոս և Վիրգինիան, մի զարմանալի և սիրտ շարժող գրուած։ Ժամանակը չէ փոքրացրել և չէ փոքրացնելու երբէք նորա արժանաւորութիւնը. ասես թէ մի վարագոյր վերարկում է այս աստուածեղէն ստեղծուածը, որ պիտոյ է այս աշխարհի բոլոր գալոց ազգերին տար առաւել մաքուր վայելչներ, առաւել քաղցր և սիրելի առաքինութիւններ. մի լուսակամար տարածվում է այս պատուական գրքի վերայ, որ մինչև այսօր մնացել է մի հատ իւր տեսակի մէջ։ Ո՛վ Բեռնարդէն, եթէ ոչինչ անկարելի չլիներ մարդկային կարողութեանը, ապա ասելու էի ես, թէ դու քո Պաւլոս և Վիրգինիա գործովը գրել ես մի այնպիսի սահմանաչափ, որի վերայից անցանել անկարելի է, միայն թէ իմ գովասանութիւնքը չխռովէին քո համեստութիւնը և խաղաղութիւնը գերեզմանի մէջ։

Մի գրքի արժանաւորութիւն կատարելապէս հաստատվում է այն տևողական յառաջադիմութիւնով որ գտել է նա. այս ճշմարտութեանը

վկայ է Պաւլոս և Վիրգինիա գրուածը, մի գործ, որ փոխանակ մաշվելու և հնանալու, ասես թէ ամենայն օր ցուցանումէ նոր նոր զմայլեցուցիչ վայելչութիւնք և աղդումէ մտածողների մէջ նոր նոր խորհրդածութիւնք, բացումէ մատենագրներին նորանոր աղբիւրներ ուսումնասիրութեան, բոլոր ընթերցողների մէջ յառաջացնումէ նուրբ և քաղցր զգացողութիւնք, որ մի հեղանիւթի պէս փոխագրվումն արիւնի մէջ, նախ և յառաջ բնակումն ընտանեկան կեցութեան մէջ, ապա տարածվումն և ընկերական յարակցութիւնների մէջ։ Եւ ամենայն դալոց ազգ, թէև դեռ ևս չէր ծանօթացած դորա հետ, այնու ամենայնիւ ժառանգ է այդ սիրելի և քաղցր, ծանր, այո տեղ տեղ և խորին փիլիսոփայութեան, այդ գրքին որ անօրինակ է և մինչև այժմ չունի իւր հաւասարը։

Ամենայն ժամանակ, հոգիաղդեաց մարդը հրամայող է մարդերի ուշադրութեանը։ Պաւլոս և Վիրգինիա գրուածը երևեցաւ այն ժամանակի միջոցում (1788-ին), երբ, ինչպէս ասումէ մի ականաւոր հեղինակ, ապագայքը յղացած էին անցած ու դնացած օրերի սերմերովը։ Արդկային ազգը բռնակալութեան ցեխերի մէջ կաշկանդված դեռ ևս, աշխատումէր ահա իւր անձը ազատել դորանից, և մի յանդուգն վրստահութեանով որ երևումէր յանկարծահաս, ամենևին նոր և անպատրաստ իսկ, պիտոյ է շուտով բաց քերէր իւրեանից այն կեղտերը. բայց այդ ջանահնարութիւնը չէր տիրապէս մի այլ բան, եթէ ոչ, նախանձամակների գործակատարութիւնը, երկար ու ձիգ եկած ու դնացած դարերի պտուղը և արդիւնքը։ Ուրեմն, խօսենք այսպէս, այն մեծ բարոյական սասանութեան օրամտին և պահուն դուրս երևեցաւ Բեռնարդէնի գրուածը։ Նախ և յառաջ զարմանումէ մարդու միտքը, թէ հասարակութիւնը ամենևին պատրաստ լինելով թոյլ տալ, որ մի նոր արիւն, մի վերածնուցիչ արիւն շրջանակութիւն գործէր (պտոյտ գայ) նորա երակների մէջ, իսկոյն շնորհել է այդ գրքին մի այնպիսի զարմանք, որ այն աղատակամ հոգեշարժութեամբը, որ գիտէ ներդործել հոգիաղդեաց մարդու գործը, մատենալով սորան և նորան մեծանումէ, մի այնպիսի հաղորդականութիւն, ինչպէս տեսանումենք թէատրոնի մէջ, երբ մի կողմից յառաջանալով զմայլանք, յետոյ տարածվումէ և դառնումէ ընդհանուր։ Ահա, ինչպէս երևումէ մեզ, այս իրողութեան մէջ է

ամենագեղեցիկ գովասանութիւնը Բեռնարդէնի կախարդիչ ճարտարագործութեան վերայ։

Եւ արդարև, երբ որ ճշմարտութեան ջահը դիպուածով լուսափայլումէ մի աշխարհի մէջ, որ դեռ ևս պատած էր խաւարով, այնուհետև դա ըմբռնվելով, կապվելով իսկոյն, չունի այլևս ժամանակ սովորական բանի համար, ոչինչ ժամանակ ոչինչ բանի համար. ի վերայ այդը ամենայնի Պաւլոսը և Վիրգինիան գրաւեց նորա ուշադրութիւնը. սորա պատճառը այն է, որ այդ գիրքը, որին հեղինակը տուել էր այնպիսի պարզ և քաղցր անուն, այսինքն գիրք տուաքածական, է յատկապէս մի խոր ուսումնասիրութեան գործ, որի տպաւորութիւնքը սկսումէ ժամանակը իրագործել, այն տպաւորութիւնքը, որ հեղինակը, իւր երևակայութեամբը յառաջ վարվելով, ծնուցել է իւր մէջ. ևս կամենումէ ասել մի քաղաքագործութիւն (ցիվիլիզացիա) որ չէ հեռանում ընութեան կարգից, որ է աղբիւր ամենայն լաւութեան, աղբիւր ամենայն մեծ, գեղեցիկ, վերհամբարձ, քաղցր և մեղմ բանի, որ և առաքելով մարդու բարք ու վարքը, կարողանումէ երբեմն փականք դնել ընդդէմ ամենայն չափազանցութեան։

Այդ գիրքը սահմանված լինելով գնալու և անցանելու դարերի միջից, ի հարկէ փորումէ և կտրումէ իւր ճանապարհը. քանի՛ քանի հնտքեր թողել է արդէն Պաւլոս և Վիրգինիա գրուածը։

Եթէ մի խառնակված ժողովրդի մէջ (ինչպէս Ֆրանսիացիք էին Բեվոլիւցիայի միջոցին) այդ գիրքը կարդացվումէր օրէ օր աւելի մեծ փափագով, ինչպէս պիտոյ է կարդացվէր, երբ որ հասարակութիւնը վերստին ստացել էր իւր հաւասարակշռութիւնը։ Այն ժամանակը Բեռնարդէնի մտածութիւնը պիտոյ է հասկացվէր ամենեին կատարելապէս. և արդարև նոր ժամանակի հասարակութեան մէջ, արմատացել են ինչքան խոր սիրազգացութիւնք, ինչքան ներքին երջանկութիւն, ինչքան ընտանեկան կապեր։ Քանի՛ անգամ գորովասիրտ մայրը զգացել է իւր մայրական սրտի խաղալը, լսելով իւր մանուկի թոթովանքը, տեսանելով նորա կերպարանվելը, մեծանալը իւր աչքի առաջև, քննելով և միտ դնելով նորա բոլոր շարժողութիւններին։ Քանի՛ քանի՛ քաղցրութիւններով զարդարած է ամենայն օր այդպիսի մոր համար։ Ամենայն բան անակնկալ ուրախութիւն է նորա սրտի համար. նորան

զարմացնումէ ամենայն բան երեխայի մէջ, որին սնուցանումէր նա, այլև որ նա տեսանումէր իւր մանուկի օր ըստ օրէ աճելը. որպէս և մանուկը զարմացած էր ամենայն վայրկեան, ամենայն բոպէ ամենայն բանի վերայ, որ լսումէ և տեսանումէ նա. Ցիրաւի, մանկական հասակի համար ամենայն ինչ մի անսովոր բան է, և հողմը որ փչումէ սաստկապէս, և հողմը որ լենելով աւելի հանդարտ, թեթեւապէս շարժումէ ծառերի ճիւղերը. արևը որ թեթացնումէ նորա երեսի դոյնը, այո, ամենայն բան զարմացք, անակնկնելի հանդիպումն, ուրախութիւն է մանկութեան համար, և բոզբոջը որ ծլումէ հողի տակից և ամպը որ արձակվումէ երկնքի տարածութիւնների մէջ։

Լեռնարդէն դը Սան-Պիեռը շատ աղդոդապէս ձեռնտու է դտանվել հասկացնելու մեզ, թէ ի՞նչքան յաճախ անփոյթ էինք առնում մեք այն երջանկութիւնը, որ մեր ձեռքի տակ է, այն երջանկութիւնը, որ մեր աչքի առաջին է, որ մօտ է մեզ. ես կամենումէ խօսել այս տեղ ընտանեկան երջանկութեան վերայ։ Ոչ թէ կամենումէ Բեռնարդէնը, որ մեք միշտ փակված կենայինք մեր պատերի մէջ. բարեխառն չափով կենակցութիւնը միմեանց հետ, ոչ թէ վնասակար չէ, այլ դուցէ թէ հարկաւոր ևս է. մի զուարթ խօսակցութիւն դուրս է բղխեցնում յաջողակ գաղափարներ, նա շատ անգամ դուրս է քարշում մեր միջից այն կայծը որ միշտ ծածկած մնալու էր մեր ներսումը։ Բայց մի սիրելի և զդացող տանտիկին, մի խոհական տանուտէր սիրումն մի օր հիւր գնացած, միւս օրը մնալ իւրեանց տանը. և ապա նոքա, որ գիտեն մտածել իւրեանց կեանքի վերայ, մի՛ թէ պէտք չէ՞ր նոցա, մի քանի ուրախութիւնք վայելելուց յետոյ, մի փոքր հանգիստ առնուլ, վաղուեան օրը գործ դնել նոցա վերայ մտածելու, խորհրդածութիւն գործելու համար։ Իւր յատուկ օթևանի անկիւնը միայն յարմարաւոր է սրտի և հոգու քաղցր զեղմունքի (բղխուածների) համար։

Պատանի ամուսինը որ հանել է վերայից հանդիսի փառահեղ զարդարանքները, որ հագնէ աւելի հասարակ զգեստներ տան մէջ, թէպէտ եղէ թէ չէին դոքա պակաս շնորհալի, միտքը դարձուցանումէ իւր մէջ, տեսանելով որ իւր սնուցած մանուկը շնորհալի կերպով խաղումէր մի խոտաւէտ, քաղցր և քնքուշ հողի վերայ. ո՞վ, ի՞նչքան երանելի մտածութիւնք գալիս էին այն ժամանակը նորա բոլոր կենդանութեան վե-

բայ. Նա կարող է այն գեռ ևս ժպտել անցած երեկոյի ուրախութեան-ների վերայ, բայց դոցա գաղափարը մի բոպէի մէջ թուլանումէ, հանդի-պելով այն սիրալից զգայութիւններին որոնց բնութեան տեսարանը տալիս է մի այնպիսի զմայլեցուցիչ հեշտութիւն, որ ոչ թէ չէ կարող մաշվիլ և հնանալ, այլ օրէ օր ամրանումէ և հաստատվումէ։

Նոր ժամանակի քաղաքագործութիւնը արաղընթաց յառաջ վա-զելով արել է զարտուղութիւնք (ճանապարհից դուրս է եկել), և փիլիսոփայութեան դործն է մատնացոյց առնել (մատով ցոյց տալ) այդ զարտուղութիւնքը։ Գործ դրած հնարները, անտարակոյս, շատ զանազան էին. յաջողութիւնը չէ պակուսի ամենայն ջանահնարու-թիւն. ոչ. որովհետև ջանահնարութիւնքը շատ կամ սակաւ էին մը-տածութեան և փորձողութեան պտուղներ։ Նա որ հանումէ ճշմար-տութեան աղբիւրից, նորա բաղդը ունէր միշտ և առաւել յաջողուածք. պատճառ, մարդկային ընկերութիւնների վերանորոգութիւնը ծանրա-քայլ է, և եթէ գործը շուտով մոռացվումէ, նորա ազդեցութիւնը չէ, բայց միայն անցաւոր, և խորհուրդը մնումէ անկատար։

Պաւլոս և Վիրգինիայի հեղինակը լինելով մտախոհ մարդ, իցէ թէ այն պատճառով տիրապէս, որ նորա կեանքը եղած է վտանգախնդիր, ժողովել էր իւր մէջ, գրիչ ձեռք չառած գեռ ևս, անհամար գա-ղափարներ բարոյականութեան, բարք ու վարքերի, մարդկային ընկե-րութեան մասին։ Այսպէս, նորա գրուածքը առ հասարակ, բայց Պաւ-լոս և Վիրգինիան յատկապէս են նորա մտածութեան բացարձակ ճա-ռագայթքը։ Այս տեղ է ահա, որ ամիրոիլ է նա իւր առաւել պատ-ուական զգացողութիւնքը, իւր առաւել քաղցր յիշատակութիւնքը. նորա բոլոր հոգին տարածվել է այս զարմանալի թերթերի վերայ, որ այս տեղ, տպաւորված էին մի աստուածեղէն քաղցրութեամբ, այն տեղ, մի խորին և ծանր ճարտարախօսութեամբ, առանց խափան լինել-լու մեղմութեանը, քնքշութեանը և հոգեշարժութեանը։

Պաւլոս և Վիրգինիան, գործ կատարեալ, Բեռնարդէն դը Սան-Պիեռի գրուածների մէջ փայլումէ որպէս մի գոհար, որի երեսքը ամ-ենայն կողմից արձակումէն կրակներ, երբէք չհեռանալով պատշաճիցը։ Բոլոր երանգները շարած են նորա գնակի վերայ. բայց նա գնումէ պատ-տառի վերայ այն գոյները միայն. որոնց կարող էր տանել ենթական։

Լինելով աշխոյժ արուեստաւոր, և որպէս ճշմարիտ բանաստեղծ թոյլ տալով ծաղիկներին ցած թափվել, բայց ոչ սերմանելով նորանց, մի առաւել զմայլանք է բերում ընթերցողի վերայ. մի թափանցիկ վարագոյր ասես թէ խորհրդաբար վերարկուում էր այս բոլոր պատուական բաները, որ առանց ոյժ և ղօրութիւն դործ դնելու, առանց արուեստի հանդիսանումն մեր առաջև։ ամենայն իրողութիւն, ինքն ըստ ինքեան չէ մի այլ բան, եթէ ոչ, մի սովորական անցք կենաբի մէջ. բայց ամենայն բան իւր տեղումն է, ամենայն մասնի կարգաւորութիւն կատարեալ է. ոչինչ բան պակաս չէ լրութեան մէջ. գործը տեղական է, ուրեմն հասել է իւր նպատակին. պատճառ, ինչպէս ասացինք վերևումը, ժամանակը միայն կարող է կատարումն տալ մի խորհրդի, որ վերաբերվում դէպ ի մարդկային ընկերութիւնը և վերանորոգութիւնը միանդամայն։

Դէ մի անչափ պարզ հիմքի վերայ է հաստատած այն պատմութիւնը, որից Բեռնարդէն դը Սան-Պիեռը այնքան կենդանի լուսափայլութեամբ դուրս է բղխեցնում բարձրահայեաց դաստիարակիչ ճշմարտութիւններ։ Այս դրուածի ամեն մի թերթը կարդալով, լսում հոգին և մտածում սիրտը։ Այսպէս, մի զգացողութիւն, որ բացայայտված էր մատենագրի գրչով, է հաղարաւոր միւս զգացողութիւնների աղբիւր. Նորա ընդմեաւորիչ խորհրդածութիւնը նման է այն ծաղիկներին, որ իւրեանց հատիկները թափելով հողի վերայ, լինումեն աղբիւր հազարաւոր այլ ծաղիկների։

Ամենաքաղցր ախորժականութիւնից, առաւել ընտիր զգացողութիւններից, հեղինակը այս գրքի մէջ անցանումէ դէպ ի առաւել ծանր և առաւել խորին զաղափարները։ Երբ որ նա խօսումէ մեր հետ Աստուծոյ վերայ, այնպէս փառաւորումէ և բարձրացնումէ մեր հոգին, որ մէք հաղորդ լինումէինք երկնային զգացողութիւնների և տարվումէինք դէպ ի պէտ կողմը։ Բոլոր տիեզերքը պատկերանումէ մեր առաջև առանց խոտոր առնելու աղգերի մէջ. Աստուածութիւնը ունի միայն մի հաւաքական մտածութիւն և իւր ամենակարող բարութեան մէջ առանց բաժան բաժան որոշելու աղգերը այս երկրի վերայ, նայումէ մարդկային աղգի վերայ որպէս մի հատ մարդու վերայ։

Այս մեծ մտածութիւնը տպաւորումէ մեր սրտի մէջ Բեռնարդէն դը Սան-Պիեռը իւր ղարմանալի խօսակցութեամբ Պաւլոսի և Ծերունու

մէջ, այն խոսակցութիւնովը որ Համառօտիւ տալիս է մեզ գործի բովանդակութիւնը, որ սուրը ձեռքին խորտակումէ այն մոլար կարծիքները որ հիմնաւորված էին տոհմականութեան վերայ. այդ խոսակցութիւնը իւր կերպարանքով արժանի է դասակից լինելու այն գրուածներին, ինչ որ շատ ընտիրներիցը ցուցանումէ մեզ Ցունաց հնութիւնը. դու կը կարծէիր թէ դա դուրս է եկել աստուածային Պլատոնի հոգուցը, որ և սա ինքը տեսանումէ լինութեան մէջ մի ամբողջութիւն անլուծանելի կապակից, ասելով թէ աշխարհի շղթայի վերջին օղը շօշափումէ երկինքը։

Ինչպէս և նայէինք այդ գրուածին, պիտոյ է միշտ մեր աչքը լեռնել այն երկու կախարդիչ պատկերների վերայ որ դրած են այս պատուռի վերայ, որ արժանի է Կորնէյլիոյի և Ռափայելի գրչին։ Այս ճարտարապետական, մշտապէս կատարեալ գործի մէջ գոյների ամենանուրբ և հաղիւ թէ ըմբռնելի եղանէջը պահպանված են այնպիսի քաջ արուեստով, այնպիսի յաջողութեամբ քանքարի, որ միշտ պիտոյ է կրկին և դարձեալ ուսումնասիրել գորանց։ Պատճառ, ոչինչ բան աշխարհի վերայ չէ այնպէս դժուար, ինչպէս ճշմարտութեան թարգման լինել։ Նոյն իսկ Բէռնարդէն դը Սան-Պիեռը իւր գրուածների մի քանի տեղերումը ասումէ մեզ. «թէ լինութիւնը բացատրելու արուեստը այնքան նոր է, որ նոյն իսկ մեկնութեան խօսքերը չէին դեռ ևս յայտնագործված։»

Ի վերայ այդր ամենայնի տեսէք, թէ ինչպէս մեծահանճար և գերօրինակ ճարտարութեամբ պատկերացրած են մեր առաջև Պաւլոսը և Վիրգինիան. ինչ քաջապատշաճ եղանէջ զգացողութիւնների մէջ։ Վիրգինիայի սիրտը սկսումէ խօսել. սէրը, այս առաջին սէրը, այդքան յստակ, այդքան քնքուշ, որ և իւր բոլոր քաղցրութիւնը ստանումէ իսկապէս իւր երկիւղոտութենից, զարթել է նորա սրտի մէջ. այդ սէրը կրկնապատկումէ նորա մէջ նորա կենդանութիւնը, առանց մի բան խլելու նորա քաղցր անմեղութենից։ Այս սէրը, այս առաջին զգացողութիւնը, այնպէս դալար ինչպէս ծաղիկը, որ բացվումէ, ծածկած է մի վարագուրի տակ, որի թափանցկութիւնը մի անչափ հմտութենով յետ է պահած։ Թող յետ չբարշենք այդ վարագոյրը. վարդի կոկոնը, դեռ ևս կիսաբաց, որ և փայլումէ մի ապառաժի ճեղքի մէջ, ինչպէս

ասումէ մի տեղ Բեռնարդէն դը Սան-Պիեռը, այնքան ևս աւելի զմայլեցուցիչ է, ինչքան որ պակաս ու կիսատ տեսանելումէր նա։ Վիրգինիան, ինչքան որ նորա սիրտը բացվումէր դէպ ի ախտերի ամենաքաղցրը, նոյնքան ևս առաւել երևումէ ամենախած. նա վշտանումէ, բայց նորա վշտակրութիւնը չէ առանց երջանկութեան. սիրու ամենամեծ հրաշքը, ինչպէս կարդումենք Ռուսոյի գրուածների մէջ, այն է, որ նա տալիս է մեզ երջանկութիւն դատանել վշտակրութեան մէջ։ Մի ամենաջերմ սրտակցութիւն, մի ամենաքաղցր անձնանուիրութիւն երևումէ, փոխանակ սիրու, Պաւլոսի մէջ. զարմանալի՛ ներհակութիւն, որ թոյլ չէ տալիս մի ախտաւոր բանի ներս խառնվիլ այս պարկեշտ պատկերի մէջ։ Այսպէս ահա, այս երկու արարածքը որոնց տուել էր բանաստեղծութիւնը մի շատ զմայլեցուցիչ պարզմտութիւն, ասես թէ ամենայն բոպէ փախչումեն միմեանց, երբ որ արդէն ստացել էին իւրեանց լրագործութիւնը բնութեան ձեռքից։ Ասելու էիր, թէ ոչ մի մարդկային շունչ երբէք մտեցած չէ դոցա։ Եւ արուեստի շնորհն է, որ արել է այդ հրաշագործութիւնը։ Ո՞հ, եթէ կարելի լինէր, որ մի, բանականութեամբ զարդարած էակ երևէր յանկարծ, որ երբէք ոչինչ այլ հաղորդակցութիւն ունեցած չլինէր, բայց լոկ բնութեան հետ, ի՛նչքան պարզմտութեամբ ուղիղ լինելու էր նորա հոգին, ի՛նչպէս ևս լինելու էր նա վերհամարձ առանց արուեստակութեան, ի՛նչպէս քաջ հասկանալու էր նա, թէ բոլոր բաները, որպէս ասումէ Դանթէն, ունին իւրեանց մէջ մի կարգ, և թէ այս կարգը այն ձևն է, որանով տիեզերքը նմանումէ Արարչին։

Հապա. երբ որ ծանր գնացքով վայելումենք այս գիրքը, որ ներս է բերում մեր սրտի մէջ մի ամենաքաղցր և ամենամեղմ առաքինութիւն և գորանով կալանաւորումէ սիրտը, պիտոյ է կարծէինք, թէ դա գրած էր մի աշխարհում, ուր դեռ ևս ներս չէր մտած մարդու ոտք։ Ի՛նչքան ուսումն և գիտութիւն պիտոյ է ստացած լինէր հեղինակը, որ կարողանար այդպիսի պատրանք բերել այնպիսի մարդերի վերայ որ ձևաւորված էին այժմեան հասարակութեան հոգովը, որ և ոչինչ բանի այնքան սակաւ կարօտ չէին, ինչպէս այն անընդունելի քաղցրութեանը որով գրոշմած են բոլոր թերթերը սոյն այս գրքի, որ, եթէ կարող էի պէսպէս խօսել, ներկումէ մեր արիւնը այն քաղցր առաքինութիւնն-

բով, որ ներս է փչում մեր մէջ։ Ինչ կողմից ևս քննէինք այդ գործը, գրիչը թեքվում միշտ դէպ ի գովասանութիւն։ Որպէս զեղեցիկ բանաստիրական գործ, ընդարձակել է նա կատարելութեան սահմանքը. որպէս փիլիսոփայական գրուած արել է նա հասարակութեան վերայ մի տպաւորութիւն, որ տևում է դեռ ևս և կը տևէ միշտ։ Վարքերի նկարագրութիւնքը Մոլիերի ոճով մնում են որպէս պատմարանական թերթեր, որպէս գործ մեծահանճար մարդու և որպէս իրողութիւնների ապացուցութիւնք. բայց սրտի նկարագրութիւնքը կարդում է ամենայն մարդկեղէն սերունդ, և ինչ ինչ հասակների մէջ, մի անցամաքելի փափագով։ Հերիք էր ասել թէ Բեռնարդէն դը Սան-Պիեռի գործը ոչ թէ միայն անկորուստ է, այլև միտեսակ յաջողապէս ներգործելու է մարդերի սրտի վերայ։ Նորա գալոց ազդեցութիւնը լինելու է այնպէս, ինչպէս եղած է անցածը. նա թափելու է ամենայն դարու վերայ իւր բարոյական իմաստասիրութիւնը, իւր մխիթարական բալասանը, իւր արևելեան խնկահոտութիւնը։ Եւ ամենայն դար, այն գաղափարներովը որ ծնած էին այդ գործի տպաւորութիւններից, և այն ընտրութիւնովը որ կը լինէր այդ դարուն սեփական, կը խոստովանէ հեղինակի ինքնագիտ հանճարը նորա գործի յաջող ազդեցութիւնը սրտերի վերայ, ուստի և կարող էր միշտ օգուտ քաղել։ Ինչպէս մեք, կ'ուսանի և նա, թէ սրտի դաստիարակութիւնը պատուական է քան թէ իմացականութեան դաստիարակութիւնը, թէ նա տանում միշտ դէպ ի բարին, դէպ ի ուղղութիւն, դէպ ի գթութիւն, դէպ ի պարկեշտութիւն, դէպ ի խիստ արդարութիւնը, դէպ ի ընտանեկան առաքինութիւնք. բայց միայն յաճախ մոլորեցնում և ուղիղ ճանապարհից դուրս է հանում նորանց, որ մի շատ թեթև հակամիտութեանով քարշվում են դէպ ի չարը։ Իմացականութիւնը և սիրտը կարող են լինել հաւասարապէս գիտուն, բայց այդպիսին չէր, ինչպէս ասում մեծանուն Մոնտէյնը (1533-ին ծն. և 1592-ին վախճան.) այն ամենագիտուն մարդը որ պիտոյ է որոնել, այլ առաւել լարուած գիտուն։

Ինչպէս մեք, նոյնպէս մեզանից յետոյ գալոց ազգերը այս երկրի վերայ, ուր առաւել գեղեցիկ, առաւել երջանիկ բոպէքը մարդու կեանքի մէջ նոքա էին, երբ մարդը պարզում իւր ձեռքը դէպ ի վատաղղը, պիտոյ է արտասուք թափեն այս երկու մանուկների սոսկալի վեր-

716

150

2013

մատեանը այնքան անգամ թափել է տուել ինձ։ Լուռ կաց այս տեղ, դ՝ Ալբանէս Գրանսիացի, և թող ինձ, հայկական թարգմանչիս, խօսել նոյնպէս մի քանի բառ։

Դու ես, ով հրաշափառ Բեռնարդէն, կամիմ այս փոքրիկ աշխատութենովս պատուասիրել քո աշխարհահռչակ գրուածը. կամիմ հայկական, աւելի մաքուր և արժանի ոգեստով նուիրել քո հոգու չնաշխարհիկ ծնունդը Հայաստանի զաւակներին (*). կամիմ որ և սոքա, նոյն մարգուութեան որդիք, որ միշտ անխոտիր սիրելի էր քեզ, սեղանակից լինին քո քաղցր, հոգեպայծառ վաստակին, ուսանին ճանաչել և սիրել քեզ և մեծարել քո երանելի յիշատակը։

Այժմ թող խօսք ինքը Բեռնարդէնը իւր գրուածի վերայ, այնպէս, ինչպէս խօսում է իւր յառաջաբանի մէջ 1788 թուականից.

«Ընթերակալով այս փոքրիկ գրուածը, ունէի ես երկու դի-
«տաւորութիւնք, և գուցէ թէ դոքա թեթեւախորհուրդ բաներ չէին։
«Ես փորձ փորձեցի դորա մէջ նկարագրելու մի աշխարհ և բուսական-

(*) Այս գրուածը, այսինքն Պաւլոս և Վիրգինիան միայն, Ցանկահայոց բարբառով տպած է Վենետիկումը 1835 թուակ. պատկերազարդ։ Թարգմանիչն է Մանուկ Պէյ Մահտեսի Ղատուածատուրեան, աշակերտ Մուրատեան վարժարանի։ Թէ ինչ յարակցութիւն, կամ թէ որ և իցէ յարակցութիւն կար մեր և այդ թարգմանութեան մէջ, կարող են տատգել ֆրանսիագէտ և հայագէտ ընթերցողքը։ Բայց մեր կողմից պիտոյ է ծանուցանենք այսքան, նոցա համար, որ կարող չէին համեմատել միմեանց հետ այս և այն թարգմանութիւնը. մեր աշխատութիւնը ոչինչ բան չունի Մանուկ Պէյի թարգմանութեան հետ, այլ կրկին և նոր թարգմանութիւն է, ամենեին հիմնած ֆրանսիական բնագրի վերայ։ Ոչ թէ Մանուկ Պէյի թարգմանութեան վերայ նայած չենք ամենեին, այլև գերմանական թարգմանութիւնը որ կարող էր շատ թեթեւացնել մեր գործը, հեռի պահեցինք մեզանից թարգմանութեան միջոցին, աւելի լաւ համարելով աշխատել ինքնօրէն, ուրիշներից անկախ ու ազատ. պատճառ, ընդդէմ է մեր բնութեանը այսպիսի գործերի մէջ ծառայանալ միւսերին և օտար շաւիղների վերայ ճանապարհ կատարել։ Քաղցր էր մեզ և է միշտ, պատերազմելով յաղթել դժուարութիւնների և գործ կատարել ազատաբար (աղամարդի պէս), այսինքն վաստակելով իւր յատուկ վաստակը։ Ցսպագրութեան միջոցին հասաւ մեր ձեռքը մի այլ հայկական թարգմանութիւն «Պօղ և Վիրգինէ, վիպասանութիւն Բեռնարդէնի դը Սէն-Փիեր, թարգմանեաց Ամբրոսիոս վարդապետ Դալֆիայեան», Փարիզ, 1836. նոյնպէս փառաւոր պատկերազարդ, պատուական թղթի վերայ, մեծ ուշադրութեամբ տպած, բայց նոր ահաւասիկ և դժուար ընթերցանելի տառերով։ Այս թարգմանութիւնը զրաւեաց ուշով է և շատ ընտիր հնչեսս հայկաբանութեամբ, թող թարգմանչի հարազատութիւնը ֆրանսիական բնագրին։ Զանգ կարող չեմ տալ թէ այդ թարգմանութիւնը կարդացինք մեծ հաճութեամբ, և մեր սրտումը հատուցինք թարգմանչին այն մեծարանքի յարգը որ արժանի է նորան. բայց պիտոյ է այս տեղ ասել, որ ես աւելի քաղցր հաճութեամբ ու մեծարանքով կարդացինք մեր

«Ներ, որ շատ զանազան են եւրոպէականներից։ Մեր բանաստեղծները
«իւրեանցից նկարագրած սիրողքը շատ անդամ դադարեցրած ու սի-
«բամահ էին արած անտառամտակների կանաչապատ եղերքումը, մար-
«գագետինների ծաղկահիւս օթոցի վերայ և կաղամախների հովանա-
«ւորութեան տակ։ Ես կամենայ միանգամ մի զոյգ սիրական տեղա-
«փոխել ծովի ափի վերայ, վայրենի զմայլեցուցիչ ապառաժների ոտ-
«քի մօտ, կոկոսեան ծառաստանի, բանանաբեր ծառերի և ծաղկափը-
«թիթ կիտրոնատունկերի հովանաւորութեան տակ։ Աշխարհի միւս
«բաժնին պակաս էին միայն Թէոկրիտոսք և Վիրգիլիոսք, որ տային
«մեզ նոցա մասին այնպիսի նկարագրութիւնք, որ չէին լինելու պա-
«կաս գրաւող քան թէ այն նկարագրութիւնը, որ այդ բանաստեղծքը
«արած էին մեր աշխարհաբաժնի համար։ Քաջ գիտեմ ես, որ ահա
«շատ ճանապարհորդներ և դոցա մէջ հանճարաւոր և ճաշակագէտ
«մարդիկ զմայլեցուցիչ պատմութիւններ հարաւածովի մէջ եղած մի
«քանի կղզիների մասին բաշխած են մեզ, բայց ընիկ մարդերի բարք

ամեն օր Պիկերոնի հին լատինաբանութիւնը, բայց և աշխատութիւնք ուսուցանելու ժամանակին այդ հին լատինաբանութիւնը թարգմանել մեր Ռուս աշակերտներին այժմեան Ռուսաց և ոչ հին սլաւոնական բարբառով։ Եթէ Սլաւոնէրէն թարգմանէիք, պիտոյ է մեր թարգմանութիւնը մեր նոցա համար դրեթէ այնչափ մութ և անհասկանալի, ինչպէս նոյն իսկ հին լատինականը։ Մեծապատիւ Հայր Ամբրոսիոս Գալշիայեանը իւր յառաջաբանի մէջ ասաւ, թէ Մարուկ Պէյ Ղասուսեանցի վերոյիշեալ թարգմանութիւնը, աշխարհիկ բարբառի աղքատութեան պատճառից մանաւանդ, թերի լինելով և ոչ ամենևին հաճելուն գիրանիական ընդարձակ պարզութեանը, արժան է համարել այդ թերութիւնը լրացանել գրոց անուանեալ բարբառով։ Թէպէտ նոյն Գալշիայեանը «գիտել գիտեմք» (այսինքն շատ լաւ գիտենք) ասաւ, թէ այսպիսի գրքեր աւելի ընթերցողք դատելու էին, եթէ ընծայվէին մեր ազգին աշխարհաբար խօսքով, մանաւանդ Ցանկասանի մէջ բնակաւորված Հայերին. բայց նա ցանկացել է թարգմանել դը Սան-Պիեռի գրուածը հասարակաց ազգիս (այսինքն բոլոր, բովանդակ ազգին) ընծայել ի վայելուչս, որպէս թէ բոլոր ազգի լեզուն հին, գրոց մեռեալ լեզուն է, բայց մասնաւոր մարդիկ միայն խօսուումին աշխարհաբար լեզուով։ Շատ ու շատ յարգելի է մեզ Գալշիայեան վարդապետի անձը, բայց նորա լոգիկային (դատողութեան կերպին) հաւան չենք. և համարում ենք նորան ամենևին գուրս ճշմարտութենից։ Ոչ թէ նախնի գրաբար լեզուն է հասարակաց ազգի լեզուն, այլ նոյն ինքն այժմեան կենդանի, աշխարհաբար ասածը, որ խօսումն Հայք կամ Ցանկասանի կամ թէ Ռուսաստանի մէջ շատ կամ փոքր բարբառական (դիալեկտիկական) զանազանութեամբ։ Ինչպէս կարելի է հին, գրոց լեզուն հասարակաց ազգի բարբառ ասել. ով է խօսում այդ լեզուով մեր ժամանակումը. ոչ ոք. ոչ Ցանկասանի, ոչ Ղովկասի և ոչ Հայաստանի մէջ. ոչ ուսումնականը, որ երկու և կէս մարդ էին և ոչ ժողովուրդը։ Մի՛ թէ այդպիսի լեզու հասարակաց բարբառ կարող է ասվել. և ոչ երբէք։ Արդարև կարող է յարգելի վարդապետ Գալշիայեանը

«ու վարքերը և սովորութիւնքը, զուցէ թէ աւելի ևս բարք ու վար-
«քերը այն տեղ բնակող Եւրոպացիների սիսոս որ աւերումն սովո-
«բարար մեր սէրը նոյն իսկ աշխարհի մասին։ Իմ ցանկութիւնը այն
«էր, որ արևադարձեան կլիմայի բնական գեղեցկութեան հետ միաւո-
«րեմ մի փոքրիկ մարդկային ընկերութեան բարոյական գեղեցկու-
«թիւնը։ այս պատճառով կամեցայ ես նշանակէս մի շատ աղգու օրինա-
«կով և մի քանի մեծ ճշմարտութիւններ ներս բերելով ցոյց տալ
«մանաւանդ թէ այն մի բանը, թէ մեր երկրաւոր երջանկութիւնը նո-
«ցա մէջ է, որ ապրելու հեղհեղով բնութիւնը և առաքինութիւնը։ Ինձ
«հարկաւոր չէր ամենևին, մի ոսման հնարել, որ կարողանայի նկարա-
«գրել մի զոյգ գերդաստան. կարող եմ հաւատացնել, թէ նոքա, ո-
«րոնց մասին կամիմ ես պատմութիւն առնել, ստուգապէս եղած են,
«և թէ նոցա պատմութիւնը, միտ դնելով գլխաւոր անցքերին, ամե-
«նևին ճշմարիտ են։ Դոքա վկայած են բնութեամբ շատ մարդերի, որոնց
«հետ իմ դը Ֆրանսու

«թիւն և մօտ յարակցութիւն, որ և այն տեղ հաստատ կացութիւն
«ունէին։ Ինչ որ ես իմ կողմից բանաստեղծօրէն յաւելացրած եմ,
«շատ շատ, մի երկու անխտիր և երկրորդական պարագայք են, որ
«լինելով իմ յատուկ սրտի զգացողութիւնք, ես առաւել քաջ ե-
«բաշխաւոր էին ճշմարտութեան համար։ Շատ տարիներ յառաջ,
«այն տեղ ուր յատկապէս եղած է անցքը, արած էի ես մի անկատար
«ստուերագրութիւն այս նորատեսակ տուարածական բանաստեղծու-
«թեան մասին. յետոյ մի գեղեցիկ տիկնոջից, որ ունէր մօտ յարա-
«կցութիւն մեծատունների հետ, և ապա մի քանի այնպիսի մարդերից,
«որ սովորած էին ծանրապէս և առանձին ապրելու իւրեանց և իւրային-
«ների երջանկութեան համար, խնդրեցի ես որ թոյլ տան ինձ կարդալ
«նոցա առաջև այս փոքրիկ գրուածը, որ այդպէս կարողանայի վերա-
«հասու լինել թէ ինչ ներգործութիւն յառաջացնելու է դա այդ-
«քան զանազան բնաւորութեանով մարդերի վերայ։ Քաղցր և դիւր
«եղաւ իմ սրտին, տեսանելով որ ամենքեան միասին արտասուք թա-
«փեցին։ Սա մի հատիկ դատաստանն էր, որ կարող էի ես պահանջել
«նոցանից, և այս միայն էր, որ կամեցած էի գիտել։»

Ինչ որ սարանից յետոյ լսումնք հեղինակի բերանից, աւելորդ էր դնել այս տեղ, որովհետև վերաբերվում նորա համեստ մտածութեանը իւր որպէս թէ անշան քանքարի վերայ, այլև բանագէտ մարդերի անաչառ դատաստանը վաղուց ահա վճռահատել է Բեռնարդէն դը Սան-Պիեռի անզուգական վաստակը։

ՊԱՐԻԼՈՍ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԷ·

—

Այն սարի արևելեան կողմի վերայ, որ բարձրանում է Լ դը Գրանսի (*) Պորտ Լուի անունով մայրաքաղաքի յետքումը, տեսանում ճանապարհորդը մի երբեմն շէն ու բնակաւոր եղած հողի վերայ երկու փոքրիկ խուղերի աւերակք։ Սոքա համարեա թէ զետեղված են մի ձորի մէջ տեղում, որ կերպաւորվում է մեծ մեծ քարաժայռերով, որ և ունի մի հատ բացուած դէպ ի հիւսիս։ Այս, Մօրնը դը Լա Դեկուվերտ անունով սարի ձախակողմումը, ինչ տեղից իմաց են տալիս նաւերի մոտենալը Լ դը Գրանս կղզուն, սարի ոտքին տեսանվում Պորտ Լուի ասած քաղաքը։ աջակողմումը պարզվում մի ճանապարհ որ Պորտ Լուի քաղաքից տանում դէպ ի Պամպըրմուսանց թաղը։ յետոյ տեսանում ես դու Նոյնպէս Պամպըրմուս անունով եկեղեցին, որ իւր բամբուսեան ծառազարդ դնդաքներովը կառուցած է մի դաշտավայրի մէջ տեղում։ սորանից աւելի հեռի հանդիպում է քեզ մի անտառ երկայնվելով մինչև կղզու վերջին սահմանքը։ Առաջեդ, ծովի ափումը կանգնած որոշում ես դու Գերեզման անունով ծովախորշը։ մի փոքր դէպ ի աջ, Ձախորդութեան սարաւանդը։ դէպ ի այն կողմը, արձակ ծովը, ուր ջրերի հետ հաւասարակշիռ երևումն մի քանի անբնակ փոքրիկ կղզիներ, սոցա մէջ և Նպատակահայեացի անկիւնը որ նմանում ալիքների մէջ կառուցած մի մնարակոցի։

(*) Լ դը Գրանս կղզին, որ գրած է հարաւային լայնութեան 18 աստիճանի տակ, 30 մինուտ ևս աւելի, յայտնագործվել է Պորտուգալացոց ձեռքով, որ տուին նորան անունս Սերնէ։ 1598 թուակ. Հոլանդացիք տիրապետեցին դորան և տուին նորան անունս Մորիկ կղզի։ 1721 թուականից վեր կալան դորան Ֆրանսիացիք, որ չինեցին նորան մի շատ ծաղկեալ բնակութիւն։ Բայց 1814-ին Բուրբոնեան իշխանաւորքը այդ կղզին միւս կալուածների հետ միասին թողեցին Անգլիացոց ը և մինչև այժմ տիրում նորան։ Կղզու տարածութիւնը է մօտ 56 քառակուսի մղոնի և ունի մօտ 92,000 բնակիչ։ Մայրաքաղաքը Պորտ Լուի անունով ունի մի ամուր նաւահանգիստ և շատ շտեմարաններ վաճառականութեան համար։

Այս ձորի մուտքումը, ինչ տեղից Հանդիպումն քո աչքին այնքան տեսարաններ, սարերի արձագանքը անդադար կրկնումն շառաչիւնը հողմերի որ շարժումէին մնակայ ծառաստանքը, և ճայթիւնը կոհակների, որ յարձակվելով ջաղջախվումէին քարաժայռի վերայ. բայց այն երկու խուղերի ոտքումը ոչինչ ազմուկ լսվում չէ, և դու ոչինչ չես տեսանում քո շրջակայքումը, եթէ ոչ մեծ մեծ սեպացած ժայռեր, պատերի նման։ Փունջ փունջ ծառեր աճումեն դոցա ցածումը, ճեղքուածների մէջ և մինչև նոցա կատարների վերայ, ուր դադարումէին ամպերը։ Անձրևքը ցած քարշվելով դէպ ի նոցա սրածայր գլուխները, կենդանագրումեն շատ անգամ ծիածանի գոյներ նոցա կանաչ ու մոյգ կողերի վերայ, և նոցա ոտքումը պահպանումեն այն աղբիւրները որոնցից գոյանում Արմաւենեաց փոքրիկ գետը։ Մի հանդարտ լռութիւն թագաւորում նոցա շրջապատումը, ուր ամենայն բան խաղաղ է, օդը, ջրերը և լոյսը։ Այս տեղ արձագանքը հաղիւ թէ կրկնում սոսափիւնը այն արմաւենիքի որ աճումէին այն ապառաժների բարձրադաշտակի վերայ, որոնց և բարձր կատարքը տեսանվումեն միշտ տարուբերվելով հողմից։ Մի քաղցր օր լուսաւորում այս ձորի խորութիւնը, ուր արեգակը փայլումէր միայն կէս օրի ժամանակին. բայց առաւօտեան արշալուսին, նորա ճառագայթները արձակվելով սարապսակի վերայ, սրածայր գլուխները որ բարձրանումէին աւելի վեր քան թէ սարի ստուերքը, ասես թէ զգեստաւորվումէին ոսկով ու ծիրանիով կապոյտ երկնակամարի մէջ։

Ես սիրումէի գալ այս տեղ, ուր տարածվումէր աչքիս առաջև մի անսահման տեսարան, ուր և թագաւորումէր մի անխռով առանձնութիւն։ Մի օր նստած էի ես այս խուղերի ցածումը և մտածումէի նոցա աւերակների վերայ. և ահա մի ծեր մարդ հանդիպումն անցանումէր շրջակայքից։ Սա, ինչպէս այս տեղի հին բնակիչների սովորութիւնն է, ունէր իւր վերայ մի բաճկոն և երկար վարտիք. գնումէր ոտաբոկիկ, հաստատված մի արանոսեան գաւազանի վերայ։ Նորա մազերը ամենևին սպիտակ էին և երեսի կերպարանքը ազնիւ և պարզ։ Ես պատկառանքով ողջոյն տուեցի նորան և նա կրկնեց իմ ողջոյնը, և մի քանի բոպէ նայելով իմ վերայ, մնտեցաւ ինձ և եկաւ, որ հանգստանայ այն հողաբլուրի վերայ ուր նստած էի ես։ Քաջալերութիւն ստանալով այս վստահութեան նշանից, դարձուցի խօսքս դէպ ի նա, ասելով. «Ի՞մ հայր, կարող ես դու պատմել ինձ, թէ ո՞ւմ էին պատկանած այս երկու խուղերը»։ — Պատասխանեց նա — «Ի՞մ որդի, այս աւեր տների մէջ և այս անշէն հողի վերայ քսան տարի յառաջ բնակումէին երկու գերդաստանք որ երջանիկ էին այդ տեղ։ Դոցա պատմութիւնը շատ ար-

տասուելի է. բայց այս կղզումը որ գրած է Հնդկաստանի Ճանապարհի վերայ, որ Եւրոպացին կարող է հարցասիրութեան արժանի տեսանել մի քանի անշնչաւոր մնացուորդներ մարդերի վիճակ. ով կը կամենար այս տեղ ապրել երջանկապէս, բայց աղքատութեան և անյայտութեան մէջ։ Ադամորդիքը կամենումն միայն ծանօթանալ մեծատունների և թագաւորների պատմութեանը, որ ոչինչ մարդու պիտանի չէր։» — «Ի՛մ հայր», — վեր կալայ ես խօսքը — «հեշտ կարելի է դատել ձեր կերպարանքից և խօսուածքից, որ դուք շատ փորձառու մարդ էք. եթէ ժամանակ ունիք, պատմեցէ՛ք ինձ, աղաչեմ, ինչ որ գիտէք դուք այս անապատի հին բնակիչների մասին, և հաւատացէ՛ք, որ աշխարհի մոլար կարծիքներով շատ և շատ աւերված մարդը ևս սիրումէ լսել այն երջանկութեան մասին, որ տալիս են բնութիւնը և առաքինութիւնը։» Այնուհետև, այդ ծերունին, ինչպէս մի մարդ որ աշխատումէր մոռանալ մի քանի զանազան հանգամանքներ, քանի մի բոպէ պահելով ձեռքը ճակատի վերայ, ահա թէ ի՞նչ պատմեց ինձ։

1726 թուականին, մի Նորմանդացի երիտասարդ Դը լա Ցուր անունով, ի զուր աշխատելով պաշտօն գտանել իւր համար Ֆրանսիայի մէջ, և օգնութիւն իւր ազգականներից, որոշեց իւր մտքումը, որ տեղափոխ լինի այս կղզու մէջ, իւր ապրուստը և օգուտը հոգալու համար։ Նա ունէր իւր հետ մի մանկամարդ ամուսին, որ շատ սիրելի էր Նորան, որ և հաւասարապէս սիրումէր Նորան։ Նորմանդացի երիտասարդի կինը մի հին և հարուստ ազգատոհմից էր և Նորան երկրացի. բայց նա ամուսնացած էր սորա հետ ծածուկ և առանց բաժինքի. պատճառ, կնոջ ազգականքը հակառակ էին եղած այդ ամուսնութեանը, որովհետև երիտասարդը ազնուական ցեղից չէր։ Սա թողեց իւր ամուսինը Պորտ Լուի քաղաքումը և նաւ նստեց, որ գնայ Մադագասկար կղզին, յուսալով գնել այս տեղ մի քանի սեաւ ծառայք, և շուտով վերադառնալ այս տեղ, բնակութիւն հաստատելու համար։ Նա հասաւ Մադագասկար, մօտ այն ժամանակին, որ սկսանումէ Հոկտեմբերի կէսից, և իւր գալուց մի փոքր յետոյ մեռաւ այն դըժնդակ տենդերից, որ թագաւորումն այն տեղ տարու վեց ամիսը, որ և միշտ պիտոյ է խափանարար լինին Եւրոպական ազգերին կայուն բնակութիւններ հաստատելու այն տեղ։ Այն գոյքը որ իւր հետ տարել էր երիտասարդը, ցան ու ցիր եղաւ Նորա մահուց յետոյ, ինչպէս սովոր է պատահել Նոցա որ մեռանումեն իւրեանց հայրենի աշխարհից դուրս։ Նորա կինը Իլ դը Ֆրանսի մէջ, մնաց այրի, յղի, և ոչինչ չունէր այս աշխարհի վերայ, բաց ի մի սեաւ աղախնից. յաւելացրու սորա վերայ և օտար երկրում, ուր ոչ ոք հաւատում չէր Նորան, ոչ

ոք բարեխօս չէր Նորա համար։ Զը կամելով միւսանգամ մարդու գը-նալ, իւր մի հատիկ սիրած մարդու մահուանից յետոյ, Նորա վատա-բաղդութիւնը տուեց Նորան քաջութեան հոգի։ Նա վճռեց մտքումը, որ իւր սեաւ ստրուկի հետ մշակէ մի կտոր հող, ապրուստ ձեռք բե-րելու համար։

Մի համարեա թէ անապատ կղզու մէջ որի հողը թողած էր ամե-նայն մարդու իշխանութեան, դը Լա Տուր տիկինը չընտրեց առաւել պտղաբեր հողաբաժինը և ոչ առաւել յարմարաւորը վաճառականու-թեան համար, այլ որոնելով մի սարի նեղուց, մի ծածուկ պատսպա-բան, ուր կարող էր ապրել միայնակ և անյայտ, քաղաքիցը ճանապարհ ընկաւ դէպ ի այս ապառաժը, այս տեղ առանձնանալու համար որպէս մի բունի մէջ։ Այս մի բնական ձգտողութիւն է, որ ունին ամենայն զգացող և վշտակիր մարդիկ, այսինքն հրաժարվիլ դէպ ի առաւել վայ-րենի և անապատ սահմաններ, որպէս թէ ապառաժ սարերը պատսպա-բանք էին վատաբաղդութեան երեսից, և որպէս թէ բնութեան հան-դարտութիւնը կարող էր մեղմել հոգու յաւալից խռովութիւնքը։ Բայց նախախնամութիւնը որ օգնութիւն է հասուցանում մեզ, երբ որ մեք կամենումենք միայն կեանքի հարկաւոր բարիքը, պահել էր մի օգնու-թիւն դը Լա Տուր տիկնոջ համար, մի այնպիսի օգնութիւն, որ ոչ հա-բստութիւնը և ոչ մեծութիւնը կարող է տալ, այսինքն մի բարեկամ։

Այս տեղ մի տարի ապրումէր ահա մի զուարթ, բարի և զգացող կնամարդ Մարգարիտ անունով։ սա ծնած լինելով Ֆրանսիայի Բրետայն գաւառումը հասարակ շինական ցեղից, շատ սիրելի էր իւր ծնողներին և անտարակոյս լինելու էր նոցա երջանկութեան պատճառ, եթէ չը լինէր այնքան թուլասիրտ, որ հաւատ ընծայէր սիրախօսութեանը մի դրացի աղնուականի որ խոստացած էր ամուսնանալ Նորա հետ, լայց կատարելով իւր ցանկութեան կամքը, հրաժարվեցաւ Նորանից, այլև չը կամեցաւ ապահով կացուցանել Նորան որպէս հոգատար այն գաւա-կին որով յղեացած էր աղջիկը։ Այնուհետև հաստատեց սա մտքումը մշանջենաւոր ժամանակով թողուլ իւր հայրենի երկիրը և գնալ պար-տակել իւր ամենթը Ֆրանսիական գաղթականների մէջ, հեռի այն աշ-խարհից ուր կորուսել էր նա մի աղքատ և պարկեշտ աղջկայ մի հատիկ հարստաբաժինը, այսինքն իւր բարի համբաւը։ Մի ծեր սեաւ ծառայ, որ ստացել էր նա մի փոքր փոխ առած արծաթով, Նորա հետ միասին մշակումէր մի կտոր հող այս երկրի վերայ։

Դը Լա Տուր տիկինը, իւր սեաւ աղախինը իւր հետ առած շրջու-մէր և հանդիպեց այս տեղ Մարգարիտին, երբ որ սա ծիծ էր տալիս իւր երեխային։ Նա շատ ուրախացաւ հանդիպելով մի կնոջ որի դրութիւ-

նը կարծեց թէ նման է իւր յատուկ դրութեանը։ Նա խօսեց Մարգարիտի հետ մի քանի բառ իւր անցած որպիսութեան և այժմեան կարիքի մասին։ Մարգարիտը լսելով զը Լա Տուր տիկնոջ պատմութիւնը, շարժվեցաւ դէպ ի գութ, և կամենալով գտանել նորա վստահութիւնը առաւել քան թէ յարգանքը, խոստովանեց նորան, առանց մի բան թաքուցանելու, իւր արած դատապարտելի անխոհեմութիւնը։ «Իմ մասին խօսելով, ասաց նա, ես արժանի եմ այս վիճակիս, բայց գութ, տի՛կին, այդպէս խնայո՞ւն և վատաբաղդ։» Մարգարիտը արտասուելով առաջարկեց նորան իւր խուզը և բարեկամութիւնը։ Զը Լա Տուր տիկնոջ սիրտը շարժվելով այդպիսի քաղցր ընդունելութեան վերայ, ասաց նորան գրկախառնելով. «Ահա կամենում Աստուած վերջացնել իմ աղէտքը, աղդելով քո մէջ աւելի գութ դէպ ի ինձ, որ օտարական էի քո համար, քան թէ երբէք տեսած էի իմ ազգականների մէջ։»

Մարգարիտը ծանօթ էր ինձ, և թէպէտ ես բնակումէ՛ մղոն ուկէս հեռաւորութեանով այս տեղից անտառի մէջ, Երկայնաձիգ սարի քամակումը, այնու ամենայնիւ ես համարումէ՛ ինձ նորան դրացի։ Եւրոպայի քաղաքների մէջ մի փողոց, մի լոկ պատ ողջոյն տարիներով խափանարար էին նոյն գերդաստանի անդամների հաղորդակցութեանը միմեանց հետ, բայց նոր գաղթականների մէջ դրացիք են համարվում նոքա, որոնցից մէք բաժանված էինք անտառներով և սարերով միայն։ Եւ մանաւանդ այն ժամանակին, երբ այս կղզին ունէր փոքր առուտուրք Հնդկաստանի հետ, մի հասարակ դրացութիւն տալիս էր այն տեղ բարեկամութեան իրաւունք, և հիւրասիրութիւնը դէպ ի օտարականքը պարտականութիւն էր և ուրախութիւն։ Երբ որ լսեցի ես, թէ իմ դրացին ստացել է մի ընկեր, եկայ տեսանելու նորան, որ աշխատում պիտանի լինել թէ մինին և թէ միւսին։ Զը Լա Տուր տիկինը երևեցաւ ինձ մի անձն սիրտ գրաւող կերպարանքով, լի աղնութեանով և տխրամտութեանով. ես ասացի այս երկու կանանցը թէ նոցա զաւակների օգտի համար և մանաւանդ թէ թոյլ չը տալու համար, որ մի այլ բնակիչ տուն հաստատէր այս տեղ, պատշաճ էր բաժանել նոցա մէջ այս ձորի հողը, որ լովանդակումէ՛ քսան օրավար։ Նոքա յանձնեցին ինձ այդ բաժանարարութիւնը. ես բաժանեցի այդ հողը երկու համարեա՛ թէ հաւասար բաժին. մինը պարունակումէ՛ իւր մէջ այս շրջապատի վերին մասը, սկսեալ այս ամպապատ ժայռաբևեռից, ուստի բղխումէ՛ Արմաւենեաց գետի աղբիւրը, մինչև այս սեպացած բացուածը որ դուք տեսանումէք սարի վերևումը, որ և ասվումէ՛ «Թենդանոթի պատուհան», պատճառ որ արդարև նման է դորան։ Այս հողի յատակը այնպէս ապառաժուտ և ձեղքաւոր է, որ հազիւ թէ կարելի էր քայլել

Նորա վերայ, բայց նա բուսուցանումէ մեծ մեծ ծառեր և առատ է աղբիւրներով և փոքրիկ առուներով։ Միւս բաժինումը գրեցի ես բոլոր ստորին մասը, որ պարդվումէ Արմաւենեաց գետի երկայնութիւնով մինչև այս բացուածը, ուր կանք մեք այժմ, ուստի այս գետը սկսումէ հոսել երկու բլուրների միջով մինչև ծովը։ Դուք տեսանումէք այն տեղ մի քանի մարգագետինների եզերք և մի բաւական հաւասար հող. բայց սա չէր աւելի պատուական քան թէ միւսը. պատճառ, անձրևային եղանակումը նա ճախճախուտ է և չորութեան ժամանակին այնպէս կոշտ, որպէս արճիճ. և այս միջոցին, եթէ կամենայիր այս տեղ մի ջրանցք բանալ, հարկաւոր է լինում կորել գետինը կացնով։ Այսպէս ահա երկու մասն բաժանելով հողը, առաջարկեցի այս երկու կանանցը վիճակարկութեամբ որոշել իւրեանց ստանալին։ Վերին բաժինը հասաւ դը Լա Տուր տիկնոջը, և ստորինը Մարգարիտին։ Երկուքը ևս բաւական էին իւրեանց վիճակով, բայց նոքա խնդրեցին ինձանից չը բաժանել նոցա ընակարանը, որ այդպէս կարողանային նոքա միշտ տեսանել միմեանց, հաղորդակից լինել և օգնել մինը միւսին։ Այդու ամենայնիւ հարկաւոր էր նոցա առանձին առանձին օթևան։ Մարգարիտի օթևանը գտանվումէր ձորի մէջ տեղումը, ուղղակի իւր հողատեղիների վերայ։ Դորան ամենեին մոտակից, շինեցի ես մի այլ խուղ դը Լա Տուր տիկնոջ հողի վերայ, այնպէս որ այս երկու բարեկամ կանայքը միանգամայն դրակից էին միմեանց և գտանվումէին իւրեանց սեփական կալուածի վերայ։ Ես ինքս ցանկապատի համար կտրած եմ ծառեր սարիցը, բերած եմ արմաւենիքի տերևներ ծովի ափից, այս երկու խուղերը շինելու համար, որոնց վերայ դուք չէք տեսանում այժմ ոչ դուռն և ոչ ծածկոց։ Ժամանակը որ այնքան շատով կործանումէ թագաւորութիւնների յիշատակը, ասես թէ պատուելով խնայումէ բարեկամութեան յիշատակները այս անապատի մէջ, որ սոքա միշտ նոր ի նորոյ շարժեն իմ ցաւակցութիւնը մինչև իմ օրերի վերջը։

Այս խուղերի երկրորդը շինած ու վերջացած լինելով, և ահա դը Լա Տուր տիկինը ապատվեցաւ մի աղջիկ զաւակից։ Ես կնքահայր եմ եղած Մարգարիտի երեխային որ ասվումէր Պաւլոս։ Դը Լա Տուր տիկինը խնդրեց ինձանից անուն տալ իւր աղջկանը, ինչպէս բարի կը տեսանէի ես և նորա բարեկամուհին. սա անուն դրեց նորան Վիրգինիա, ասելով. «դա լինելու է առաքինի և երջանիկ. ես ծանօթացայ վատաբաղդութեանը խոտորվելով առաքինութեան ճանապարհից։»

Երբ որ դը Լա Տուր տիկինը վեր էր կացել մանկաբերութեան մահճից, այս փոքրիկ շինքերը ահա մի քանի արդիւնք էին բերում

այն հոգաբարձութեամբը որ ես ժամանակ առ ժամանակ ունէի նոցա մասին, բայց մանաւանդ թէ այս կանանց ժրաջլուխ ծառաների աշխատութենով։ Մարգարիտի ծառան, Դոմինիկոս անունով, էր մի սեաւ Եալոֆրացի, դեռ ևս առոյգ, թէպէտ բաւական տարիքով. սա մի փորձառու մարդ էր և ունէր բնատուր առողջ դատողութիւն։ Ընխտիր մշակումէր նա այս երկու շէնքերի մէջ այն հողերը որ երևումին նորան առաւել պտղաբեր, և ցանումէր այն տեղ սերմեր որ առաւել յարմարաւոր էին այս կամ այն հողին. նա սերմանումէր կորեակ և եգիպտահատ (սիմինդր) միջակային տեղերում, մի փոքր ցորեան լաւ հողերի վերայ, բրինձ գիշին յատակի վերայ, և ապառաժների ոտքումը Հնդկավարունգ, դդում և խեյար, որ սիրումէին դէպ ի վեր ոլորվիլ։ Նա տնկումէր գեղանախնձոր ցամաք տեղերում, ուր նա բուսանումէ շատ շաքարաւոր, բամբակ բարձր տեղերում, շաքարածին բոյսը զօրեղ հողի վերայ, զահվէի ճիւղեր բլուրների վերայ, ուր զահվէի հատիկները բուսանումէն մանր, բայց պատուական. գետի երկայնութենով և խուզերի շրջակայքումը տնկարկումէր բանանասի ծառեր (դրախտաթզենիք) որ բոլոր տարին անհատապէս բերումէն պտուղներ և տալիս են գեղեցիկ հովանաւորութիւն, և վերջապէս մի քանի թաբաքի բոյսեր, իւր և միւսերի հոգսերը քաղցրապէս թմրեցնելու համար։ Նա գնումէր վառելի փայտ կտրելու սարիցը և այս տեղ ու այն տեղ փշրելով ապառաժը հարթումէ ու հաւասարումէր ճանապարհը։ Նա կատարումէր այս գործերը խելացի և արի կերպով. պատճառ, իւր պաշտօնի մէջ շատ ջերմեռանդ էր. Նա շատ սիրով էր դէպ ի Մարգարիտը, Նոյնպէս դէպ ի ՀԸ Լա Ցուր տիկինը որի սեաւ աղախնի հետ ամուսնացած էր Վիրգինիայի ծնանելու ժամանակին։ Նա սիրումէր իւր կինը Մարիամ անունով, որ ծնած էր Մադագասկար կղզումը, ուստի բերել էր իւր հետ մի քանի արուեստագիտութիւն և մանաւանդ թէ տեղեակ էր զամբիւղներ և կերպասներ պատրաստելու այնպիսի խոտերից որ բուսանումէն անտառների մէջ. Նա յաջողակ, մաքրասէր և շատ հաւատարիմ էր. Նա հոգաբարձու էր կերակուր եփելու, հաւեր սնուցանելու և ժամանակ առ ժամանակ տանումէր դէպ ի Պորտ Լուի քաղաքը վաճառելու այս բնակութիւնների աւելորդ արդիւնքը, որ մի այնքան մեծ բան չէին։ Եթէ սորա վերայ յաւելացնենք երկու այծ, որ սնուցանվումէին երեխաների կողքին և մի գամիս որ գիշերին հսկումէր դուրսումը, ապա կարող էիք պատկերացնել ձեզ թէ ինչքան էր այս երկու փոքրիկ կալուածների բոլոր արդիւնքը և բոլոր սպասաւորքը։

Բայց այն երկու բարեկամ կանայքը բամբակ էին մանում առաւօտից մինչև երեկոյ. այս գործը բաւական էր որպէս նոցա յատկապէս,

նոյնպէս և նոցա զերդաստանի համար։ Միւս կողմից այնքան զուրկ էին նոքա օտարերկրեայ յարմարութիւններից, որ շրջումէին իւրեանց բնակարանի մէջ ոտաբոկիկ, և կրումէին կօշիկներ այն միջոցին միայն, երբ որ պիտոյ է կիւրակէ օրերին շատ վաղ պատարագ գնային դէպ ի Պամպըլմուսեան եկեղեցին, որ տեսանումէք ահա այն տեղ։ Բայց նա աւելի հեռի է այս տեղից, քան թէ Պորտ Լուի քաղաքը։ այս կանայքը, շատ փոքր էր պատահում, որ գնային քաղաք, կասկածելով թէ մի գուցէ այն տեղ արհամարհէին նորանց, որովհետև նոցա հագուստը էր Բենգալիայի կապոյտ խոշոր կտաւից, ինչպէս ստրուկների հագուստը։ բայց խելացի կշռելով այսպիսի հանգամանքներ, մի թէ հասարակութեան կարծիքը առաւել էր քան թէ ընտանեկան երջանկութիւնը։ եթէ այս կանայքը մի փոքր նեղութիւն էին կրում դուրսից, դորա փոխանակ այնքան ևս քաղցրանումէր նոցա սիրտը իւրեանց յատուկ օթեւանի մէջ լինելով։ Երբ որ Մարիամը և Դոմինիկոսը այս բարձրութեանից տեսած էին նորանց Պամպըլմուսեան ճանապարհի վերայ, խնդոյն վազումէին նոքա դէպ ի սարի ցածը, որ օգնեն նոցա վեր ելանելու։ Տեարքը կարդումէին իւրեանց ծառաների երեսի վերայ այն ուրախութիւնը որ զգումէին սոքա վերստին տեսանելով նորանց։ Նոքա տեսանումէին իւրեանց մէջ մաքուր կեցութիւն և ազատութիւն, և այս բարիքը իւրեանց յատուկ աշխատութեան արդիւնքն էին և իւրեանց ջերմեռանդ և տիրասէր ծառաների գործը։ Այս երկու կանայքը որ միաւորել էր մի և նոյն պիտոյքը, իւրեանց վերայ փորձած լինելով համարեա թէ միատեսակ ձախորդութիւններ, տալով միմեանց քաղցր անուններ «բարեկամուհի, կենակից և քոյր», ունէին մի կամք, մի ցանկութիւն, մի սեղան միայն։ Ամենայն ինչ հասարակաց էր նոցա մէջ։ և եթէ պատահումէր որ անցած օրերի սիրու կրակը աւելի սաստիկ քան թէ բարեկամասիրութեան կրակը զարթնումէր նոցա մէջ, այնուհետև մի մաքուր կրօն թեւեր ստանալով պարկեշտ բարքու վարքից, ուղղեցնումէր նոցա սիրտը դէպ ի մի այլ կողմ, ինչպէս կրակը չը դտանելով կերակուր երկրի վերայ, սլանումէ դէպ ի երկինք։

Քնութեան պարտականութիւնքը բաղմապատկումէին նոցա ընկերութեան երջանկութիւնը։ Նոցա փոխադարձ սէրը կրկնապատիկ զօրանումէր, երբ նոքա նայումէին իւրեանց զաւակների վերայ, որ հաւասարապէս անրաղդ սիրու պտուղներ էին։ Նոքա ուրախանումէին գնելով նորանց միասին մի և նոյն լուսայարանի մէջ, հանգստացնելով նորանց մի և նոյն օրօրոցի մէջ։ յաճախ ծիծ էին տալիս մինը միւսի երեխային։ —«Դմ բարեկամուհի», ասումէր դը Լա Տուր տիկինը, «իւրաքանչիւրը մեզանից կ՚ունենայ երկու մանուկ, և իւրաքանչիւրը մեր մանուկներից

կը ճանաչեն երկու մայր։ Ինչպէս երկու բողբոջք որ մնումէին երկու միատեսակ ծառերի վերայ, որոնց բոլոր ճիւղերը խորտակված էին փոթորկից, ասես թէ բերումն աւելի քաղցր պտուղներ, եթէ իւրաքանչիւրը նոցանից արձակվելով իւր մայրենի բունից, պատուաստած էր մերձաւոր բունի վերայ, նոյնպէս և այս երկու մանուկները ամենևին զրկված լինելով իւրեանց ծնողներից, ճոխանալու էին աւելի քնքուշ զգացողութիւններով, քան թէ որդիական և դստերական, եղբայրական և քուերական զգացողութիւնքն էին, երբ որ իւրեանց մէջ կը փոխանակէին մայրական սոնինքները երկու բարեկամ կանանց, որ ծնել էին նորանց։» Նոցա մայրերը խօսումէին ահա իւրեանց զաւակների ամուսնութեան մասին, նոցա օրօրոցների վերայ, և իւրեանց մտքումը պատկերացնելով նոցա գալոց ամուսնական երջանկութիւնը, որ մեծ մխիթարութիւն էր նոցա ցաւերի համար, շատ անգամ վերջանումէր խօսակցութիւնը արտասուք թափելով. մինը մտաբերելով թէ իւր ձախորդութիւնքը յառաջացած էին այն բանից, որ անփոյթ էր արել կուսութեան կնիքը, իսկ միւսը, թէ հնազանդել էր դորա օրէնքներին. մինը մտաբերելով թէ իւր անձը բարձրացրել էր իւր պաշտօնի վիճակից աւելի վեր, իսկ միւսը, թէ ցած էր իջել աւելի ներքև. բայց նոքա մխիթարվումէին մտածելով, թէ մի օր նոցա զաւակները Եւրոպական ցաւելի մոլորութիւններից հեռի, լինելու էին աւելի բաղդաւոր և կը վայելէին միանդամայն սիրու քաղցրութիւնը և հաւասարութեան երջանկութիւնը։

Դ։ արդարև, մի անհամեմատ բան էր այն սէրը որ ահա ցուցանումէին նոքա միմեանց. եթէ պատահումէր Պաւլոսին մի անախորժ բան, նորան ցոյց էին տալիս Վիրգինիան, և Պաւլոսը նայելով սորա երեսին ժպտումէր և մեղմանումէր։ Երբ որ Վիրգինիան մի ցաւ ունէր, դորան կարելի էր իմանալ Պաւլոսի լացիցը. բայց այդ սիրելի աղջիկը իսկոյն ծածկումէր իւր ցաւը, որ Պաւլոսը չը մորմոքվի դորանով։ Ես երբէք չեմ հանդիպած այս տեղ, որ չը տեսանէի այս երկու մանուկները հազիւ հազ քայլելով, մինը միւսին օգնելով, թևերի տակից բռնելով, ինչպէս որ պատկերացնումեն երկուորեակ եղբօրների համատեղութիւնը։ Նոյն իսկ գիշերը կարող չէր բաժանել նորանց միմեանցից. դա շատ անգամ վերայ էր հասանումէ նոցա հանգստացած մի և նոյն օրօրոցի մէջ թուշ թշի մօտ, կուրծքը կրծքի մօտ, ձեռքերով պատած միմեանց վիզը և քունը տարած մինը միւսի գրկի մէջ։

Երբ որ գիտէին նոքա խօսել առաջին անունները որ ուսան նոքա տալ միմեանց, էին եղբայր ու քոյր. երեխայութիւնը որ գիտէ աւելի քաղցր փայփայանք, չը գիտէ ոչինչ աւելի քնքուշ անուններ քան

թէ սոքա։ Եւ Նոցա դաստիարակութիւնը պիտոյ է միայն կրկնապատկէր այդ բարեկամութիւնը, հայեացք տալով Նորան դէպ ի Նոցա փոխադարձ կարիքը։ Հուտով, բոլոր անտեսական գործերը, զոր օրինակ մաքրութեան, շինական սեղանի պատրաստութեան հոգացողութիւնը դարձաւ Վիրգինիայի պաշտօնը, և Նորա աշխատութիւնքը գտանուէին գովասանութիւն և համբոյր իւր եղբօր կողմից։ Ինքը Պաւլոսը, անգադար գործի մէջ, փորուէր այգու հողը Դոմինիկոսի հետ, կամ թէ մի փոքրիկ կայնն ձեռքումը գնուէր Նորա հետ դէպ ի անտառը, և եթէ հանդիպուէր Նորան մի ծաղիկ, մի լաւ պտուղ, մի թռչունի բոյն, թէև լինէին դոքա մի ծառի կատարի վերայ, այնու ամենայնիւ ելանուէր դէպ ի վեր, որ առնու բերէ իւր քուեր համար։

Եթէ մի տեղ հանդիպուէիր Նոցա մինին, ապա կարող էիր միամիտ լինել, թէ հեռի չէ միւսը։ Մի օր ցած իջանելով այս սարի գագաթից, նկատեցի ես այգու վերջումը որ Վիրգինիան վաղուէր դէպ ի տուն, գլուխը ծածկած իւր շրջազգեստով որ բարձրացրել էր յետուստ, իւր անձը անձրևի հեղեղից պաշտպանելու համար։ Հեռուից ես կարծեցի Նորան մենակ, բայց յառաջ գնալով դէպ ի նա, որ օգնեմ Նորան, տեսայ որ նա բռնած էր Պաւլոսի ձեռքը և Պաւլոսը գրեթէ բոլորովին փաթաթված մի և նոյն ծածկոցով. երկուքը ևս ծիծաղելով, որ միասին գտած էին պատսպարան մի ինքնահնար անձրևապահի տակ։ Այս երկու պատանական գլուխքը խոնարհած այն ուռուցաւոր շրջազգեստի ներքոյ, միտքս ձգեցին Լեդայի (*) զաւակները, փակված մի և նոյն խեցեմորթի տակ։

Նոցա բոլոր ուսումը էր հաճոյանալ միմեանց և օգնել իրարաց փոխադարձաբար. միւս բաների մէջ տգէտ էին նոքա որպէս Ամերիկայում ծնած Եւրոպացիք և չը գիտէին ոչ կարդալ և ոչ գրել։ Նոքա անտիրտի էին այն բաների մասին որ անցած էին հեռաւոր ժամանակներով և նոցանից բացակայ. նոցա հարցասիրութիւնը չէր տարածվում այս սարից դուրս. նոքա կարծուէին, որպէս թէ աշխարհը վերջանում այն տեղ, ինչ տեղ վերջանում իրենց կղզին, և նոքա չէին կարող նկարագրել մտքով ոչինչ սիրելի բան այն տեղ, ուր չը կային ինքեանք։ Փոխադարձ սէրը Նոցա մէջ և Նոցա մօրերի մէջ, այն խնդիրն էր, որով զբաղված էին Նոցա սիրտն ու հոգին։ Անօգուտ գիտութիւնների ուսումն երբէք չէր հարկադրել Նորանց արտասուք թափել. մի տխրամիտ բարոյախօսութեան խրատներ չէին երբէք տաղտկացրած Նոցա սիրտը. Նոքա երբէք չը գիտէին թէ չէ պիտոյ գոռանալ, որովհետև ամենայն բան հասարակաց էր Նոցա մէջ. չը գիտէին նոյնպէս, թէ չէ

(*) Լեդան էր Եթոլիայի թագաւոր Թեստիոսի դուստրը և ունէր երկու արու զաւակ, Դասատոր և Պոլլուքս, և երկու դուստր Հելենէ և Կլիտեմնեստրա։

պիտոյ անչափաւոր լինել ուտելու և խմելու մէջ, որովհետև համարձակ էին նոցա համար պարզ կերակուրներ. խաբեբայութիւնը անյայտ էր նոցա, որովհետև ոչինչ պատճառ չունէին թաքուցանելու ճշմարտութիւնը։ Երբէք ահ չէին ձգած նոցա սիրտը, ասելով նոցա, թէ «Ստուած պահել է սոսկալի պատիժներ ապերախտ զաւակների համար». նոցա մէջ երեխայական բարեկամութիւնը ծնած էր մայրական բարեկամութենից։ Նոցա ուսուցել էին կրօնից այն բանը միայն, որ տալիս է սիրել կրօնը. և եթէ նոքա եկեղեցու մէջ չէին կատարում երկար ու ձիգ աղօթքներ, դորա փոխանակ, ամենայն տեղ, թէ տնումը, թէ դաշտումը և թէ անտառումը բարձրացնումէին դէպ ի երկինք իւրեանց անմեղ ձեռքերը և վերընծայումէին մի սիրտ, որ լի էր սիրով դէպ ի իւրեանց ծնողները։

Այսպէս ահա անցաւ նոցա առաջին մանկութիւնը որպէս մի գեղեցիկ առաւօտ որ գուշակումէ մի աւելի գեղեցիկ օր։ Ահա իւրեանց մօրերի հետ միասին մասնակից էին նոքա տնտեսութեան հոգսերին։ Երբ որ հաւախօսը յայտնումէր արևածագի վերադարձը, վեր էր կենում Վիրգինիան, երթումէր ջուր բերելու մօտակայ աղբիւրից և յետ էր գալիս տուն, նախաճաշիկ պատրաստելու։ Մի փոքր յետոյ, երբ որ արեգակը ոսկեպատումէր այս սահմանի սրածայր սարերը, Մարգարիտը և նոքա որդին գնումէին դէպ Լա Ցուր տիկնոջ օթևանը. ապա սկսանումէին ամենեքեան միասին աղօթել և յետոյ նախաճաշիկ առնել. շատ անգամ այդ նախաճաշիկը առնումէին նոքա դրան առաջև նստած խոտի վերայ հովանաւոր բանենեան ծառերի տակ, որ իւրեանց մեղմարար պտուղներով տալիս էին նոցա ահա պատրաստ կերակուր և իւրեանց լայն ու փայլուն տերևներով, սեղանի ծածկոց։ Մի առողջարար և առատ կերակուր ճաշելումէր այս երկու մանուկների մարմինը, և մի քաղցրը դաստիարակութիւն նկարագրումէր նոցա քաղցր կերպարանքի վերայ նոցա հոգու մաքրութիւնը և խաղաղութիւնը։ Վիրգինիան էր միայն տասներկու տարեկան. նորա մարմնի հասակը ցուցանումէր ահա իւր աւելի քան թէ կիսով չափ լրացած ձևաւորութիւնը. երկար խարտեաշ մազեր հովանաւորումէին նորա գլուխը. նորա կապոյտ աչքերը և նորա մարջանի պէս կարմրափայլ շրթունքը շողշողումէին աւելի քնքուշ փայլով նորա երեսի զուարթութեան վերայ։ Նոքա զուգաւորապէս ժպտումէին միշտ, երբ որ Վիրգինիան խօսումէր. բայց երբ որ նա լուռ էր, նոցա բնական խոտորնակութիւնը դէպ ի երկինք տալիս էր նոցա մի անչափ զգացող սրտի ցուցակութիւն և նոյնպէս մի թեթև տխրամտութեան կերպարանք։ Պաւլոսի մասին ասեմ այսքան. նորա մէջ կերպարանվումէր ահա երիտասարդի բնաւորութիւնը շնորհաշարդ

մանկութեան տարիների մէջ. Նորա հասակը աւելի բարձր էր քան թէ Վիրգինիայի հասակը. Նորա երեսի գոյնը աւելի թխացած, Նորա քիթը աւելի արծուանման և Նորա աչքերը որ սեաւ էին, պիտոյ է եթէ էր Նոցա մէջ մի փոքր հպարտութիւն. եթէ երկար թերթերուկները, որ շառաւիղուէին շուրջանակի որպէս նկարչի գրիչներ, չը տային Նոցա շատ մեծ քաղցրութիւն։ Թէպէտ նա միշտ շարժողութեան մէջ էր, բայց երբ որ Նորա քոյրը երևումէր, Պաւլոսը իսկոյն հանդարտումէր և գնումէր Նստելու Նորա մօտ։ Շատ անդամ անց էր կենում Նոցա հացկերութիւնը առանց մի բան խօսելու միմեանց հետ. նայելով Նոցա լռութեանը, Նոցա պարզամիտ կերպարանքին, Նոցա բոկիկ ոտերի գեղեցկութեանը, պիտոյ էր կարծել թէ տեսանումէր մի հին, սպիտակ մարմարիոնից շինած պատկերակարգ որ ներկայացնումէր Նիոբէի (*) զաւակներից քանի մինները. բայց միա գնելով Նոցա հայեացքներին որ որոնումէին հանդիպել միմեանց, Նոցա ժպիտներին որ փոխարինվումէին առաւել քաղցրը ժպիտներով, պիտոյ էր համարել Նորանց այն երկնաքաղաքացի զաւակները, այն երանելի հոգիքը որոնց ընութիւնը է սիրել միմեանց, որ և կարօտ չեն իւրեանց զգացողութիւնը բացայայտել մտածութիւններով, իւրեանց բարեկամութիւնը խօսքերով։

Ի վերայ այդր ամենայնի դը Լա Տուր տիկինը տեսանելով թէ իւր դուստրը օրէ օր փթթումէր և ծաղկումէր, Նորա հոգսերը յաւելանումէին Նոյնպէս Նորա քաղցր սիրու հետ։ Նա ասումէր ինձ երբեմն. «եթէ հանդիպէր ինձ մեռանել, ի՞նչ պիտի լինէր իմ Վիրգինիան առանց հարստութեան։»

Դը Լա Տուր տիկինը ունէր Ֆրանսիայումը մի մօրաքոյր, մեծատուն աղջիկ, հարուստ, պառաւ ևպաշտօնասէր, որ այնպիսի խստասրտութեամբ հրաժարվել էր օգնելուց սորան, երբ որ սա ամուսնացաւ դը Լա Տուր պարոնի հետ, մինչև դը Լա Տուր տիկինը ուխտ էր դրել իւր վերայ, որ երբէք չը մոռնայ Նորան որ և իցէ խնդրանքով, թէև լինէր ամենավերջին նեղութեան մէջ։ Բայց լինելով մայր, երկիւղ չունէր նա, թէև հասանէր Նորան ամօթ, տեղ չը հասանելով իւր խնդիրը։ Դը Լա Տուր տիկինը իմաց տուեց իւր մօրաքուրը թէ անակնկալ մահով վախճանած է իւր ամուսինը, աղջիկ է ծնած Նորան, և թէ որպիսի նեղութեան մէջ էր, հեռի լինելով իւր հայրենի աշխարհից, անօգ-

(*) Նիոբէ։ Թեբայի թագուհին ունէր տասներկու զաւակ հրաշալի գեղեցկութեանով. բայց ծաղր առնելով Լատոնայի վերայ, որ ունէր երկու զաւակ միայն, այսինքն Ապոլոն և Դիանա, անթաղացաւ կորուսանելով իւր զաւակը, ըստ որում Ապոլոնը և Դիանան կամենալով վրէժխնդիր լինել իւրեանց մօր անպատուութեանը, սպանեցին Նորանց։

նական և բեռնաւորված մի դաւակով։ Ոչինչ պատասխան չը ստացաւ դը Լա Տուր տիկինը. սա որ ուներ մի վեսմ բնաւորութիւն, կասկածում չէր, թէ պիտոյ է անպատուէ իւր անձը, ենթարկելով իւրեան այնպիսի ազգականի յանդիմանութիւններին, որ երբէք թողութիւն չէր տուած սորան, մի ցածատոհմիկ, թէպէտ առաքինի մարդու հետ պսակվելու համար։ Այս պատճառով դը Լա Տուր տիկինը ամենայն պատեհ ժամանակում գրումէր իւր մօրաքուերը, որ շարժէ Նորա գութը Վիրգինիայի վերայ. բայց շատ տարիք եկան ու գնացին, առանց մի մատնաչափ թուղթ ստանալու դորանից։

Վերջապէս 1738 թուականին, երեք տարի յետոյ քան թէ դը Լա Բուրդոնէ կուսակալը եկած էր այս կղզին, լուր ստացաւ դը Լա Տուր տիկինը, թէ այս պարոնը նամակ ունի յանձնելու Նորան իւր մօրաքուեր կողմից։ Նա շտապեց դէպ ի Պորտ Լուի, անտես առնելով այս անդամն թէ երևումէր վատ հանդերձով. պատճառ, մայրական ուրախութիւնը յաղթող դառնվեցաւ դէպ ի մարդ ցուցանելի ակնածութեան վերայ։ Արդարև, դը Լա Բուրդոնէ պարոնը տուաց Նորան մինամակ Նորա մօրաքուեր անունով։ Սա գրել էր իւր քուեր աղջկան այսպէս. «Դու արժանի ես քո անբաղդութեանը, ըստ որում ամուսնացար «մի շրջմոլիկ, անառակ մարդու հետ, և ախտերը կրումն իւրեանց «հետ իւրեանց պատիժը. քո ամուսնու կանխահաս մահը է մի արդար «պատիժ աստուածակոյս կողմից. դու շատ լաւ ես արած, գնալ հեռա«նալ դէպ ի այն դաղթական կղզիքը, քան թէ անպատուել քո ազգա«տոհմը Ֆրանսիայի մէջ։ Այլև դու գտանվումես այժմ մի բարեկից «աշխարհում, ուր ամենայն մարդ բաղդաւորվումէր բաց ի ծոյլերից։» Նորան այսպէս նախատելուց յետոյ, գովումէր ինքը իւր գլուխը։ Վասն ազատ մնալու, ասումէր նա, — «ամուսնութեան հետևանքներից որ յաճախ ողբալի էին, ես միշտ հրաժարվել եմ ամուսնութենից։» Բայց ստոյգը այս է. այդ աղջիկը լինելով փառասէր, կամեցած էր միայն մարդու գնալ մի իշխանաւորի. և թէպէտ նա շատ հարուստ էր, և պալատներումը ամենայն բանի համար սառնասիրտ էին բաց ի հարստութենից, պէտք ամենայնիւ չը գտաւ նա ոչ ոք, որ կամենար զուգաւորվիլ այդպիսի տգեղ և այդպիսի խստասիրտ աղջկայ հետ։

Լամնակի տակին յաւելացրել էր այդ պառաւ աղջիկը և այս. «Մի ըստ միջոչ քննելով գործը, շատև շատ յանձնեցի քեզ դը Լա Բուրդոնէ պարոնի պաշտպանութեանը։» Եւ արդարև յանձնել էր նա, բայց հետևելով այժմուս շատ հասարակեալ սովորութեանը որ մի պաշտպան մարդ աւելի երկիւղալի է կացուցանում, քան թէ մի յայտնի թշնամի. այսինքն, կամելով կուսակալի առաջև արդարացնել իւր խստասրտու-

թիւնը դէպ ի իւր քուեր դուստրը, բամբասել էր սորան, կեղծաւորվելով որպէս թէ ցաւակից է լինում Նորա դրութեանը։

Դը Լա Տուր տիկինը որի վերայ ամենայն թէև անփոյթ մարդ չէր կարող նայել առանց ցաւակցութեան և պատկառանքի, շատ սառնութեամբ ընդունվեցաւ դը Լա Բուրդոնէ պարոնից, որ յառաջուց վատ կարծիք էր ստացած Նորա մասին։ Կուսակալը լսելով այրի կնոջ պատմութեանը թէ իւր դրութեան և թէ իւր աղջկայ մասին յատկապէս, ոչինչ չը պատասխանեց, եթէ ոչ մի քանի կցկտուր խօսքեր.— «Կը տեսանեմ, . . . կը տեսանէք, . . . ժամանակով, . . . շատ վատաբաղդներ կան, . . . ինչ հարկաւոր էր գրգռել մի պատուելի մօրաքուեր տհաճութիւն, . . . Մեղաւորը դու ես։»

Դը Լա Տուր տիկինը յետ դարձաւ դէպ ի իւր օթեանը, սիրտը վիրաւոր և դառնութեամբ լի։ Տուն հասած, հանգստացաւ նա, ձգեց մօրաքուեր Նամակը սեղանի վերայ և ասաց իւր բարեկամ կնոջը. Տես ահա տասն և մի տարու համբերութեան պտուղը։ Բայց որովհետև այս ընկերութեան մէջ դը Լա Տուր տիկինն էր միայն, որ գիտէր կարդալ, ապա վեր կալաւ Նամակը և կարդաց Նորան բոլոր ժողոված գերդաստանի առաջև։ Ընթերցուածը աւարտված, իսկոյն ասաց Նորան Մարգարիտը, ուժգին շեշտելով խօսքը. «ինչ հարկաւոր են մեզ քո ազգականքը. մի թէ Աստուած բարձի թողի է արել մեզ. նա է միայն մեր Հայրը. մի թէ չենք ապրել մինչև այժմ երջանիկ. ինչու՞ ես վշտանում դու. չունիս արիական հոգի։» Մարգարիտը տեսանելով որ դը Լա Տուր տիկինը արտասվումէր, ընկաւ Նորա վզին և գրկախառնելով Նորան, ձայնատուեց. «ով պատուական բարեկամուհի». բայց իւր յատուկ հառաչանքը խեղդեց Նորա ձայնը։ Այս տեսարանի հանդէպ, Վիրգինիան խորասոյզ լինելով արտասուքի մէջ, փոխ առ փոխ սեղմումէր իւր բերանին և սրտին իւր մօր և Մարգարիտի ձեռքերը. և Պաւլոսը, աչքերը վառված բարկութենից, աղաղակումէր, կցկտումէր ձեռքերը, զարկումէր ոտքով. չը գիտելով թէ որից օգնութիւն խնդրէ։ Այս աղմուկը լսելով, մեծ վաղեցին Դոմինիկոսը և Մարիամը, և այնուհետև ոչինչ միւս բան լսելի չէր խուղի մէջ, բաց ի այսպիսի ցաւալից ձայներից. «ոհ, տիկին, իմ բարի տանտիկին . . . իմ մայր . . . մի լացիր։» Այսպիսի քնքուշ բարեկամութեան նշանները փարատեցին դը Լա Տուր տիկնոջ վիշտը. նա գիրկն առաւ Պաւլոսը և Վիրգինիան և ասաց նոցա խաղաղ երեսով. «իմ երեխայք, դուք էք իմ հոգսերի պատճառը, բայց դուք էք և իմ բոլոր ուրախութիւնը. ով իմ սիրելի երեխայք, ձախորդութիւնը հասել է ինձ դուրսից միայն, երջանկութիւնը դրած է իմ չորս կողմումը։» Պաւլոսը և Վիրգինիան չը հասկացան Նորա խօսքի խոր-

հուրդը, բայց երբ որ տեսան նորան հանդարտ, ժպտեցան նոքա, և սկսեցին փայփայել նորան։ Այսպէս յառաջ գնաց նոցա երջանկութիւնը և անցած անախորժութիւնը էր միայն մի փոթորիկ որ հանդիպումէ մի քաղցր եղանակի մէջ։

Այս երեխաների բարի բնութիւնը օրէ օր աւելի կերպարանք էր ստանում։ Մի կիւրակէ, արևարացի ժամանակին նոցա մայրերը գնացած լինելով Պանդրմուսեան եկեղեցին, պատարագ լսելու, մի Մարոնացի սեաւ կին երևեցաւ բանտեան ծառերի տակ, որ շրջապատումէին նոցա բնակութիւնը։ Այդ սեաւ կինը այնպէս մնաթափ էր որպէս մի ոսկերոտի և նորա վերայի հանդերձը էր մի պատառ խոշոր կտաւ, փաթեթած մէջքին։ Նա ընկաւ Վիրգինիայի ոտքերը, երբ որ սա պատրաստումէր նախաճաշիկ դերդաստանի համար, և ասաց նորան. «Մանուկ աղջիկ, ցաւակից եղիր մի աղքատ փախստական աղախնի. մի ամիս է ահա, որ ես այս սարերի մէջ թափառումեմ, կիսամեռ եղած սովից, յաճախ հալածվելով որսորդների ձեռքից և նոցա շներից։ Ես փախչումեմ իմ տիրոջից որ մի մեծատուն մարդ է և բնակումէ Սեաւ գետի մօտ։ Նա վարվել է իմ հետ, ինչպէս տեսանումես դու։» Նոյն միջոցին սեաւ կինը Վիրգինային ցոյց տուեց իւր մարմինը ակօսաձիգ արած խարազանի հարուածներով։ Սեաւ կինը յաւելացրեց. «ես կամենումէի ջրախեղդ անել իմ անձը, բայց խմանալով թէ դուք կենումէք այս տեղ, ասացի ես ինքս ինձ. որովհետև այս աշխարհում կային դեռ ես բարեսիրտ սպիտակամորթ մարդիկ, դեռ ես հարկաւոր չէր մեռանել։» Վիրգինիան, սիրտը շարժուելով բոլորովին, պատասխանեց նորան. «Հանգստացիր, դու անբաղդ արարած. կեր, կեր ահա». և նա տուեց նորան իւրայիններից համար պատրաստած նախաճաշիկը։ Ստրուկ կինը մի քանի բոպէի մէջ կուլ տուեց բոլոր նախաճաշիկը։ Վիրգինիան տեսանելով նորան կշտացնդած, ասաց նորան. «ով խղճալի դու, ես կամէի գնալ, քո համար շնորհ խնդրել քո պարոնից, որ տեսանելով քեզ զգալու էր ցաւակցութիւն դէպ ի քեզ։» — «Կամի՞ս տանել ինձ քո տիրոջ մօտ։ Ո՛վ հրեշտակ Աստուծոյ», պատասխանեց սեաւ կինը, «ես ամենայն տեղ կը գամ քո հետևից, ուր և կամէիր։» Վիրգինիան գանչեց իւր եղբայրը և խնդրեց սորանից որ ուղեկից լինի նորան։ Մարոնացի աղախինը տարաւ նորանց հեռավակ ճանապարհներով, անտառների միջով, բարձր սարերի վերայով, ուր նոքա մագլցելով վեր ելան շատ դժուարութեամբ, և լայն գետերի միջից, որոնց հունովը (ցած տեղովը) անց կացան նոքա։ Վերջապէս կէսօրին հասան նոքա մի բլուրի ոտք, Սեաւ գետի եղերքումը։ Նոքա տեսան այս տեղ մի վայելչաշէն տուն, երևելի տնկարկութիւնք և մեծ բազմութիւն ծառաներով որ պարապած էին ամենայն

տեսակ գործերով։ Նոցա տերը զբօսնումէր նոցա մէջ, մի ծխափող բերանումը և մի բամբուսեան գաւազան ձեռքին։ Սա էր մի բարձրահասակ, ցամաքամարմին մարդ, ձիթապտղագոյն, ներս ընկած աչքերով և սեաւ ու համակից յօնքերով։ Վիրգինիան, ամենևին շարժված սիրտը, բռնելով Պաւլոսի ձեռքից, մօտեցաւ կալուածատիրոջը և աղաչեց նորան ի սէր Աստուծոյ ներել իւր ծառային, որ մի քանի քայլ հեռի կանգնած էր քամակումը։ Նախ և յառաջ, կալուածատերը բանի տեղ չը դրեց այս երկու մանուկները չքաւոր ղգեստով, բայց երբ որ նկատեց Վիրգինիայի վայելուչ հասակը, նորա գեղեցիկ զլուխը, որի խարտեաշ մազերը թափվումէին մի կապոյտ վերարկուի վերայ, այլև երբ որ լսեց նորա ձայնի քաղցր հնչիւնը որ դողդողումէր, ինչպէս նորա բոլոր մարմինը, շնորհ խնդրելով նորանից, այնուհետև հանեց բերանից իւր ծխափողը, և իւր բամբուսեան գաւազանը բարձրացնելով դէպ ի երկինք, մի զարհուրելի երդումն արեց, թէ «ներումէր իւր ծառային ոչ թէ ի սէր Աստուծոյ, այլ ի սէր այս աղջկայ»։ Վիրգինիան նշանացի արեց ծառային, որ յառաջ գայ դէպ ի իւր տերը. բայց յետոյ փախաւ նա, և Պաւլոսը նորա քամակից։

Պաւլոսը և Վիրգինիան միասին վեր ելան բլուրի յետնակողմը, ինչ տեղից ցած էին իջել, և հասանելով կատարին, նստեցին մի ծառի տակ, վաստակած, քաղցած և ծարաւի. անօթի անցած էին նոքա հինգ մղոնից աւելի, սկսեալ արևաբացից։ Պաւլոսը ասաց Վիրգինիային. «իմ քոյր, ահա կէսօրից աւելի է. դու քաղցած ու ծարաւի ես. մի՞ք չենք գտանելու այս տեղ ոչինչ ուտելի բան. դարձեալ ցած իջանենք բլուրից, և գնանք հաց խնդրելու ծառայի տիրոջից։» Քա՛ լեցի, սիրելիդ իմ, պատասխանեց Վիրգինիան.— «նա անչափ շատ երկիւղ ձգեց իմ սրտի մէջ։ Մի՞ք բեր, ինչ որ մեր մայրը ասումէր երբեմն.» — «Զար մարդու հացը լցուցանումէ բերանը խաճով։» — «Ապա ինչպէս պիտոյ էր առնել» ասաց Պաւլոսը.— «այս ծառերը ոչինչ ուտելի պտուղներ չեն բերում. չը կայ այս տեղ ոչ մի տամարին, ոչ մի կիտրոնի ծառ, որ զովացներ քո ծարաւը։» — «Աստուած կ՚ողորմի մեզ», — ասաց Վիրգինիան.— «Նա լսումէ փոքրիկ թռչունների ձայնը, որ խնդրումեն նորանից կերակուր։» Այս խօսքը բերանից հանած, իսկոյն լսեցին նոքա մի աղբիւրի մրմնջիւն, որ վայր էր հոսում մի շրջակայ ապառաժից. նոքա վազեցին դէպ ի այն կողմը և շիջուցանելով իւրեանց ծարաւը սորա, բիւրեղից աւելի պայծառ ջրերովը, ժողովեցին և կերան մի փոքր կոտեմ, որ բուսած էր նոցա ափերումը։ Նայելով այս կողմ և այն կողմ, թէ արդեօք կարող էին գտանել մի փոքր հաստատ կերակուր, Վիրգինիան նկատեց անտառի ծառերի մէջ մի ընտանի մանուկ արմաւենի։ Կաղամբը

որ այս ծառի կատարը պարունակում էր իւր տերևների մէջ, մի շատ ընտիր կերակուր է. և թէպէտ նորա բունը չունէր այնքան հաստութիւն քան թէ մարդու սրունգը, բայց նա ունէր աւելի քան թէ 60 ոտնաչափ բարձրութիւն։ Արդարև, այս ծառի փայտը բաղկանում էր միայն մանրաթելերի պատատից, բայց կեղևի և պորտի մէջ դրած փայտը այնքան ամուր էր, որ դարձուցանում էր ամենալաւ կացինների բերանը, և Պաւլոսը չունէր իւր հետ և մի դանակ։ Նա մտաբերեց, որ կարելի է կրակ դնել ծառի ոտքին, բայց երևեցաւ մի այլ դժուարութիւն. նա չունէր կրակհան պողովատ, և բաց ի սորանից, այս ապառաժապատ կղզումը չկարծեմ թէ կարելի էր գտանել մի հատ գայլասաղ։ Հարկաւորութիւնը տալիս է հնարագիտութիւն, և շատ անգամ, առաւել օգտակար գիւտերը յառաջացած են առաւել չքաւոր մարդերի ձեռքով։ Պաւլոսը վճռեց մտքումը կրակ վառել, ինչպէս սովոր են վայրենաբնակ սեաւ մարդիկը. մի քարի անկիւնով մի փոքրիկ ծակ շինեց մի լաւ չոր ծառաճիւղի մէջ և դրեց սորան ոտքերի տակ. ապա քարի հատու բերանովը սրացրեց մի այլ կտոր նոյնպէս չոր ճիւղ այլ տեսակ ծառից. յետոյ այս սրածայր փայտի կոտորը, դրեց այն ճիւղի փոքրիկ ծակի մէջ և արագապէս պտոյտելով նորան ձեռքերի մէջ, ինչպէս պտոյտումն խառնիչ ճանկաւոր փայտը, շաքարաղը փրփրացնելու համար. մի քանի բոպէի մէջ տեսաւ նա, որ փայտեղէն մարմինների հպաւորութեան տեղից դուրս է դալիս ծուխ և կայծեր։ Նա ժողովեց ցամաք խոտեր և այլ ծառաճիւղեր և դրեց կրակը ընտանի արմաւենու տակ, որ և կարճ միջոցում վայր ընկաւ ահագին ճայթիւնով։ Կրակը պէտք եկաւ Նորան դարձեալ, կաղամբը իւր երկար փայտային և փշոտ պատենից յատակելու համար։ Վիրգինիան և Պաւլոսը կերան այս հում կաղամբից և Նորա մի բաժինը խորոված, մոխրի տակ. երկուքը ևս թուեցան նոցա հաւասարապէս համեղ։ Նոքա վայելեցին այս պարկեշտ սեղանը, շատ ուրախացած այն բարեգործութեան յիշատակովը, որ արած էին առաւօտուն։ Բայց այս ուրախութիւնը պղտորվեցաւ այն մտատանջութեանով, որի մէջ կարծումէին նոքա, թէ իւրեանց երկար բացակայութեամբը տանից, պիտոյ է վշտանար նոցա ծնողների սիրտը։ Վիրգինիան յաճախ դարձուցանում էր խօսքը այս առարկայի վերայ. բայց Պաւլոսը զգալով իւր նորոգված ղօրութիւնքը, հաւատացնում էր, թէ ինքեանք շուտով հանգստացնելու են իւրեանց ծնողքը։

Հայկերութենից յետոյ մեծ դժուարութեան մէջ էին նոքա. պատճառ, չունէին ոչինչ առաջնորդ որ ուղեցոյց լինէր նոցա դէպ ի տուն։ Պաւլոսը, որ ոչ մի բանի վերայ զարմանում չէր, ասաց Վիրգինիային. — «մեր խուղը նայում դէպ ի միջօրէի արեգակը. պէտք է

մեղ, ինչպէս այս առաւօտ, անցանել այս սարի վերայով որ դու տեսանու�մես այն տեղ իւր երեք սրածայր կատարներովը։ Արի՛ գնանք, իմ սիրելի։» Այս սարը էր Երէ+ «ԴԷ+ ասած լեառնը, որ ստացել է այս անունը իւր երեք սրածայր գլուխներից, որ ունին ստինքի ձև։ Այնուհետև ըլուրի վերայով ցած իջան Նոքա Սեաւ գետիցը դէպ ի հիւսիս, և մի ժամի ճանապարհից յետոյ հասան մի լայն գետի եզերք, որ փակումէր ճանապարհը։ Կղզու այս մասը լինելով ամենեին անտառապատ, այնքան փոքր ծանօթ է մեղ և այժմ իսկ, որ Նորա գետերից և սարերից շատերը չունին և անուններ։ Այն գետը որի ափի վերայ գտանվումէին Նոքա, պղպջակելով հոսումէ ապառաժեայ յատակի վերայ. այս ջրերի աղմուկը զարհուրանք ըներց Վիրգինիայի վերայ. սա չհամարձակվեցաւ ոտք կոխել այն տեղ, որ անցանէ հունիցը. այնուհետև Պաւլոսը շալակեց Վիրգինիային և այսպէս ընտանաւորված անց կացաւ գետի ալիքներն քարերի վերայից, թէև ջրերը աղմկալից էին։ — «Մի վախեցիր», — ասաց Նորան Պաւլոսը, — «ես զգուշումէ իմ անձը շատ պինդ, երբ որ քո հետ միասին էի։ Եթէ Սեաւ գետի կալուածատէրը հրաժարվէր կատարել քո խնդիրը և չը ներէր իւր ծառային, ես պատերազմած կը լինէի Նորա հետ։» — «Ի՞նչպէս», — ասաց Վիրգինիան, — «կարող էիր դու պատերազմել այդ յաղթանդամ և չար մարդու հետ։» — «Ի՞նչ վտանգի տակ ձգեցի ես քեզ. — ով բարի Աստուած, ինչպէս դժուարին է բարեգործութիւն առնելը, բայց հեշտ էր չարագործութիւնը միայն։» Երբ որ Պաւլոսը գետի ափումն էր, կամեցաւ շարունակել իւր ճանապարհը, տանելով իւր քոյրը շալակով. և քաղցր էր Նորան այսպէս վեր ելանել դէպ ի Երեք ստինք ասած սարը, որ տեսանումէր իւր աչքի առաջև կէս մղոն հեռաւորութեամբ. բայց շուտով նուաղեցան Նորա զօրութիւնքը, և նա հարկադրվեցաւ ցած դնել իւր բեռը և հանգստանալ իւր քուրը մօտ։ Այնուհետև Վիրգինիան ասաց Նորան. — «Իմ եղբայր, օրը երեկոյանումէ, դու դեռ ես ունիս կարողութիւն, բայց իմն թուլանումէ. թող ինձ այս տեղ և դարձիր միայնակ դէպ ի մեր բնակութիւնը, մեր ծնողների սիրտը հանգստացնելու համար։» — «Ոչ. իմ Վիրգինիա», — ասաց Պաւլոսը. — «ես չեմ կարող թողուլ քեզ այս տեղ միայնակ։ Եթէ գիշերը վերայ կը հասանէ մեղ այս անտառի մէջ, ես կրակ կը վառեմ, վայր կը ձգեմ մի ընտանի արմաւենի, դու կ՚ուտես Նորա կաղամբը, և ես Նորա տերևներից կը պատրաստեմ մի օթևան, քեզ պատսպարելու համար։» Բայց Վիրգինիան, մի փոքր հանգստանալուց յետոյ, ժողովեց մի հին ծառարուտի վերայից որ շեղված էր դէպ ի գետափը, սկսելով ամենդր խոտի երկար տերևները որ կախված էին այն տեղից, և դոցանով շինեց մի տեսակ կիսա-

կոշիկ և պատեց իւր ոտքերը, որ վիրաւորված էին ճանապարհի քարերից։ պատճառ, Վիրգինիան մեծափոյթ լինելով բարեգործութեան մէջ, մոռացել էր կոշիկ հագնել։ Այս տերևների դալարութենից նորոգված զգալով իւր անձը, կտրեց նա մի բամբուսի ճիւղ և ճանապարհ ընկաւ, մի ձեռքով հաստատված այս եղէգնի վերայ և միւսովը իւր եղբօր վերայ։

Այսպէս, հանդարտ քայլով յառաջ էին գնում նոքա անտառի միջովը։ բայց ծառերի բարձրութիւնը և նոցա տերևների խտութիւնը, շուտով ծածկեցին նոցա աչքից երկնքստինեան սարի տեսութիւնը, ուր ուղղեցուցած էին նոքա իւրեանց ընթացքը, այո և արեգակը որ արդէն մօտ էր մտանելու։ Մի քանի ժամանակից յետոյ, նոքա անգիտութեամբ դուրս եկան այն յայտնի շաւղից, որով մինչև այժմ ճանապարհորդած էին, և այնուհետև գտանվումէին մի ծառախիտ, փաթեթարոյս և ապառաժեայ լաբիրինթոսի մէջ, որ ոչինչ տեղից չունէր դուրսի ելք։ Պաւլոսը նստել տուց Վիրգինիային և սկսեց վազել այս կողմ և այն կողմ, ամենեին շուարված և որոնելով մի ճանապարհ, որ դուրս տաներ այդ խիտ անտառից, բայց զուր եղաւ նորա աշխատութիւնը։ Նա վեր ելաւ մի բարձր ծառի կատար, որ աչքի տակ ձգէ գոնեայ երկնքստինեան սարը։ բայց նա ոչինչ չտեսաւ իւր շրջակայքումը բայց ի ծառերի կատարներից, որոնցից մի քանիքը լուսաւորված էին արևմտի վերջին ճառագայթներովը։ Բայց սարերի ստուերը ծածկել էր արդէն ձորերի անտառները։ հողմը հանդարտումէր, ինչպէս պատահումէ արևմըտի ժամանակը, մի խորին լռութիւն թագաւորումէր այս անապատների մէջ և ոչինչ աղմուկ լսելի չէր, եթէ ոչ գոչիւնը եղջերուների, որ գալիս էին որոնելու իւրեանց օթևանը այս առանձնութեան մէջ։ Պաւլոսը յուսալով, գուցէ թէ մի որսորդ մոտակայքումը կարող էր լսել նորա ձայնը, սկսեց աղաղակել ամենայն զօրութենով։ — «Եկեցէ՛ք, օգնութիւն հասուցէք Վիրգինիային,» բայց անտառի արձագանքը միայն պատասխանեցին նորա ձայնին, կրկնելով այսպէս. — Վիրգինիա՜... Վիրգինիա՜։ —

Այնուհետև Պաւլոսը ցած իջաւ ծառից վաստակած և տըրտում։ Նա հնարք որոնեց անցուցանել գիշերը այս տեղ։ բայց այս տեղ չկար ոչ աղբիւր, ոչ ընտանի արմաւենի և ոչ իսկ չոր փայտի ճիւղեր որոնցով կարելի էր կրակ վառել։ Ապա փորձով իմացաւ նա, թէ ինչպէս թոյլ և անզօր էին իւր կարողութիւնքը, և սկսեց լալ։ Վիրգինիան ասաց Նորան. — «Մի՛ լայիր, իմ բարեկամ, եթէ չը կամիս դու ցաւեցնել ինձ։ Ես եմ, որ եղայ քո վշտերի պատճառը որպէս և այն ցաւերի պատճառը, որ այժմ զգումեն մեր մայրերը։ Զէ պիտոյ ոչ-

ինչ բան առնել և ոչ իսկ լաւ բան, առանց խորհուրդ հարցանելու իւր ծնողներից. արդարև, ես շատ անխոհեմ գտանվեցայ», և այսպէս խոսելով Վիրգինիան, սկսեց արտասուք թափել։ Բայց Նա ասաց Պաւլոսին. — «Արի աղօթենք առ Աստուած, իմ եղբայր, և Նա դթալու է մեզ։» Իւրեանց աղօթքը աւարտած, իսկոյն լսեցին Նոքա մի շան հաչիւն։ «Այս շունը,» — ասաց Պաւլոսը. — «պիտոյ է պատկանի մի որսորդի որ երեկոյեան պահուն գալիս էր այս տեղ, զարանագործութենով սպանելու եղջերուներ։» Մի փոքր յետոյ շան հաչիւնը աւելի զօրացաւ։ «Ինձ երևումէ,» — ասաց Վիրգինիան. — «որ սա մեր Ֆիդելն է, մեր տան շունը. այո, ես ճանաչումեմ Նորա ձայնը. մի թէ մեք այսպէս մօտ էինք մեր ընակութեանը, հասած էինք մեր սարի ոտքին։» Ցիրաւի, մի բոպէ յետոյ մօտեցաւ Նոցա Ֆիդելը, հաչելով, ոռնալով, հեծեծելով և ամենեին փայփայելով Նորանց։ Դեռ ևս չը կարողանալով իւրեանց ուշը ժողովել, նկատեցին Նոքա իւրեանց Դոմինիկոս ծառան որ վազումէր դէպ ի Նոցա կողմը։ Այս բարեսիրտ սեաւ ծառան հասանելով Նոցա, արտասուեց ուրախութենից. Նոքա ևս սկսեցին լալ, առանց կարողանալու մի բառ ասել Նորան։ Երբ որ Դոմինիկոսը հաւաքել էր իւր ուշը, խօսեց այսպէս. «Ո՛վ իմ մանուկ պարոններ, ինչ անհանգստութեան մէջ են ձեր մայրերը. ինչքան զարմացած էին Նոքա, չը գտանելով ձեզ դարձեալ, երբ որ յետ էին եկած պատարագից, ուր ես ուղեկից էի եղած Նոցա։ Մարիամը որ աշխատումէր օթևանի մի անկիւնումը, չը կարողացաւ ասել մեզ, թէ ո՞ւր էիք գնացած դուք։ Ես գնումէի և գալիս էի մեր ընակութեան շրջակայքումը, չգիտելով ինքս, թէ ինչ տեղ որոնեմ ձեզ։ Վերջապէս, ձեր հին զգեստները վեր առայ ես և տուեցի հոտոտելու Ֆիդելին, և այս չնչին անասունը, որպէս թէ հասկացած էր իմ խորհուրդը, իսկոյն սկսեց հոտառութեամբ որոնել ձեր ոտերի հետքը. նա անդադար շարժելով պոչը, առաջնորդեց ինձ մինչև Սեաւ գետը. այս տեղ ահա լսեցի ես մի հողատիրոջից, թէ դուք դարձուցել էիք Նորա մօտ մի մարոնացի սեաւ կին, և թէ այս հողատերը ցուցել է ձեզ իւր շնորհը. բայց ինչ շնորհ. նա ցոյց տուեց ինձ այդ կինը, մի շղթայ ոտքին, կապած մի կոճղի վերայ, և մի երկաթի, երեք ճանկերով վզակապ պարանոցի վերայ։ Այն տեղից Ֆիդելը, միշտ որոնելով, տարաւ ինձ Սեաւ գետի բլուրի վերայ, ուր դադարեց Նա սաստկապէս հաչելուց. այս պատահեց մի աղբիւրի ափումը, մի վայր կործանած արմաւենու մօտ և մի կրակի մնացակայքումը, որ դեռ ևս ծուխ էր արձակումը։ Վերջումը Նա բերեց ինձ այս տեղ. մեք գտանվումենք երեքստինեան սարի ոտքումը, և այս տեղից մինչև մեր օթևանը կայ դեռ ևս չորս օրինաւոր մղոն։ Ահա ձեզ. կերեցէ՛ք և զօրութիւն ստա-

ցէք։» Դոմինիկոսը իսկոյն յանձնեց Նոցա մի քաքար, պտուղներ, և մի դդումի սրուակ լցրած մի հեղանիւթով ջրից, գինուց, կիտրոնի հիւթից, շաքարից, մշկահոտ ընկուզից, որ Նոցա մայրերը պատրաստել էին իւրեանց զաւակները կաղդուրելու և զուարթացնելու համար։ Վիրգինիան հոգոց հանեց յիշելով ազքատ մարոնացի ստրուկ կինը և իւրեանց մօրերի անհանգստութիւնը։ Նա ձայն արձակեց կրկին և կրկին անգամ.—«Ո՛վ, ինչպէս դժուար է բարեգործութիւնը։» Պաւլոսը և Վիրգինիան կաղդուրուումին իւրեանց անձը, Դոմինիկոսը կրակ վառեց և որոնելով ապառաժների մէջ մի խոտորնակ փայտ, որին ասումն պահպանների փայտ, որ և վառվումէ ամենեին դալար, տարածելով մի մեծ ըոց, շինեց Նորանից մի վառուն ջահ, որովհետև ահա գիշեր էր։ Բայց Նորան հանդիպեց մի այլ դժուարութիւն, երբ որ պէտք էր ճանապարհ ընկնել. Պաւլոսը և Վիրգինիան չէին կարող յառաջ գնալ. Նոցա ոտքերը ուռած ու ամենեին կարմրացած էին։ Դոմինիկոսը չը գիտէր, թէ ինչ պիտոյ է առնել. Նոցանից հեռանալ արդեօք և օգնութիւն բերել Նոցա, թէ այս տեղ գիշեր անցուցանել Նոցա հետ։—«Ո՛ւր է այն ժամանակը,»—ասումէր Նոցա,—«երբ որ ես կրումէի իմ գրկումը ձեզ երկուսդ միասին. բայց այժմ դուք մեծացած էք, և ես ծերացած։» Երբ Դոմինիկոսը այսպիսի տարակուսանքի մէջ էր, մի բազմութիւն մարոնացի սեաւ մարդերի, երևեցաւ քսան քայլաչափ հեռաւորութենով այն տեղից։ Այս բազմութեան գլխաւորը մօտենալով Պաւլոսին և Վիրգինիային, ասաց Նոցա.—«ով բարի սպիտակ մանուկներ, մի՛ վախեցէք. մեք տեսանք ձեզ գնալով այս առաւօտ մի սեաւ կնոջ հետ, որ Ինաւ գետի սահմանից է. դուք կամենումիք շնորհ խնդրել Նորա համար իւր վատթար հողատիրոջից։ Որպէս նշան երախտագիտութեան, ահա մեր ուսերի վերայ կը տանենք ձեզ դէպ ի ձեր օթևանը։» Ապա նշանացի արեց գլխաւորը և չորս սեաւ Մարոնացի, յաղթանդամ մարդիկ, իսկոյն կազմեցին մի պատգարակ ծառերի ճիւղերից և պատատաբոյս տունկերից, տեղաւորեցին Նորա վերայ Պաւլոսը և Վիրգինիան և դրեցին իւրեանց ուսերի վերայ։ Դոմինիկոսը յառաջ գնալով իւր ջահը ձեռքին, ճանապարհ ընկան Նոքա, ուրախութեան ձայն բարձրացնելով խմբովին և օրհնաբանելով այն մանուկները։ Վիրգինիայի սիրտը քաղցրացաւ այս բանի վերայ. նա ասումէր Պաւլոսին.—«Ո՛վ իմ բարեկամ, Աստուած ոչ մի ժամանակ չէ թողում բարեգործութիւնը անվարձ։»

Դէպ ի գիշերամէջ հասան Նոքա իւրեանց սարի ոտքին և Նորա կատարը լուսաւորած էին բազմաթիւ ճրագներով։ Վեր ելանելով սարի վերայ, իսկոյն լսեցին Նոքա ձայներ, որ աղաղակումէին.—«Այս դո՛ւք էք, իմ երեխայք.» սոքա պատասխանեցին սեաւերի հետ միասին.

«այո մեք ենք,» և շուտով Նկատեցին իւրեանց մայրերը, և Մարիամը որ նոցա առաջևից գալիս էր վառուն ջահերով։ «Անլաղդ երեխայք,» — ձայն տուեց Դը լա Տուր տիկինը, — «Ինչ տեղից էք գալիս. որ պիսի տագնապ ու տարակուսի մէջ ձգեցիք դուք մեզ։» — «Մեք գալիս ենք,» — ասաց Վիրգինիան, — «Սեաւ գետի սահմանից, ուր գնացած էինք շնորհ խնդրելու մի մարոնացի աղքատ ստրուկի համար, որին ես տուած էի այս առաւօտուս մեր գերդաստանի նախաճաշիկը, որովհետև նա մի ռանուսմեր սովից. և ահա սեաւ Մարոնացիքը յետ են բերել մեզ։» — Դը լա Տուր տիկինը գրկախառնեց իւր աղջիկը, առանց կարողանալու խօսել. և Վիրգինիան զգալով իւր երեսը թաց եղած իւր մօր արտասուքից, ասաց նորան «Դու վճարուիս ինձ այն բոլոր յաւերի փոխարէնը, որոնց համբերել եմ ես։» Մարգարիտը մի անսահման ուրախութեան մէջ, ընդունեց Պաւլոսը իւր գրկի մէջ և ասաց նորան։ «Եւ դու, իմ որդի, արած ես մի բարեգործութիւն։» — Երբ որ երկու մայրերը իւրեանց զաւակների հետ միասին եկած էին դէպ ի իւրեանց օթևանը, առատապէս կերակրեցին այն սեաւ Մարոնացիքը և սոքա վերադարձան դէպ ի իւրեանց անտառը, մաղթելով նոցա ամենայն տեսակ բաղդաւորութիւն։

Ամենայն օր երջանկութեան և խաղաղութեան օր էր այս գերդաստանների համար։ Ոչ նախանձը, ոչ պատուասիրութիւնը չէին տանջում նոցա սիրտը. նոքա չէին որոնում դուրսից մի մնոտի բարեհամբաւութիւն որ տալիս է գաղտնի հնարագործութիւնը, որ և խլում է բամբասանքը. լաւական էր նոցա ինքնին լինել իւրեանց վկայ ու դատաւոր։ Այս կղզումը, ուր, ինչպէս ամենայն եւրոպական գաղթականքների մէջ, ոչինչ բանի այնքան հետաքրքիր չէին, որչափ վատարանական զրոյցների, նոցա առաքինութիւնը և նոցա անունները անծանօթ էին. միայն թէ, երբ որ մի անցաւոր մարդ պատմելումեսնան ճանապարհի վերայ հարցանումեր դաշտավայրի բնակիչներից, թէ ինչ մարդիկ վերևումը բնակումեին այս փոքրիկ խուղերի մէջ. նոքա, առանց ճանաչելու սորանց, ասումեին. «Դոքա լաւ մարդիկ են։» Այսպէս ահա մանուշակները փշուտ թուփերի տակ դուրս են շնչում դէպ ի հեռաւոր տեղեր իւրեանց անոյշ խնկահոտութիւնքը, թէև ինքեանք անտեսանելի էին։

Դոքա արտաքսել էին իւրեանց խօսակցութիւններից չարախօսութիւնը, որ կերպարանվելով որպէս արդարութիւն, հարկաւորապէս տրամադրումէ սիրտը դէպ ի ստրկութիւն կամ խարդախութիւն. պատճառ, անկարելի է չատել մարդիկը, եթէ մեք համարումենք նորանց չար, և ապրել չար մարդերի հետ առանց վարագուրելու իւր ատելութիւնը կեղծաւոր բարեացակամութեամբ։ Այսպէս, չարախօսութիւնը հար-

կարդումէ մեզ ուրիշների հետ լինել վատ, կամ թէ անմիաբան մեր հետ իսկ յատկապէս։ Բայց այս երկու այրի կանայքը, առանց դատելու մարդիկը մանաւորապէս, ոչինչ խօսակցութեան նիւթ չունէին, եթէ ոչ, այն հնարների վերայ, թէ ինչպէս պիտոյ էր բարի առնել ամենեներին առ հասարակ։ և թէպէտ չունէին նոքա այդ մասին կարողութիւն, բայց ունէին մի հաստատապէս բարի կամք, որ լցուցանումէր նոցա սիրտը մի բարեացակամութենով որ միշտ պատրաստ էր տարածվիլ դէպ ի դուրս։ Ուրեմն ապրելով առանձնութեան մէջ, ոչ թէ նոքա վայրենացած չէին, այլև դարձել էին աւելի ազնիւ մարդիկ։ Եթէ ընկերութեան մէջ եղած խայտառակ զբոյցները չէին տալիս նիւթ նոցա խօսակցութեանը, սորա հակառակ զբոյցները բնութեան վերայ, լցուցանումէին նոցա սիրտը երջանկութենով և ուրախութենով։ Նոքա սքանչանալով պաշտումէին այն նախախնամութեան կարողութիւնը, որ նոցա ձեռքով տարածել էր այս չոր ու ցամաք ապառաժների մէջ առատութիւն, վայելչութիւն, մաքուր, պարզ և միշտ մանուկ ուրախութիւնք։

Պաւլոսը տասերկու տարեկան հասակում, աւելի յաղթանդամ և աւելի խելացի լինելով քան թէ Եւրոպացոց երեխայքը տասն և հինգ տարեկան հասակի մէջ, զեղեցկազարդել էր այն հողը, որ Դոմինիկոսը մշակել էր միայն։ Սորա հետ գնումէր Պաւլոսը դէպ ի շրջակայ անտառները, արմատախիլ առնելու կիտրոնի, նարնջի, տամարինի մանուկ տունկեր, որոնց բոլորակաձև գլուխը ունի այնքան գեղեցիկ կանաչագոյութիւն, և մանուկ արմաւենիք, որոնց պտուղը լի է մի շաքարեղէն հիւթով, որ այնպէս խնկահոտ է, ինչպէս նարնջի ծաղիկը։ Նա տընկումէր այս ծառերը որ ահա մեծացած էին, այս սահմանի շրջակայքումը։ Նա ցանած էր այն տեղ և ծառի սերմեր, որ սկսեալ երկրորդ տարուց ծաղկումեն կամ թէ պտուղ են բերում։ զոր օրինակ Ագաթիսը, որի վերայ ամենեին շուրջանակի կախ են ընկնում սպիտակածաղիկ երկար խաղողներ, ինչպէս բիւրեղքը աշտանակից։ այլև Պարսկաստանի սրնգածառը, որ ուղիղ դէպ ի վեր է արձակում իւր կտաւագորշ ոստերը Ճրագարանի բաղուկների պէս։ սեխածառը որի բունը առանց ճիւղերի ձևակերպելով մի սիւն, որի վերայ դուրս էին ցցվում կանաչ սեխեր, կրումէ մի գլխապսակ պնպիսի լայն տերևներով, որպէս թզենու տերևքն էին։

Այս տնկել էր այլևս կորիզներ և սերմեր բադամենի, Մանդջի, Ադվոկատ, Գոյիաբա, Եաբա ծառերի, և աֆրիկային վարդաթուփեր։ Այս ծառերի մեծ մասը տալիս էր ահա իւր պատանի տնկողին և հովանաւորութիւն և պտուղ։ Նորա աշխատասէր ձեռքը տարածել էր

արգասաւորութիւնը (պտղաբերութիւնը) մինչև շատ ամուլ տեղերը այս ձորի մէջ։ Զանազան տեսակ հալուէի ծառեր, Հնդկաթզենին, բեռնաւորված դեղին կարմրերակ ծաղիկներով, փշային տատասկներ բարձրանումէին ապառաժների սեաւ կատարների վերայ, և երևումէր, թէ կամէին հասանել երկայնաձիգ լեռնեան տունկերին կապոյտ և ծիրանի ծաղիկներով որ այս տեղ և այն տեղ կախած էին սարի դէպ ի վայր կողերը։

Ես կարգադրել էր այս տունկերը այնպէս, որ կարելի էր մի հայեացքով աչքի տակ ձգել նոցա տեսութիւնը։ Նա տնկել էր այս ձորի մէջ խոտեր որ ունէին կարճ հասակ, ապա թուփեր, յետոյ միջակ ծառեր, վերջումը հսկայ ծառեր որ սահմանաւորումէին նոցա շրջապատը, այնպէս, որ այս ահագին սահմանափակը երևումէր իւր կենտրոնից որպէս մի ամփիթէատրոն, կանաչութեամբ, պտուղներով և ծաղիկներով զարդարված, իւր մէջ ամփոփելով ուտելի բանջարներ, մարգեր, ցորենի և ցորենի արտեր։ Բայց Պաւլոսը այս տունկերը ստորադրելով իւր խորհրդի տակ, ինքը չէր խոտորվել բնութեան խորհրդից։ այլ իւր առաջնորդ ընտրելով նորա ազդարարութիւնքը, բարձր տեղերի վերայ տնկել էր այնպիսի ըոյսեր, որոնց սերմերը թռչողական էին, և ջրերի ափերումը այնպիսի սերմեր, որոնց հատիկները կարող էին շրջել ջրերի երեսումը։ այսպէս, ամեն մի տունկ աճումէր իւր յատուկ հողի վերայ, և ամենայն հող ստանումէր իւր տունկից իւր բնական վայելչութիւնը։ Ջրերը որ իջանումէին այս ապառաժների կատարից, կերպաւորումէին ձորի խորութեան մէջ, այս տեղ աղբիւրներ, այն տեղ լայնատարած ջրեղէն հայելիք, որ զետեղված դալարավայրի միջոցումը, կրկնապատկումէին ծաղկազարդ ծառերը, ապառաժները և երկնակամարի կապոյտ գոյնը։

Իմէպէտ և այս հողասահմանը շատ անհաւասար էր, այնու ամենայնիւ այս տնկարկութիւնքը ըստ մեծի մասին այնքան ևս մօտենալի էին ձեռքին, ինչքան աչքի համար։ արդարև մեք բոլորևքեանքս օգնել ենք նորան մեր խորհրդով ու գործով, որ այդ բանը գլուխ բերվի։ Նա յարգարել էր մի պողոտայ որ պտոյտվումէր այս ձորի չորս կողմով և ինչ տեղից շատ ճիւղեր տարածվելով հասանումէին շրջապատիցը դէպ ի կենտրոն։ Նա օգտակար էր կացուցել շատ և շատ անհարթ տեղերը ևս, և ամենայաջող զուգադատշաճութեամբ կապակցումէր զբօսանքի հեշտութիւնը հողի դժուարութեան հետ և ընտանի ծառերը վայրենի ծառերի հետ։ Այս գիւրաթաւալ քարերի անչափ բազմութենից, որ այժմ դժուարացնումէն այս ճանապարհները որպէս և այս կղզու հողի մեծ մասը, Պաւլոսը այս տեղ և այն տեղ ձևաւորել էր

բուրգեր, որոնց կոյտերի միջոցումը խառնել էր հող և վարդենու արմատներ, սիրամարգատուտեր և այլ թուփեր, որ սիրումեն լինել ապառաժի մէջ. փոքր ժամանակում այս տրտում և կոպիտ բուրգերը զարդարվեցան կանաչով, կամ թէ ամենագեղեցիկ ծաղիկների փայլով։ Սարերի խոռոչները եղերապատ հին ծառերով որ խոնարհվումեին դէպ ի եղերքը, ձևաւորումեն գետնափոր կամարներ, ջերմութեան համար անմատչելի, ուր ցերեկով գնումեին հաց ուտելու։ Մի պողոտայ առաջնորդումէր դէպ ի մի վայրենի ծառաստան, որի միջնավայրումը ամուռէր հողմերից պաշտպանված մի ընտանի պտղաբեր ծառ. այն տեղ կար մի հնձելի արտ, այս տեղ մրգեղէնի այգի։ Այս ծառաբեր ճեմելիքից կարելի էր նկատել Իւրեանց օթևանները, միւս ծառաբեր գնացքից կարելի էր տեսանել սարի անմատնելի կատարները։ Մի խիտ փոքրիկ անտառի մէջ, ուր թաթամաք ծառերը զուգահիւսած էին պատատերոյսերի հետ, միջօրէի պահուն չէր կարելի որոշել ոչինչ առարկայ։ Այս գրացի մեծ ապառաժի այն տեղից որ դէպ ի վեր է բարձրանում սարերի վերայ, կարելի էր տեսանել այս շրջափակի բոլոր ապառաժները, ծովի հետ միասին հեռաստանումը, ուր երևումէր մի նաւ կամ գալով Եւրոպայից կամ թէ վերադառնալով դէպ ի այն տեղ։ Ահա այս ապառաժի վերայ, երեկոյին հաւաքվումեին այս երկու գերդաստանքը և խաղաղութեամբ վայելումեին օդի զովութիւնը, ծաղիկների խնկահոտութիւնը, աղբիւրների մրմնջիւնը և երեկոյեան պահու աղոտալոյս գեղեցկութիւնը։

Ոչինչ այնքան ախորժելի չէր, ինչքան անուանակոչութիւնը, որ տուած էին այս Լաբիրինթոսի մէջ դրած քաղցր առանձնարաններից շատերին։ Այս ապառաժը, որի մասին ասացի ձեզ ահա, ինչ տեղից կարողանումեին տեսանել ինձ շատ հեռուից, ասվումէր Բաբելոնաբնակ յայգեռնին։ Պաւլոսը և Վիրգինիան իւրեանց խաղալու միջոցին, տընկել էին այն տեղ մի բամբուսեան եղէգնաբոյս, որի ծայրումը կախեցին մի փոքրիկ սպիտակ թաշկինակ, իմ գալուստը նշանացոյց առնելու, երբ որ տեսած էին ինձ. զոր օրինակ, դրօշակ են հաստատում մի դրացի սարի վերայ, երբ որ տեսած էին մի նաւ ծովի վերայ։ Ես մտաբերեցի մի մակագիր փորել այս եղէգնատունկի բունի վերայ։ Ինչքան և ուրախացած էի իմ ճանապարհորդութիւնների մէջ տեսանելով մի հին արձան կամ յիշատակարան, և՛ս առաւել ուրախացած իմ կարդալով մի պատշաճաւոր մակագիր. այնուհետև երևումէ ինձ, որպէս թէ մի մարդկային բարբառ ձայն էր տալիս քարի միջից, լսելի էր ինձ անցած գնացած դարերի խորքիցը, և դէմքը դարձուցանելով դէպ ի մարդը այս անապատների մէջ, ասումէր նորան., — « Դու մենակ չես. այլ մար-

դիկ ևս այս տեղերումն զդացել են, մտածել են և չարչարվել են որպէս դու։» Եւ եթէ այս մակագիրը պատկանումէ մի հին աղգի որ չը կայ այժմուս, ապա դա ընդարձակումէ մեր հոգին դէպ ի անեզրականութեան սահմանները և տալիս է Նորան զգալ իւր անմահութիւնը, ցուցանելով Նորան թէ մի աղգի մտածութիւն կենդանի էր դեռ ևս, թէև դորա թագաւորութիւնը կործանված էր ահա։

Այսպա գրեցի ես Պաւլոսի և Վիրգինիայի դրոշակի փոքրիկ կայմի վերայ այս խօսքերը Հորատիոսի·

... Fratres Helenae, lucida sidera,
Ventorumque regat pater,
Obstrictis aliis, praeter japyga.

«Ո՛վ Հելենայի եղբայրներ, լուսապայծառ աստեղք դուք,
Թող հողմերի հայրը կառավարէ ձեզ, ամենայն միւս հողմերից
Հեռի պահելով ձեզ բաց ի քաղցր զեփիւռիցը։»

Մի թաթամաք ծառի կեղևի վերայ, որի հովանաւորութեան տակ նստումէր երբեմն Պաւլոսը, որ հեռուից նկատէ ալէկոծված ծովը, փորեցի ես այս ոտանաւորը Վիրգիլիոսի·

«Fortunatus et ille deos qui novit agrestes.»

«Երջանիկ է նա, որ ծանօթ է շինական աստուածներին։»

Դէ՛ լա Տուր տիկնոջ խուղի դրան վերայ, ուր սովորաբար հաւաքվումէին նոքա, գրեցի այսպէս·

At secura quies et nescia fallere vita.

«Այս տեղ թագաւորումէ մի անխռով խաղաղութիւն և մի կեանք, որ չը գիտէր խաբեբայութիւն»։

Բայց Վիրգինիան չհաւանեցաւ իմ լատինական մակագրին. նա ասումէր, թէ իմ գրածը իւր հողմադրոշակի ոտքումը շատ երկար ու գիտնական է։ — Ես աւելի լաւ կը համարէի, ասաց նա, եթէ լինէր այսպէս· «Միշտ շարժուն, բայց հաստատ և անփոփոխ։» Այդ խորհրդաւոր խօսքը, պատասխանեցի ես Նորան, աւելի շատ պատշաճ էր առաքինութեանը։ Մտածութիւնը կարմրութիւն բերեց Նորա թշերի վերայ։

Այս երջանիկ գերդաստանները ընդարձակումէին իւրեանց զգացող սիրտը դէպ ի ամենայն բան որ շրջապատումէր Նորանց. նոքա տուած էին շատ քաղցր անուններ այնպիսի առարկաների, որ ըստ երևութին շատ հասարակ բաներ էին։ Մի բոլորակ որ կազմումէին նա-

բընջի, բանանի և ամերիկեան վարդի ծառեր, շրջապատելով մի խոտաւէտ տեղ, որի մէջ Վիրգինեան և Պաւլոսը գնումէին կաքաւելու, ասվումէր Մէ-բանու-ինն։ Մի հին ծառ որի ստուերի տակ Դը լա Տուր տիկինը և Մարգարիտը պատմած էին միմեանց իւրեանց ձախորդութիւնքը, ասվումէր Սբ-ծ աբաստոտ։ Նորա տուած էին անուններս Բրնտայն և Նորմանդիա այն փոքրիկ հողաբաժիններին, ուր նորա սերմանած էին ցորեան, ելակ, ոլորն։ Դոմինիկոսը և Մարիամը նմանելով իւրեանց տիկնայցը, իւրեանց հայրենի աշխարհը Աֆրիկայի մէջ մտաբերելու համար, Անգօլա և Ֆուլեպոյինտ անուններ տուած էին այն տեղերին, ուր բուսանումէր այդ խոտը, որից պատրաստումէին նորա զամբիւղներ, և մի դդմենի, որի պտուղները գործ էին ածումէ որպէս սրուակ։ Ահա այս բերքերովը իւրեանց կլիմաների, այս պանդխտացած գերդաստանքը քաղցրացնումէին իւրեանց սիրտը, երևակայելով, որպէս թէ իւրեանց հայրենիքումն էին և դորանով թեթևացնումէին իւրեանց վիշտը մի օտարութեան մէջ։ Ո՛հ. ես տեսած եմ հազար տեսակ քաղցր անուններով անձնաւորված այն ծառերը, աղբիւրները, ապառաժները այս տեղի, որ այժմուս այնքան վեր ի վայր է եղած, և Յունաստանի դաշտերի պէս չէ ցուցանում այլևս ոչինչ միւս բան, եթէ ոչ աւերակներ և գուլթ շարժող անուններ։

Բայց, այս ձորի մէջ եղած բոլոր բաներից ոչ մինը այնքան ախորժելի չէր, ինչքան այն բանը որ ասվումէր Վիրգինիայի Հանգիստ։ Բաբելամու-ինն յայտնու-ինն անունով ապառաժի ոտքումը գտանվումէ մի խորութիւն, ինչ տեղից բղխումէ մի աղբիւր կերպաւորելով իսկոյն մի փոքր լճի, մի Ներբախոտ մարգագետնի մէջ տեղումը։ Երբ որ Մարգարիտը աշխարհ էր բերել Պաւլոսին, ես ընծայեցի Նորան մի կոկոսեան նուշ Հնդկաստանից, որ տուած էին ինձ։ Նա տնկեց այդ պտուղը այս փոքրիկ լճի ափումը այն խորհրդով, որ նորանից յառաջացած ծառը մի օր լինի իւր որդու ծննդեան տարեգլուխ։ Դը լա Տուր տիկինը նմանելով նորա օրինակին, տնկեց այն տեղ մի այլ նուշ, նմանապիսի դիտաւորութեամբ, երբ որ ծնել էր իւր Վիրգինիա դուստրը։ Այս երկու պտուղներից գոյացան երկու կոկոսենիք, որ կացուցանումէին այս երկու գերդաստանի բոլոր յիշատակարանքը. դոցա մինը ասվումէր — Պաւլոսի ծառ և միւսը — Վիրգինիայի ծառ։ Դոքա երկոքեանը աճումէին նոյն համեմատութեամբ, ինչպէս նոցա մանուկ տերերը, թէպէտ մի փոքր անհաւասար բարձրութեամբ, բայց տասներկու տարուց յետոյ աւելի բարձր էին, քան թէ այս խուղերի բարձրութիւնը։ Ահա սկսել էին դոքա զուգախառնել իւրեանց ճիւղերը և ցած էին թողել իւրեանց մանուկ կոկոսապտուղքը աղբիւրի աւազանի վերայ։ Բաց ի այս տնկար-

կուԹենից, նոքա �թողել էին այս ապառաժի ձորը այնպէս, ինչպէս բնուԹիւնը զարդարել էր նորանց։ Այդ ապառաժի �թուխ և խոնաւ կողերի վերայ փայլումէին կանաչ ու սեաւ ասաղների լայնարձակ հնարայսներ, և հողմերի կամքին �թողած ծփումէին Սկօլօպանդրի փունջերը ցած կախված որպէս երկար ժապաւէններ ծիրանաներկ կանաչ գունով։ Սորանից մօտ ամումէին ձմեռնականաչ ծառատունկեր, որոնց ծաղիկները գրեԹէ նման էին կարմիր լեկոյի ծաղկին, և պղպեղի ծառեր որոնց ունդերի պատեանքը արիւնի գունով աւելի փայլուն էին քան ԹԷ մարջանը։ Շրջակայքումը բալասանի բանջարներ, որոնց տերևները սրատաձև, և լեկոյահոտ ոեհաններ բուրումէին ամենաքաղցր անուշահոտուԹիւնք։ Սարի դէպ ի վեր բարձրուԹենից կախած էին պատատարոյսներ, նմանելով տարուբերական վարագուրերի, որ ապառաժների կողերի վերայ ձևաւորվումէին որպէս մեծամեծ կանաչազարդ առագաստներ։ Ծովի �թռչունքը մօտ քարշվելով դէպ ի այս խաղաղ պատսպարանները, գալիս էին այս տեղ դիշեր անցուցանելու։ Արևամտին տեսանումէին նոցա �թռիչքը դէպ ի այս կողմ, ծովի երկայնուԹենով. օդապարիկ �թռչունը և ծովային արտուտը և բարձրասլաց ֆրեգաթը հրաժարվումէին, ինչպէս օրի լուսաւորը, Հնդկային ովկիանոսի անապատներից։ Վիրգինիան սիրումէր հանգստանալ այս աւազանի ափումը, որ զարդարած էր և փառահեղ և վայրենի կերպով. յաճախ գալիս էր նա այս տեղ, գերդաստանի կտաւիքը լուանալու երկու կոկոսենիքի հովանաւորուԹեան տակ։ Երբեմն տանումէր նա այն տեղ արածելու իւր այծերը. այն միջոցին, երբ նա նոցա կաթից պանիր էր պատրաստում, քաղցր էր նորան տեսանել այծերը, որ արածումէին հերարոյսերը ապառաժերի սեպացած կողերի վերայ, և պահվումէին օդի մէջ, ոտնակառոյցք ունենալով ապառաժի եղերագոտիների մինի վերայ, որպէս մի պատուանդանի վերայ։ Պաւլոսը տեսանելով, ԹԷ այս տեղը սիրելի էր Վիրգինիային, տարաւ այն տեղ մերձակայ անտառից ամենայն տեսակ �թռչունների բոյներ։ Այս �թռչունների հայրերը և մայրերը հետևեցան իւրեանց ձագերին և օթևան հաստատեցին այս նոր գաղԹաշէնքումը։ Վիրգինիան ժամանակ առ ժամանակ տալիս էր նոցա ըրնձի, սիմինդրի և կորեկի հատիկներ. երբ որ Վիրգինիան երևումէր այս տեղ, սուլիչ սարեկները, ընդալիսք, որոնց ճռուեղելը այնքան քաղցր էր, կարդինալքը, որոնց փետուրքը փայլումէին հրաշեկ, դուրս էին գալիս իւրեանց մացառներից. փոքրիկ �թուԹակներ այնպէս կանաչ որպէս ԹԷ զմրուխտից էին, իջանումէին դրացի լատանեան ծառերից. կաքաւները մօտ էին վազում խոտերի տակից և ամենքեան խառնիխուռն երագելով մտանումէին նորան ինչպէս ընտանի հաւեր։

Պաւլոսը և Վիրգինիան հիանալով ուրախանումէին նոցա խաղարկութեան, նոցա ախորժակի և նոցա սիրակցութիւնների վերայ։

Սիրարժան մանուկներ. դուք անմեղութեամբ անցուցանումէք ձեր առաջին օրերը, կրթելով ձեր անձը բարեգործութիւնների մէջ. քանի՛ անգամ այս տեղումը ձեր մայրերը փակելով ձեզ իւրեանց գրկի մէջ, օրհնումէին վերին տեսչութիւնը այն մխիթարութեան համար, որ դուք պատրաստումէք նոցա ծերութեանը, և տեսանելով որ դուք այդպիսի բարենշան կերպով ոտք էիք կոխել կեանքի սեմի վերայ։ Քանի՛ անգամ այս ապառաժների ստուերի տակ ես մանկիից եմ եղած նոցա պարզ շինական սեղանին, որ ոչ մի անասունի կեանք վերացուցել չէր։ Դդումի սրուակներ, կաթնով լցրած, թարմ ձուեր, ըրնձալից կարկանդակներ, բանանի տերևների վերայ եփած, սակառներ բեռնաւորած պատատի, մանգոյի պտուղներով, նարինջներով, բանանի մրգերով, արմաւով, անանասով տալիս էին մեզ և շատ առողջ կերակուր, պայծառացնումէին մեր սիրտը և իւրեանց շատ զուարթ գունեերով և շատ ախորժելի հիւթերով։

Խօսակցութիւնը էր նոյնպէս շատ քաղցր և անմեղ, ինչպէս այս հացկերութիւնը. Պաւլոսը խօսումէր յաճախ ցերեկի և գալոց օրի աշխատանքների վերայ. նա միշտ հնարագործումէր մի օգտակար բան այս ընկերութեան համար։ Դա մտածումէր թէ այս տեղ պողոտայքը չէին յարմար, այն տեղ վատ էր կացութիւնը, այս մանուկ սարփինայքը չէին տալիս բաւական հովանաւորութիւն. Վիրգինիային աւելի լաւ էր այս տեղ կամ այն տեղ։

Աշնանային օրերը միասին անցուցանումէին նոքա խուղի մէջ, թէ տեարքը և թէ ծառայքը զբաղված փսիաթ (խոէր) գործելով խոտերից, և սակառներ հիւսելով բամբուսից։ Ամենաձիշդ կարգով դասաւորած էին պատերի երեսին տրմուխներ, կայիններ, բահեր, և այս երկրագործական պարագայքների մօտ դրած էին ժողոված բերքերը, ըրնձի պարկեր, ցորենի որայք և բանանի մրգեր։ Այդ պտուղների պատուականութիւնը կից էր միշտ և առատութեան հետ։ Վիրգինիան ուսած լինելով Մարգարիտից և իւր մօրից, պատրաստումէր օշարակ (շարբաթ) և ստամոքի զօրացուցիչ ըմպելիք շաքարաբոյսի, կիտրոնի, սեղրայի հիւթից։

Դիշերը հասած, նոքա ուտումէին ընթրիքը լապտերի լուսով. յետոյ Դը լա Տուր տիկինը կամ Մարգարիտը պատմումէր մի քանի ղէպքեր ճանապարհորդ մարդերի մասին, որ մոլորված էին Եւրոպայի անտառների մէջ, ուր բնակումէին աւազակներ. կամ թէ մի նաւի խորտակութիւն, որ փոթորիկը նետել էր մի անապատ կղզու ապառաժնե-

րի վերայ։ Այս զրոյցներին ունկնդիր լինելով մանուկները, բորբոքվումէին նոցա զգայող սիրտքը։ Նոքա խնդրումէին Աստուծուց, որ մի օր արժանացնէ Նորանց այն շնորհին, որով կարող էին Նոքա հիւրասիրութիւն ցուցանել այդպիսի անբաղդ ճանապարհորդների։ Այս երկու գերդաստանքը բաժանվումէին միայն, որ գնան հանդստանալու, և անհամբեր սրտով սպասումէին միմեանց կրկին տեսութեանը։ Երբեմն յաղթումէր նոցա քունը անձրևի խռովութեան միջոցին, երբ դա հեղեղի պէս թափվումէր նոցա խուղերի ծածկոցի վերայ, կամ թէ հողմերի աղմկից, որ հասուցանումէին նոցա ականջին հեռաւոր մռմռումը ալիքների, որ ջաղջախվումէին ծովեզերքի վերայ։ Նոքա օրհնումէին Աստուած իւրեանց անձնական ապահովութեան համար և կրկնապատիկ զգումէին նորա յարգը, համեմատելով հեռաւոր վտանգին։

Յամանակ առ ժամանակ Դը լա Տուր տիկինը հրապարակապէս կարդումէր որ և իցէ սիրտ շարժող պատմութիւն Հին և Նոր կտակարանից։ Նոքա շատ փոքր դատողութիւն էին գործում այս սուրբ գրքերի վերայ. պատճառ, Նոցա աստուածաբանութիւնը էր սրտի մէջ, ինչպէս բնութեան աստուածաբանութիւնը, և Նոցա բարոյախօսութիւնը էր ամենեին գործի մէջ, ինչպէս Աւետարանի բարոյախօսութիւնը։ Նոքա չունէին որոշած օրեր ուրախութեան կամ տրտմութեան համար. ամենայն օր Նոցա համար տօնի և խնդութեան օր էր, և բոլոր Նոցա շրջակայքը էր մի տաճար, ուր Նոքա երկիւղածութեամբ պաշտումէին միշտ մի անեղբական իմաստութիւն, մի ամենակարող և մարդասէր գերագոյն էակ։ Այս լիասիրտ հաւատը դէպ ի Ամենարարձրեալ կարողութիւնը, մխիթարումէր Նոցա սիրտը անցածի ու գնացածի մասին, քաջալերումէր Նոցա հոգին ներկայի համար և տալիս էր Նոցա յոյս գալոց օրերի վերայ։ Այսպէս ահա, այդ կանայքը ձախորդութիւնից ստիպված յետ դառնալ դէպ ի ընութիւնը, դաստիարակել էին իւրեանց մէջ և իւրեանց այն զգայողութիւնքը, որ տալիս է ընութիւնը, մեզ հեռի պահելու համար վատաբաղդութիւնից։

Բայց, զոր օրինակ Երբեմն բարձրանումն և շատ բարեկարգ հոգու մէջ ամպեր որ նսեմացնումէին Նորան, սոյնպէս, երբ որ մինը այս ընկերութեան մէջ երևումէր տրտում, բոլոր միւսերը հաւաքվումէին Նորա չորս կողմը, և Նորան դուրս էին քարշում այն դառն մտածութիւնների միջից, սրտի բղխուածներով աւելի, քան թէ խորհրդածութիւններով։ Ամեն մինը ցուցանումէր այս տեղ իւր առանձին բնաւորութիւնը. Մարգարիտը մի զուարթ սիրտ, Դը լա Տուր տիկինը մի քաղցր աստուածխօսութիւն, Վիրգինիան քնքուշ փայփայանք, Պաւլոսը պարզութիւն և անխարդախ սէր. Մարիամը և Դոմինիկոսը դալիս էին սո-

բան օգնութիւն. նոքա տեսնելով սորան տրտում, և արտասվումին տեսանելով թէ արտասվում սա։ Այսպէս տկար տունկերը զուգահառնվումն միմեանց հետ, որ միասին կարողանան ընդդիմանալ փոթորիկներին։

Տարու գեղեցիկ եղանակի միջոցին, ամենայն կիւրակէ գնումէին նոքա ժամ դէպ ի պամպրլմուսեան եկեղեցին, որի զանգակատունը տեսանումէք դուք այն տեղ։ Այն տեղ գալիս էին հարուստ երկրացիք պալանկիներով (ԷՐԵԼԷ ՆՈՅՊԱՆՆԵՐՈՎ), որ շատ անգամ ջանադիր էին լինում ծանօթանալ այս շատ միարան գերդաստանների հետ և հրաւիրել նորանց ուրախակից լինել իւրեանց. բայց սոքա համեստութեամբ և պատկառանքով մերժումէին նոցա առաջարկութիւնքը, քաջ գիտելով թէ մեծատուն մարդիկը որոնումն փոքրիկները այն խորհրդով միայն, որ ունենային հաճոյախօս ընկերներ, և թէ անհնար էր մարդահաճութիւն առնել, առանց գովասանելու միսի թէ բարի և թէ վատթար ախտերը։ Միւս կողմից նոյնպիսի զգուշութեամբ հեռի էին նոքա ընտանի կենակցութենից գռեհիկ բնակիչների հետ, որ սովորաբար նախանձոտ, բամբասող և կոպիտ էին։ Մինների աչքումը երևումէին սոքա վեհերոտ, և միսերի աչքումը ամբարտաւան, բայց նոցա զգոյշ գնացքը կից էր այնպիսի քաղցր քաղաքավարութեան հետ, մանաւանդ դէպ ի թշուառականները, որ նոքա առ սակաւ սակաւ պատկառելի դարձան և հարստականների աչքումը և հաւատ դտան աղքատների սրտումը։

Համից յետոյ շատ անգամ գալիս էին խնդրելու նոցանից որ և իցէ բարի շնորհ. պատահումէր մի տրտում անձն որ խորհուրդ էր հարցնում նոցանից, կամ թէ մի երեխայ, որ խնդրումէր նոցանից այցելութիւն առնել իւր հիւանդ մօրը մի դրացի թաղում։ Նոքա տանումէին իւրեանց հետ մի քանի օգտակար բժշկական դեղեր սովորական հիւանդութիւնների համար, յաւելացնելով դոցա վերայ մի մարդասէր սիրտ որ տալիս էր այնքան արժանաւորութիւն փոքրիկ բարեգործութիւններին։ Նոքա յաջողապէս կարողանումէին մանաւանդ թէ փարատել հոգևոր վշտերը որ այնքան անտանելի են առանձնութեան և տկար մարմնի մէջ։ Դը լա Տուր տիկինը խօսումէր այնպիսի ջերմ հաւատով դէպ ի Աստուածութիւնը, որ հիւանդը ունկնդիր լինելով նորան, կարծումէր թէ ներկայ է Աստուած։ Վիրգինիան շատ յաճախ յետ էր գալիս այդպիսի այցելութիւններից, աչքերը արտասուախառն, բայց սիրտը լի ուրախութիւնով. պատճառ, նա ունեցած էր դիպող ժամանակ բարի գործելու։ Սա էր որ յառաջուց պատրաստումէր ցաւագարների հարկաւոր դեղերը, որ և մատուցանումէր նոցա մի անասելի շնորհալից կերպով։ Այսպիսի մարդասիրական այցելութիւններից յետոյ

Նոքա երկարաձգումէին իւրեանց ճանապարհը Լայնասարի ձորի միջովը մինչև իմ օթեւանը, ուր ես սպասումէի նոցա, ճաշ ուտելու փոքրիկ գետի ափումը որ հոսումէ իմ մերձակայքումը։ Այս հացկերութեան համար, ես պատրաստումէի մի քանի սրուակ հին գինի մեր հնդկական սեղանի ուրախութիւնը յաւելացնելու Եւրոպայի քաղցր և զօրացուցիչ բերքերով։ Մի այլ օր ժամադիր էինք լինում միմեանց հետ ծովի ափումը, մի քանի փոքրիկ գետերի բերանի մօտ, որ չէին այս տեղ, բայց միայն մեծամեծ վտակներ։ Մեր օթեւանից տանումէինք այն տեղ բուսական պաշար, յաւելացնելով դորա վերայ այն ուտելի բաները, որ առատութեամբ տալիս էր մեզ ծովը։ Մեք որսումէինք նորա ափերումը քարոտներ, պոլիպոդք, կարմրափետուրք, տեսակ տեսակ ծովային խեցդետիններ, ջրային ոզնիք, ոստրէայք և ամենայն կերպ խեցեմորթներ։ Առաւել սոսկալի կայարանքը շատ անգամ տալիս էին մեզ և առաւել խաղաղ ուրախութիւնք։ Երբեմն նստած մի ապառաժի վերայ, մի բարխտածառի հովանաւորութեան տակ, տեսանումէինք լայնարձակ ծովի հեղեղքը որ դալիս էին և ջաղջախվումէին մեր ոտքի տակ ահագին ճայթիւնով։ Պաւլոսը որ դիտէր այնպէս քաջ լողալ որպէս ձուկն, երբեմն ալիքների ընդդէմ յառաջ էր գնում դէպ ի ծովածայռերը։ Յետոյ, երբ որ մնանումէին ալիքները, փախչումէր նա դէպ ի ծովափը, հեռանալով այն փրփրացող, հեծեծող ոլոր ոլոր հոսանքներից որ հալածումէին նորան մինչև ցամաքեղը։ Բայց Վիրգինիան տեսանելով այս բանը, արձակումէր սաստիկ աղաղակ, և ասումէր թէ այս խաղարկութիւնքը պատճառումէին նորան ահ և երկիւղ։

Մեր հացկերութենից յետոյ երգեր էին ասում և կաքաւումէին այս երկու մանուկները։ Վիրգինիան երգումէր շինական կենաքի երջանկութիւնը և ձախորդութիւնքը նաւարկուների, որոնց պատճառ էր տալիս ագահութիւնը ճանապարհորդել այդպիսի կատաղի տարրի վերայ, քան թէ մշակագործել երկիրը որ խաղաղութեամբ տալիս է այդքան բարութիւնք։ Երբեմն սեաւերի պէս նա մենջկատակութիւն էր առնում Պաւլոսի հետ։ Այս մենջկատակութիւնը կամ նշանախօսութիւնը է մարդու առաջին լեզուն. այդ բանը ծանօթ է ամենայն ազգերի, այնքան բնական և այնքան քաջ յայտարար, որ սպիտակ մարդերի ղաւակները անյապաղ ուսանումեն այդ լեզուն, երբ որ տեսած էին սեաւերի երեխայքը որ խօսումէին նշանացի։ Վիրգինիան մտաբերելով իւր մօր կարդացած բաներից այն պատմութիւնքը որ առաւել շարժել էին նորա սիրտը, միւսանգամ պատմումէր գլխաւոր անցքերը շատ քաղցը պարզմտութենով։ Ապա Դոմինիկոսը դարկելով թմբուկը, Վիրգինիան երևումէր մի խոտաւէտ դաշտի վերայ, մի կուժ գլխի վերայ

գրած, երկիւղալից յառաջ գնալով դէպ ի մի մերձակայ աղբիւրի աւազան, որ ջուր հանէ այն տեղից։ Դոմինիկոսը և Մարիամը պատկերացնելով Միդիանու խաշնարածքը, չէին թողում Վիրգինիային մնաելնալ աղբիւրին և ձեւաւորվումէին որպէս թէ կամէին հալածել նորան։ Պաւլոսը գալիս էր օգնելու նորան, թակումէր խաշնարածքը, լցուցանումէր Վիրգինիայի սափորը և դնելով սորան նորա գլխի վերայ, զարդարումէր նորան մի պսակով ձմեռնամանուշի կարմիր ծաղիկներից, մի պսակով որ պայծառացնումէր Վիրգինիայի երեսի սպիտակութիւնը։ Այնուհետև ես մանանկից լինելով նոցա խաղարկութեանը, կերպարանվումէի որպէս Հռագուէլ և խոստանումէի փեսայացնել Պաւլոսին իմ դուստր Սեփորան։

Մի այլ անգամ կերպարանվումէր Վիրգինիան որպէս անբաղդ Հռութը, որ այրեացած և աղքատ վերադառնումէ դէպ ի իւր հայրենիքը, ուր երևումէ պանդուխտ, երկար լացակայութենից յետոյ։ Դոմինիկոսը և Մարիամը ձեւացնումէին հնձարարքը։ Վիրգինիան կեղծաւորումէր, որպէս թէ նորա քամակից ժողովումէ այս տեղ և այն տեղ մի քանի ցորենի հասկեր։ Պաւլոսը նմանելով մի նահապետի ծանրաբարոյութեան, բան էր հարցնում Վիրգինիայից, և սա դողալով պատասխանումէր նորա հարցուածներին։ Շուտով դէպ ի գութ շարժվելով Պաւլոսը, հիւրասիրութիւն էր ցուցանում անմեղութեանը և տալիս էր պատսպարան անբաղդին։ Նա լցուցանումէր Վիրգինիայի գոգնոցը ամենայն տեսակ պաշարներով և բերումէր նորան մեր առաջի որպէս քաղաքի ծեր մարդերի մօտ, յայտնելով մեզ թէ նա կամի ամուսնանալ նորա հետ, թէև դա չքաւոր էր։ Դը լա Ցուր տիկինը այս տեսարանի մէջ պատահմամբ միաք բերելով, թէ ինչպէս բարձի թողել էին արել նորան իւր յատուկ աղգականքը, իւր այրիութիւնը, այն քաղցը ընդունելութիւնը որ ցուցել էր նորան Մարգարիտը, չկարողացաւ զսպել արտասուքը։ և այս յիշատակութիւնը խառն վատի և լաւի հետ, ստիպեց մեզ ամենեցունց տրտմութեան և ուրախութեան արտասուք թափել։

Այս դրամատիկեան գործողութիւնքը այնքան ստուգութեամբ յանդիման կացուցվեցան, որ կարծէիր թէ տեղափոխված ես Ասորեստանի կամ թէ Պալեստինայի դաշտերի մէջ։ մեք պակաս չարեցինք թէատրոնական զարդերը, ճրագավառութիւնը և օրքեստրը, ինչպէս պատշաճ էր այս տեսարանին։ Ցուցարանը էր սովորաբար մի երկճիւղ անցքի վերայ անտառի մէջ, որի կտրած գնացքները ձեւացնումէին մեր չորս կողմով տերևաղարդ կամարներ շատ։ մեք կայինք նոցա կենտրոնումը, պաշտպանված ջերմութեան երեսից բոլոր ցերեկի միջոցին.

բայց երբ որ արևը ցած էր իջել դէպ ի հորիզոնը, նորա ճառագայթքը կոտրատվելով ծառերի բուներից, տարածվումէին անտառի նեմուրեան մէջ որպէս երկար լուսափայլ որպէս, յառաջացնելով մի շատ հրաշափառ ազդեցութիւն։ Շատ անգամ արեգակի բոլորակը ամենեին երևումէր մի ծառաղարդ ճեմելիքի վերջում և բոլորովին պատումէր սորան կայծակնացայտ լուսով։ Ծառերի տերևազարդութիւնը վերեկից լուսաւորվելով նորա դաշտրանի ճառագայթներովը, շողշողումէր տապալոնի և զմրուխտի փայլողութեանով։ Նոցա մամուռապատ և թուխ բուները երևումէին յեղափոխված որպէս հին ժամանակի բրենվեղէն սիւներ։ և թռչունները, որ ահա յետ էին քարշվել դէպ ի հանգիստ, տերևների նեմուրեան տակ, գիշեր անցուցանելու համար, զարմացած էին տեսանելով մի երկրորդ արևածագ և ամենեքեան միասին ողջունումէին ցերեկի լուսաւորը հաղար և հաղար երգասացութեանով։

Գիշերը շատ անգամ յանկարծակի վերայ էր հասանում մեզ այս շինական տօների մէջ։ բայց օգի յստակութիւնը և եղանակի քաղցրութիւնը թոյլ էին տալիս մեզ քնել մի վրանի տակ, անտառի մէջ, առանց երկիւղ ունենալու մերձակայ կամ հեռաւոր աւազակներից։ Վաղիւը ամեն մինը մեզանից վերադառնումէր դէպ ի իւր օթեանը և դատանումէր նորան այնպէս, ինչպէս թողել էր։ Այն ժամանակը, այնքան հաւատարմութիւն և պարզութիւն կար այս կղզու մէջ առանց տուրևառութեան, որ շատ տների դռներ երբէք չէին փակվում փականքով, այլև փականք ասած բանը, մի սակաւագիւտ առարկայ էր այս երկրում ծնած Եւրոպացոց համար։

Բայց տարու մէջ կային որոշեալ օրեր, որ Պաւլոսի և Վիրգինիայի համար առաւել մեծ ուրախութեան օրեր էին։ այսինքն, սոցա մօրերի տօնախմբութիւնը։ Վիրգինիան անիծյեթ չէր տօնամուտին զանգել և եփել կարկանդակներ ցորենի ալիւրից, որ և ընծայ էր ուղարկում էքաւոր Եւրոպական գերդաստանների որ ծնած լինելով այս կղզումը, երբէք կերած չէին Եւրոպական հաց, որ և առանց օգնութեան սեաւերի կողմից, հարկադրված լինելով ապրել Մանիոքի հացով անտառի մէջ, իւրեանց աղքատութեանը տանելու համար, չունէին ոչ այն բթացած զգայութիւնը որ ընկերակից է սարկութեան, և ոչ այն հոգու քաջութիւնը որ բղխումէ դաստիարակութենից։ Այս կարկանդակները էին այն ընծայքը, որ միայն կարող էր Վիրգինիան ուղարկել իւրեանց կալուածի առատութենից։ բայց նա յաւելացնումէր նոցա վերայ այն շնորհալի կերպը ընծայելու, որ տալիս էր պարգևներին մի մեծ արժանաւորութիւն։ Նախ և յառաջ այս ընծայքը տանումէր Պաւլոսը այն էքաւոր գերդաստաններին. սոքա ընդունելով նորանց, պարտա-

կանութիւն էին համարում վաղուը գալ և օր անցուցանել։ Դը լա Տուր տիկնոջ և Մարգարիտի մօտ։ Այնուհետև տեսանումէին, որ գալիս էր մի գերդաստանի մայր երկու կամ երեք ողորմելի դուստրներով, կերպարանքները գեղնած ու նուաղած, և ինքանք այնպէս երկիւղոտ, որ չէին համարձակվում աչք բարձրացնել։ Վիրգինիան խնդոյն պայծառացնումէր նոցա սիրտը, մատուցանումէր նոցա կազդուրիչ բաներ, տալով նոցա մի այնպիսի պատուականութիւն, որ, ինչպէս կարծումէր ինքը, աւելի քաղցրութիւն պիտի տար նոցա։ Այս ըմպելին պատրաստած էր Մարգարիտի ձեռքով, միւս ըմպելին իւր մօր ձեռքով. իւր եղբայրը ինքը քաղել էր այս կամ այն պտուղը մի ծառի վերայից։ Նա հարկ էր դնում Պաւլոսի վերայ կաքաւել տալ նոցա, և չէր կամենում հրաժարվիլ նոցանից, մինչև չտեսաներ նորանց հաճ և գոհ. նա կամենումէր, որ ուրախակից լինէին նոքա իւր գերդաստանին։ — «Չէ՛ կարելի այլապէս երջանիկ լինել, քան թէ հոգաբարձու լինելով միւսերի երջանկութեանը։» Երբ որ այս օտարականքը պիտոյ է յետ դառնային իւրեանց տուն, Վիրգինիան հարկ էր դնում նոցա վերայ առնուլ տանել իւրեանց հետ այն բաները, որոնց վերայ ուրախացած էր նոցա սիրտը, պատճառ բերելով դոցա նորութիւնը կամ սակաւագիւտ լինելը։ Եթէ նկատումէր Վիրգինիան, թէ նոցա ղգեստքը շատ խանգարված էին, իւր մօր թուլտուութեամբը ջոկումէր մի քանիքը իւր յատուկ ղգեստներից և յանձնումէր Պաւլոսին տանել նորանց ծածուկ և դնել նոցա խուղի դրան մօտ։ Այսպէս, բարի էր առնում նա, Աստուածութեան պէս ծածկելով բարերարողը և ցուցանելով բարերարութիւնը։

Դուք, մի՛ւս Եւրոպացիք, որոնց միտքը, սկսեալ մանկութենից, լցվումէ այնքան սխալ դատողութիւններով որ ընդդէմ էին մարդկային երջանկութեան, դուք չէք կարող հասկանալ թէ բնութիւնը կարող էր տալ այդքան լուսաւորութիւն և ուրախութիւն. ձեր հոգին շրջափակված լինելով մարդկեղէն գիտութեան մի փոքրիկ շրջանակի մէջ, շուտով հասանումէ իւր արուեստական վայելչքների սահմանին. բայց բընութիւնը և սիրտը անսպառելի են։ Պաւլոսը և Վիրգինիան չունէին ոչ ժամացոյց, ոչ օրացոյց, ոչ տօմարագիտական, պատմական և փիլիսոփայական գրեանք։ Նոցա կեանքի պարբերութիւնքը կարգաւորած էին հեռևելով բնութեան պարբերութիւններին. նոքա որոշումէին օրի ժամերը, նայելով ծառերի ստուերին, տարու եղանակներին, նայելով նոցա ծաղկազարդութեան կամ պտղաբերութեան ժամանակին, և տարիքը հաշվումէին իւրեանց հունձերով։ Այս քաղցր պատկերախօսութիւնքը տալիս էին շատ մեծ վայելչութիւն նոցա զրոյցներին։ «Ժամանակ է ճաշելու», — ասումէր Վիրգինիան գերդաստանին. — «բանանեան ծա-

ռերի սու�երքը հասել են նոցա ականջն։» կամ թէ. «Մօտենում գիշերը. տամարինղքը փակումն իւրեանց տերևները։»—«Եՙրբ կը գաք տեսանելու մեզ,» — հարցանումէին մի քանի դրացի բարեկամ աղջիկներ։ Վիրգինիան պատասխանումէր. — «Երբ շաբաթաբոյս եղէգը կը հասանի։» — «Ձեր այցելութիւնը կը լինի մեզ շաբաթից աւելի քաղցր և ախորժելի», պատասխանումէին այն աղջիկները։ Երբ որ հարցանումէին Վիրգինիայից, «թէ քանի՞ տարօք է ինքը և Պաւլոսը։» — «Իմ եղբայրը, — ասումէր նա, — այնքան հասակաւոր է, ինչքան այն մեծ կոկոսենին աղբիւրի մօտ, և ես այնքան տարօք եմ, որքան առաւել փոքրիկ կոկոսենին։ Մանդջի ծառերը տասերկու անգամ պտուղ են բերել և նարինջենիքը քսան և չորս անգամ ծաղկել են, ինչքան որ ես աշխարհումն եմ։» Նոցա կեանքը երևումէր կապած այս ծառերի կեանքի հետ, ինչպէս Գաուններին և Դրիադների (*) կեանքը. նոքա չգիտէին ոչինչ պատմական ժամանակներ, բաց ի իւրեանց մօրերի կենդանութեան ժամանակից, ոչինչ այլ տարեհաշվութիւն, բայց միայն իւրեանց մրգաբեր ծառերի տարեհաշվութիւնը, ոչինչ միւս փիլիսոփայութիւն, բայց միայն բարի առնել ամենայն մարդու և հաւատալ իւր անձը Աստուծոյ տեսչութեանը։

Եւ արդարև կշիռ դնելով ամենայն բան, ի՞նչ հարկաւոր էր նոցա լինել հարուստ և գիտնական մեր կերպով. նոցա պիտոյքը և տգիտութիւնը աւելի ձեռնտու էին նոցա երջանկութեանը։ Ձեր անցանում մի օր, որ նոքա չլինէին միմեանց օգնական, կամ չտային միմեանց որ և իցէ լուսաւորութիւն, այո՛ լուսաւորութիւն. և թող լինէր սա սխալանքների հետ խառն, այնու ամենայնիւ յստակասիրտ մարդը չունի պատճառ վախենալու թէ մի՛ գուցէ այդպիսի լուսաւորութիւնը յառաջացնէր վտանգաւոր հետևանքներ։ Այսպէս ահա ածումէին այս երկու մանուկները ընութեան. ոչ մի հոգս չէր կնճռել նոցա ճակատը, ոչինչ անչափաւորութիւն չէր ապականել նոցա արիւնը, ոչինչ թշուառ ախտ չէր վատթարացուցել նոցա սիրտը. սէրը, անմեղութիւնը, երկիւղածութիւնը օրէ օր աւելի լրագործումէին նոցա հոգու գեղեցկութիւնը, մի անպատմելի վայելչութիւն տալով նոցա կերպարանքին, կայքին և շարժուածներին։ Կեանքի առաւօտու մէջ ունէին նոքա դրա բոլոր դուարթութիւնը. այդպէս, եգեմական դրախտի մէջ երևումէին մեր նախածնողքը, երբ որ նոքա արարչական ձեռքից գոյութիւն ստանալով, նայումէին միմեանց վերայ, մտենումէին միմեանց և խօսումէին մինը միւսի հետ որպէս եղբայր և քոյր։ Վիրգինիան քաղցր, համեստ, հա-

(*) Անտառային աստուածք և աստուածուհիք, որ պաշտելի էին մանաւանդ թէ երկրագործների մէջ։

ւատաւոր որպէս Եւան, և Պաւլոսը Ադամի պէս ունելով երիտասարդի հասակ, մանուկի պարզմտութենով։

Երբեմն Պաւլոսը մենակ լինելով Վիրգինիայի հետ (այս բանը հազար անգամ պատմել է ինձ) — ասումէր նորան, վերադարձած իւր աշխատանքներից։ «Երբ որ ես վաստակած էի, քո տեսութիւնը հանգըստացնումէ ինձ. երբ որ ես սարի գլխից տեսանումեմ քեզ ձորի խորութեան մէջ, դու երևումես իմ աչքին մեր այգիների մէջ որպէս մի վարդի կոկոն։ Երբ դու քայլումես դէպ ի մեր մօրերի տունը, կաքաւը որ վազումէ դէպ ի իւր ձագերը, չունի այնքան նազելի հասակ և այնքան շնորհալի գնացք, ինչպէս դու։ Թէպէտ ես աչքից կորուսանումեմ քեզ ծառերի մէջ, բայց ինձ հարկաւոր չէր աչքերով որոնել քեզ, որ միւսանգամ դառնէի քեզ. մի փոքր բան քեզանից, որ չեմ կարող ասել լեզուով, մնումէ իմ համար այն օդի մէջ, որի միջով անցած էիր դու, այն խոտի վերայ, ուր նստած էիր դու։ Երբ որ մտնումեմ քեզ, դու հիացնումես իմ բոլոր զգայարանքը. երկնակամարի կապոյտը չէ ինձ այնքան գեղեցիկ, որպէս քո կապոյտ աչքերը. լենգալիս թռչունի երգասացութիւնը չէ այնքան քաղցր, ինչպէս քո ձայնի հնչիւնը։ Երբ որ ես շոշափումեմ քեզ մատիս ծայրովը, իմ բոլոր մարմինը սարսափումէ ուրախութենից։ Մի՛տք բեր այն օրը, երբ որ մեք անցանումէնք գիւրագլոր սեպաքարերի վերայից երեքստինեան գետի միջով։ Հասանելով նորա ափին, ես շատ վաստակած էի ահա, բայց երբ որ շալակեցի քեզ, երևումէր ինձ, որպէս թէ թեւաւորվել էի ինչպէս մի թռչուն։ Ասա՛ ինձ, այդ ինչ քաղցրութիւն է, որով դու զմայլեցուցել ես ինձ. արդեօք այս քո խմացականութի՛ւնն է. բայց մեր մայրերը աւելի խելացի են քան թէ մեք երկուքս. արդեօք այս քո փայփայանքն է. բայց նոքա աւելի յաճախ գգվումեն ինձ քան թէ դու։ Կարծեմ թէ սորա պատճառը էր քո բարի սիրտը։ Երբէք չեմ կարող մոռանալ ես, որ դու ոտաբոկիկ գնացած ես մինչև Սեաւ գետը, մարդասիրութիւն խնդրելու մի փախստական աղքատ ստրուկի համար։ Ա՛հա, իմ նազելի, վեր կալ այս ծաղկած կիտրոնի ճիւղը, որ ես քաղել եմ անտառումը. դու կը դնես դորան գիշերը քո անկողնի մօտ. կի՛ր այս մեղրի խորիսխը. ես վեր առայ նորան մի ապառաժի վերևից. բայց նախ և յառաջ հանգստացի՛ր իմ գրկումը, և ես կը ստանամ նոր զօրութիւն։»

Վիրգինիան պատասխանումէր նորան. — «Ո՛վ իմ եղբայր, արևդակի ճառագայթքը առաւօտուն, այս ապառաժի վերայ, չեն այնքան ուրախացուցիչ իմ սրտին, ինչքան քո ներկայութիւնը։ Արդարև շատ սիրումեմ ես իմ մայրը, շատ սիրումեմ քո մայրը, բայց երբ որ նոքա

ասումն քեզ էմ «ԷԷ», այնուհետև նոքա աւելի սիրելի էին ինձ։ Այն փայփայանքը որ նոքա ցուցանումեն քեզ, աւելի քաղցր են ինձ, քան թէ այն գգուանքը որ ստանումի ես յատկապէս։ Դու հարցնումես ինձանից, — թէ ի՞նչ պատճառով ես սիրելի էի քեզ. բայց ամենայն արարածք, որ մնած էին միասին, սիրումեն միմեանց. տե՛ս ահա մեր թռչունները. դոքա մնած լինելով նոյն բոյնների մէջ, սիրումեն միմեանց. նոքա միշտ միասին են, ինչպէս մեք. ականջ դիր, թէ ի՞նչպէս նոքա գանչումեն միմեանց և պատասխանումեն միմեանց միասին, ծառից դէպ ի ծառ, ճիւղից դէպ ի ճիւղ. նոյնպէս, երբ որ քո սրտի նուագածութիւնը հնչելով սարի գլխից հասանումէ իմ ականջիս, ես կրկնումեմ դոցա խօսքերը այս ձորի ներքևումը։ Դու պատուական ես իմ սրտի համար, մանաւանդ թէ այն օրից, երբ դու կամեցար պատերազմել իմ համար այն ստրուկի տիրոջ հետ. սկսեալ այն բոպէից, շատ անգամ ասած եմ ես ինքս ինձ. «ով. իմ եղբայրը ունի բարի սիրտ, առանց նորան ես մեռած կը լինէի երկիւղից։» Ես ամենայն օր աղօթումեմ դէպ ի Աստուած իմ մեր համար, քո մեր համար, քո համար, մեր աղքատ սպասաւորների համար. բայց, երբ որ ես արտասանումեմ քո անունը, Պաւլոս, երևումէ ինձ որպէս թէ յաւելանումէր իմ ջերմեռանդութիւնը։ Ես այնքան մեծապէս աղաչումեմ Աստուած, որ պահպանէ քեզ ամենայն չարից. ինչո՞ւ այդքան հեռանումես դու և վեր ես ելանում դէպ ի բարձր տեղեր, իմ համար մրգեղէն և ծաղիկներ որոնելու. մի՛ թէ չունինք մեք դոցանից բաւական մեր այգումը։ Ահա թէ ի՞նչպէս վաստակած էիր դու, ամենևին կորած քրանքի մէջ։» Ապա Վիրգինիան հանումէր իւր փոքրիկ սպիտակ թաշկինակը և սրբումէր նորա ճակատը և թշերը, և տալիս էր նորան շատ համբոյրներ։

Բայց մի քանի ժամանակից յետոյ Վիրգինիան զգումէր իւր մէջ անհանգստութիւն մի անյայտ ցաւի երեսից։ Նորա գեղեցիկ կապոյտ աչքերը ստացան սեաւ մարմարիոնի գոյն. նորա երեսի գոյնը դեղնացաւ. մի բոլորտման թուլութիւն հայումաշ էր առնումէ նորա մարմինը. առաջին պայծառութիւնը փախել էր նորա ճակատի վերայից և քաղցր ժպիտը նորա շրթունքից։ Նա զուարճանումէր յանկարծ, չլինելով ուրախութեան պատճառ, և տրտմումէր առանց վշտանալու պատճառ ունենալու։ Նա փախչումէր իւր անմեղ խաղերից, իւր քաղցր աշխատութիւններից և իւր շատ սիրելի գերդաստանի ընկերութիւնից. նա շրջումէր աստանդական իւրեանց բնակութեան առաւել անապատ տեղերումը, ամենայն տեղ հանգիստ խնդրելով, բայց ոչինչ տեղ չգտանելով նորան։ Երբեմն, տեսանելով Պաւլոսին, դիմումէր դէպ ինա խեղկատակելով, յետոյ յանկարծ, կամենալով խօսք յառաջ բերել, ըմբռնումէր



Նորան մի անակնկալ դժուարութիւն. մի կենդանի կարմրութիւն ներկումէր Նորա գունաթափ թշերը, և Նորա աչքերը չէին համարձակվում հանդիպել Պաւլոսի աչքերին։ Սա ասումէր Վիրգինիային.—«Այս ապառաժները զարդարված են կանաչով, մեր թռչունները սկսումեն երգել, երբ որ տեսանումէին քեզ. ամենայն բան ուրախ է քո շրջակայքումը, դու միայն տրտում ես։» Եւ Պաւլոսը աշխատումէր վերստին հոգի տալ Վիրգինիային, գրկախառնելով Նորան. բայց Վիրգինիան դարձուցանումէր Նորանից իւր գլուխը և դողալով փախչումէր դէպ ի իւր մայրը։ Այդ անբաղդ աղջիկը խռովութիւն էր զգում իւր մէջ իւր եղբօր փայփայանքից. Պաւլոսը չէր կարողանում վերահասու լինել այդ ամենևին նոր և օտարոտի այլանդակութեանը։ Բայց ձախորդութիւնը չէ հանդիպում մենակ։

Այն ամառներից որ ժամանակ առ ժամանակ աւերութիւն են բերում այս աշխարհների վերայ, որ գրած էին Արևադարձերի մէջ, հանդիպեց մինը տարածելով այս տեղ իւր ապականութիւնքը. այս պատահեց դեկտեմբերի վերջին, երբ որ արեգակը մտանելով այծեղջիւրի մէջ, երեք շաբաթ երկար լորբոքումէ Իլ դը Ֆրանս կղզին իւր ուղղահայեաց բոցերովը։ Հարաւակողմեան արևելեան հողմը, որ թագաւորումէ այն տեղ համարեա թէ բոլոր տարին, չէր փչում այլ ևս. ահագին փոշեղէն մրրիկներ բարձրանումէին ճանապարհների վերայ և մնումէին կախված օդի մէջ. երկիրը ամենայն կողմից ճեղքոտվումէր. խոտը այրվումէր. ջերմ արտաշնչութիւնք դուրս էին գալիս սարերի կողերից և նոցա առուների մեծ մասը ցամաքած էր։ Ոչինչ ամպ չէր մնանում ծովի կողմից. ցերեկի միջոցին միայն բարձրանումէին կարմրագոյն շղթաներ դաշտերի վերայ, և արևմտին երևումէին որպէս մի հրայրեցութեան բոցեր։ Նոյն իսկ գիշերը չէր բերում ոչինչ զովութիւն հրդեհված ատամնաբերայի վերայ. լուսնի բոլորակը, ամենևին կարմիր, բարձրանումէր մառախլապատ հորիզոնի վերայ մի տարապայման մեծութեանով։ Անասունների երամակքը հալումաշ եղած բլուրների կողերի վերայ, վիզերը դէպ ի վեր պարզած, ներս շնչելով օդը, դղրդումէին ձորերը իւրեանց տրտում մռնչիւնով։ Նոյն իսկ քաջերը, առաջնորդը այս երամակների, ձգվումէր գետնի վերայ, որ գտանէ զորանից զովութիւն. բայց ամենայն տեղ բորբոքված էր հողը, և խեղդիչ օդը թնդումէր ճճիների մրմնջիւնից, որ խնդրումէին շիջուցանել իւրեանց ծարաւը մարդու և անասունի արիւնով։

Այս բորբոքված գիշերների մինումը Վիրգինիան զգաց իւր մէջ, որ իւր ցաւի բոլոր նշանները սաստկանումէին կրկին չափով. նա վեր է կենում տեղից, նստումէ, միւս անգամ ընկողմանումէ, բայց ոչինչ

գրութեան մէջ չէ գտանում ոչ քուն, ոչ հանգիստ։ Նա լուսնի փայլողութեան տակ ճանապարհ է ընկնում դէպ ի իւր աւաղանը, նկատում նորա աղբիւրը, որ թէև ցամաքութեան մէջ էր, բայց դեռ ևս հոսում էր մի արծաթի թելի պէս ապառաժի թուխ կողերի վերայ։ Նա ընկղմում իւր անձը աւաղանի մէջ. ջրի զովութիւնը նախ և յառաջ զուարթացնում նորա զգայարանքը, և հաղարաւոր քաղցր յիշատակութիւնք նորոգվում են նորա հոգու մէջ. նա մտաբերում, որ իւր երեխայութեան օրերում իւր մայրը և Մարգարիտը զուարճանում էին լուանալով նորան Պաւլոսի հետ միասին այս աւաղանի մէջ, որ և յետոյ Պաւլոսը պահպանելով նորա համար միայն, խորացուցել էր նորա գոգը, աւազով պատել էր նորա յատակը, և նորա ափերումը սերմանել էր անուշահոտ խոտեր։ Վիրգինիան աղօտապէս տեսնում ջրի մէջ իւր մերկ բազուկների և կուրծքի վերայ այն երկու արմաւենիքի պատկերը, որ տնկած էին իւր եղբօր և իւր ծննդեան միջոցին, որ և նորա գլխի վերայ զուգահառնում էին իւրեանց կանաչ ճիւղերը և մանուկ կոկոսեան ընկոյզները։ Նա մտածում Պաւլոսի բարեկամութեան վերայ, որ քաղցր էր նորա համար քան թէ խնկահոտութիւնքը, մաքուր քան թէ աղբիւրների ջուրը, ամուր և պինդ քան թէ միաւորեալ արմաւենիքը. և նա հոգոց հանեց։ Նա մտածում դիշերի և իւր միայնութեան վերայ, և ահա մի ուտող կլանող կրակ ըմբռնում նորան. խկոյն նա դուրս է գալիս աւաղանից, ահի մէջ ընկած այս վտանգաւոր տեսիլներից և այս առաւել այրող ջրերից քան թէ ջերմ գոտիների արևը։ Նա վազում իւր մօր մօտ, պաշտպանութիւն որոնելու ինքը իւր երեսից։ Շատ անգամ կամենալով պատմել մօրը իւր տառապանքը, ճմլում նորա ձեռքը իւր ձեռքի մէջ. շատ կամենում արտասանել ահա Պաւլոսի անունը, բայց նորա ճնշված սիրտը կապում նորա լեզուն, և նա դնելով գլուխը մօր գոգի մէջ, կարող է միայն արտասուքի հեղեղ թափել։

Դէ լա Տուր տիկինը վերահասու էր իւր աղջկայ ցաւի պատճառին, բայց չէր համարձակվում խօսել նորա հետ այդ բանի մասին։ «Ի՛մ զաւակ,» — ասում էր նա, — «յանձն արա քեզ Աստուծուն որ տնօրինում, ինչպէս կամի, առողջութիւնը և կենդանութիւնը. այսօր փորձում նա քեզ, որ եղուց վարձատրէ քեզ. մի՛տ բեր, որ մեք այս աշխարհի վերայ ենք, առաքինութիւն գործելու համար միայն։»

Այս միջոցին չափազանց ջերմութիւնքը բարձրացրեցին ովկիանոսից շոգիներ, ծածկելով կղզին որպէս մի ահագին հովանոց։ Սարերի գլուխքը հաւաքում էին նորանց իւրեանց չորս կողմը, և ձիգ հրեղէն օձեր ժամանակ առ ժամանակ դուրս էին երևում նոցա մառախլապատ ծայրերից։ Շուտով սոսկալի որոտներ իւրեանց ճայթիւնով թնդեցուցին

անտառները, դաշտերը և ձորերը. ահաւոր անձրևահեղուներ քարաւանների նման վայր իջան երկնքից. փրփրալից հեղեղներ թափվեցան սարի կողերից. ձորի յատակը դարձաւ մի ծով. դաշտը, որի վերայ դրած են խուղերը, ձևաւորվեցաւ որպէս մի փոքրիկ կղզի և ձորի մուտքը որպէս մի սահանք, որի միջից այս տեղ ու այն տեղ մռնչող ջրերի հետ միասին դուրս էին ցցված ցամաք հողեր, ծառեր և քարաժայռեր։

Բոլոր գերդաստանը գողալով աղօթումէր դէպ ի Աստուած Դը լա Ֆուր տիկնոջ խուղի մօտ, որի տանիքը ահարկու կերպով ճարճատումէր հողմերի բռնութիւնից։ Թէպէտև դուռը և լուսամուտների պաշտպանարանքը ամուր փակած էին, այնու ամենայնիւ բոլոր դուրսի առարկայքը որոշել էին փայտաշէնքի ճեղքերի միջից. ահա թէ ինչպէս լուսապայծառ ու յաճախ էին փայլատակումները։ Ներկիւղ Պաւլոսը, առած իւր հետ իւր Դոմինիկոսը, երթումէր խուղից դէպ ի խուղը, միա չը դնելով փոթորկի սասակութեանը, այս տեղ ապահովելով մի պատ, սիւն դնելով տակին, այն տեղ զարկելով գեռնի մէջ մի ցից։ Նա յետ էր գալիս տուն, որ միսիթարէ միայն իւր ընտանիքը, յոյս տալով թէ շուտով վերադառնալու է դեղեցիկ եղանակը։ Արդարև դէպ ի երեկոյ դադարեց անձրևը. հարաւակողմեան արևելքի կանոնաւոր հողմը կրկին ստացաւ իւր սովորական ընթացքը. փոթորկային ամպերը ցան ու ցիր եղան դէպ ի հիւսիսահայեաց արևմուտք և մռանող արևը երևեցաւ հորիզոնի վերայ։

Վիրգինիայի առաջին ցանկութիւնը էր վերստին տեսանել իւր հանգստարանը. Պաւլոսը մտեցաւ նորան երկիւղոտ երեսով և առաջարկեց նորան իւր ձեռքը, որ օգնէ նորան քայլելու։ Նա առաւ Պաւլոսի ձեռքը, ժպտելով, և նոքա միասին դուրս գնացին խուղեցը։ Օդը զուարթ ու յստակ էր. սպիտակ ծուխեր բարձրանումէին սարի կատարների վերայ, այս տեղ և այն տեղ ակօսված լինելով հեղեղների փրփուրից, որ ամենայն տեղ սկսումէին ցամաքել։ Եթէ քննենք այդու որպիսութիւնը, ամենեին աւերված էր դա սոսկալի ճեղքուածներով. պտղատու ծառերի մեծ մասը դարձուցել էին իւրեանց արմատները դէպ ի վեր. մեծ աւազի կոյտեր ծածկել էին մարգագետինքը և լցուցել էին Վիրգինիայի բաղանիքի աւազանը։ Բայց այն երկու կոկոսենիքը մնացել էին անարատ և շատ կանաչազարդ էին. բայց շրջակայքումը չկար ոչ խոտապատ դաշտ, ոչ հովանոցք, ոչ թռչունք, բաց ի մի քանի բենգալեան ծիտերից, որ դրացի քարաժայռի վերայ ողբալի երգերով արտասվումէին իւրեանց ձագերի կորուստը։

Վիրգինիան տեսանելով այս աւերակները, ասաց Պաւլոսին. «Դու լերած էիր այս տեղ թռչուններ, և փոթորիկը սպանել է նորանց.

դու տնկած էիր այս այգին, և նա կործանվել է։ Ամենայն բան անցաւոր է երկրի վերայ. չկայ ոչինչ բան անփոփոխելի, բաց ի երկնքից։» Պաւլոսը պատասխանեց նորան.—«Ինչու համար չէի կարող ես տալ քեզ մի երկնաքաղաքացի բան. բայց ես ոչինչ չունիմ և երկրի վերայ։» Վիրգինիան պատասխանեց կարմրելով. «Դու ունիս իրրև քո սեփական սուրբը Պաւլոսի պատկերը։» Այս խօսքը լսելով Վիրգինիան, Պաւլոսը իսկոյն վազեց որոնելու այն պատկերը իւր մոր խուղի մէջ։ Սա էր փոքրիկ մանրանկար գործ, որ ցուցանուցեր Պաւլոս ճգնաւորի պատկերը։ Մարգարիտը շատ մեծարումեր այդ պատկերը, որ ինքը երկար ժամանակ կրած էր իւր վզին, ինչքան որ աղջիկ էր. բայց դառնալով մայր, կապել էր նորան իւր մանուկի վզին։ Եւ այս էր պատճառը, որ նա հաւանեց տալ իւր զաւակին անունս Պաւլոս, և յանձնել նորան մի սուրբի պաշտպանութեան, որ անցուցել էր իւր կեանքը առանձնութեան մէջ, հեռի այն մարդերից որ խաբել էին և անխնամ թողել էին նոյն իսկ Մարգարիտը։ Վիրգինիան ստանալով այս փոքրիկ պատկերը Պաւլոսի ձեռքից, ասաց նորան սիրտը շարժված ձայնով.—«Իմ եղբայր, ոչ ոք երբէք չէ կարող սորան խլել ինձանից, ինչքան ես կենդանի էի, և ես երբեք մոռանալու չեմ, թէ դու տուած ես ինձ այն մի հատիկ բանը, որ ունէիր դու այս աշխարհումը։» Պաւլոսը լսելով այս քաղցր զրոյցը, այս անակնկալ վերադարձը ընտանութեան և քնքուշ սիրու Վիրգինիայի կողմից, կամեցաւ գրկախառնել նորան, բայց նա արագաթռիչ ծտի պէս փախաւ նորանից և թողեց նորան յուսահատութեան մէջ, անկարող հասկանալ այս անսովոր վարքի խորհուրդը։

Այս միջոցին Մարգարիտը խօսք բացեց Դը լա Տուր տիկնոջ հետ այսպէս.—«Ինչու համար չենք ամուսնացնում միմեանց հետ մեր զաւակները. դոքա սիրումեն միմեանց այդպիսի վառ և բորբոք սիրով, որի խորհուրդը դեռ ևս չգիտէ իմ որդին։ Բայց երբ որ ինքը բնութիւնը կը յայտնէ նորան այդ գաղտնիքը, այնուհետև զուր էր մեր հսկողութիւնը և պատճառ կար վախենալու վտանգից։» Դը լա Տուր տիկինը պատասխանեց նորան.—«Դոքա շատ մանուկ ու չքաւոր են. ի՞նչ վնաս մեր սրտի համար, եթէ Վիրգինիան ծնանէր թշուառ զաւակներ, որ դուցէ թէ չունենար կարողութիւն սնուցանելու. քո սեաւ Դոմինիկոսը ջարդված է, Մարիամը անզօր։ Ես ինքս, սիրելի՛ քոյր, տասն և հինգ տարի ահա զգուշումի իմ անձը տկար ու խախուտ. մարդս շուտով ծերանումի ջերմ աշխարհներումը և աւելի շուտով, եթէ ցաւերի մէջ է։ Պաւլոսը մեր մի հատիկ յոյսն է. թող սպասենք, մինչև հասակը կերպարանագործէ նորա բնաւորութիւնը, որ նա կարողանայ

օգնական լինել մեզ իւր աշխատանքով։ Այժմ յայտնի է քեզ, որ մեք լցուցանումենք միայն մեր օրական պիտոյքը։ Բայց եթէ մեք առ փոքր ժամանակ ուղարկել էինք Պաւլոսը դէպ ի Հնդկաստան, տուր և առութենով կը ստանար նա կարողութիւն մի քանի ծառայք գնելու. նորա վերադառնալուց յետոյ կ'ամուսնացնենք նորան Վիրգինիայի հետ. պատճառ, միամիտ եմ ես, որ ոչ ոք կարող չէ այնպէս բաղդաւորել իմ աղջիկը, ինչպէս քո որդի Պաւլոսը։ Այս մասին խօսենք մեր դրացու հետ։»

Ընդարձ, այս կանայքը խորհրդակից եղան իմ հետ, և ես համաձայն էի նոցա։ «Հնդկաստանի ծովերը գեղեցիկ են,» — ասացի ես. — «ընտրելով մի լարեյաջող ժամանակ, այս տեղից անցանելու դէպ ի Հնդկաստան, շատ շատ վեց շաբաթի ճանապարհ էր, և այնքան ևս հարկաւոր էր վերադարձի համար։ Մեք կը պատրաստենք Պաւլոսի համար մի բեռն. պատճառ, ես ունիմ դրացիք որ շատ սիրումեն նորան։ Եթէ մեք տայինք նորան հում բամբակ միայն, որ անպէտ էր մեզ, առանց մաքրողական աղօրիքի. աբանոսեան փայտը որ այնքան հասարակ բան է այս տեղ, որ գործ է ածվում որպէս վառելի նիւթ, և մի քանի տեսակ խէժ, որ մեր անտառներումը կորչումէ անօգուտ. այս բոլոր առարկայքը լաւ գին ունին Հնդկաստանի մէջ և մեր համար անպիտան էին այս տեղ։»

Այս յանձն առայ Պարոն Բուռդօնէ կուսակալից թոյլտուութիւն խնդրել այս ծովային ճանապարհորդութեան համար. բայց յառաջուց կամեցայ այս մասին ծանօթութիւն տալ Պաւլոսին։ Բայց ի՜նչպէս զարմացայ ես, երբ այս մանուկ մարդը ասաց ինձ մի առողջ դատողութենով որ շատ վեր էր իւր հասակից. — «Ինչո՞ւ էք կամենում դուք, որ ես թողուի իմ ընտանիքը, չգիտեմ թէ ի՜նչ բաղդ որոնելու օտար սահմաններում. մի՞ թէ կար աշխարհի վերայ մի աւելի օգտակար վաճառաշահութիւն քան թէ մշակագործութիւնը այն հողի, որ երբեմն տալիս է յիսունաւոր և հարիւրաւոր պտուղ։ Եթէ կամենումենք առուտուրը առնել, մի՞ թէ կարող չէինք մեր աւելորդքը տանել այս տեղից դէպ ի քաղաք, առանց այդքան ճանապարհ կտրելու։ Իմ մայրերը ասումեն ինձ, թէ Դոմինիկոսը ծեր ու ջարդված է. բայց ես պատանի եմ և օրէ օր առաւել զօրանումեմ։ Շատ հեշտ կարող էր իմ բացակայութեան միջոցին մի ձախորդութիւն պատահել նոցա, մանաւանդ թէ Վիրգինիային, որ ահա ցաւագար է. ոչ. ոչ, ես չեմ կարող յանձն առնուլ հրաժարվիլ խնայիններից։»

Պաւլոսի պատասխանը մեծ դժուարութեան մէջ ձգեց ինձ. պատճառ, Դը լա Տուր տիկինը չէր թագուցել ինձանից Վիրգինիայի որպի-

սութիւնը, և այն իւր յատուկ ցանկութիւնը որ ունէր նա, հեռացնելով միմեանցից այս երկու մանուկները, ժամանակ տալ նոցա դեռ ևս մի քանի տարի աճելու և զօրանալու։ Սոքա այնպիսի պատճառներ էին, որ ևս չունէի համարձակութիւն դուշակել տալու Պաւլոսին։

Մինչև այս բաները լինումէին, մի եկաւոր նաւ Ֆրանսիայից նամակ բերեց Դը լա Տուր տիկնոջ անունով, նորա մօրաքուերից։ Սորա սիրտը դղրդել էր մահու երկիւղը որ եթէ չը լինէր, քարացած սրտերը երբէք չէին փափկանալու։ Սա ազատված լինելով մի ծանր հիւանդութենից, որից յառաջացաւ մի այնպիսի թուլութիւն որ անբուժելի էր նորա ծեր հասակումը, հրաւիրումէր իւր մօրաքուեր դուստրը դալ Ֆրանսիա, կամ եթէ սա վատառողջութեան պատճառով կարող չէր յանձն առնուլ այդպիսի երկար ճանապարհորդութիւն, ապա խնդրումէր ուղարկել այն տեղ Վիրգինիան որի համար սահմանել էր ինքը մի բարուք դաստիարակութիւն, մի մեծատուն փեսայ և իւր բոլոր գոյքի ժառանգութիւնը։ Այսպիսի պայմանակատարութենով միայն գրած էր նամակի մէջ, — կամէր նա միւսանգամ ողջունած լինել դէպ ի իւր ազգականը։

Հաղիւ թէ այս նամակը կարդացած էին գերդաստանի մէջ, և ահա դղրդիւն ընկաւ այն տեղ։ Դոմինիկոսը և Մարիամը սկսեցին լալ։ Պաւլոսը զարմացքից քար դարձած, երևումէր պատրաստ բորբոքվիլ բարկութենով։ Վիրգինիան աչքերը տնկած իւր մօր վերայ, չէր համարձակվումէ արտասանել մի բառ։ — «Կարո՞ղ էիք այժմ հրաժարվիլ մեզանից,» — ասաց Մարգարիտը Դը լա Տուր տիկնոջը։ — «Ոչ, իմ բարեկամ։ ոչ, իմ զաւակներ,» — պատասխանեց Դը լա Տուր տիկինը։ — «Ես երբէք հարաժարվելու չեմ ձեզանից։ ես ապրել եմ ձեր հետ, և ձեր հետ միասին կամէի մեռանել։ ես ծանօթացայ բաղդին, ձեր բարեկամութեան մէջ միայն։ Եթէ իմ առողջութիւնը խանգարվել է, դորա պատճառը էին հին ցաւեր։ ես վերաւոր եմ իմ ազգականների խստասրտութենից և իմ թանգագին ամուսնու մահովը։ բայց սորանից յետոյ ճաշակել եմ աւելի մխիթարութիւն և ուրախութիւն ձեր հետ, այս աղքատ խուղերի մէջ, քան թէ երբ և իցէ յուսալի էր ինձ գտանել իմ հայրենի աշխարհումը իմ ազգատոհմի հարստութիւններով։»

Այս խօսակցութեան վերայ ամենների աչքից արտասուք թափվեցան։ Պաւլոսը գրկախառնելով Դը լա Տուր տիկինը, ասաց նորան։ «Ես չեմ հրաժարվելու։ ես չկամիմ գնալ Ընդկաստան։ մեք բոլորքեանքս կ՚աշխատենք ձեր համար, պատուական մայր։ ոչինչ պակասելու չէ ձեզ մեր հետ միասին։» Բայց այս բոլոր ընկերութեան մէջ առաւել փոքր ուրախութիւն ցոյց տուողը և առաւել խոր զգացող

սիրտը էր Վիրգինիան. մնացած օրը երևեցաւ նա քաղցրապէս զուարճ, և նորա հանդարտութեան վերադարձը պսակեց ընդհանուր ուրախութիւնը։

Վաղուը արևադացին, երբ որ նոքա իւրեանց սովորութեան պէս, ամենքեան միասին արած էին առաւօտեան աղօթքը, նախաճաշիկից յետոյ, Դոմինիկոսը իմաց տուեց նոցա թէ մի ձիաւոր պարոն, երկու ծառայ քամակից, մօտենում է իւրեանց բնակութեանը։ Այս ձիաւորը Դը լա Բուրդոնէ անունով կուսակալն էր։ Նա ներս մտաւ խուղի մէջ, երբ բոլոր դերդաստանը նստած էր հացի վերայ։ Վիրգինիան դրել էր սեղանի վերայ, աշխարհի սովորութեան պէս, մի կերակուր որ էր զահվէ և բրինձ միասին եփած ջրի մէջ, յաւելացնելով դորա վերայ ջերմ գետնախնձոր և դալար դրախտաթուզ։ Ամեն մի սկաւառակի տեղ դրած էին կէս արած դդումներ և սեղանի սփռոցը էին բանանի տերևներ։ Կուսակալը նախ և յառաջ ցոյց տուեց զարմանք այս գերդաստանի չքաւորութեան վերայ, ապա դէմքը դարձուցանելով դէպ ի Դը լա Տուր տիկինը, ասաց նորան, — թէ ընդհանուր գործերը երբեմն թոյլ չէին տալիս նորան մտածել մանաւորների վերայ. բայց դուք մեծապէս արժանի էիք իմ ուշադրութեանը։ Դուք, տիկին, յաւելացրեց նա, ունիք մի անուանի և հարուստ մօրաքոյր Փարիզումը, որ կամի կտակել ձեզ իւր գոյքը և սպասում է ձեր գալստեանը իւր մօտ։ Դը լա Տուր տիկինը պատասխանեց կուսակալին, — թէ նորա խանդարեալ առողջութիւնը չէ ներում նորան, յանձն առնուլ այդպիսի ճանապարհորդութիւն։ Գոնեայ, պատասխանեց Դը լա Բուրդոնէ կուսակալը, — միտ դնելով ապագային ձեր օրիորդ աղջկայ, որ այդքան մանուկ և սիրարժան էր, չէիք կարող դուք առանց անիրաւելու զրկել նորան այդպիսի մեծ ժառանգութիւնից։ Ես չեմ ծածկում ձեզանից թէ ձեր մօրաքոյրը գործ է դրել օրինաւոր իշխանութիւն՝ ձեզ բերել տալու իւր մօտ։ Դիւանատունը դրել էին ինձ, որ այս մասին եթէ հարկաւոր էր, գործ դնեմ ես իմ կարողութիւնը. բայց դորան պէտք ածելով միայն, այս դաղթաշէնքի բնակիչքը բաղդաւոր կացուցանելու համար, սպասում եմ ձեզանից, որ կը կամիք յանձն առնուլ մի քանի տարի զոհ բերել, ձեր աղջկայ դրութիւնը և ձեր կեանքի երջանկութիւնը հաստատելու համար։ Ինչ խորհրդով դալիս են մարդիկ պանդխտանալու այս կողմերը. ի հարկ է, հարստութիւնք հաւաքելու այս տեղ. բայց մի՞ թէ աւելի քաղցր չէր գնալ և ժառանգել այդ հարստութիւնքը իւր հայրենի աշխարհումը։ —

Այս խօսքերը ասելով դրեց նա սեղանի վերայ մի մեծ պարկ արծաթով լցրած, որ բերած էր կուսակալի ծառան։ «Ահա, — յաւելա-

ցրեց նա, — ձեր մտքաբուեր ուղարկած արծաթը, Վիրգինիայի ճանապարհորդութեան պատրաստութիւնը հոգալու համար։» Կուսակալը վերջացրեց խօսքը, բարեկամբէն յանդիմանելով Դը լա Տուր տիկինը, որպէս թէ սա իւր կարիքը իմաց տուած չէր կուսակալին, և նոյն միջոցին գովասանելով նորա քաջասրտութիւնը։ Պաւլոսը խսկոյն վեր կալաւ խօսքը և ասաց կուսակալին. — «Պարոն, իմ մայրը յայտնել է ձեզ իւր կարիքը, բայց դուք սառնութեամբ ընդունած էք նորան։» — «Տի՛կին, ունի՛ք դուք և այլ զաւակ,» — հարցրեց պարոն Բուրգոնէն Դը լա Տուր տիկնոջից։ — «Ո՛չ, պարոն», — ասաց նա. — «սա իմ բարեկամի որդին է, բայց դա և Վիրգինեան մեր համար հասարակաց և հաւասարապէս սիրելի են։» — «Պատանի դու», — ասաց կուսակալը Պաւլոսին, «երբ որ դու կ'առնուս աշխարհիս փորձը, կ'իմանաս դու, թէ ի՞նչպէս հեշտ էր յառաջուց մոլորեցնել նոցա միտքը, և ի՞նչքան հեշտ կարող էին դոքա դաւաճան յանցաւորութեանը ցուցանել այն շնորհը, որ պատկանումէր համեստ ու ծածուկ արժանաւորութեանը։

Դը լա Բուրգոնէն հրաւէր ստանալով Դը լա Տուր տիկնոջից, նստեց հացի նորա կողքին և նախաճաշիկ արեց Եւրոպացի կղզեարնակների սովորութեան պէս, ուտելով ղահվէ և բրինձ միասին եփած ջրի պէս։ Նա հիացաւ փոքրիկ խուղի բարեկարգութեան և յստակութեան, այս երկու քաղցրաբարոյ դերդաստանների, այսն և նոցա ծեր սպասաւորների ջերմեռանդութեան վերայ։ Այս տեղ, խօսեց կուսակալը, կային միայն փայտեայ անօթներ, բայց այս տեղ տեսանումեմ ես պայծառ երեսներ և ոսկեղէն սրտեր։ Պաւլոսը շատ ուրախանալով կուսակալի մարդասիրութեան վերայ, ասաց Նորան. — «Ես ցանկայի լինել ձեզ բարեկամ, որովհետև դուք պատուելի մարդ էք։» Պարոն լա Բուրգոնէն քաղցրութեամբ ընդունեց այս կղզեական պարզմտութեան ցուցակութիւնը, գրկախառնեց Պաւլոսին, փայփայեց Նորան հաւատացնելով թէ պատրաստ էր պիտանի լինել նորան։

Նախաճաշիկից յետոյ կուսակալը առանձնացաւ Դը լա Տուր տիկնոջ հետ և ասաց Նորան. — Թէ մտերումս լինելու է մի դիպող ժամանակ ուղարկելու նորա դուստրը դէպ ի Ֆրանսիա, մի նաւի վերայ որ պատրաստ էր պարզել առագաստները. թէ նա կարող էր յանձն առնել դորա դուստրը իւր աղգականին, որ նաւ նստողներիցն էր. թէ պետոյ էր զգուշանալ և ձեռքից բաց չթողուլ մի անչափելի հարստութիւն, որ արժէր մի քանի տարու հաճոյակատարութիւն։ Ձեր մտքաքոյրը, — ասաց նա հրաժարվելով, — չէ կարող երկու տարուց աւելի ապրել, նորա բարեկամքը գրել են ինձ այդ բանը լաւ մտածեցէք այդ։

բաղդը ամեն օր չէ գալիս մեր մեջ. խորհուրդ արէք ձեր մէջ. ամենայն առողջամիտ մարդ կը համաձայնի ինձ։ Նա պատասխանեց կուսակալին, թէ այսուհետև ոչինչ ցանկութիւն չունենալով աշխարհի վերայ, բայց միայն բաղդաւոր տեսանել իւր դուստրը, կը կամենար նորա գնալը դէպ ի Գրանսիա թողուլ ամենեին իւր կամքին։

Դը լա Տուր տիկինը չէր տրտում, մի յարմար դիպուած գտանելով առ ժամանակ բաժանելու իրեարից Վիրգինիան և Պաւլոսը, այն խորհրդով, որ մի օր երկու կողմից բաղդաւոր առնէ այդ երկու զաւակները։ Նա առանձնացաւ իւր աղջկայ հետ և ասաց Նորան այսպէս. — «Իմ մանուկ, մեր սպասաւորքը ծերացած են. Պաւլոսը շատ պատանի է, Մարգարիտը պառաւումէ. ես էս տկար եմ ահա. եթէ մեռանէի ես, ի՞նչ կը լինիս դու, առանց հարստութեան, այս անապատների մէջ։ Ուրեմն դու կը մնաս միայնակ, չունելով քեզ ոչ մի երևելի օգնական և կը հարկադրվիս անդադար աշխատել որպէս վարձկան. այս մտածութիւնը խոր խոցոտումէ իմ սիրտը։» Վիրգինիան պատասխանեց մօրը. «Աստուած դատապարտել է մեզ դէպ ի աշխատութիւն. դու ուսուցել ես ինձ աշխատել և ամենայն օր օրհնել Աստուած. մինչև այժմ նա չէ անտես արել մեզ, և այսուհետև չէ մեզ անտես առնելու. Նորա նախախնամութիւնը հսկումէ մանաւանդ թէ անբաղդների վերայ. դու ի՞մ մայր, այնքան յաճախ ասած ես ինձ այդ բանը. — ես կարող չեմ յանձն առնուլ հրաժարվիլ քեզանից։» Դը լա Տուր տիկինը, սիրտը շարժված, վեր կալաւ խօսքը. — «Ես ոչինչ այլ խորհուրդ չունիմ, եթէ ոչ բաղդաւոր կացուցանել քեզ և մի օր ամուսնացնել քեզ Պաւլոսի հետ, որ չէ քո եղբայրը. մտածի՛ր այժմ, որ Նորա բաղդաւորութիւնը կախ է քեզանից։»

Մի մանուկ աղջիկ որ սիրումէր, կարծումէ թէ ոչ ոք չգիտէ Նորա գաղտնիքը. նա պարզումէ իւր աչքի վերայ մի վարագոյր, որ ունէր իւր սրտի վերայ. բայց երբ որ այդ վարագոյրը յետ էր քարշած մի բարեացակամ ձեռքով, այնուհետև Նորա սիրու ծածուկ վշտերը դուրս են փախչում որպէս թէ մի բացված փականքից, և կասկածոտ ղգուշութիւնը և թաքնութիւնը տեղն են տալիս վստահութեան քաղցր զեղմունքին։ Վիրգինիան, սիրտը շարժված իւր մօր սիրալից խօսուածներից, պատմեց Նորան իւր ներքին պատերազմները որոնց վկայ էր Աստուած միայն, և թէ ինքը նկատումէր աստուածային նախախնամութեան օգնութիւնը այն քաղցրագութ մօր մէջ, որ հաւանելով իւր զաւակի հակամիտութեանը, կամէր առաջնորդել Նորան իւր խորհրդատուութիւններով, և թէ այժմ քաջալերվելով այդպիսի մօր ձեռն-

տուութենից, ամենևին պարտականութիւն էր համարում մնալ Նորա մոտ, առանց անհանգիստ լինելու ներկայի համար, և առանց երկիւղ կրելու ապագայի մասին։

Դը լա Տուր տիկինը տեսանելով, որ իւր մտերմարար խօսակցութիւնը Վ.իրգինիայի հետ ներգործեց դէպ ի հակառակը այն բանի, ինչ որ սպասումէր ինքը, ասաց Նորան. — «Ի՛մ ղաւակ, ես չկամիմ երբէք հարկադրել քեզ. մտածի՛ր, ինչպէս յարմար կը տեսանես. բայց քո սէրը ծածուկ պահիր Պաւլոսից. երբ որ միաղջկայ սիրտ սառն է, Նորա սիրողը ոչինչ բան չունի պահանջելու Նորանից։»

Դէպ ի երեկոյ, երբ որ Դը լա Տուր տիկինը միայն էր Վ.իրգինիայի հետ, ներս մտաւ Նոցա մոտ մի մեծահասակ մարդ երկար կապտագոյն զգեստով։ Սա մի հոգևոր անձն էր, կղզեաբնակների քահանան և Դը լա Տուր տիկնոջ ու Վ.իրգինիայի խոստովանահայրը։ Նա ուղարկած էր կուսակալի հրամանով. «ի՛մ ղաւակներ», — ասաց հոգևոր հայրը ներս մտանելով. — «Օրհնեալ լինի Աստուած. ահա պարգևել է նա ձեզ հարստութիւն. դուք կարող էք այսուհետև ականջ դնել ձեր բարի սրտին, բարի առնել չքաւորներին։ Ինձ յայտնի է, ինչ որ ասել է ձեզ Պ. լա Բուրդոնէն, և ձեր կողմից տուած պատասխանը Նորան։ Բարի՛ մայր, ձեր վատառողջութիւնը հարկադիր է ձեզ մնալ այս տեղ, բայց դու մնանուկ տիրուհի, դու չունիս ոչինչ ստիպողական պատճառ այդ մասին։ Պարտ է հնազանդել Նախախնամութեանը, մեր հասակաւոր ազգականներին, թէև գոցա պահանջողութիւնքը անիրաւ էին։ Այս մի ղրկանք էր. բայց այսպէս է Աստուծոյ հրամանը. Նա իւր որդին նուիրել է մեր փրկութեան համար. այդպէս ևս պարտ էր մեզ նուիրել մեր անձը մեր գերդաստանի բարեբաղդութեան համար։ Քո ճանապարհորդութիւնը դէպ ի Ֆրանսիա կ՚ունենայ մի բարի վերջ. չկամի՛ս արդեօք, իմ ազնիւ տիրուհի, գնալ այն տեղ։»

Վ.իրգինիան աչքերը դէպ ի ցած խոնարհեցրած, պատասխանեց Նորան դողալով. — «Եթէ այդպէ՛ս է Աստուծոյ հրամանը, ապա չեմ ընդդիմանում դորան. թող կատարվի Աստուծոյ կամքը», — ասաց նա արտասուելով։

Քահանան հրաժարվեցաւ և գնաց համար տալու կուսակալին իւր գործակատարութեան յաջողութենի մասին։ Այս միջոցին Դը լա Տուր տիկինը ուղարկել էր Դոմինիկոսը, որ հրաւիրէ ինձ Նորա մոտ, խորհրդակից լինելու իմ հետ Վ.իրգինիայի երթալու մասին. Ես չհաւատացի ամենևին, թէ նոքա թոյլ էին տալու Վ.իրգինիայի երթը. Ես համարումէ հաստատ հիմքեր երջանկութեան սոքա. թէ պիտոյ է բնութեան բարիքը գերապատիւ համարել քան թէ բաղդի տուրքը,

և թէ չէր պետոյ մեզ, գնալ մեզանից դուրս որոնել այն բաները, որ կարող ենք գտանել մեր մեջտեղը։ Այս հիմնական կանոնը ես վերաբերում եմ դէպ ի ամենայն բան, առանց բացառութեան։ Բայց ի՞նչ կարող էին ներգործել իմ, դէպ ի չափաւորութիւնը նայեցող, խորհրդատուութիւնը ընդդէմ մի մեծ հարստութեան քաղցր պատրանքին, և իմ բանաւոր պատճառը ընդդէմ աշխարհի մոլար դատողութիւններին և ընդդէմ մի իշխանութեան, որ սուրբ էր Դը լա Տուր տիկնոջ աչքումը։ Ուրեմն և այս տիկինը խորհուրդ հարցրեց ինձանից, պատշաճը պահպանելու համար միայն, և այլևս տեղիք չտուեց ոչինչ մտածութեան, երբ որ նորա խոստովանահայրը վճռել էր բանը։ Մարգարիտը ևս, որ չը կաշառվելով այն օգուտներից, որ յուսալի էին իւր որդու համար Վիրգինիայի բաղդաւորութենից, մեծապէս ընդդիմացած էր նորա երթալուն, ոչինչ հակառակութիւն մէջ չբերեց։ Պաւլոսը, որ չգիտէր դեռ ևս, թէ դէպ ի որ կողմը կամենուին վճռել բանը, զարմանալով այն ծածուկ խօսակցութիւնների վերայ, որ ունէին Դը լա Տուր տիկինը և նորա դուստրը, անձնատուր եղաւ մի մութն տրտմութեան։ «Որդեակ թ են լարում ինձ,» — ասաց նա, — «պատճառ, իւրեանց խորհուրդը ծածկումն ինձանից։»

Այս միջոցին համբաւ տարածվեցաւ կղզու մէջ, թէ բաղդը տեսութիւն է եկել այս ազատաժներին։ ահա ելևէջք առնելով մտեցան նոցա ամենայն տեսակ վաճառականներ, դուրս թափելով այս աղքատ խուղերի մէջ Հնդկաստանի առաւել ճոխ կերպասները։ փառաւոր բաղէն Գուդելուրից, թաշկինակներ Պալիակատ և Մազուլիպատան աշխարհներից, մուսելինք Դակայի թէ միատեսակ, թէ շերտաւոր և թէ ասեղնագործ, այնպէս թափանցիկ, ինչպէս օրի լոյսը։ բաֆտա Սուրաթից, շատ դեղեցիկ սպիտակութեամբ։ ամենայն գունով շատ հաղուագիւտ չլիներ, յատակը կէտանիշ և կանաչ ճիւղերով։ Նոքա բաց արեցին փառահեղ կերպասներ չինական մետաքսից, լամպասներ թափանցիկ հիւսուածով, դամասկեան կերպաս սպիտակ ողորկութենով, այլ միւսներ մարդագետնի կանաչութեամբ, և այլ միւսներ մի շատ պայծառ կարմրութեամբ։ վարդագոյն թաֆթաներ, ճոխանիւթ ատլասներ, կակուղ պէկիններ մահուդի պէս, սպիտակ և դեղին նանկիններ, այո՛ մինչև մադրասկարեան բամբակեայ դոգնոցներ։

Դը լա Տուր տիկինը թոյլ տուեց, որ իւր դուստրը գնէ իւր սրտի ցանկացածը. նա հսկեց միայն գնելի բաների արժանաւորութեան և արժողութեան վերայ, — մի գուցէ որ վաճառողքը խաբէին նորան։ Վերգինիան ընտրեց այնպիսի բաներ, որ գիտէր թէ ախորժ էին իւր մորը, Մարգարիտին և Պաւլոսին։ «Այս կերպասը,» — ասում էր նա, —

«յարմար կը լինի որպէս նստարանի ծածկոց, այն կերպասը յարմար էր Մարիամի և Դոմինիկոսի գործածութեանը։» Պարկի մէջ եղած արծաթը գնացած էր ահա, բայց Վիրգինիան դեռ ևս չէր մոռացել իւր պիտոյքի վերայ. նա առաւ իւր բաժինը, երբ որ ընծաները բաժանել էր ընկերութեանը։

Պաւլոսը տեսանելով բաղդի այսպիսի առատ պարգևները, որ դուշակուէին Նորան Վիրգինիայի երթը, շատ խոր խոցվեցաւ Նորա սիրտը և մի քանի օրից յետոյ եկաւ իմ մօտ։ Նա ասաց ինձ տրտում երեսով. — «Իմ քոյրը երթուէ օտար աշխարհ. նա տեսանուէ ահա իւր ճանապարհի պատրաստութիւնքը. — խնդրեմ, հանդիպեցէք մեզ, գործ դրեցէք ձեր անուշի պատիւը, մի այլ միտք տնկելով Վիրգինիայի և իմ մօր մէջ, որ յետ պահեն Նորան։» Պաւլոսի աղաչանքը անտես չարեցի ես, թէպէտ քաջայայտ էր ինձ, թէ իմ ընդդիմախօսութիւնքը լինելու էին զուր և անօգուտ։

Եթէ Վիրգինիան զմայլեցուցիչ էր երևած ինձ բենդալեան կապոյտ կտաւի զգեստով և մի կարմիր թաշկինակ փաթեթած գլխի վերայ, այժմ ամենևին մի այլ բան էր տեսանել Նորան զարդարված այս աշխարհի կանանց պէս։ Նա հագել էր սպիտակ մուսելին, որի աստառը էր վարդագոյն բաֆտա։ Նորա նուրբ և բարձր հասակը կատարելապէս պատկերագրվուէր իւր լանջանոցի տակ, և Նորա խարտեաշ մազերը, երևք հիւսք կապած, մի զարմանալի յարմարաւորութենով զուգաւորվուէին Նորա կուսական երեսի հետ։ Նորա գեղեցիկ աչքերը լցուած տխրամտութենով, և Նորա սիրտը տարուբերվելով մի ախտից որ յաղթահարված էր, ընծայուէր Նորա երեսին մի կենդանի գոյն և Նորա ձայնին մի խռովալից հնչիւն։ Նորա փառաւոր զգեստը ևս, որ ասես թէ կրուէր ինքը ակամայ, ներհակ լինելով այս կերպարանքին, ևս աւելի շարժուէր մարդու սիրտը նկատելով Նորա ներքին վիշտը։ Ոչ ով կարող չէր տեսանել և ոչ լսել Նորա խօսքը, առանց շարժվելու գութը։ Պաւլոսի տրտմութիւնը յաւելացաւ սորանով։ Մարգարիտը ցաւելով իւր որդու դրութեան վերայ, ասաց Նորան առանձնապէս. «Ինչ հարկաւոր էր քեզ, իմ որդի, մխիթարվիլ սուտ և անմիտ յոյսերով, որ աւելի դառնութիւն էին տալիս զրկանքին. ժամանակ է, որ ես յայտնեմ քեզ քո և իմ կեանքի ծածուկ խորհուրդը։ Դը լա Ցուր տիկնոջ աղջիկը իւր մօր կողմից պատկանուէ մի հարուստ և մեծատուն ազգատոհմի, բայց դու մի աղքատ և շինական կնոջ որդի ես, և որ աւելի վատ էր, ապօրէն զաւակ։» —

«Ապօրէն զաւակ» բառը շատ զարմացրեց Պաւլոսին. նա երբէք լսած չէր այս խօսքը. նա հարցրեց այս բառի զօրութիւնը իւր մօրից,

որ պատասխանեց Նորան այսպէս. — «Դու չունիս օրինաւոր հայր. մի սխալանք զրկել է քեզ քո հայրակոյս ազգակցութենից, և իմ ապաշխարութիւնը քո մայրակոյս ազգակցութենից։ Վատաբաղդ որդի, դու չունիս այլ ծնողք բաց ի ինձանից աշխարհի վերայ.» մայրը սկսեց արտասուել։ Պաւլոսը գրկախառնելով Նորան, ասաց. — «Իմ մայր, եթէ չունիմ ես այլ ծնողք, բաց ի քեզանից աշխարհի վերայ, ուրեմն աւելի ևս կը սիրեմ քեզ։ Բայց այդ ի՞նչ ծածուկ խորհուրդ էր, որ դու բացեցիր ինձ. այժմ հասկանումեմ ես, թէ ինչ պատճառով ահա երկու ամիս է, որ հեռանումէ ինձանից Դը լա Ցուր տիկնոջ աղջիկը, որ և այժմ հաւան է երթալ օտար աշխարհ։ Վայ ինձ, տարակոյս չկայ, որ նա արհամարհումէ ինձ։»

Այս միջոցին եկած լինելով երեկոյեան հացկերութեան ժամը, նստեցին սեղանի մօտ, ուր ամէն մի սեղանակից, սիրտը խոռոված ջոկ ջոկ ախտերով, կերաւ փոքր և չխօսեց ոչինչ։ Վիրգինիան ամենից յառաջ դուրս գնաց և հանդստացաւ այն տեղ, ուր այժմ կանք մեք։ Պաւլոսը շուտով գնաց Նորա քամակից և եկաւ նստեց Նորա մօտ։ Մինը և միւսը մի քանի ժամանակ մնացին խոր լռութեան մէջ։ Գիշերը այն հրաշալի գիշերներից էր, որ շատ սովորական են արևադարձերի մէջ, և որոնց գեղեցկութիւնը կարող չէր պատկերացնել և առաւել յաջողակ կենդանագրի գրիչը։ Լուսինը փայլումէր երկնակամարի մէջ տեղումը, ամպերի վարագուրից շրջապատած, հետ զհետէ փարատելով սորանց իւր ճառագայթներով։ Նորա լոյսը անդգալի կերպով տարածվումէր կղզու սարերի և նոցա կատարների վերայ, որ շողշողումէին արծաթափայլ կանաչութենով։ Հողմերը յետ էին պահում իւրեանց շունչը. անտառների մէջ, ձորերի ներսումը, ապառաժների բարձրութեան վերայ լսելի էին մեղմ ձայներ, քաղցր մրմունջ թռչունների, որ իւրեանց բոյների մէջ փայփայումէին միմեանց, ուրախացած լինելով գիշերի պայծառութեան և օդի հանդարտութեան վերայ։ Ամենայն արարածք մինչև սողունները, շառաչիւն էին արձակում խոտի վերայ։ Աստղները փայլատակումէին երկնքի վերայ և ցոլանումէին ծովի ծոցի մէջ, որ կրկնումէր նոցա զողզողուն պատկերները։ Վիրգինիան զբաղված հայեացքով շրջումէր երկնքի լայնարձակ և աղօտալոյս հորիզոնի վերայ, որ բաժանվումէր կղզու եղերքից ճկնորսների կարմրափայլ կրակովը։ Դա նկատեց նաւաստանգստի մուտքումը մի լոյս և ստուեր. սոքա էին լուսատու աշտարակը և մարմինը նաւի, որի վերայ պիտոյ է ճանապարհորդէր ինքը դէպ ի Եւրոպա, որ և պատրաստ լինելով պարզել առագաստը, սպասումէր խարսխի վերայ, մինչև կը վերջանար հողմա-

դադարութիւնը։ Տեսանելով այս բանը, Վիրգինիան խռովեցաւ և շրջեց երեսը, որ Պաւլոսը չտեսանէ նորա արտասուքը։

Դը լա Տուր տիկինը, Մարգարիտը և ես նստած էինք մի քանի քայլափոխ հեռի Վիրգինիայից և Պաւլոսից, բանանեան ծառերի տակ, և դիշերի լռութեան մէջ բացայայտ լսեցինք մեք նոցա խօսակցութիւնը, որ չեմ մոռացել ես։

Պաւլոսը ասումէր Վիրգինիային.— «աղջիկ տիկին, ասումեն թէ դուք հրաժարվելու էք մեզանից երեք օրի մէջ. մի թէ երկիւղալի չէր ձեզ ձեր անձը ծովի վտանգների տակ ձգել.... ծովի, որից դուք այդքան վախեցած էիք։» — «Պիտոյ է ինձ,» — պատասխանեց Վիրգինիան, — «հնազանդել իմ ազգականներին, իմ պարտականութեանը։» — «Դուք թողումէք մեզ,» — խօսքը վեր առաւ Պաւլոսը, մի հեռաւոր ազգականի համար, որ դուք երբէք տեսած չէք։» — «Վայ ինձ,» — ասաց Վիրգինիան, — «ինձ քաղցր էր մնալ այս տեղ, ինչքան որ կենդանի էի ես, բայց իմ մոր կամքը այլ է. իմ խոստովանահայրը ասաց ինձ, թէ — Աստուծոյ հրամանն է, որ գնամ ես, և թէ կեանքը փորձ է... Ո՜հ. դա մի շատ դառն փորձ է։»

— «Այդ ի՞նչ բան է,» — պատասխանեց Պաւլոսը. — «այդքան պատճառներ հաստատել են քո մէջ գնալու դիտաւորութիւն, բայց ոչ մինը յետ չէ քարշել քեզ դորանից։ Այլև այդ մասին դու ոչինչ չես ասում ինձ։ Արդարև հարստութիւնը ունի մեծ գրաւիչ զօրութիւններ. դու մի նոր երկրում շուտով կը գտանես մի մարդ, որին կարող էիր տալ եղբայրական անուն, որ այսուհետև չես տալու ինձ աւելի։ Դու կ'ընտրես քո համար եղբայր այնպիսի մարդերի միջից, որ արժանի էին քեզ իւրեանց ազգատոհմի մեծութենով և հարստութենով, որ ես չեմ կարող տալ քեզ։ Բայց աւելի երջանիկ լինելու համար, ուր կամիս երթալ։ Ի՞նչ հողի վերայ ոտք կը դնէիր դու, որ լիներ քեզ աւելի սիրելի, քան թէ այս հողը, ուր ծնած ես դու։ Ի՞նչ տեղ կարող ես գտանել մի աւելի սիրելի ընկերութիւն, քան թէ այն, որ սիրումէ քեզ։ Ի՞նչպէս կ'ապրիս դու առանց քո մոր գգուանքին, որոնց այդքան սովոր ես դու. ի՞նչ պիտի լինի նոյն իսկ քո մայրը, պառաւած ահա, երբ որ քեզ այլևս չէ տեսանելու իւր կողքին, սեղանի վերայ, տան մէջ, զբօսանքում, ուր դու նորա ծերութեան գաւազանն էիր։ Ի՞նչ պիտի լինի իմ մայրը, որ քեզ այնքան սիրումէ. ի՞նչպէս կը դիմանայ քո յատուկ մայրը։ Ի՞նչ պիտոյ է ասեմ նոցա, մինին և միւսին, երբ տեսանելու էի նորանց, որ մորմոքվումէին քո բացակայութեան վերայ։ Անողոքմ դու, ես ոչինչ չեմ ասում իմ յատուկ ցաւի մասին։ Բայց ի՞նչ պիտի լինիմ ես ինքս, երբ առաւօտուն այլևս տեսա-

նելու չէի քեզ մեր ընկերութեան մէջ, և երբ գիշերը գալու էր առանց միաւորելու մեզ. երբ որ տեսանելու էի այս երկու արմատնիքը որ տընկած էին մեր ծննդեան օրին և այնքան երկար վկայ էին եղած մեր փոխադարձ բարեկամութեանը։ Ո՜հ. որովհետև մի այլ վիճակ է դուրս եկել քո համար, որովհետև դու որոնումես մի այլ աշխարհ քան թէ քո ծննդական աշխարհն էր, այլ բարութիւնք քան թէ իմ աշխատասիրութեան բարութիւնքն էին, ապա թող ինձ ընկերակից լինել քեզ այն նաւի վերայ, որ տանելու է քեզ։ Ես կը հանդստացնեմ քեզ փոթորիկների մէջ, որ այնքան սոսկալի էին քեզ ցամաքի վերայ. ես կը հանդուցանեմ քո գլուխը իմ ծոցի վերայ, կը ջերմացնեմ քո սիրտը իմ սրտի վերայ, և Ֆրանսիայումը, ուր դիմումէիր դու հարստութիւն և մեծութիւն որոնելու, ես կը սպասաւորեմ քեզ որպէս քո ծառայ։ Բաղդաւոր լինելով քո բաղդաւորութեամբը, այն ապարանքների մէջ ուր տեսանելու եմ քեզ պատուած ու մեծարած, կը լինիմ ես այնքան հարուստ և մեծահոգի, որ կարող էի առնել քեզ ամենամեծ նուէրը, մեռանելով քո ոտքի մօտ։»

Հառաջանքը խեղդեցին նորա ձայնը, և մեք խկոյն լսեցինք Վիրգինիայի ձայնը, որ ասումէր Պաւլոսին այս խօսքերը ընդհատվելով նորա հեծութենից։ — «Քո պատճառով է, որ ես երթումեմ.... քո համար է, Պաւլոս, որ ամենայն օր քամակդ ծռած աշխատութենից դործ էիր կատարում, երկու դերդաստան մնուցանելու համար։ Եթէ ես յանձնառու եմ եղած, դիպուածից օգուտ քաղելով հարստանալ, դորա պատճառը այն է, որ ես հաղարապատիկ փոխարինեմ քեզ այն լաւութիւնը, որ դու արել ես մեզ։ Մի թէ կար մի բաղդաւորութիւն որ արժանի լիներ քո բարեկամութեանը։ Ի՜նչ ես պատմում ինձ քո տոհմի մասին. եթէ դեռ ևս հնար լիներ ինձ, բաշխել ինձ մի եղբայր, մի՛ թէ կարող էի ընտրել մի այլ անձն, քան թէ քեզ. ո՛վ Պաւլոս, Պաւլոս, դու շատ աւելի քաղցր ես ինձ քան թէ մի եղբայր. ի՜նչքան ցաւելի է եղած ինձ հեռացնել քեզ ինձանից, ես խնդրումեմ քեզանից օգնական լինել ինձ, որ կարողանայի հեռացնել ինձ քեզանից, մինչև երկնային տեսչութեանը հաճոյ կը լինի օրհնել մեր զուգաւորութիւնը։ Այժմ, թէ մնայի, թէ գնայի, թէ ապրէի և թէ մեռանէի, ամենևին քե՛զ եմ նուիրում իմ անձը. արա ինչ որ կամիս։ Վա՜յ ինձ թուլասիրտ կնամարդիս. ես կարողացայ ընդդիմանալ քո սիրալից գգուանքներին, բայց այժմ կարող չեմ տանել քո ցաւին։»

Այս խօսքերի վերայ, Պաւլոսը գրկախառնեց նորան, պինդ պահելով իւր գրկումը, և մի սոսկալի ձայն արձակեց, ասելով. — «Ես կը դամ

քո հետ· ոչինչ կարող չէ բաժանել ինձ քեզանից։» Մեք ամենեքեանքս վազեցինք Նորա մօտ։ Դը լա Տուր տիկինը ասաց Նորան,— «Եթէ դու թողուս մեզ, ի՞նչ պիտի լինի մեր կեանքը։»

Այս կրկնեց զողզողալով այս բառերը։— «Ի՛մ որդի··· Ի՛մ որդի···» — «Դու, իմ մայր,» — ասաց Նորան Պաւլոսը,— «դու, որ բաժանումս եղբայրը քուերից։ Մեք երկուքս ծծել ենք քո կաթը, մեք երկուքս մեծացել ենք քո ծնկերի վերայ, մեք քեզանից ուսել ենք սիրել միմեանց· մեք երկուքս հաղար անգամ այս բանը ասել ենք միմեանց, և այժմ դու հեռացնումս Նորան ինձանից, ուղարկո՞ւմս Նորան դէպ ի Եւրոպա, այդ բարբարոս աշխարհը որ չէ տուել քեզ մի ապաստանարան, և այնպիսի անգութ աղգականների մօտ որ քեզ ինքդ բարձի թողել են արել։ Դու ասելու ես ինձ, թէ ես չունիմ իրաւունք պահանջելու Վիրգինիայի սէրը, որովհետև նա իմ քոյրը չէ· բայց նա իմ համար ամենբան է, հարստութիւն, ընտանի, տոհմ, իմ բոլոր երջանկութիւնը· մի այլ պատուական բան չգիտեմ ես բաց ի Նորանից։ Մեք ունեցած ենք մի օթևան, մի օրօրոց և կ'ունենանք նոյնպէս մի գերեզման։ Եթէ Վիրգինիան կ'երթայ, ապա և ինձ պիտոյ է գնալ Նորա հետևից։ Թոյլ չի՞ տայ ինձ կուսակալը· մի՞ թէ կարող է նա խափանել, որ ես իմ անձը ձգեմ ծովի մէջ· ես լող տալով կը հասանեմ Վիրգինիային· ծովը չէ լինելու ինձ աւելի վտանգաբեր քան թէ ցամաքը։ Չկարողանալով ապրել այս տեղ, Վիրգինիայի մօտին, կը մոռանիմ գոնեայ Նորա աչքի առաջև, քեզանից հեռի։ Բարբարոս մայր դու, անողորմ կին դու· թող այս ովկիանոսը, որի վտանգներին յանձնումս դու Վիրգինիան, երբէք յետ չտայ քեզ քո դուստրը· թող այս ահարկու ալիքները յետ բերեն իմ մարմինը և դորան Վիրգինիայի մարմնի հետ միասին թաւալվելով այս ծովեզերքի քարերի մէջ հասուցանեն քեզ, և քո երկու զաւակների միասին կորուստը յաւիտենական ցաւ դառնայ քո սրտի համար։»

Այս խօսքերի վերայ, ես պինդ ըմբռնեցի Նորան· պատճառ, յուսահատութիւնը թռուցել էր Նորա բանականութիւնը։ Նորա աչքերը փայլատակումէին, քրտինքը խոշոր կաթիլներով թափվումէր Նորա բարձրացած երեսից· Նորա ծնկերը դողումէին, և ես նկատեցի, որ Նորա վառված կուրծքի մէջ զարկումէր սիրտը կրկնապատիկ զարկերով։

Վիրգինիան ահարեկ եղած, ասաց Պաւլոսին.— «Ով իմ բարեկամ, ես վկայ եմ բերում մեր առաջին հասակի ուրախութիւնքը, քո և իմ վշտերը, և ամենայն բան որ պիտոյ է մշանջենաւոր կապով միաւորէ երկու անբաղդներ, որ եթէ մնայի այս տեղ, կ'ապրիմ միայն քո համար, եթէ գնայի այս տեղից, մի օր վերադառնալու եմ, որ լինիմ

քո սեփականը։ Վկայ կացէք և դուք ամենեքեան, որ գաստիարակել էք իմ մանկութիւնը, որ իշխանութիւն ունիք իմ վերայ, որ և տեսանումէք իմ արտասուքը։ Երդնումեմ երկնքով որ լսումէ ինձ, այս ծովով, որի վերայից պիտոյ է անցանեմ, այս օդով որ ես շնչումեմ, որ և երբէք ապականած չեմ խաբերայ խօսքերով։»

Ինչպէս արեգակը մի սառուցի ապառաժ հալելով ցած է գլորում Ապենինեան սարերի կատարից, նոյնպէս ցած իջաւ այս երիտասարդի կատաղի բարկութիւնը, լսելով իւր սիրածի ձայնը։ Նորա հպարտ գլուխը խոնարհեցաւ, և արտասուքը հեղեղի պէս թափվումէր նորա աչքերից։ Նորա մայրը իւր արտասուքը խառնելով որդու արտասուքի հետ, բռնել էր նորան գրկախառնած, առանց կարողանալու մի խօսք հանել բերանից։ Դը լա Ֆուր տիկինը յուսահատութեան մէջ, ասաց ինձ. — «Զունիմ այլևս կարողութիւն, սիրտս պատռվումէ։ Այս աղէտալի ճանապարհորդութիւնը պիտոյ է խափանվի. իմ գրացի, աշխատիր հեռացնել իմ որդին. ահա ութ օր է, որ ոչ ոք այս տեղ քուն չէ տեսել։»

Այս ասացի Պաւլոսին. — «Իմ բարեկամ, քո քոյրը մեռալու է. վաղուը այդ մասին կը խօսենք կուսակալի հետ. թող ձեր ընտանիքը հանգստանան. արի՛ այս գիշեր իմ մօտ քնելու. տարաժամ է արդէն. կէս գիշեր է ահա, և հարաւային խաչանիշ համաստեղութիւնը ուղղահայեաց կանգնած է հորիզոնի վերայ։»

Նա հեռացաւ, առանց մի խօսք ասելու, և գիշերը շատ անհանգիստ անցուցանելով, վեր կացաւ արևաբացին և հետ գնաց դէպ ի իւրեանց բնակութիւնը։

Բայց ի՞նչ հարկաւոր էր ինձ աւելի երկարաձգել այս պատմութեան թելը։ Մարդկային կեանքի մէջ կայ գիտելու մի քաղցր կողմ միայն։ Ի՞նչպէս շրջաբերութիւնը երկրագնդի որի վերայ մեք պտոյտումենք, նոյնպէս արագ լինումէ մեր կեանքի շրջադարձութիւնը մի օրի մէջ, և այս օրի մի մասը չէ կարող ստանալ լոյս, առանց միւս մասը պատելու խաւարով։

«Իմ հայր,» — ասացի ես Նորան, — «աւարտի՛ր քո պատմութիւնը, որ սկսել ես այդպիսի սրտաշարժ կերպով։ Բաղդաւորութեան օրինակները ախորժելի են մեզ, բայց վատաբաղդութեան օրինակները խրատ ուսուցանող. ի՞նչ եղաւ, պատմեցէ՛ք ինձ, այն անբաղդ Պաւլոսը։»

Առաջին առարկան որ տեսաւ Պաւլոսը, յետ դառնալով դէպ ի իւրեանց բնակութիւնը, էր սեաւ Մարիամը, որ վեր եկած մի ապառաժի

վերայ, Նայումէր դէպ ի բացարձակ ծովը։ Պաւլոսը ձայն տուաց սորան աւելի հեռուից, քան թէ կարող էր նկատել նորան. — « Ո՞ւր է Վիրգինիան։» Մարիամը դարձուց երեսը դէպ ի իւր երիտասարդ պարոնը և սկսեց արտասուել։ Պաւլոսը յուսահատված, վազեց խսկոյն դէպ ի նաւահանգիստը. այս տեղ լսեց նա, թէ Վիրգինիան նաւ է նստել լուսաբացին, թէ նորա նաւը խսկոյն պարզել է առագաստները, և թէ այսուհետև չէր կարելի տեսանել նորան։ Նա վերադարձաւ դէպ ի բնակութիւնը, անց կենալով առանց խօսելու մի մարդու հետ։

Դէպէտ այս ապառաժեայ շրջապատը երևումէր մեր քամակումը գրեթէ ուղիղ վայրահայեաց, բայց այս կանաչապատ դաշտակները, որ բաժանումն նորա բարձրութիւնը, են նոյնքան բաղմաթիւ դստիկոններ որոնց վերայից մի քանի դժուարակոխ պողոտաներով կարելի է հասանել այն շեղ և անմատչելի քարաժայռեայ սարակոնոնի ոտքին, որ ասվումէ Պոռ։ Այս սարակոնոնի հիմանիստը ունի մի նախագաւիթ, մեծամեծ ծառերով պատած, բայց այնպէս բարձր և դէպ ի վայր, որ երևումէր որպէս մի մեծ անտառ օդի մէջ, շրջապատած ահարկու անդունդներով։ Այն ամպերը որ Պաւլոս սարի կատարը անդադար քարշումէ դէպ ի իւր շրջակայքը, պահպանումն այն տեղ բաղմաթիւ առուներ, որ այնքան խոր դէպ ի ցած էին թափվում այն ձորի մէջ որ դրած կայ այս սարի միւս կողմումը, մինչև անլսելի էր նոցա վայրահոսութեան շառաչիւնը, սարի վերայից։ Այս տեղից տեսանելի է կղզու մի մեծ մասը Նորա բլուրների հետ միասին, որոնց վերայ բարձրանումն նորա սարագլուխքը, զոր օրինակ Պիտոր-Բուլթը և Երեք սոխերը իւրևանց անտառալից հովիտներով, ապա երևումէ լայնարձակ ծովը։ Այս բարձրութենից ահա նկատումէր Պաւլոսը այն նաւը, որ տանումէր Վիրգինիային։ Նա տեսաւ նաւը, աւելի քան թէ 10 մղոն հեռաւորութենով ծովեզերքից, որպէս մի սեաւ կէտ ովկիանոսի մէջ։ Պաւլոսը մնաց այն տեղ օրի մի մասը, զբաղված այդ նկատողութենով։ Նաւը անհետացած էր ահա, բայց նա կարծումէր թէ դեռ ևս տեսանումէ նորան, բայց երբ որ ամենևին անյայտացաւ նաւը հորիզոնի մառախուղի մէջ, Պաւլոսը ցած նստեց այս վայրենի տեղումը, որի վերայ զարկումէին հողմերը, անդադար ցնցելով արմաւենի և թաթամանք ծառերի կատարքը։ Նոցա աղօտաձայն և մռնչող գոչիւնը, նմանումէ մի երգեհոնի հեռաւոր ձայնի և աղդումէ մի խոր տխրամտութիւն։ Այս տեղ զտայ ես Պաւլոսը, գլուխը տուած ապառաժին, և աչքերը տնկած դէպ ի գետին։ Ես մոտ էի գալիս նորա քամակից, սկսեալ արևաբացից. հազիւ հազ կարողացայ հասնիլել նորան, որ ցած իջանէ և վերադառնայ դէպ ի իւր ընտանիքը։ Այնու ամենայնիւ ես տարայ նորան դէպ ի իւր բնակութիւնը։ Պաւլոսի

առաջին խօսուածքը, երբ որ տեսաւ Դը լա Ցուր տիկնոջ երեսը, այն եղաւ, որ դառնապէս գանգատեց թէ դա խարել է նորան։ Դը լա Ցուր տիկինը ասաց մեղ թէ հողմը սկսելով շնչել առաւօտու 3 ժամից, և նաւը պատրաստ լինելով պարզել առագաստները, կուսակալը առած իւր հետ մի քանի երևելի աստիճանաւորներ և քահանան, յետ եկաւ պատգարակով տանելու Վիրգինիան, և անիծյեթ առնելով թէ իւր և թէ Մարգարիտի պատճառները և արտասուքը, և ամենեքեան աղաղակելով թէ Վիրգինիայի գնալը օգտարեր էր բոլորեցուն համար, տարան աղջիկը կիսամեռ դէպ ի նաւ։ «Միայն թէ,» — պատասխանեց Պաւլոսը, — «կարողացած լինէի տալ նորան իմ հրաժարական ողջոյնը, այնուհետև կը հանգստանայի ես։ Ես կ'ասէի նորան, ով Վիրգինիա, եթէ մեր կենակցութեան միջոցին իմ բերանից դուրս է թռել մի խօսք, որ վիրաւորած էր քեզ, ապա, յառաջ քան թէ յաւիտեան հրաժարվելու էիր ինձանից, ասա, թէ դու ներում ես ինձ։ Ես նորան ասած կը լինէի, որովհետև ես յոյս չունիմ վերստին տեսանել քեզ, բարեաւ մնա, իմ քաղցր Վիրգինիա, բարեաւ մնա, ինձանից հեռի ապրի՛ր դու գոհ և երջանիկ։» Երբ Պաւլոսը տեսաւ թէ իւր մայրը և Դը լա Ցուր տիկինը արտասվումէին, ասաց նոցա։ — «Այժմ որոնեցէ՛ք ձեր համար մի այլ որդի, որ սրբէր ձեր արտասուքը։» Այնուհետև հեռացաւ նոցանից և սկսեց թափառել աստանդական իւրեանց օթևանի շրջակայքումը, մեն դալով այն տեղերումը որ առաւել սիրելի էին եղած Վիրգինիային։ Նա ասումէր նորա այծերին և նոցա փոքրիկ ուլերին, որ մայումէին գնալով Պաւլոսի քամակից։ «Ի՞նչ կամիք դուք ինձանից։ դուք այսուհետև չէք տեսանելու Վիրգինիան, որ կերակուր էր տալիս ձեզ իւր ձեռքից։» Նա գնաց դէպ ի Վիրգինիայի Հանգստարանը և տեսանելով նորա թռչնիկները որ թռթռումէին նորա չորս կողմով, ձայն արձակեց նա։ — «Խղճալի՛ թռչուններ, այսուհետև չունիք դուք հանդէպ գնալ նորան որ ձեր բարի դայեակն էր։» Տեսանելով Ֆիդել շունը, որ այս տեղ այն տեղ հոտոտելով, որոնումէր մի բան, հոգոց հանեց նա ասելով։ — «Ա՛հ, դու չես միսանգամ տեսանելու նորան։» Վերջումը գնաց նա նստելու այն ապառաժի վերայ, որ անցած երեկոյին խօսեցած էր Վիրգինիայի հետ, և նայելով ծովի վերայ, ուր նորա աչքի առաջև անհետացած էր այն նաւը որ տանումէր Վիրգինիային, արտասուք շատ թափեց։

Այս միջոցին մեք ամենայն քայլափոխում հսկումէինք Պաւլոսի վերայ, մի՛ գուցէ որ վտանգ պատահի նորա հոգու խռովութենից։ Նորա մայրը և Դը լա Ցուր տիկինը շատ քաղցր խօսքերով խնդրումէին նորանից, որ նոցա ցաւի վերայ նոր ցաւ չյաւելացնէ իւր յուսահատութենով։ Վերջապէս Դը լա Ցուր տիկինը կարողացաւ հանդարտեցնել

Նորան, առատաբաշխելով Նորան այնպիսի անուններ, որ յարմար էին վերստին զարթուցանելու Նորա յոյսերը. Նա ասումէր Նորան. Ո՛րդի, սիրելի՛ որդի, փեսայ, նշանած որին պիտոյ է հարսնացնէր իւր դուստրը։ Նա աղաչեց Պաւլոսին ներս դալ օթևանը և մի փոքր հաց ուտել։ Նա մեր հետ սեղան նստեց այն տեղն մնա, ուր նստումէր իւր մանկութեան ընկերը. և որպէս թէ դեռ ևս նստած էր այն տեղ Վիրգինիան, Պաւլոսը խօսքը դարձուցանումէր դէպ ի նա, մատուցանումէր Նորան այն կերակուրները, որ գիտէր նա, թէ շատ սիրելի էին Նորան։ Բայց հասկանալով իւր մոլորութիւնը, սկսումէր լալ։ Միւս օրերին հաւաքեց նա այն բոլոր բաները որ Վիրգինիայի առանձին գործածութեան համար էին, վերջին ծաղկափունջերը որ բերած էր ինքը, այն կոկոսեան բաժակը որով սովոր էր ըմպել Վիրգինիան. և որպէս թէ այս մեացորդքը իւր բարեկամից, աշխարհի առաւել պատուական բաներն էին, համբուրումէր սրանց և դնումէր ծոցի մէջ։ Սաթը չէ փչում մի այդպիսի անոյշ խնկահոտութիւն, ինչպէս այն բաները որ շոշափել էր սիրականի ձեռքը։ Վերջումը նկատելով Պաւլոսը, որ իւր ցաւը և վիշտը առաւելացնումէին իւր մոր և Դը լա Տուր տիկնոջ տառապանքը, և թէ գերդաստանի պիտոյքը պահանջումէին մի անդուլ աշխատասիրութիւն, սկսեց նա Դոմինիկոսի գործակցութեամբ նորոգել այդին։

Այս երիտասարդը, այնպէս, ինչպէս բոլոր Եւրոպացիք որ ծնած էին Աֆրիկայի մէջ, սառնասիրտ լինելով դէպ ի ամենայն բաներ որ լինումէին աշխարհի վերայ, վերջապէս խնդրեց ինձանից, որ կարդալ ուզել ուսուցանեմ Նորան, որ նա կարողանայ գրաւոր հաղորդակցութիւն առնել Վիրգինիայի հետ։ Ցնոյց կամ ցաւ նա ուսանել Աշխարհագրութիւն և Պատմութիւն, որ մի գաղափար ստանայ այն աշխարհի մասին, ուր Վիրգինիան իջանելու էր ցամաք, այլև ծանօթանայ այն հասարակութեան բարք ու վարքին, որի մէջ պիտոյ է ապրէր Վիրգինիան։ Պաւլոսը նմանապէս շատ քաջ փորձված էր երկրագործութեան մէջ և մնում էր վայելչապէս կարգադրելու ամենայն տեսակ հող, թէև լինէր դա շատ դար ու փոս, որովհետև սիրումէր այդ զբաղմունքը։ Անտարակոյս, այն քաղցրութիւններից, որոնց կարօտ էր մարդուս բորբոք և անհանդիստ սիրտը, գոյացել է մարդկութեան համար գիտութիւնների և ճարտարութիւնների մեծ մասը, և այն զբաղմունքներից որ կարող էր յանձն առնուլ դա, յառաջացել է փիլիսոփայութիւնը, որ ուսուցանումէ մխիթարվել ամենայն վշտի մէջ։ Դոյնպէս բնութիւնը շինելով Սէրը ամենայն էակների զուգաւորող կապ, յօրինել է Նորան առաջին շարժառիթը մեր ընկերութիւնների, և գրգռիչը մեր լուսաւորութեան և մեր ուրախութիւնների։

Պաւլոսը շատ համ չառաւ աշխարհագրութեան ուսումից, որ փոխանակ նկարագրելու մեզ ամենայն աշխարհի բնաւորութիւն, ոչինչ չէ պատկերացնում մեր առաջև բացի քաղաքական բաժանմունքից (*): Պատմութիւնը և մանաւանդ թէ նոր ժամանակների պատմութիւնը ևս աւելի նուազ դրաւիչ էր նորան: Դորա մէջ չէր տեսանում նա, եթէ ոչ ընդհանուր և ժամանակաւոր վատաբաղդութիւններ, որոնց պատճառներին չէր կարողանում հասու լինել. պատերազմեր առանց պատճառի և դիտաւորութեան, խաւար դաւաճանութիւններ, ազգեր առանց հաստատուն բնաւորութեան և իշխաններ առանց մարդասիրութեան: Պատմաբանական ընթերցասիրութենից առաւել նախապատիւ էր համարում ռոմանները, որ իւրեանց նիւթ ընտրելով առաւելապէս մարդերի զգացողութիւնը, ուրախութիւնը և ցաւը, երբեմն պատկերացնում էին նորան այնպիսի որպիսութիւնք, ինչպէս իւրն էր յատկապէս: Այս պատճառով, ոչինչ գիրք այնքան ախորժելի չէր նորան, ինչքան Ֆենելոնի Թելեմաքը, նկարագրելով շինական կեանքը և այնպիսի ախտեր, որ բնական էին մարդկային սրտին: Նա կարդում էր իւր մօրը և Դը լա Տուր տիկնոջը այնպիսի տեղեր, որ առաւել սիրելի էին իւր սրտին. այնուհետև նորոգվելով նորա մէջ քաղցր յիշատակներ, ճընշվում էր նորա ձայնը և արտասուքը թափվում էր նորա աչքերից: Նորան երևում էր, թէ Վիրգինիայի մէջ գտանում է Անթիոպէի արժանաւորութիւնը և խնամատութիւնը, Եւխարիդի ձախորդութիւնների և ընքշասրտութեան հետ միասին: Միւս կողմից ամենևին զարհուրեցաւ նա կարդալով Ֆրանսիացոց սովորական ռոմանները, անպարկեշտ բարքերով ու կարգերով լցուած. և իմանալով թէ այդ ռոմանքը պարունակում էին իւրեանց մէջ եւրոպական ընկերութիւնների բուն և ստոյգ պատկերը, կասկածեց նա և ոչ առանց խելքի մօտ պատճառի, մի գուցէ որ Վիրգինիան աւերվի այն տեղ և մոռանայ նորան:

Արդարև, աւելի քան թէ տարի ու կէս անցած էր, բայց Դը լա Տուր տիկինը ոչ մի լուր ստացած չէր իւր մօրաքուերից և դուստրից. լսած էր միայն օտար կողմից, թէ իւր դուստրը յաջողապէս հասել էր Ֆրանսիա: Վերջումը մի նաւ, որ դիմում էր դէպ ի Հնդկաստան, հասցրեց նորան մի ծրար և մի նամակ, Վիրգինիայի յատուկ ձեռքով գրած:

(*) Ճշմարիտ է, Բեռնարդէն դը Սան Պիէռի ժամանակումը, աշխարհագրութեան ուսումը այսպէս էր, բայց դա մեր դարումը, մանաւանդ թէ Գերմանացոց աշխարհագիրների աշխատութեանով, զոր օրինակ Բիթի թերի, Բերգհաուզենի, Հոֆմանների և Շախթի ականաւոր գրուածներով ստացել է մի պատուական, սիրուն և հոգի գրաւող, բազմուսոյց դիտութիւն:

Թէպէտև իւր սիրարժան և ներողամիտ դուստրը շատ շնչանկատ էր, այնու ամենայնիւ Դը լա Տուր տիկինը կարծումէր, թէ նա շատ վատաբաղդ է։ Այս նամակը այնպէս ճիշդ պատկերացնումէր Վիրգինիայի դրութիւնը և բնաւորութիւնը, որ ես նորան պահել եմ մտքիս մէջ բառ առ բառ։ Ահա նամակի բովանդակութիւնը.

«ՔԱՂՑՐ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐ ԻՄ.

«Այս ահա գրած եմ քեզ շատ նամակներ իմ ձեռքով, և որովհետև չեմ ստացել նոցա պատասխանը, տեղիք ունիմ կարծելու, թէ նոքա չեն հասած քեզ։ Աւելի բարկացած եմ այս նամակի մասին, զգուշութիւն զործ դնելով ինձանից, լուր հասուցանելու քեզ և լուր ստանալու քեզանից։

«Շատ արտասուք եմ թափել ես այն օրից, որ մեք անջատվեցանք միմեանցից. ես, որ գրեմ թէ արտասուք չէի թափել, եթէ ոչ միայն ցաւերի համար։ Իմ մեծ մորաքոյրը շատ զարմացած էր, երբ որ ինձ տեսանելով իւր մօտ և հարցափորձելով իմ գիտութիւնքը, լսեց իմ բերանից թէ չգիտեմ ոչ կարդալ և ոչ գրել։ Նա հարցրեց ինձանից, ապա ինչ եմ ուսել, քանի որ աշխարհի վերայ էի. երբ որ ասացի նորան, թէ իմ զործս եղել է հոգաբարձութիւն տնտեսութեան համար, և ես կատարել եմ իմ մոր կամքը, ապա պատասխանեց նա ինձ, թէ ես ստացած էի ծառայական դաստիարակութիւն։ Միւս օրին զրեց նա ինձ մի դպրոցի մէջ մի մեծ արբայական մենաստանում Փարիզի մօտ, ուր ունիմ ես ամենայն տեսակ վարժապետք. դոքա ուսուցանումեն ինձ, բաց ի միւս բաներից, պատմութիւն, աշխարհագրութիւն, քերականութիւն, մաթեմատիքա և ձիահեծութիւն. բայց այնպէս թոյլ են իմ ընդունակութիւնքը այս գիտութիւնների մասին, որ ես շատ օգուտ քաղելու չեմ այս ուսուցիչներից։ Ես զգումեմ որ մի խղճալի արարած էի ես, սակաւաշնորհ, ինչպէս և լսումեմ նոցա բերանից։ Ի վերայ այդր ամենայնի իմ մօրքուեր խնամքը չէ սառնանում ամենևին. նա տալիս է ինձ նոր ըզգեստներ տարու ամենայն եղանակի մէջ. նա կարգել է իմ մօտ երկու սպասաւոր աղախին, որ այնպէս զարդարված էին ինչպէս մեծատուն կանայք։ Նա տուել է ինձ պատուանունս կոմսուհի, հանելով իմ վերայից անունս Դը լա Տուր, որ նոյնքան սիրելի է ինձ, ինչքան քեզ, միտ դնելով այն բոլոր բաներին որ դու պատմել ես ինձ այն տառապանքների մասին, որ կրել է իմ հայրը քո հետ պսակվելու համար։ Նա փոխանակել է քո ամուսնական անունը քո ազգատոհմի անունի

« Հետ, որ դեռ ևս սիրելի է ինձ, որպէս քո աղջիկ հասակի անունը։
« Ցեսանելով ինձ այսպիսի փառահեղ դրութեան մէջ, աղաչեցի մօրա-
« քոյրս, որ ուղարկէ քեզ մի փոքր օգնութիւն։ Ինչպէս յայտնեմ
« քեզ նորա պատասխանը։ բայց դու պատուիրել ես ինձ, որ միշտ
« ասեմ քեզ ճշմարիտը։ Նա պատասխանեց ինձ, թէ մի փոքր բան
« ոչինչ օգուտ չէր բերելու քեզ, բայց շատը ծանրութիւն կը լինէր
« քեզ, նայելով այն պարզ կեանքին որ վարումես դու։ Իմ առաջին
« աշխատութիւնը այն էր, որ քեզ իմ մասին լուր հասուցանեմ մի
« օտար մարդու ձեռքով, որովհետև իմ ձեռքս կարող չէր գրել։ Բայց
« երբ որ եկած էի այս տեղ, չունենալով մի մարդ, որին կարող էի հա-
« ւատ ընծայել, աշխատեցի ցերեկ ու գիշեր, որ ուսանիմ կարդալ
« ու գրել։ Ստուած ողորմեցաւ ինձ, յաջողութիւն պարգևելով ինձ
« այդ գործի մէջ։ Իմ առաջին նամակների ուղարկումը յանձնեցի ես
« այն կանանցը, որ գտանվումն իմ շրջակայքումը։ Ցեղիք ունիմ
« կարծելու, թէ սոքա իմ նամակը տուել են մօրաքուրս ձեռքը։
« Այս անգամ դիմեցի ես իմ բարեկամ աշակերտակիցների մինի մօտ,
« և ահա նորա հասցէն, որով խնդրեմ հասուցանել ինձ ձեր պատաս-
« խանագրութիւնը։ Իմ մեծ մօրաքոյրը պատուիրել է ինձ ոչինչ հա-
« ղորդակցութիւն չառնել դէպ ի դուրս, որ, ինչպէս կարծումէ նա,
« կարող էր խափանարար լինել այն մեծ խորհուրդներին, որ ունէր
« ինքը իմ մասին։ Նա է միայն, որ կարող է տեսանել իմ երեսը
« վանդակաւոր պատուհանից, այլև նորա բարեկամներից մի ծեր պա-
« րոն, որ, ինչպէս ասումէ մօրաքոյրս, շատ ախորժելի է տեսանում իմ
« անձը։ բայց ասեմ քեզ ճշմարիտը, ես ամենևին անախորժ եմ տե-
« սանում նորան, եթէ առ հասարակ կարող էի ունենալ ախորժակ որ
« և իցէ մարդու համար։

« Այս ապրումեմ բաղդի փառահեղութեան մէջ, բայց չունիմ
« իշխանութիւն ոչ մի դահեկանի վերայ։ Ասումն, եթէ ունենայի ես
« ձեռքումս արծաթ, սորանից ծնանելու էին վատ հետևանքներ. իմ
« զգեստքը ևս պատկանումն իմ սպասաւոր աղախիններին, որ, ես
« դեռ ևս չհրաժարված նոցանից, վիճումն նոցա վերայ միմանց հետ։
« Հարստութեան ծոցի մէջ շատ աւելի աղքատ եմ ես քան թէ երբ
« որ էի քո մօտ. պատճառ, ոչինչ չունիմ ես տալու։ Երբ որ տեսայ
« ես, թէ այն մեծ շնորհներովը որ ուսուցանումն ինձ, չէր բացվում
« ինձ ճանապարհ բարի առնելու, թէև ամենափոքր բանով, այնու-
« հետև դիմեցի ես դէպ ի իմ ասելը, որ դու գեղեցիկ խոհեմութեամբ
« ուսուցել էիր ինձ գործ դնել։ Ահա ուղարկումեմ քեզ մի քանի
« զոյգ գուլբա իմ ձեռքով գործած, քո և մայր Մարգարիտի համար,

« մի դլխարկ Դոմինիկոսի համար և իմ կարմիր թաշկինակներից մինը
« Մարիամի համար։ Այս ծրարի հետ ուղարկումեմ նոյնպէս մրգեղէնի
« սերմեր, պտուղների կորիզներ և ամենայն տեսակ ծառերի հատիկներ,
« որ հաւաքել եմ ինքս իմ հանգստութեան միջոցին մենաստանի
« այգումը։ Այս աշխարհի մարդագետիններումը կան աւելի գեղեցիկ
« ծաղիկներ քան թէ մերայիններումը, բայց ոչ ով փոյթ չունի նոցա
« մասին։ Ես հաւատի եմ թէ դու և մայր Մարգարիտը աւելի ուրա-
« խանալու էիք այս սերմերի պարկերի վերայ քան թէ այն արծաթի
« պարկի վերայ, որ եղաւ մեր բաժանման և արտասուքի պատճառ։ Մեծ
« ուրախութիւն կը լինէր իմ համար, եթէ մի օր քաղցրանար քո սիր-
« տը տեսանելով ինձորենիքը որ աճումէին մեր բանանեան ծառերի
« մօտ, և կաղամախիքը որ իւրեանց տերևաղարդութիւնը խառնումէին
« մեր կոկոսեան ծառերի տերևների հետ։ Դու կը կարծէիր քեզ Նոր-
« մանդիայի մէջ որ այնքան սիրելի էր քեզ։

« Դու խստիւ պատուիրել ես ինձ իմաց տալ քեզ իմ ուրախու-
« թիւնը և վիշտը։ Ես չունիմ այլևս ոչինչ մխիթարութիւն, հեռի
« լինելով ձեզանից. իմ վիշտը մեղմացնումեմ ես մտածելով, թէ
« գտանվումէի մի պաշտօնում, որի մէջ դու կարդել ես ինձ Աստուծոյ
« կամքով։ Բայց իմ սրտի ամենամեծ ցաւը է, որ այս տեղ ոչ ով չէ
« յիշատակում ձեր անունը, և ոչ իսկ ես ունիմ համարձակութիւն
« բերան բանալ ձեր մասին։ Իմ սպասաւոր աղախինքը կամ մանաւանդ
« իմ մօրաքուեր աղախինքը, պատճառ, դոքա պատկանումէին Նորան
« աւելի, քան թէ ինձ, ասումեն ինձ, երբ կամենումէի խօսակցութիւնը
« դարձուցանել դէպ ի այնպիսի առարկայք որ սիրելի են իմ սրտին.
« — Աղջիկ տիկին, մի՛տ բեր, որ դու Ֆրանսիացի ես և պիտոյ է մոռանաս
« վայրենաբնակ մարդերի աշխարհը։ Ո՜հ. ես աւելի հեշտ կարող էի
« մոռանալ իմ անձը, քան թէ այն աշխարհը ուր ծնած էի ես, ուր և
« գտանվումէիր դու։ Ոչ. այս աշխարհը, այս տեղ է իմ համար վայ-
« ր ենակեացների աշխարհ. պատճառ, ես ապրումեմ այս տեղ մենակ,
« չունելով մի անձն, որին մի փոքր բաժին տայի այն սիրուցը, որ պի-
« տոյ է ուղարկաւորէ քեզ մինչև դէպ ի դերեզմանն։

Քաղցր և սիրելի մայր,

Քո հնազանդ և մաքրասէր դուստր

ՎԷՐՖԻՆԻ ԴԷ ԼԱ ՏՈՒՐ։

« Այս յանձնումեմ քո մարդասիրութեանը մեր սպասաւոր Մա-
« ր իամը և Դոմինիկոսը, որ այնքան հոգարարձու են եղած ինձ մանկու-

«Թեան օրերումը։ Փայփայի՛ր իմ կողմից Ֆիդելը, որ վերստին դառ-
«նիր անտառի մէջ։»

—

Պաւլոսը շատ զարմացած էր այն բանի վերայ, որ Նորա մասին ոչինչ խօսեցած չէր Վիրգինիան. նա, որ չէր մոռացել իւր յիշատակութիւնների մէջ իւրեանց տան շունը։ Բայց չգիտէր Պաւլոսը, թէ ինչքան և երկար լինէր մի կնամարդի նամակ, դա իւր առաւել սիրելի խորհուրդը դնումէ վերջումը միայն։

Նամակի յաւելագրութեան մէջ Վիրգինիան առանձնապէս յանձնումէր Պաւլոսին երկու տեսակ սերմեր. մանուշակների և բորաբոսների սերմերը։ Նա տալիս էր Պաւլոսին քանի մի խրատներ այս տունկերի ընաւորութեան մասին և թէ ո՞ր հողերը առաւել յարմարաւոր էին, այդ սերմերը բուսուցանելու համար։ «Մանուշակը, — ասումէր նա, — յառաջացնումէ մի փոքրիկ ծաղիկ մոյգ-կապոյտ գունով, սիրումէ թաքչիլ մացառների տակ. բայց Նորա զմայլեցուցիչ խնկահոտութիւնը շուտով յայտնումէ Նորան։» Նա յատկապէս պատուիրումէր Պաւլոսին սերմանել Նորան աւաղանի ափերումը, իւր կոկոսենու ոտքին։ «Բորաբոյսը, — գրել էր նա, — տալիս է մի ախորժելի ծաղիկ գունեղութիւն-կապոյտ և յատակումը սեաւ, սպիտակ կէտերով։ Ասես թէ նա սգաւոր է, և այդ պատճառով ասումեն Նորան այրի ՀՈՒՆՔՃՈՒԼԻ։ Նա սիրումէ խոշոր և հողմակոծ տեղեր։» Վիրգինիան խնդրումէր Պաւլոսից սերմանել դորան այն ժայռի վերայ, ուր վերջին անգամը, զիշերով խօսել էր ինքը Նորա հետ. և այս ժայռին, Նորա սիրու համար, տալ անունս Հրաժեշտման ժայռ։ —

Այս բոլոր սերմերը փակել էր Վիրգինիան մի քսակի մէջ, որի հիւսուածը շատ պարզ էր. բայց դա անգին երևեցաւ Պաւլոսի աչքումը, երբ որ սա նկատեց Նորա վերայ հիւսած տառերս Պ. և Վ. և յօրինած մաղերից, որ նայելով Նոցա գեղեցկութեանը, ճանաչեց թէ Վիրգինիայի մազերն էին։

Այս քաղցրասիրտ և առաքինի աղջկայ նամակը, շատ արտասուք թափել տուեց բոլոր գերդաստանին։ Նորա մայրը պատասխանեց Նորան բոլոր ընկերութեան կողմից, թէ կարող էր մնալ կամ վերադառնալ, ինչպէս հաճոյ էր Նորան, հաւատացնելով թէ բոլորեքեան սգաց, Նորա երթալուց յետոյ, կորուսել էին իւրեանց երջանկութեան առաւել պատուական մասը, և թէ ինքը մասնաւորապէս անմխիթար էր։

Պաւլոսը գրեց Վիրգինիային մի երկար նամակ, հաւաստի կացուցանելով Նորան, թէ նա կամի իւրեանց այդին արժանաւոր յօրինել

Վիրգինիային և զուգախառնել այն տեղ Եւրոպայի բոյսերը Աֆրիկայի բոյսերի հետ, այնպէս, ինչպէս նա իւրանց անուններեր հիւսել էր իւր գործածի մէջ։ Պաւլոսը ուղարկեց Վիրգինիային սորա աւաղանի մօտ տնկած կոկոսի ծառերի պտուղներ, որ հասած էին կատարելապէս. բայց սորան չէ ուղարկում, գրել էր Պաւլոսը, ոչինչ բոյսի սերմ այս կողզուցը, այն մտքով, որ Վիրգինիան կարօտելով վերստին տեսանելու այս կղզու բերքերը, հարկադրվի շուտով վերադառնալ այս տեղ։ Պաւլոսը խնդրումէր և աղաչումէր սորան, որ առաւել շուտով կատարէ իւրանց գերդաստանի կարօտը և փափագը և իրը յատկապէս, որովհետև անկարելի էր նորան ուրախութիւն գտանել առանց Վիրգինիային։

Պաւլոսը շատ մեծ հոգածութեամբ ցանեց եւրոպական սերմերը և մանաւանդ թէ մանուշակի և բորարոյսի հատիկները, որոնց ծաղիկները ասես թէ զուգակցութիւն ունէին Վիրգինիայի բնաւորութեան և գրութեան հետ, որ և այնքան յատկապէս յանձնած էր նորանց Պաւլոսի ուշադրութեանը։ Բայց գուցէ թէ նոքա ճանապարհումը աւերված էին, կամ մանաւանդ թէ Աֆրիկայի այս բաժնի կլիման ձեռնտու չէր նոցա, ծլեցան շատ փոքր սերմեր և չկարողացան հասունանալ կատարելապէս։

Բայց նախանձը, որ զարթնումէ և յառաջագոյն քան թէ բաղդաւորութիւնը, մանաւանդ թէ ֆրանսիական գաղթականների մէջ, տարածեց կղզումը համբաւներ որ շատ անհանգստութիւն պատճառեցին Պաւլոսին։ Նամակաբեր նաւի մարդիկը հաւատացնումէին թէ Վիրգինիան կամենումէ շուտով ամուսնանալ. նոքա տալիս էին այն պալատական մարդու անունը, որ պիտոյ է առնուր նորան իւր կին. այս մի քանիքը ասումէին թէ բանը վերջացած է ահա, և թէ նոքա ականատես էին եղած գործին։ Սկզբումը, Պաւլոսը արհամարհեց մի այդպիսի վաճառական նաւի բերած լուրեր, որ շատ անգամ սուտ սուտ համբաւներ է տարածում այն տեղերումը որոնց վերայից անցանումէ։ Բայց որովհետև կղզու բնակիչներից շատերը մի նենգաւոր կարեկցութեանով շտապումէին ախտակից լինել նորան այս տխուր անցքի մասին, սկսեց և նա հաւատ ընծայել նոցա։ Թող այս բանը. մի քանի օտիաններեր մէջ, որ կարդացած էր Պաւլոսը, տեսանումէր նա թէ անհաւատարմութիւնը խաղի ու կատակի կարգում էին դրած. և գիտելով թէ այս գրեանքը բաւական ստուգապէս նկարագրումէին Եւրոպայի բարք ու վարքը, երկիւղ ստացաւ թէ մի գուցէ և Դը լա Տուր տիկնոջ աղջիկը աւերվի այն տեղ և մոռանայ իւր առաջին ուխտագրութիւնքը։ Ահա նորա հասկացողութիւնը շինումէր նորան անրադդ։ Այն բանը, որ բա-

լորովին սասռակացրեց Նորա երկիւղը և կասկածանքը, էր, որ շատ եւրոպական նաւեր եկան յետոյ, վեց ամսի միջոցում. բայց ոչ մինը լուր չբերեց Վիրգինիայից։

Այս անբաղդ երիտասարդը անձնատուր լինելով իւր սրտի բոլոր խռովութիւններին, ստէպ դալիս էր ինձ տեսութիւն, իւր անհանգստութիւնը կամ ստուգելու կամ թէ փարատելու իմ փորձերովը աշխարհի օրպիսութեան մասին։

Ես, ինչպէս ասացի ձեզ, ընակումէի մեն ու կէս հեռաւորութենով այս տեղից, եղերքումը մի փոքր գետի որ հոսումէ ձգվելով Երկայնասարի հետ։ Այն տեղ ահա անցուցանումէի ես իմ կեանքը մենակ, անկին, անղաւակ և անսպասաւոր։

Այն սակաւագիւտ բաղդաւորութենից յետոյ, որ էր գտանել իւր համար մի կենակից յարմար ու պատշաճ մեր բնութեանը, ամենափոքր վշտալից զրութիւնը, առանց տարակուսի, է ապրելը միայնութեամբ։ Ամենայն մարդ, որ մեծապէս տեղիք ունէր գանգատելու իւր ընկերների վերայ, որոնումէ միայնութիւն։ Այո, ծանօթութեան արժանի է, որ ամենայն ազգերի մէջ, որ վատաբաղդ էին իւրեանց կարծիքների, իւրեանց բարք ու վարքի, իւրեանց իշխանաւորների կառավարութեան պատճառով, յառաջացած են բազմաթիւ ընկերութիւնք քաղաքացիների, որ բոլորովին անձնանուէր էին եղած միայնութեան և անկնութեան։ Այսպէս էին Եգիպտացիքը իւրեանց անկման միջոցին, Բիւզանդացիք. այդպէս են մեր օրերումը և Հնդկացիք, Չինէացիք, Նոր-Յոյնք, Իտալացիք և Եւրոպայի արևելեան և հարաւային ազգերի մեծ մասը։ Միայնութիւնը մի մասնով գարձուցանումէ մարդը դէպ ի բնական երջանկութիւն, հեռացնելով նորանից ընկերական թշուառութիւնը։ Մեր, այնքան մոլար կարծիքների պատճառով, բաժան բաժան եղած ընկերութիւնների մէջ, հոգին գտանվումէ մի մշանջենաւոր խռովութեան մէջ. նա անդադար վեր ի վայր է շրջում ինքը իւր մէջ հաղար տեսակ խառնափնդոր և հակառակ կարծիքներ, որոնցով մի փառասէր և ողբալի ընկերութեան անդամներ որոնումեն նուաճել միմեանց իւրեանց լծի տակ։ Բայց միայնութեան մէջ հոգին ցած է դնում այդ օտարոտի մոլորութիւնքը, որ պղտորումեն նորան. նա գարձեալ ստանումէ իւր կարողութիւնը պարզապէս խմանալու իւր անձը, ընութիւնը և Նորա հեղինակը։ Այսպէս, տղմոտ ջուրը մի հեղեղի, որ ապականումէ դաշտերը, եթէ հանդիպումէր նորան թափվել մի փոքր աւազանի մէջ, հեռի նորա ընթացքից, ցած է նստեցնում տիղմը իւր յատակի վերայ, գարձեալ ստանումէ իւր առաջին պարզութիւնը և կրկին պայծառանալով ցոլացնումէ իւր սեփական եղերների հետ երկրի կանաչու-

թիւը և երկնքի լոյսը։ Միայնութիւնը նոյնպէս ձեռնտու է վերստին հաստատելու մարմնի ներդաշնակութիւնը հոգու հետ։ Միայնակեաց մարդերի մէջ էր, ուր դտանվումն և առաւել երկայնակեացքը, զոր օրինակ Հնդկաստանի Բրամինքը։ Այլև, ես այնքան հարկաւոր եմ համարում այդ բանը նոյն իսկ աշխարհի մէջ, որ անկարելի է երևում ինձ որ և իցէ տեղական ուրախութիւն վայելել, կամ թէ իւր բարք ու վարքը մի հաստատուն կանոնի տակ դնել, եթէ կարող չէինք հիմնել մեր մէջ մի ներքին առանձնութիւն, ինչ տեղից շատ սակաւ դուրս կը գար մեր կարծիքը, և ինչ տեղ ներս չէր մտանելու օտարի կարծիքը։ Այսու ամենայնիւ կամք չունիմ ասել, թէ պետք էր մարդուն ապրել միայնութեամբ. նա իւր պիտոյքներովը կապած է բոլոր մարդկային ազգի հետ. ուրեմն նա պարտական է աշխատել մարդկութեան համար. նորա կեանքը պատկանումէր նոյնպէս բնութեան միւս մասներին։ Բայց, ինչպէս Աստուած մեզանից ամեն մինին պարգևել է գործարաններ, ամենեին յարմարեցրած այն երկրագնդի տարերքին, որ մեր բնակարանն էր, ոտքերը հողի համար, թռչքերը օդի համար, աչքերը լուսի համար, առանց կարողանալու մեր կողմից վեր ի վայր շրջել այդ զգայարանների պաշտօնը, սոյնպէս նա, որ կենդանութեան պարգևատուն է, իւր համար միայն պահել է մարդու սիրտը, որ նորա կենդանութեան գլխաւոր գործարանն է։

Այսպէս ահա, անցուցանումեմ իմ օրերը, հեռացած մարդերից, որոնց կամեցել էի օգտակար լինել, որ և հալածել են ինձ։ Շրջած լինելով Եւրոպայի շատ աշխարհների մէջ, Ամերիկայի և Աֆրիկայի քանի մի սահմաններումը, ոչ հաստատեցի ես այս սակաւարնակ կըղզումը, սիրելով նորա քաղցր եղանակը և անապատը։ Մի խուղ, որ շինած եմ ես անտառումը մի ծառի տակ, մի փոքրիկ հոշ, որ մշակագործել եմ իմ ձեռքով, մի գետ, որ հոսումէ իմ դրան առաջից, բաւական են իմ պիտոյքների և ուրախութեան համար։ Այս վայելչների վերայ յաւելացնումեմ ես մի քանի պատուական գրուածք, որ ուսուցանումեն ինձ աւելի բարուրել իմ անձը։ Նոքա օգտակար են կացուցանում ինձ նոյն իսկ աշխարհը, որ թողել եմ ես. նոքա իմ աչքի առաջև պատկերացնումեն այն ախտերը, որ այդքան թշուառացնումեն նորա բնակիչների կեանքը, և այն համեմատութեանովը որ ես առնումեմ նոցա և իմ մէջ, նոքա հաստատումեն ինձ մի բարձրական երջանկութիւն (այսինքն թէ ես չէի այնպէս վատաբաղդ, ինչպէս նոքա)։ Մի մարդու պէս, որ մի քարաժայռի վերայ փրկած էր նաւարեկութիւնից, իմ առանձնարանից նկատումեմ ես այն մրրիկները որ գոռումեն միւս տեղերում։ Իմ հանգստութիւնը կրկնապատիկ քաղցրանում ինձ, հեռի լինելով

ես փոթորկի շառաչիւնիցը։ Սկսեալ այն ժամանակից, քանի որ մարդիկ չէն ինձ խոչընդոտն և ոչ ես նոցա, ես չեմ ատում նորանց աւելի, այլ ցաւումեմ նոցա վերայ։ Հանդիպելով մի վատաբաղդի, աշխատումեմ ես օգնել նորան իմ խորհրդատուութեամբը, ինչպէս մի անցաւոր մարդ հեղեղ եղերքի վերայ, պարզումէ ձեռքը դէպ ի մի վատաբաղդ անձն, որ խեղդվումէր ջրի մէջ։ Բայց ես չեմ գտած մինը որ ուշադիր լինէր իմ ձայնին, բաց ի անմեղութիւնը։ Զուր էր միւս մարդկերի համար ընութեան հրաւէրը իւր մօտ. ամեն մինը գոցանից ձևացնումէ իւր համար մի ընութեան պատկեր, վերարկելով նորան իւր յատուկ ախտերովը. նա իւր բոլոր կեանքի մէջ վազումէ այդ ցնորքի քամնկից որ հանումէր նորան ճանապարհից, և ապա գանգատումէ և կնային տեսչութեան վերայ այն սխալանքների մասին, որոնց պատճառը ինքն էր։ Այն բաղմաթիւ անբաղդների մէջ, որ երբեմն փորձել էի ես դարձուցանել դէպ ի ընութիւնը, մի հատ ևս չեմ գտած ես, որ չլինէր արբեցած իւր յատուկ թշուառութենով. սկզբումը, մտադիւր լսումէին ինձ, յուսալով թէ ես օգնական կը լինիմ նոցա, փառք ու հարստութիւն ճարելու. բայց տեսանելով թէ ես չկամիմ ոչինչ այլ բան ուսուցանել նոցա, եթէ ոչ, փախչել գոցանից, նորա թշուառ էին համարում ինձ յատկապէս, որովհետև չէի վազում նոցա ողբալի երջանկութեան հետևից։ նորա նախատակոծ էին առնում իմ միայնական կեանքը։ նորա հաստատումէին թէ ինչանք միայն օգտաբեր էին մարդկութեանը, և ջանադիր էին քարշել, ձգել ինձ իւրեանց փոթորկի մէջ։ Բայց եթէ ես հաղորդակցութիւն ունիմ ամենայն մարդու հետ, ոչ մինին անձնատուր չեմ. շատ անգամ բաւական էի ես ինքս խրատ լինել իմ համար։ Այս իմ անդորրութեան մէջ, ես կրկնումեմ յիշողութենով իմ յատուկ կեանքի անցած մտայածութիւնքը, որ այնքան յարգի էին իմ աչքումը. իշխանների հովանաւորութիւն, բաղդաւորութիւն, համբաւ, հնչողութիւն և այն հակառակ կարծիքները, որ պատերազմումն միմեանց հետ բոլոր աշխարհի վերայ։ Այդքան մարդիկ, որ տեսած եմ ես թէ որպիսի կատաղութենով մինը միւսից աշխատումէին յափշտակել այդ ցնորական բաները, որ և այժմ չկան աշխարհի վերայ, համեմատումեմ ես իմ գետի ալիքներին որ փրփրալով ջարդուփշուր են լինում, ղարկվելով նորա ձորի քարաժայռերին և անյայտանումեն, որ միւսանգամ չերևին երբէք։ Իմ մասին, ես թոյլ եմ տալիս ժամանակի հոսանքին խաղաղութեամբ տանել ինձ դէպ ի ապագայի անեղրական ովկիանոսը. և ընութեան ներդաշնակութեանների տեսարանովը վերուզղումեմ իմ միտքը դէպ ի նորա Արարիչը և յոյս ունիմ մի այլ աշխարհում ժառանգել աւելի երանական վայելչներ։

Թէպէտ իմ առաձնարանից, որ դրած է մի անտառի մէջ, տեսանելի չէ այս առարկաների բազմութիւնը, որ ցուցանումէ մեր այժմեան կացարանի բարձրութիւնը. բայց այն տեղ կան ախորժելի պատրաստութիւնք, մանաւանդ մի մարդու համար, որ, ինչպէս ես, աւելի սիրումէ որոճալ սրտի մէջ իւր որպիսութիւնը, քան թէ տարածել նորան դէպ ի դուրս։ Այն դեսը որ հոսումէ իմ տան առաջից, ուղիղ խաղով անցանումէ անտառների միջից, պատկերացնելով իմ առաջև մի երկար ջրանցք, ամենայն տեսակ ծառերի տերևներով հովանաւորված. այն տեղ կան թաթամաքներ, արանոսեան ծառեր և այնպիսի տունկեր, որ ասվումեն այս տեղ խնձորի փայտ, ձիթապտղի փայտ և դարսինի փայտ. ընտանի արմաւենիք այս տեղ և այն տեղ բարձրացնումեն իւրեանց մերկ և երկայն սիւները աւելի քան թէ հարիւր ոտնաչափ, որոնց կատարների վերայ կախված են արմաւի ողկոյզներ, որ և միւս ծառերի վերայից երևումեն որպէս մի անտառ, տնկած միւս անտառի վերայ։ Այն տեղ զուգահառնվումեն միմեանց հետ պէսպէս տերևներով պատատարոյսք, որ հիւսվելով մի ծառից դէպ ի միւս ծառ, այս տեղ ձևակերպումեն ծաղկաղարդ կամարներ, այն տեղ կանաչապատ վարագոյրներ։ Խնկաւէտ հոտեր փչումեն այս ծառերի առաւել շատերիցը և նոցա անուշահոտութիւնքը այնքան ազդեցութիւն ունին հաղուստների վերայ, որ եթէ մի մարդ անցել էր մի անտառի միջով, նորանից անոյշ հոտ է դալիս երկու ժամ աւելի քան թէ դուրս էր եկած անտառից։ Այն տարեմիջոցին, երբ ծաղկումեն այդ ծառերը, ասես թէ կիսով չափ պատած էին ձիւնով։ Ամառնավերջումը շատ տեսակ օտարերկրեայ թռչուններ, մի անհասկանալի բնական ձգտողութեանով, դալիս են անծանօթ կողմերից, ահագին ծովերի վերայով, որ հաւաքեն այս կղզուոյսերի հատիկները, և իւրեանց գոյների փայլը ընդդիմադրումեն ծառերի, արևից թխացած, կանաչութեանը։ Զոր օրինակ. բաց ի միւսներից երևումեն տեսակ տեսակ փոքրիկ թռչնակներ և կապոյտ աղաւնիք, որ ասվումեն այս տեղ Հոլլանդեան աղաւնիք։ Կապիկները լինելով այս անտառի ընտանի բնակիչքը, խաղ են անում ծառերի մէջին ճիւղերի մէջ, որոնցից զանազանվումեն իւրեանց մոխրագոյն և դէպ ի կանաչ զարկող մաղերով և իւրեանց ամենեին սև երեսով։ Մի քանիքը իւրեանց պոչերով կախվումեն ճիւղերից և ճոճվումեն օդումը. միւսները ոստչումեն ճիւղից դէպ ի ճիւղ, իւրեանց երեխայքը կրելով գրկի մէջ։ Սատակիչ հրացանը սարսափ չէ բերել երբէք այս բնութեան զաւակների վերայ։ Այն տեղ լսելի էին միայն ուրախութեան հնչիւնք, քաղցրաձայն կարկաչիւն և անծանօթ ճռվղիւնք հարաւային թռչունների, որոնց կրկնելով պատասխան էին տալիս այս անտառների

արձագանքը։ Այն գետը որ եռալով հոսումէ ժայռերէն յատակի վերայ, ծառերի միջով, այս տեղ և այն տեղ իւր պարզ ջրերի մէջ ցոլացնումէ նոցա պատկառելի կանաչութիւնը և ստուերքը, որպէս և նոցա երջանիկ բնակիչների խաղարկութիւնքը։ Հաղար քայլաչափ հեռի այն տեղից, այդ գետը յարձակվումէ քարաժայռի զանազան դատիկոններից և ցած թափվելով կերպաւորումէ մի մեծ ջրադաշտ, այնպէս հաւասար որպէս բիւրեղ, որ վայր ընկնելով ջարդուփշուր է լինում ձեւացնելով փրփուրի պղպջակներ։ Հաղարաւոր խառնակ ձայներ հնչումեն այս աղմկալից ջրերի միջից և հողմերի զօրութեամբը ցան և ցիր լինելով անտառի մէջ, երբեմն փախչումեն դէպ ի հեռաւոր տեղեր և երբեմն մնտեռնումեն միմեանց բոլորը միասին և խլացնումեն մարդու ականջը ինչպէս մի կաթողիկէի զանգակների ձայն։ Օդը անդադար նորոգվելով ջրերի շարժողութեամբ այս հեղեղի ափերումը, թէպէտև պրող էր ամառը, այնու ամենայնիւ պահպանումէ մի կանաչութիւն և զովութիւն, որ սակաւադիւտ է այս կողմերը, այո և սարերի բարձրութեան վերայ։

Ի փոքր բացակայ այն տեղից, գտանվումէ մի քարաժայռ, այնքան հեռի լինելով քարավազիցը, որ այն տեղ չէ թմրում ականջը նորա ջրերի շառաչիւնից, թէպէտև կարելի էր վայելել նոցա տեսութիւնը, զովութիւնը և խոխոջիւնը։ Մեք երբեմն, սաստիկ ջերմ օրերի մէջ, գնումէինք ճաշելու այս քարաժայռի ստուերումը, Դը լա Տուր տիկինը, Մարգարիտը, Վիրգինիան, Պաւլոսը և ես։ Որովհետև Վիրգինիան իւր ամեն, այո և շատ հասարակ գործակատարութիւնքը միշտ ուղղեցնումէր դէպ ի իւր ընկերի օգուտը, նա դաշտումը չէր ուտում մի միրգ, որի կորիզը կամ սերմերը չթաղէր հողի մէջ։ «Սորանից, — ասումէր նա, — կը յառաջանան ծառեր, որոնց պտուղը կը վայելէ մի ճանապարհորդ կամ թէ մի թռչուն կը կերակրվի նորանով։» Այսպէս, մի օր, երբ նա կերած էր մի դդմասեմ այս ապառաժի ոտքումը, նորա սերմերը տնկեց այն տեղ։ Փոքր ժամանակից յետոյ բուսան նորանից շատ դդմածառեր, որոնց մէջ կար մի եդ ծառ, այսինքն այնպիսի ծառ, որ բերումէր պտուղներ։ Այս ծառը դեռ ևս չէր հասած Վիրգինիայի ծնկի բարձրութեանը, երբ որ գնաց նա Եւրոպա։ բայց որովհետև նա աճումէ արագ, երկու տարի անցած, ուներ նա քսան ոտնաչափ բարձրութիւն, և նորա բունը շրջապատած էր վերևից հասուն պտուղների բաղմաթիւ շարքերով։ Պաւլոսը պատահմամբ հանդիպելով այս տեղ շատ ուրախացաւ, երբ որ տեսաւ այս մեծ ծառը, որ յառաջած էր մի փոքրիկ սերմից, որ նորա աչքի առաջև տնկել էր Վիրգինիան, և նոյն միջոցին մի խոր տրտմութիւն եկաւ նորա վերայ, նկատելով այս նշանից Վիրգինիայի երկար ժամանակ բացակայ լինելը։ Այն առարկայքը որ մեք

տեսանումենք սովորաբար, չեն թողում մեզ նկատել մեր կեանքի սրընթացութիւնը. նորա ծերանումն մեր հետ մի անզգալի ծերութիւնով. բայց այն առարկայքը որ մեք մի քանի տարի աչքից կորուսած լինելով, կրկին տեսանումենք յանկարծ, դրա էին, որ իմացնումեն մեզ այն արագութիւնը, որով անցանումեն մեր օրերի հոսանքը։ Պաւլոսը, պտուղներով բեռնաւորված տեսանելով այս մեծ դդմածառը, այնպէս զարմացաւ ու տրտմեցաւ, ինչպէս հանդիպումէ մի ճանապարհորդ մարդու, որ երկար միջոց բացակայ լինելով իւր հայրենի աշխարհից, չէր այլևս գտանում այն տեղ իւր ժամանակակից մարդիկը. իւր երեխայքը որ թողել էր այն տեղ մոր ծծին, տեսանումէ, որ ինքեանք դարձել են երեխաների ծնողք։ Նա կամենումէր վայր կործանել այդ ծառը, որ աւելի զգալի կերպով յիշեցնումէր նորան այն երկար ժամանակը, որ անցած էր Վիրգինիայի գնալուց յետոյ. բայց նկատելով նորան որպէս Վիրգինիայի բարեգործութեան յիշատակարանը, համբուրումէր նորա բունը և դարձուցանումէր դէպ ի նա այսպիսի սիրալից ու ցաւալից խօսքեր. «Ո՜վ ծառ դու, որի զաւակները կան դեռ ևս մեր անտառումը, քո վերայ նայեցած եմ ես աւելի ուշադրութեանով և պատկառանքով քան թէ Հռոմայեցոց յաղթական կամարների վերայ. թող բնութիւնը, որ ամենայն օր աւերումէ թագաւորների պատուասիրութեան յիշատակարանքը, բաղմացնէ մեր անտառի մէջ մի մանուկ և չքաւոր աղջիկ մարդու յիշատակարանքը։»

Ա՜հա, այս դդմածառի ոտքումը հաւաստի էի թէ հանդիպելու եմ Պաւլոսին, երբ նա գալու էր իմ օթևանը։ Մի օր նորան գտայ այս տեղ տխրամտութեանով ծանրացած, և բացեցի նորա հետ մի զրոյց որ կամիմ պատմել քեզ, եթէ չէի քեզ շատ տաղտկալի իմ խօսքի ընթացքը այս կողմ ու այն կողմ շեղելով, որ ներելի էր իմ հասակին և իմ վերջին մարդասիրութեանը։ Ես կը պատմեմ քեզ մեր զրոյցը խօսակցութեան ոճով, որ դու կարողանաս գատել այդ երիտասարդի առողջամտութիւնը. և հեշտ կը լինի քեզ որոշել միմեանցից մէջ ընկած խօսողները մտառու լինելով նորա հարցուածներին և իմ պատասխաններին։

Նա ասաց ինձ.

«Շատ տրտում եմ ես. երկու տարի ու երկու ամիս է, որ Դը լա Ցուր տիկնոջ աղջիկը գնացել է այս տեղից. և ութ ամիս ու կէս է, որ նա ոչինչ լուր չէ ուղարկած մեզ։ Նա հարուստ է, և ես չքաւոր. նա մոռացել է ինձ. ցանկութիւն ունիմ նաև նստել և գնալ. կ՚երթամ Ֆրանսիա, կը ծառայեմ թագաւորին, կը բաղդաւորվիմ այն տեղ, և Վիրգինիայի մեծ մտրաքոյրը իւր մտրաքուեր աղջկայ գուստրը կը տայ ինձ կնութեան, երբ որ դարձած կը լինեի մի մեծատուն մարդ։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Ով իմ բարեկամ, չասացիր դու ինձ, թէ բարեսոհմիկ չես դու։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Իմ մայրը ասել է ինձ այդ բանը. պատճառ, իմ մասին չգիտեմ ես, թէ ինչ բան է բարեսոհմիկ լինելը։ Ես երբէք նկատած չեմ, թէ այդ կողմից պակասաւոր էի մի այլ մարդուց, կամ թէ միւսերը ինձանից առաւել էին։

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Բարեսոհմութեան պակասութիւնը Ֆրանսիայի մէջ կը փակէ քո ճանապարհը դէպ ի երևելի պաշտօններ. բայց ի դարանից, դու չես կարող ներս մտանել ոչինչ երևելի հասարակութեան մէջ։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Դու շատ անգամ ասած ես ինձ, թէ Ֆրանսիայի մեծութեան պատճառներից մինը այն է, որ ամենափոքր հպատակը կարող է այն տեղ հասանել ամենայն պատուի, և դու յիշեցիր ինձ անուանի մարդիկ շատ, որ լինելով ցած ազգից, փառք ու պատիւ էին ստանալ իւրեանց հայրենիքին։ Ուրեմն կամք ունէիր դու մոլորեցնել իմ հանարձակութիւնը։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Իմ որդի, ես կամք չունիմ երբէք քո վստահութիւնը թուլացնել. ես ասացի քեզ ճշմարտութիւնը, անցած ժամանակների մասին. բայց իրողութիւնքը շատ փոփոխված են այժմ։ Ամենայն բան վաճառելի է Ֆրանսիայի մէջ. ամենայն բան այսօր մի քանի մեծատուն ազգատոհմերի հայրենի ստացուած է, կամ թէ մի քանի ընկերութիւնների կալուած։ Թագաւորը է մի արևգակ, որ մեծամեծքը և հասարակութիւնքը շրջապատել են որպէս ամպեր. հանարեա թէ անկարելի էր, որ այդ արևգակի ճառագայթներից մինը ընկնէր քո վերայ։ Առաջին միջոցները, երբ որ կառավարութեան կերպը չէր այնքան խառնաշփոթ, տեսված են այդպիսի օրինակներ. այն միջոցներին հանձարը և արժանաւորութիւնը ամենայն կողմից դուրս էին երևում որպէս կոյս հողեր, որ մշակագործվելով, բերումն ամենևին հիւթալից պտուղներ։ Բայց այն թագաւորները, որ գիտէին ճանաչել և ընտրել մարդիկ, սակաւագիւտ են։ Թագաւորների մեծ մասը թոյլ է տալիս, որ նորանց վարեն դէպ ի որ կողմը կամին մեծատունները և հասարակութիւնքը որ շրջապատումն նորանց։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Բայց գուցէ գտանեմ ես այս մեծաւորների մէջ մի մարդ, որ կը հոմանաւորէր ինձ։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Մեծատուններից հոմանաւորութիւն գտանելու համար, պիտոյ է ծառայել նոցա պատուասիրութեանը կամ թէ հաճոյքին· բայց քո համար փակ է այդ ճանապարհը· պատճառ, դու չունիս բարետոհմութիւն և ունիս արդարութիւն։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Բայց ես կը կատարեմ այնպիսի քաջագործութիւնք, կը լինիմ այնպէս հաստատուն իմ խօսքի մէջ, այնպէս ճիշդ լցուցանող իմ պարտականութիւնքը, այնպէս ջերմ և անխոտորելի իմ բարեկամութեան մէջ, որ արժանաւոր կը լինիմ մեծատուններից մինի որդեգրութեանը, ինչպէս տեսած եմ որ լինուէր հին ժամանակներումը, որոնց պատմութիւնը ուսուցել ես դու ինձ։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Ո՛վ իմ բարեկամ· Յունաց և Հռոմայեցոց մէջ, նոցա բարքերի վատթարանալու միջոցին ևս, մեծամեծքը ամենայն կերպով մեծարուէին առաքինութիւնը· բայց մեք ունեցած ենք ամենայն տեսակ շնորհալի մարդիկ շատ և շատ, որոնց ծնողքը էին ռամիկ մարդիկ· բայց ես չգիտեմ ոչ մինը նոցանից, որ որդեգիր ընդունված լինէր մի մեծատուն տոհմի կողմից։ Առաքինութիւնը, եթէ չլինէին մեր թագաւորքը, պիտոյ է դատապարտվէր Գրանսիայի մէջ որպէս մի մշտապէս ռամկական գործ։ Ինչպէս ասած եմ քեզ, նոքա երբեմն բաղդաւորումն առաքինութիւնը, եթէ նկատումն նորան, բայց այսօր այն գերազանց մեծարանքը որ պատկանումէր դորան, չենն տալիս աւելի, եթէ ոչ արծաթին։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Եթէ չեղաւ մի մեծատուն, ես կ'աշխատեմ հաւանելի լինել մի բաղմութեան· ես կ'ընդունեմ բոլորովին նորա հոգին և կարծիքները· ես իմ անձը սիրելի կը կացուցանեմ նորան։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Ուրեմն դու այնպէս կը վարվիս, ինչպէս միւս մարդիկը· դու կ'ուրանաս քո խիղճը, բաղդաւորութեան հասանելու համար։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Դա՜ւ լեցի· ես միշտ պիտոյ է խնդրեմ ճշմարտութիւնը։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Փոխանակ սիրելի կացուցանելու քո անձը, դու նորան ատելի կը կացուցանես. թող այդ, բազմութիւնքը շատ փոքր բանի տեղ են դնում ճշմարտութեան յայտնագործութիւնը։ Ամենայն կարծիք մի և նոյն է պատուասէր մարդերի աչքումը, միայն թէ կարող էին նոքա հրամայել։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ի՞նչպէս անարգդ եմ ես. բոլոր աշխարհ հալածումէ ինձ։ Ես պարտաւորված եմ անցուցանելու իմ կեանքը մի խաւար աշխատութեան մէջ, Վիրգինիայից հեռի։» Եւ նա հոգոց հանեց սրտի խորքից։

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Թող Աստուած լինի քո միայնակ պաշտպանը, և մարդկային աղգը քո ընկերքը։ Մշտապէս հաւատարիմ կաց թէ մինին և թէ միւսին։ Գերդաստանքը, հասարակութիւնքը, աղգերը և թագաւորները ունին իւրեանց մոլար կարծիքները և ախտերը։ Շատ անգամ պիտոյ է ծառայել նոցա, արատաւոր ճանապարհներով։ Աստուած և մարդկային աղգը պահանջումէ մեզանից առաքինութիւն միայն։

«Այդ ինչո՞ւ կամենումես դու գերազանց լինել միւս մարդերից. այդ մի անբնական ցանկութիւն է. պատճառ, եթէ այդ ցանկութիւնը լինէր ամենայն մարդու մէջ, ամենայն ոք պիտոյ է պատերազմ բանար իւր դրացու հետ։ Բաւականացի՛ր դու կատարելով քո պարտականութիւնքը այն պաշտօնում, որի մէջ դրել է քեզ Նախախնամութիւնը։ Օրհնի՛ր քո պաշտօնի վիճակը, որ թոյլ է տալիս քեզ ունել քո սեփական խիղճը, որ հարկ չէ դնում քո վերայ, ինչպէս մեծամեծների վերայ, քո բաղդաւորութիւնը կշռել փոքրիկ մարդերի կարծիքով, և ինչպէս փոքրիկների վերայ, սողալ մեծամեծների ոտքին, մի փոքր ապրուստ ճարելու համար։ Դու մի այնպիսի աշխարհումմ և այնպիսի դրութեան մէջ ես, որ ապրելու համար կարօտ չէիր ոչ խաբեբայութեան, ոչ մարդահաճութեան և ոչ իսկ քո անձը անարգելու, ինչպէս առնումէ մեծ մասը այն մարդերի, որ որոնումէին իւրեանց բաղդը Եւրոպայի մէջ։ Քո պաշտօնը չէ պատուիրում քեզ հեռի կենալ որ և իցէ առաքինութենից. դու կարող ես, առանց պատիժ ստանալու, լինել բարի, ճշմարիտ, արդար, գիտուն, համբերող, բարեխառն, պարկեշտ, ներողասիրտ, երկիւղած. և ոչինչ ծաղրածութիւն չէր կարող մոռնալ քեզ և վատահամբաւել քո խնամատութիւնը, որ դեռ ես իւր ծաղկի մէջ է միայն։ Երկնային տեսչութիւնը շնորհել է քեզ աղատութիւն,

առողջութիւն, բարի խիղճ և բարեկամներ. թագաւորները, որոնց շնորհին հետամուտ ես դու, չեն այդպէս երջանիկ։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ո՞հ. Վիրգինիան պակաս է ինձ. առանց նորան ոչինչ չունիմ ես. նորա հետ միասին կ'ունենամ ես ամենայն բան։ Նա միայն է իմ բարետոհմութիւնը, իմ փառքը, իմ ճոխութիւնը։ Բայց որովհետև նորա մեծ մօրաքոյրը կամենում է նորան ամուսնացնել մի անուանի մարդու հետ, և ուսումնասիրութեամբ ու գրքերով կարելի է գիտնական մարդ դառնալ, ապա կ'երթամ ուսանելու. ես կը ստանամ գիտութիւն, իմ հայրենիքին օգտակար կը լինիմ իմ լուսաւորութեամբ, առանց վնասելու մի մարդու և առանց կախ լինելու մի մարդուց։ Ես հռչակաւոր անուն կը ճարեմ և իմ փառքը պատկանելու է ինձ միայն։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Այ՛մ որդի. իմացական աջողակութիւնքը աւելի փոքրագիւտ են քան թէ բարետոհմութիւնը և հարստութիւնքը. և անտարակոյս, նոքա առաւել մեծ բարիքն են, որովհետև ոչ ոք կարող չէ յափշտակել նորանց, և ամենայն տեղ նոքա պատուելի են կացուցանում մեզ հասարակութեան մէջ. բայց շատ թանգ արժեն դոքա, որ ստացվումեն միայն հրաժարվելով շատ և շատ հեշտութիւններից, այնպէս սաստիկ ներքացնելով մեր զգացողականութիւնը, որ մեզ անկարող է կացուցանում, ներքուստ և արտաքուստ հալածանք տեսնելով մեր վերայ մեր ժամանակակից մարդերի ձեռքով։ Քաղաքական պաշտօնի սպասաւորը Ֆրանսիայի մէջ նախանձում չէ զինուորականի փառքին, և ոչ զինուորական մարդը ծովագնաց մարդու փառքին։ Բայց ամենայն մարդ այն տեղ կ'անցանէ քո ճանապարհի վերայից. պատճառ, ամենայն ոք հաստատում է այն տեղ, թէ ունէր ականաւոր իմացականութիւն։ Դու կը ծառայես մարդկութեանը, ասումես դու. բայց այն մարդը որ պարարտացնելով հողը, կարող է նորանից մի որոյ ցորեան ստանալ, առաւել արդիւնաբեր է մարդկութեանը քան թէ նա, որ տալիս է նորան մի գիրք։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Երդմարև, նա, որ տնկել է այս դդմածառը, այս անտառի բնակիչներին ցուցել է մի աւելի օգտակար և քաղցր շնորհ, քան թէ տուած լինէր նոցա մի գրատուն։» Եւ իսկոյն գրկախառնեց նա այս ծառը և համբուրեց նորան զմայլանքով։

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Յմենից ընտիր գիրքը, որ քարոզում միայն հաւասարութիւն, եղբայրասիրութիւն, քաղցրարարոյութիւն և միաբանութիւն, այսինքն Աւետարանը, դարերի միջոցումը պատճառ է դարձել Եւրոպացոց համար, տմարդի կատաղութեամբ հալածելու միմեանց։ Քանի՛ քանի բրոնաւոր գործեր թէ յայտնի և թէ ծածուկ լինումեն դեռ ևս երկրի վերայ Աւետարանի անունով։ Սորանից յետոյ ով կարող էր յուսալ, թէ օգտաբեր լինելու է մարդկութեանը, մի գիրք տալով նորան։ Միտք բեր, թէ ինչպէս է եղել վերջը աւելի շատ փիլոսոփոսների, որ քարոզել են մարդկային ազգին իմաստութիւն։ Հոմերոսը որ պարդարել է այդ իմաստութիւնը այնպիսի հրաշալի բանաստեղծութեամբ, մուրացկանութիւն էր առնում իւր կեանքի մէջ։ Սոկրատէսը, որ իւր խօսքերով ու գործով այնպիսի գեղեցիկ խրատներ էր տուել Աթենացոցը, նոյն Աթենացոց դատաստանով մահու դեղ խմեց ու մեռաւ։ Նորա վսեմամիտ աշակերտ Պլատոնը վաճառվեցաւ դէպ ի տարկութիւն նոյն իշխանաւորի հրամանով, որ եղած էր Նորա պաշտպան. և սոցանից յառաջ Պիւթագորասը, որ պատուիրումէր մարդկութիւն մինչև դէպ ի անասունքը, կենդանոյն այրվեցաւ Կրոտոնացոց ձեռքով։ Ի՞նչ ասեմ. մեծ մասը և այն հռչակաւոր անուններն որ հասած են մեզ, տգեղացրած էին մի քանի երգիծաբանական իմաստներով որ պատկերացնումէին նոցա բնաւորութիւնը, ըստ որում մարդկային ապերախտութիւնը սիրումէր ճանաչել նորանց այդպիսի տեղեկութիւններից, և եթէ բաղմութեան միջից քանի միների փառքը հասել է մեզ յստակ ու անարատ, սորա պատճառը այն է, որ դոքա ապրել են իւրեանց ժամանակակից մարդերի ընկերութենից հեռի. այն արձանների պէս որ անարատ դուրս էին հանում Յունաստանի և Իտալիայի հողերի տակից, որ և թաղած լինելով երկրի ծոցումը, ազատվել են բարբարոսների կատաղութենից։

«Յհա տեսանումես դու, որ գիտութեան փոթորկալից փառքը ստանալու համար, հարկաւոր է մեծ առաքինութիւն, պիտոյ է պատրաստ լինել իւր կեանքից հրաժարվելու։ Թող այդ. մի՛ թէ կարծումես դու, թէ այդ փառքը Ֆրանսիայի մէջ շարժումէր հարստականների սիրտը։ Սոքա անփոյթ էին այնպիսի ուսումնականների համար, որոնց չէր հասուցանում գիտութիւնը ոչ պատիւ հայրենի աշխարհումը, ոչ իշխանական պաշտօն, ոչ եկեղեցական արքունի պալատի մէջ։ Այս դարումը որ ամենայն բանի համար սառնասիրտ է, բայց ոչ հարստութեան և հեշտակեցութեան համար, չեն վազում մարդիկ մի այլ բանի

քամակից։ Բայց լուսաւոր հանճարը և առաքինութիւնը չեն ճանաչարհ հասանելու ոչինչ գերազանց պատուի. պատճառ, ամենայն բան թագաւորութեան մէջ արժանի գին է։ Առաջին ժամանակներումը դրատանումէին նորա ապահով վարձատրութիւնք զանազան եկեղեցական պաշտօնների և քաղաքական սպասարկութեան և արքունի կառավարութեան մէջ, բայց այժմ ոչինչ բանի չեն ծառայում, եթէ ոչ մատենագրութեան (գրեանք շինելու)։ Բայց այս վաստակը, որ շատ փոքր գովասանած էր աշխարհական մարդերի մէջ, միշտ արժանի է իւր երկնատունկ արմատին։ Այն իսկ գրուածքն են, որոնց պաշտօնն է յատկապէս լուսափայլ կացուցանել անյայտ առաքինութիւնը, մխիթարել անբաղդները, լուսաւորել ազգերը և ասել ճշմարտութիւնը թագաւորներին ևս։ Առանց հակառակութեան, է սա առաւել օգուտաբեր կոչումը, որով երկնային տեսչութիւնը կարող էր մեծարել մի մահկանացու մարդ երկրի վրայ։ Ով է այն մարդը, որ տանելով հարստակամների անիրաւութեանը կամ արհամարհանքին, չէր մխիթարվում մտածելով, թէ նորա գործը գնալու է դարուց դար, ազգերից ազգ, լինելու է ամբարտակ ընդդէմ մոլորութիւնների և բռնաւորների, և թէ այն անյայտութեան միջից, ուր նա կացած էր, դուրս կը շողեցուցանէ մի պատիւ, որ նսեմացնելու էր փառքը աւելի շատ թագաւորների, որոնց յիշատակարանքը կորչումեն մոռացութեան մէջ, թէև շողոմարքը բարձրացնումէին և փառաբանումէին նորանց։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ո՜հ. ես կամիմ հասանել այդ փառքին, որ նորանով փառաւորեմ Վիրգինիան և սիրելի կացուցանեմ նորան բոլոր մարդկութեան համար։ Բայց դու, որ ունիս այդքան գիտութիւն, ասա ինձ, արդեօք կը զուգաւորվի՞նք մեք ամուսնութենով։ Ես կամէի գիտուն լինել, զոնեայ ապագան իմանալու համար։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Ով կարող էր ապրել, իմ որդի, եթէ տեղեակ լինէր ապագային. մի հատ ձախորդութիւն որին յառաջատես ենք մեք, պատճառումէ մեզ անօգուտ անհանգստութիւնք. մի հաւատի ձախորդութեան նախատեսութիւն կը թունաւորէր մեր օրերը որ յառաջագնայ էին դորան։ Նմանապէս չէ պիտոյ չափից դուրս խորամուխ լինել այն բաների մէջ, որ շրջապատումեն մեզ. և երկնային տեսչութիւնը, որ տուել է մեզ քննողականութիւն նախատեսանելու մեր պիտոյքը,—տուել է մեզ նոյնպէս այն կարիքը, որ մեզ հարկադրումէր չափի ու սահմանի տակ դնել մեր քննողականութիւնը։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Արծաթով, ասումես դու, ստացվումեն Եւրոպայումը ատոիճանք և պատուականութիւնք։ Ես կ'երթամ Բենգալիա հարստանալու, որ յետոյ գնամ Փարիզ ամուսնանալու Վիրգինիայի հետ։ Ահա նաև կը նստեմ ես։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Այդ ի՞նչ բան է. մի՞թէ կամի՞ս դու բարձի թողլ առնել Վիրգինիայի և քո յատուկ մայրը։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Դու ինքդ խորհուրդ տուեցիր ինձ գնալ Հնդկաստան։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Այն ժամանակին այս տեղ էր Վիրգինիան. բայց այժմ դու նոցա մի հատ օգնականն ես։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Վիրգինիան բարերար կը լինի նոցա իւր հարուստ ազգականի ձեռքով։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Հարստականները բարերար են այնպիսի մարդերի, որ նոցա անուանը պատիւ էին բերում աշխարհի մէջ. հարստականները ունին աւելի ողբալի ազգականներ քան թէ Դը լա Ցուրտիկինն է. դոքա զուրկ և անմասն նոցա օգնութենից, հրաժարվումեն իւրեանց աղատութենից, որ մի պատառ հաց ունենան և անցուցանումեն իւրեանց կեանքը մենաստանների մէջ փակված։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Այդ ի՞նչ աշխարհ է Եւրոպան։ Ոչ. ոչ, անպատճառ պիտոյ է Վիրգինիային յետ դառնալ. ի՞նչ հարկաւոր էր նորան մի հարուստ ազգական. նա այնքան երջանիկ էր այս խուղերի մէջ, այնքան սիրուն և զարդարուն, մի կարմիր թաշկինակ կամ թէ ծաղիկներ նորա գլխի վերայով։ Ցե՛տ դարձիր, ով Վիրգինիա, թող քո ապարանքները և քո փառահեղութիւնը։ Ո՞հ, կարելի է, որ դու անբաղդ ես այժմ. . . .»

Եւ նա սկսեց արտասուել։ «Իմ հայր — ասաց նա, — ոչինչ բան մի՞ ծածկիր ինձանից. եթէ դու չես կարող ասել ինձ, թէ ես լինելու էի մի օր Վիրգինիայի ամուսին, գոնեայ տեղեկութիւն տուր ինձ, եթէ նա դեռ ևս սիրում ինձ, նստելով ու վեր կենալով այն մեծամեծների հետ, որ խոսակից են թագաւորի մոտ և դիմումին նորան տեսութիւն։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Ո՛վ իմ բարեկամ, թէ նա սիրումէ քեզ, այդ մասին հաւաստի եմ ես զանազան պատճառներով, և մանաւանդ թէ նորանով, որ առաքինի անձն է նա։» Այս խօսքերի վերայ, նա վազեց և փաթաթվեցաւ վզիս, ուրախութիւնից յափշտակվելով ուշը։

ՊԱՒԼՈՍԸ·

«Բայց մի՞ թէ Եւրոպայի կանայքը խարդախ ես համարում, ինչպէս պատկերացնումն նորանց կոմեդիաների մէջ և այն գրքերումը, որ դու տուել ես ինձ կարդալու։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Կանայքը խարդախ են այն աշխարհներումը, ուր տղամարդիկը բռնաւոր են։ Ամենայն տեղ բռնաւորութիւնը յառաջացնումէ խարդախութիւն։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Ի՞նչպէս կարելի է կանանց վերայ բռնաւոր լինել։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Ամուսնացնելով նորանց առանց հարցաքննելու նոցա կամքը, մի մանուկ աղջիկ մի պառաւ մարդու հետ. մի նրբաղգաց կնամարդ մի քարասիրտ տղամարդի հետ։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Ինչու համար չեն ամուսնացնում միմեանց հետ այնպիսիները, որ յարմար էին միմեանց. մանուկները մանուկների հետ, ուշադիր լինելով երկու կողմից եղած հաւանութեանը և կամքին։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Դորա պատճառը այն է, որ երիտասարդքը Ֆրանսիայի մէջ չունին բաւական հարստութիւն ամուսնանալու համար։ Դորա, քանի որ երիտասարդ էին, մոլորեցնումն իւրեանց դրացիների կանայքը. բայց երբ որ ինքեանք ծերացած էին, չեն կարող իւրեանց ամուսինների սիրտը գրաւել։ Նոքա գողացել են օտարի ամուսնութիւնը, երբ որ երիտասարդ էին, և դորա փոխարէնը ստանումն միւսերից, երբ որ ինքեանք ծերացած էին։ Այս է կշիռը այն տիեզերական արդարութեան, որով կառավարվումէ աշխարհը. այս տեղ, մի անպատշաճութիւն զուգակշիռ է միւս անպատշաճութեան։ Այսպէս, Եւրոպացոց մեծ մասը անցուցա-

նում իւր կեանքը այս կրկնապատիկ անկարգութեան մէջ, և այս անկարգութիւնը զբաղումէ ընկերութեան մէջ նոյն չափով, ինչ չափով հարստութիւնը դիզվումէն սակաւաթիւ մարդերի ձեռքում։ Թագաւորութիւնը նման է մի այգու, ուր փոքրիկ ծառերը չէն կարող յառաջադէմ լինել, եթէ կային այդ տեղ չափից դուրս մեծ ծառեր, որ ստուերարկումէին փոքրիկները։ բայց դանազանութիւնը այն է, որ մի այգու գեղեցկութիւն կարող էր յառաջանալ սակաւաթիւ մեծամեծ ծառերից, բայց մի թագաւորութեան երջանկութիւն կախ է միշտ հպատակների բազմութենից և հաւասարութենից, և ոչ թէ սակաւաթիւ հարստականներից։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Բայց ի՞նչ հարկաւոր է հարուստ լինել ամուսնանալու համար։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Իւր օրերը առատութեան և լիութեան մէջ անցուցանելու համար, առանց աշխատելու ամենեին։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Ու ինչու համար չէ պիտոյ աշխատել· ես աշխատումէմ շատ։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Որովհետև Եւրոպայումը ձեռքի աշխատութիւնը մի ամենաթալի բան է· դորան ասումեն մեքենական աշխատութիւն։ Նոյն իսկ երկրագործութիւնը առաւել արհամարհելի է ամենների աչքումը։ Մի արուեստաւոր շատ աւելի պատիւ ունի քան թէ շինականը։»

ՊԱՒԼՈՍԸ·

«Այդ ի՞նչ բան է· այն արուեստը որ հաց է տալիս մարդկութեանը, արհամարհելի՞ է Եւրոպայի մէջ· ես չեմ հասկանում ձեր ասածը։»

ԾԵՐՈՒՆԻՆ·

«Աւրդարև, մի մարդու, որ մեծացած էր ընութեան մէջ, անկարելի է հասկանալ քաղաքական ընկերութեան ապականութիւնը։ Կարելի է մի ճիշդ գաղափար ծնուցանել իւր մտքի մէջ, թէ ի՞նչպէս էր բարեկարգութիւնը· բայց ոչ, թէ ի՞նչպէս էր անկարգութիւնը։ Գեղեցկութիւնը, առաքինութիւնը, երջանկութիւնը ունի չափ և կշիռ, բայց տգեղութիւնը, արատը և թշուառութիւնը զուրկ են դոցանից։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ուրեմն հարստականքը շատ երջանիկ են. ոչինչ բանի մէջ չեն հանդիպում խափանների. նոքա կարող են ամենայն կերպով ուրախացնել իւրեանց սիրածների սիրտը։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Դոքա ըստ մեծի մասին մաշել են իւրեանց անձը, ճաշակելով ամենայն տեսակ քաղցրութիւնք, որովհետև դոքա առանց որ և իցէ աշխատութեան հասանելի էին նոցա։ Փորձած չես դու քո վերայ, որ հանդստութեան քաղցրութիւնը ստացվում վաստակութեանով. հացկերութեան քաղցրութիւնը — սովածութեանով, ըմպելու քաղցրութիւնը — ծարաւով։ Ուրեմն և սիրելու և սիրելի լինելու քաղցրութիւնքը ստացվում միայն յանձն առնելով անհամար զրկանքներ և նուիրարերութիւնք։ Հարստութիւնքը խլումեն հարստականներից այս բոլոր քաղցրութիւնքը, ըստ որում դոքա չէին կարող սպասել, մինչև սիրտը յատկապէս կարօտ էր դոցա։ Դե՛ր այն տաղտկութեան վերայ, որ յառաջանում նոցա յագելութենից, և այն ամբարտաւանութիւնը որ ծնանում նոցա ճոխութենից, որ և վերաւորվում մի շատ փոքր զրկանքով, և այն միջոցին երբ ամենամեծ վայելչութիւնքը չէին աւելի քաղցրացնում նոցա ճաշակը։ Վարդերի անուշահոտութիւնը հաճոյանում մեզ մի բոպէ միայն. բայց այն ցաւը որ պատճառում մեզ նորա փշերի մինը, տևում երկար միջոց նորա խայթելուց յետոյ։ Մի գառնութիւն քաղցրութիւնների մէջ։ Հարստականների համար է մի փուշ ծաղիկների մէջ։ Սորա հակառակ, աղքատների համար մի քաղցրութիւն գառնութիւնների մէջ, է մի ծաղիկ փշերի մէջ. և այս պատճառով շատ զգալի է նոցա այդ մի հատ քաղցրութեան վայելչութիւնը։ Ամենայն ազդեցութիւն զօրանում իւր ներհակովը։ Բնութիւնը ամենայն ինչ զուգակշիռ է կացուցել։ Ո՛ր դրութիւնը, եթէ ամենայն կողմից կշռեիր զործը, նախապատիւ ես համարում դու. դրեթէ ոչինչ յուսալու բան չունենալ և ամենայն բանից երկիւղ կրել, թէ ոչինչ երկիւղի տեղիք չունենալ և ամենայն բան յուսալ. նա հարստականների դրութիւնն է, սա չքաւորների դրութիւնը։ Բայց այս ներհակ ծայրերը դժուարատանելի են մարդուն, որի երջանկութիւնը դրած է միջասահմանի և առաքինութեան մէջ։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ի՞նչ ես հասկանում դու առաքինութիւն ասելով։»

ԾԵՐՈՒՆԻՆ.

«Իմ որդի, դու որ պահպանումես քո ծնողքը քո երեսի քրտինքով, դու կարօտ չես որ քեզ բացատրեին Առաքինութեան խնդութիւնը։ Առաքինութիւնը մի աշխատութիւն է, որ տալիս ենք մեր անձին, մեր ընկերի օգտի համար, այն խորհրդով, որ հաճոյանանք Աստուծուն միայն։»

ՊԱՒԼՈՍԸ.

«Ո՞վ. ի՞նչպէս առաքինի է Վիրգինիան։ Առաքինութեան պատճառով է, որ նա կամեցաւ լինել հարուստ, բարեգործ լինելու համար. առաքինութեան պատճառով էր որ նա գնաց այս կղզուց. նոյն առաքինութիւնը յետ կը բերէ նորան այս տեղ։» —

Վիրգինիայի վերադարձի մտածութիւնը բորբոքելով այս երիտասարդի երևակայութիւնը, չքացան նորա բոլոր անհանգստութիւնքը։ Վիրգինիան նամակ չէր գրել, որովհետև շուտով գալու է։ Շատ փոքր ժամանակ հարկաւոր էր, Եւրոպայից գալու համար, եթէ հողմը լինէր յաջողակ։ Նա համարումէր այն նաւերը, որ հինգ հազար հինգ հարիւր մղոնի ճանապարհը կատարել էին աւելի փոքր, քան թէ երեքամսեայ միջոցում։ Այն նաւը, որի մէջ նստել էր Վիրգինիան, գործ է դնելու ոչ աւելի, քան թէ երկու ամիս. մեր ժամանակումը այնքան գիտուն էին նաւակառոյցքը, այնքան յաջողակ էին ծովագնացքը։ Նա խօսումէր այն կարգադրութիւնների վերայ, որ կամք ունէր առնելու Վիրգինիայի համար. այն նոր բնակարանի մասին, որ կամէր նա շինել. այն ուրախութիւնների և անակնկալ քաղցրութիւնների մասին, որ ամենայն օր կը պատրաստէր նորա համար, երբ որ նա լինելու էր իւր ամուսինը. — իւր ամուսինը . . . . ո՜վ երանական մտածութիւն Պաւլոսի համար։ «Գոնեայ, իմ հայր, — ասումէր նա ինձ, — դու կը պարապես այն բանին միայն որ քաղցր էր քեզ. Վիրգինիան լինելով հարուստ, մեք կ՚ունենանք աւելի մշակներ որ կ՚աշխատէին քո համար. դու միշտ մեր հետ կը լինիս, ոչինչ հոգս չունենալով, բաց ի զբօսանք և ուրախութիւն վայելելուց։» Ցնծալով գնաց նա պատմելու իւր գերդաստանին այն խնդութիւնը, որով արբեցած էր։

Կարճ միջոցում, այս մեծ յոյսերը տեղիք տուին մեծ հոգսերի։ Սաստիկ ախտերը ձգումն հոգին ներհակ չափազանցութիւնների մէջ։ Այնուհետև, Պաւլոսը տրամութենից ճնշած, յաճախ գալիս էր տեսանելու ինձ. նա ասումէր ինձ. «Ո՞հ, այն համբաւները, որ տարածված էին Վիրգինիայի մասին, շատ հիմնաւոր են. նորա մօրաքոյրը ամուս-

նացուցել է Նորան մի մեծաքաշ մարդու հետ. հարստութեան սէրը ապականել է Նորա սիրտը, ինչպէս միւսերինը։ Այն գրքերի մէջ, որ շատ ուղիղ նկարագրումն կանանց բարքը, Առաքինութիւնը մի առասպելական բան է. եթէ Վիրգինիան լինէր մի առաքինի անձն, նա թոդած չէր լինելու իւր մայրը և ինձ։ Ես իմ կեանքը անցուցանումեմ անդադար մտածելով Նորա վերայ, բայց նա մոռացել է ինձ. ես տրրտում եմ, բայց նա զբօսանքի մէջ է. ոհ, այս մտածութիւնը յուսահատեցնումէ ինձ. ամենայն աշխատութիւն դառն է ինձ, ամենայն ընկերութիւն տաղտկալի։ Աստուած տայ, որ պատերազմը բացվէր Հընդկաստանի մէջ, ես կ'երթայի մեռանելու այն տեղ։»

«Իմ որդի, — ասացի Նորան. — այն քաջասրտութիւնը որ ձգումէ մեզ մահու վտանգի տակ, ոչինչ բան չէ, եթէ ոչ, մի բոպէական քաջասրտութիւն. դա յաճախ զարթուցած էր մարդերի ունայն գովասանութիւններով. բայց կայ մի աւելի պատուական և աւելի հարկաւոր քաջասրտութիւն որ տալիս է մեզ ամենայն օր, առանց վկայի և գովասանութեան յանձն առնուլ կեանքի աղէտները։ Այս է համբերութիւնը. սա հիմնաւորվումէ ոչ թէ օտարի կարծիքի կամ թէ ախտերի զրդողութեան վերայ, այլ Աստուծոյ կամքի վերայ։ Համբերութիւն է Առաքինութեան քաջութիւնը։»

«Ո՞հ, — ձայն արձակեց նա. — ես անմասն եմ առաքինութենից. ամենայն բան ճնշումէ իմ սիրտը և յուսահատեցնումէ ինձ։» — «Այնպիսի առաքինութիւն — կրկնեցի ես, — որ լինէր միշտ հաւասար, հաստատուն, անփոփոխելի, չէ մարդու բաժինը։ Այնքան ախտերի մէջ, որ տարուբերումեն մեր սիրտը, պղտորվումէ և խաւարվումէ մեր բանականութիւնը. բայց կան փարոսեան աշտարակներ, ուր կարող ենք մեք կրկին լուցանել (վառել) Նորա ջահը. դոքա էին — Դպրութիւնքը։

«Դպրութիւնքը, իմ որդի, են մի երկնաւոր պարգև. դոքա են շառաւիղները այն իմաստութեան որ կառավարումէ տիեզերքը, որ մարդը մի երկնաղեցիկ հմտութենով ուսել է հաստատել երկրի վերայ։ Դոքա արեգակի ճառագայթների պէս լուսաւորումեն, ուրախացնումեն, ջերմացնումեն. դոքա մի աստուածեղէն կրակ են. ինչպէս կրակը, նոյնպէս և դոքա սիտանի ու արդիւնաւոր են կացուցանում մեզ բնութիւնը։ Նոցանով մեք համաժողովումենք մեր շրջակայքում իրքը, տեղիքը, մարդիկը և ժամանակը. դոքա են որ դարձուցանումեն մեզ դէպ ի կանոնները մարդկային կեանքի։ Դոքա մեղմումեն մեր կիրքերը, ճնշումեն մեր արատները, զարթեցնումեն առաքինութիւնը, փառաւորելով բարեպաշտ մարդերի օգուտաբեր օրինակները և ներկայացնելով մեզ

նոցա մեծարելի պատկերքը։ Դոքա երկնքի հարսունքն են, որ ցած են իջանում դէպ ի երկիր, մարդկային կեանքի դառնութիւնքը քաղցրացնելու համար։ Ականաւոր մատենագիրներ, որոնց վերայ աղդել էին դոքա, միշտ երևումն այնպիսի ժամանակներում, որ շատ դժուարատանելի էին ամենայն ընկերութեան համար, բարբարոսութեան և ապականութեան դարերումը։ Իմ որդի, դպրութիւնքը միշտ մխիթարել են անհամար մարդիկ, որ աւելի վատաբաղդ էին եղած քան թէ դու. զոր օրինակ, Քսենոփոնը աքսորված իւր հայրենիքից, նա որ իրրև հմուտ զօրավար տասն հազար հոգի Յոյն Ասիայի հեռաւոր և թշնամի սահմաններից անվնաս յետ էր բերած դէպ ի Յունաստան. Սկիպիոն Աֆրիկացին, ձանձրացած Հռոմայեցոց բամբասանքներից, Լուկուլլոսը նոցա դարանագործութիւններից, Կատինատը իւր պալատի անշնորհակալութիւնից։ Յոյնքը, այնքան մեծահանճար ազգ, ամեն մի մուղայի, որ պարաղլուխ էր դպրութեան, ընծայել էին մեր իմացութեան մի բաժինը, որ պիտոյ է կառավարէր նա. ուրեմն և մեզ պարտ է մեր ախտերը յանձնել նոցա կառավարութեանը, որ նոքա լծի ու սանձի տակ դնեն նորանց։ Նոքա դէպ ի մեր հոգու կարողութիւնքը պիտոյ է կատարէին նոյն պաշտօնը, ինչ պաշտօն կատարումէին Հօրայքը լծելով և կառավարելով արեգակի ձիաները։

«Ուրեմն, ընթերցասէր եղիր դու, իմ որդի։ Այն իմաստունքը որ գրել են մեզանից յառաջ, ճանապարհորդներ էին, յառաջադնաց լինելով մեզ վատաբաղդութեան շաւիղների վերայ. նոքա պարզումեն իւրեանց ձեռները դէպ ի մեզ և հրաւիրումեն մեզ միաւորվիլ և ընկերանալ նոցա հետ, երբ որ ամենայն բան հրաժարվիլ էր մեզանից։ Մի պատուական գիրք այնպէս է, որպէս մի ազնիւ բարեկամ։»

«Ո՜հ. — ձայն արձակեց Պաւլոսը. — ինձ հարկաւոր չէր կարդալ ուսանել, երբ Վիրգինիան այս տեղ էր. նա աւելի ուսեալ չէր քան թէ ես. բայց երբ որ նայումէր իմ վերայ, անուանելով ինձ իւր բարեկամ, անկարելի էր ինձ տրտում լինել։»

«Ընտարակոյս, — ասացի նորան. — չկայ ոչ մի բարեկամ այնքան քաղցր, ինչքան մի կին որ սիրումէր մեզ. թող այդ. կնամարդու մէջ կայ մի ախորժելիզգաստարձութիւն, որ փարատումէ տղամարդի տրտմութիւնը։ Նորա շնորհալի հայեացքը հալածումէ մտածողութեան սև ուրուականքը։ Նորա երեսի վերայ թագաւորումեն քաղցր հրապուրանք և վստահութիւն. որ ուրախութիւնը չէ լինում աւելի կենդանի, նորա ուրախութիւնով. որ ճակատը չէ արձակում իւր կնջիոը, եթէ ժպտումէր մի այդպիսի ամուսին. որ բարկութիւն կարող էր ընդդիմանալ նորա

արտասուքին։ Վիրգինիան կը վերադառնայ աւելի մեծ փիլիսոփայ դարձած, քան թէ կարծուէիր դու։ Նա շատ կը զարմանայ չտեսանելով այդին նորոգած բոլորովին. նա, որ ոչինչ բանի վերայ չէ մտածում, եթէ ոչ, այդին վայելչացնելու վերայ, թէպէտև նորա աղգականը հալածումէր նորան, թէպէտև նա հեռի էր իւր մօրից և քեզանից։»

Պաւլոսը մտածելով, թէ շոյտ կը վերադառնայ Վիրգինիան, հոգի էր ստանում և սկսանումէր վերստին պարապել շինական գործերին։ Երջանիկ էր նա իւր վաստակների մէջ մի այնպիսի նպատակ տալ իւր աշխատութեանը, որին հաւան էր իւր սիրտը։

Մի առաւօտ, արևածագին, որ էր 1744 թուականի դեկտեմբերի 24-ը, Պաւլոսը տեղից վեր կենալով նկատեց մի սպիտակ դրօշակ տընկած Ցայտնութեան սարի վերայ։ Այս դրօշակը նշան էր մի նաւի, որ տեսած էին ծովի վերայ։ Պաւլոսը վազեց դէպ ի քաղաք որ իմանայ, եթէ լուր էր բերած դա Վիրգինիայից։ Նա մնաց այն տեղ մինչև վերադարձը նաւահանգստի ղեկավարի, որ, ինչպէս սովորութիւն կար, հանդէպ էր գնացել վերահասութիւն գործելու եկաւոր նաւին։ Այս ղեկավարը յետ եկաւ երեկոյին և լուր բերեց կուսակալին, թէ երևեցած նաւը է Սէն-Ժերանը, եօթն հարիւր կարասի ծանրութեանով, որի առաջնորդը էր մի մեծաւոր Օրէն անունով։ Թէ նա չորս ասպարէզ հեռի էր ծովեզերից, և թէ նա չէր կարող խարիսխ ձգել, եթէ ոչ վաղուը, ճաշից յետոյ, եթէ յաջողակ լիներ հողմը. բայց դեռ ևս չկար, ոչինչ յաջողակ հողմ։ Ղեկավարը յանձնեց կուսակալին այն նամակները, որ նաւը բերած էր իւր հետ Ֆրանսիայից։ Սոցա մէջ կար և մի նամակ Վիրգինիայից իւր մօր վերայ։ Պաւլոսը իսկոյն առաւ դորան, համբուրեց նորան խնդութեամբ, դրեց նորան ծոցի մէջ և վազեց դէպ ի տուն։ Աւելի հեռի լինելով, քան թէ կարող էր տեսանել իւր ընտանիքը, որ Հրաժարման քարաժայռի վերայ սպասումէին նորա գալստեանը, բարձրացրեց նամակը օդի մէջ, առանց կարողանալու խօսել. և իսկոյն ամենքեան հաւաքվեցան Դը լա Ցուր տիկնոջ չորս կողմը, որ ականջ դնեն նամակի ընթերցանութեանը։ Վիրգինիան յայտնումէր իւր մօրը, թէ նա տեսել է շատ անարժան վարեցողութիւնք իւր մեծ մօրաքուրը կողմից, որ կամեցած էր նորան ընդդէմ իւր կամքին ամուսնացնել, յետոյ զրկել էր նորան ժառանգութիւնից և վերջումը ճանապարհ էր ձգել նորան այնպիսի եղանակում, որ անպատճառ պիտոյ է հասանէր Իլ դը Ֆրանս կղզուն փոթորիկների միջոցին. — թէ ինքը ի զուր աշխատած էր շարժել նորա գութը, յառաջ բերելով իւր

պարտականութիւնքը դէպ ի իւր մայրը և իւր առաջին հասակի սովորութիւնքը։ Այլև գրած էր Վիրգինիան, թէ մօրաքոյրը վարվել է նորա հետ որպէս մի անմիտ աղջկայ հետ, որի խելքը մոլորված էր սիրապատում գրքեր կարդալով. թէ ինքը այժմ ոչինչ բանի պէտք փափագում չէր, եթէ ոչ, արժանանալ վերստին տեսանելու և գրկախառնելու իւր սիրելի ընտանիքը, և թէ ինքը նոյն օրին լցուցած կը լինէր այս կարօտակէզ փափագը, եթէ նաւի մեծաւորը թոյլ տուած լինէր ճանապարհ ընկնել ղեկավարի նաւակի հետ. բայց նա ընդդիմացած էր նորա գնալուն, ցամաքի հեռաւորութեան պատճառով, և որովհետև բացարձակ ծովը խռովութեան մէջ էր, թէպէտ հանդարտ էին հողմերը.....

Այս թուղթը կարդացած, իսկոյն բոլոր ընտանիքը ուրախութենից յափշտակված, ձայն արձակեցին. «Վիրգինիան եկել է։» Մեծ ու փոքր, ամենքեան գրկախառնեցին միմեանց։ Դը լա Ցուր տիկինը ասաց Պաւլոսին. «Իմ որդի, գնա, իմաց տուր մեր դրացուն Վիրգինիայի գալուստը»։ Դոմինիկոսը իսկոյն վառեց մի ջահ պահապանների փայտից, և Պաւլոսի հետ միասին ճանապարհ ընկան դէպ ի իմ բնակութիւնը։

Այն միջոցին կարող էր լինել երեկոյի տասն ժամը. ես նոր էի հանգցրել իմ լապտերը և հանգստացած էի. ահա իմ խուղի ցանկապատից Նկատեցի ես մի ճրագ անտառի մէջ. մի փոքր յետոյ լսեցի Պաւլոսի ձայնը, որ գանչում էր ինձ. տեղիցս վեր կացայ և հաղիւ թէ հագել էի զգեստս, և ահա Պաւլոսը, ուրախութենից յափշտակված, ամենեին շնչասպառ, փաթաթվեցաւ վզիս, ասելով ինձ. «Արի՛ գնանք, Վիրգինիան եկել է. գնանք դէպ ի նաւահանգիստը, նաւը, արևածագին, խարիսխ է ձգելու այն տեղ։»

Իսկոյն ճանապարհ ընկանք մեք։ Երբ որ անցանում էինք Երկայնասարի անտառի միջից, և ահա գտանվում էինք այն ճանապարհի վերայ, որ տանում Պանպլմուսից դէպ ի նաւահանգիստը, նկատեցի ես, որ մի մարդ քայլում մեր քամակից։ Սա էր մի սեաւ ծառայ որ մեծ քայլերով յառաջ էր գնում. երբ որ հասաւ մեզ, հարցրեցի նորանից, թէ որ տեղից է գալիս, և ուր է գնում այդպիսի շտապով։ Նա պատասխանեց ինձ. «Թէ գալիս է կղզու Ոսկի աւազ անունով թաղից, և ուղարկված է իմաց տալու կուսակալին, թէ մի ֆրանսիական նաւ խարիսխ է ձգել Ամիրեան կղզու մօտ։ Նա արձակում թնդանօթներ, օգնութիւն խնդրելով. պատճառ, ծովը ալէկոծութեան մէջ էր։» Այս մարդը այսպէս խօսեցած լինելով, յառաջ քայլեց, առանց յապաղելու։

Այնուհետև ասացի ես Պաւլոսին. «Արի՛ գնանք դէպ ի Ոսկու աւազի թաղը, Վիրգինիային հանդէպ. դա հեռի է այս տեղից ոչ աւելի

քան թէ երեք ասպարէզ։» Այսպէս ճանապարհ ընկանք մեք դէպ ի կրղղու Հիւսիսակողմը։ Մի խեղդողական ջերմութիւն կար օդի մէջ. լուսինը դուրս էր եկել. նորա չորս կողմը պատած էին երեք մեծ սեաւ օղերով։ Երկինքը վարագուրված էր մի ահարկու խաւարով. յաճախ փայլատակութիւնք լենելով, կարելի էր որոշել երկարաձիգ ամպեր թանձր և մութ, ոչ այնքան բարձր, որ դիզվումէին դէպ ի կղղու միջնավայրը և մեծ արագութեամբ շարժվումէին ծովի կողմից, թէպէտ զգալի չէր ոչինչ հողմ ցամաքի վերայ։ Ճանապարհին կարծեցինք մեք, թէ լսումէինք որոտի ձայն. բայց ուշադրութեամբ ականջ դնելով, իմացանք որ դոքա էին թնդանօթների հարուածք, կրկնվելով արձագանքից։ Այս հեռաւոր հարուածները միաւորվելով փոթորկալից երկնքի տեսութեան հետ, սարսափ բերեցին իմ վերայ։ Ես չկարողացայ տարակուսել, թէ դոքա ցուցանումէին, որ մի նաւ տագնապի մէջ է և պիտոյ է կործանվի շուտով։ Կէս ժամ յետոյ ամենևին դադարեց թնդանօթների ձայնը, և այս լռութիւնը աւելի զարհուրելի թուեցաւ ինձ, քան թէ յառաջուց եղած ողբալի դղրդիւնը։

Մեք շտապեցինք յառաջ գնալ, ամենևին լուռ և անխօս, առանց իմաց տալու միմեանց մեր սրտի անհանգստութիւնը։ Դէպ ի կէս գիշեր, ամենևին կորած քրտնքի մէջ հասանք ծովեզրին, Ոսկու աւազի թաղին։ Ալիքները մի ահարկու շառաչիւնով ջարդվումէին այս տեղ, ծովեղերեայ ապառաժքը և տափակ ծովափերը ծածկելով մի լուսապայծառ սպիտակ և կայծակնացայտ փրփուրով։ Թէպէտև խաւար էր մեր շրջակայքը, այնու ամենայնիւ որոշեցինք այս փոսփորեան լուսափայլութեամբը ձկնորսների նաւակները, որ վաղուց դուրս էին քարշած աւազի վերայ։

Այն տեղից մի փոքր հեռի, տեսանք մեք անտառի սկզբումը մի կրակ, որի չորս կողմով հաւաքված էին շատ բնակիչներ։ Մեք գնացինք այն տեղ հանգստանալու, մինչև կը լուսանար օրը։ Այն միջոցին, երբ որ նստած էինք կրակի մօտ, բնակիչներից մինը պատմեց մեզ, թէ նա երեկ ճաշից յետոյ տեսած էր արձակ ծովի վերայ մի նաւ, որ հոսանքները տանումէին դէպ ի կղզին. թէ գիշերը ծածկեց նաւը նորա տեսութենից. թէ նա երկու ժամ արևի մտանելուց յետոյ լսած էր, որ նաւիցը թնդանօթ արձակելով օգնութիւն էին խնդրում, բայց ծովը այնպէս կատաղած էր, որ չէր կարելի ոչինչ նաւ ցած թողուլ ծովի մէջ և հասանել նոցա. այդ մարդը պատմումէր, թէ մի փոքր յետոյ երևեցած էին նորան նաւի լապտերքը վառած, և կասկած ունէր, թէ մի դուցէ նաւը այդքան մօտենալով ծովեղերեայքին, անցած լինէր ցա-

մաքի և Ամիրեան կղզու միջից, համարելով սորան Կպատակահայեաց անունով սարը, որի մոտից անց են կենում Նաւերը, հասանելով Պորտ Լուի քաղաքին։ Եթէ այս բանը եղած է, որ չէր կարող հաստատել նա, ապա պիտոյ է այն նաւը ամենամեծ վտանգի մէջ լինի։ Մի այլ բնակիչ խօսքը վեր կալաւ այսպէս, և ասաց մեզ, թէ նա շատ անգամ նաւարկած է այն ծովանցքի վերայ, որ Ամիրեան կղզին բաժանում է եղերքից. թէ նա քննելով այն տեղ ծովի յատակը, վերահասու է, որ պինդ է դա և խարսխաձգութիւնը այդ տեղ յարմարաւոր, ուրեմն և նաւը էր այն տեղ կատարեալ ապահովութեան մէջ, ինչպէս շատ ընտիր նաւահանգստի մէջ։ Ես այն տեղ կը դնէի իմ բոլոր հարստութիւնը, յաւելացրեց նա, և կը քնէի այնպէս խաղաղ, ինչպէս ցամաքի վերայ։ Մի այլ բնակիչ ասաց, թէ անկարելի էր, որ այդ նաւը կարողանայ ներս մտանել այս ծովանցքի մէջ, ուր հաղիւ թէ կարող էին յառաջ խաղալ փոքրիկ նաւեր. նա հաւատացնումէր, թէ տեսած է նորան, որ խարիսխ էր ձգում Ամիրեան կղզու միւս կողմումը, այնպէս որ, եթէ հողմը դիպուածով բարձրանար առաւօտուն, ապա նաւը կարող էր յետ վարվիլ դէպ ի բացարձակ ծովը, կամ թէ հասանել նաւահանգստին։ Միւսերը յայտնեցին այլ կարծիքներ։ Մինչև նոքա վիճումէին իւրեանց մէջ ինչպէս անգործ քրէօլների սովորութիւնն էր, Պաւլոսը և ես ամենեին լուռ էինք։ Մենք մնացինք այն տեղ, մինչև փոքր ի շատէ երևեցաւ արևաբացը. բայց լուսափայլութիւնը օդի մէջ շատ նուազ էր, քան թէ կարելի էր մի բան որոշել ծովի վերայ, որ և պատած էր թանձր մառախուղով. մեք ջոկեցինք բացարձակ ծովի մէջ մի մութ ամպ միայն, որ, ասումէին մեզ, թէ Ամիրեան կղզին է, մի քառորդ ասպարէզ ծովափից հեռի։ Այս խաւարապատ տեղից նկատելի էր միայն ծովեղերի բարձրութիւնը, ուր կայինք մեք, և մի քանի սարակատարը կըղզու մէջ, որ ժամանակ առ ժամանակ դուրս էին երևում այն ամպերի միջից, որ պատել էին նորա չորս կողմը։

Լուսաւոր եօթն ժամի մոտ լսեցինք անտառի մէջ թմբուկների ձայն։ Սորա պատճառը էր Դը լա Թուրզենէ կուսակալը, որ գալիս էր ձիով և նորա քամակից հրացանակիր զինուորների բաղմութիւն և մի մեծ ժողովուրդ բնակիչներից և սեաւ ծառաներից։ Նա կարգադրեց զինուորները ծովափի վերայ և հրամայեց նոցա միասին արձակել հրացանները։ Հրացանները արձակված այսպէս, իսկոյն նկատեցինք ծովի վերայ մի նուազ լուսափայլութիւն, և սորանից յետոյ, գրեթէ նոյն բոպէին մի թնդանօթի դղրդիւն։ Մեք մոռածեցինք թէ նաւը շատ հեռի չէ մեզանից և ամենեքեանքս վազեցինք դէպ ի այն կողմը, ուր տեսած էինք նորա նշանաւորութիւնը։ Ապա նկատեցինք մառախուղի

միջից մի մեծ նաւի մարմին և առագաստակալներ։ Մեք այնքան մօտ էինք նորան, որ թէև ալիքները մեծ շառաչիւն էին գործում, այնու ամենայնիւ լսում էինք մեծաւորի ձայնը, որ հրամայում էր քարշել նաւի պարանները, և նաւաստիների աղաղակը, որ երեք անգամ ձայն տուին։ «Ապրի թագաւորը։» պատճառ, այս է Ֆրանսիացոց աղաղակը վերջին վտանգների մէջ, որպէս և ամենամեծ ուրախութիւնների մէջ, իբրև թէ նոքա վտանգների մէջ օգնական էին գտնում իւրեանց թագաւորը, կամ թէ կամէին խոստովանել, թէ պատրաստ են մեռանելու նորա համար։

Սկսեալ այն րոպէից, երբ որ Սէն-Ժերանը խմացաւ թէ մեք ձեռնհաս էինք օգնութիւն տալ նորան, չդադարեց նա, երեք րոպէից յետոյ, կրակ արձակել թնդանոթներից։ Պարոն Դը լա Բուրդոնէն հրամայեց վառել մեծ կրակներ զանազան տեղերում տափարակ ծովեղերքի վերայ, և մարդիկ ուղարկեց բոլոր դրացի բնակիչների մօտ, որ կերակուր, տախտակներ, պարաններ և դատարկ տակառներ որոնեն ու բերեն։ Շուտով հաւաքվեցաւ այս տեղ մի մեծ բազմութիւն, բերելով իւրեանց հետ ծառայք, կերակրեղէնով և պարաններով բեռնաւորված, որ եկած էին Ոսկի աւազի թաղից, Մօրուտ սահմանից և Նախասպարսպի գետի կողմից։ Այս բնակիչների առաւել հիներից մինը մօտեցաւ կուսակալին և ասաց նորան. «Պարոն, լսած ենք, բոլոր գիշերը, աղօտաձայն շառաչիւն սարումը. անտառների մէջ ծառերի տերևները շարժվումեն, առանց հողմ փչելու. Ծովային թռչունները որոնումեն պատսպարան ցամաքի վերայ. այս նշանները անտարակոյս յայտարար էին մի փոթորկի։» — «Հապա, ի՛մ բարեկամք, — պատասխանեց կուսակալը. — մեք պատրաստ ենք հանդիպելու փոթորկին, և անտարակոյս, պատրաստ է և նաւը։»

Արդարև ամենայն բան դուշակումէր, թէ մօտակայ է մի փոթորիկ։ Ամպերը, որ կարելի էր որոշել ուղղահայեաց երկնակամարի վերայ, իւրեանց միջնավայրումը էին զարհուրելի սեաւ և իւրեանց եզերքումը պղնձագոյն։ Օդը հնչումէր արևադարձեան թռչունների, ֆրեգադների, ջրադերձակների և բազմաթիւ ծովային թռչունների աղաղակով, որ, թէպէտև խաւար էր օդասպատը, այնու ամենայնիւ գալիս էին հորիզոնի ամենայն կողմից, պատսպարան որոնելու կղզումը։

Բուաւոտու հին ժամի մօտ, ծովի կողմից լսելի եղան զարհուրելի աղմուկներ, որպէս թէ ջրհեղեղներ, որոտների հետ խառն, ցած էին գլորվում սարերի վերևից։ Ամենեքեան աղաղակեցին. «Ահա փոթորիկը,» և իսկոյն մի ահընկեց մրրիկ հալածեց այն թանձր մառախուղը,

որ ծածկուեր Ամբրեան կղզին և նորա ծովանցքը։ Այնուհետև Սէն Ժերանը մերկապարանոց երևան եղաւ, նորա տախտակամածը ժողովրդով լցուած, նորա առագաստակալքը և դիտակաւոր կայմերը ցած թողած վերին տախտակամածի վերայ, նորա դրօշակը վեր քարշած, չորս պարանք նաւի առաջակողմումը և մինը յետնակողմումը։ Նա խարիսխ էր ձգել Ամբրեան կղզու և ցամաքի մէջ տեղումը, այս կողմումը այն ձգված ժայռերի, որ շրջապատումեն Իլ դը Ֆրանս կղզին, որոնց մօտից և անցել էր այնպիսի տեղով, ինչ տեղով երբէք անցած չէր մի նաւ։ Նա դէմ էր տուել իւր աջակողմումը ալիքներին որ գալիս էին արձակ ծովից, և ամենայն կոհակ շատ խոր ներս յարձակվելով ծովանցքի մէջ, նաւի աջակողմը բարձրանումէր բոլորովին, այնպէս, որ նորա գոգը դէպ ի վեր էր ցցվում օդի մէջ։ բայց այս շարժողութեան մէջ, նաւի յետնակողմը թաղվելով ջրի մէջ, չքանումէր աչքից մինչև իւր վերնամասը, որպէս թէ խորասոյզ էր եղած։ Այս դրութեան մէջ, ուր հողմը և ծովը մղումէին նաւը դէպ ի ցամաք, նոյնպէս անկարելի էր նաւին յետ դառնալ այն ճանապարհով, որով եկել էր նա, ինչպէս կտրելով իւր խարսխասպարանքը վազել և խրվել ծովեզերեայ աւազուտների մէջ, որոնցից բաժանված էր նա բարձր ժայռեղէն յատակներով։ Ամենայն կոհակ որ գալիս էր և քարշվումէր ծովեզրի վերայ, մանչելով յառաջ էր գնում դէպ ի ծովածոցերի ներսը, և այն տեղից նետումէր ծովեզերեայ քարեր աւելի, քան թէ յիսուն ոտնաչափ հեռաւորութեանով դէպ ի ցամաք։ Ապա յետ դառնալով այդ ալիքը մերկացնումէր ծովեզերեայքը, և նոցա խնձաքարերը ցած էր գլորում կերկերաձայն և ահընկեց շառաչիւնով։ Ծովը հողմից խռոված, ուռչումէր ամենայն բոպէ և բոլոր ծովանցքը այս կղզու և Ամբրեան կղզու մէջ, չէր այլ ինչ, եթէ ոչ, մի մեծ սիրոց սպիտակ փրփուրների, որ գոգաւորված էին օեաւ և խոր փոսերով։ Այս փրփուրքը դիզվումէին ծովածոցերի խորութեան մէջ, աւելի քան թէ վեց ոտնաչափ բարձրութեանով, և հողմը սրբելով նոցա մակերևոյթը, տանումէր նորանց սեպացած ծովեզերեայքի վերայով աւելի, քան թէ կէս մղոն դէպ ի ցամաքի ներսը։ Նկատելով դոցա սպիտակ և անհամար տարաբնները, որ հարթակշիռ ցայտեցրած էին մինչև սարերի ոտքը, կ'ասեիր ահա մի ձիւն, որ դուրս էր թափում ծովը։ Հորիզոնը ցուցանումէր մի տեսողական փոթորկի ամենայն նշաններ։ այս տեղ երևումէր ծովը խառնաշփոթված երկնքի հետ։ Երկնքից անդադար անջատվումէին ահեղաձև ամպեր, որ գագաթնակէտից անցանումէին թռչունների արագութեանով և նոյն միջոցին միւսերը երևումէին այն տեղ անշարժ կանգնած որպէս ահագին ժայռեր։ Երկնակամարի կապոյտը ամենևին չէր կարելի

տեսանել. մի ձիթապտղաղոյն և գունափաթ փայլողութիւն միայն լուսաւորումէր բոլոր առարկայքը թէ երկրի, թէ ծովի և թէ երկնքի։

Լաւը այսպէս ճօճելով, պատահեց այն բանը, որի մասին երկիւղ կար. Նորա առաջակողմի չուանները պատռուեցան, և մնալով մի հատ պահպանող պարան, նաւը նետվեցաւ քարաժայռերի վերայ, վանեցուն ձողաչափ հեռաւորութենով ծովափից։ Մեր մէջ լարձրացաւ մի ցաւակցութեան կոծ և աղաղակ։ Պաւլոսը կամենումէր իւր անձը ձգել ծովի մէջ, բայց ես բռնեցի Նորա ձեռքից. «Իմ որդի, — ասացի Նորան, մի՞ թէ կամիս դու գլուխդ մահու տալ։» — Կամիմ գնալ, օգնութիւն հասուցանել, — աղաղակեց նա — կամ թէ մեռանել։ Երբ որ յուսահատութիւնը թռուցել էր Նորա խելքը, Դոմինիկոսը և ես կապեցինք Նորա մէջքից մի երկայն չուան, ըմբռնելով Նորա ծայրը։ Այնուհետև Պաւլոսը թռաւ դէպ ի Սէն-Թերանը, երբեմն լող տալով, երբեմն գնալով քարաժայռերի վերայ։ Մի քանի անգամ յոյս ունէր հասանել նաւին. պատճառ, ծովը իւր անկանոն շարժողութիւնների մէջ, թողնումէր նաւը գրեթէ ցամաքի վերայ, այնպէս, որ կարելի կը լիներ ոտով մտնել Նորան, բայց մի փոքր յետոյ նոր կատաղութեամբ վերադառնալով ծովը, ծածկումէր նաւը ահագին ջրակամարներով որ բարձրացնումէին Նորա գոգի բոլոր յառաջակողմը, և վանելով հալածումէին դէպ ի ծովեզերքը անրաղդ Պաւլոսին, սրունգները արիւնաշաղախ, կուրծքը ճմլած և կիսախեղդ։ Այս երիտասարդը մի փոքր ուշի եկած, իսկոյն վեր կացաւ և մի նոր ջերմութեամբ շտապումէր դէպ ի նաւը, որ ծովի զարհուրելի ցնցիւններից կիսաճեղք էր եղած։ Նաւի բոլոր մարդիկը, յոյսերը կտրած փրկութենից, բաղմութեամբ թափվեցան ծովի մէջ, որը ձեռք ձգելով պարանների, որը տախտակների, որը հաւերի վանդակների, որը գերանների և որը տակառների։ Այնուհետև երևեցաւ մի կերպարանք, արժանի մշտնջենաւոր ցաւակցութեան. մի մատաղ օրիորդ աղջիկ, որ Սեն-Թերան նաւի աջակողմի ճեմելիքումը կանգնած, ձեռքերը պարզումէր դէպ ի այն երիտասարդը, որ այդքան աշխատումէր մտնել Նորան։ Այս օրիորդը Վիրգինիան էր. սա ճանաչել էր սիրող փեսայացուն Նորա անվհեր քաջասրտութենից։ Այս սիրելի անձը գտանվելով այսպիսի ահարկու վտանգի մէջ, մեր սիրտը լցվեցաւ ցաւով ու յուսահատութենով։ Բայց ինքը Վիրգինիան ալնիւ ու խաղաղ կերպարանքով նշանացի էր առնում մեզ, որպէս թէ ասումէր — բարեւ, մնացէք յաւիտեան։ Բոլոր նաւաստիքը ձգել էին իւրեանց անձը ծովի մէջ. տախտակամածի վերայ մնումէր մի նաւաստի միայն, ամենեին մերկ և ջրուտ որպէս Հերքուլէս. սա պատկառանքով մօտեցաւ Վիրգինիային, փաթաթվեցաւ Նորա ծնն-

կերին, աշխատեց ևս հանել Նորա վերայի զգեստները, բայց Վիրգինիան պատշաճապէս մերժելով Նորան, յեսու դարձուց երեսը։ Իսկոյն լսեցինք մեք հանդիսականների կողմից այսպիսի ձայնարկութիւն և աղաղակ։ «Փրկի՛ր այդ աղջիկը,—փրկի՛ր դորան, բաց մի՛ թողուր դորան։» Նոյն րոպէին մի ջրեղէն սար ղարհուրելի մեծութենով, ներս մտաւ Ամբրեան կղզու և ծովեղրի մէջ և մռնչելով յառաջ գնաց դէպ ի նաւը, սպառնալով խորասոյզ առնել սորան իւր սեաւ կողերովը և իւր փրփրալից կատարներովը։ Այս ահաւոր տեսարանի մէջ, նաւաստին մենակ ցած թռաւ դէպ ի ծովը, և Վիրգինիան անփախչելի տեսանելով իւր մահը, մի ձեռքը դրեց զգեստի վերայ, և միւս ձեռքը իւր սրտի վերայ, և պայծառ աչքերը դէպ ի երկինք վերուղղելով, երևեցաւ որպէս մի հրեշտակ, որ իւր թռիչքը ուղևորումեր դէպ ի երկինք։

Ո՜վ ղարհուրելի օր. աւա՜ղ, բոլորը կլանվեցաւ. ծովի ալիքները դուրս ձգեցին դէպ ի ցամաք այն հանդիսականների մի մասը, որ մարդասիրութեամբ յառաջ էին վազել դէպ ի Վիրգինիան, ինչպէս այն նաւաստին որ կամեցած էր փրկել Նորան լող տալով։ Այդ նաւաստին ազատվելով գրեթէ անտարակուսելի մահուց, խոնարհեցրեց ծնկները ծովի աւազի վերայ ասելով. «Ո՛վ իմ Աստուած, դու փրկեցիր իմ կեանքը, բայց ես յօժարութեամբ զոհած կը լինէի դորան այս աղնիւ օրիորդի համար։» Դոմինիկոսը և ես դուրս քարշեցինք հեղեղների միջից անրաղդ Պաւլոսը, ուշը գնացած վերայից, արիւնը հոսելով բերանից և ականջներից։ Կուսակալը հրամայեց յանձնել Նորան բժիշկների հոգաբարձութեանը. և մեք մեր կողմից ման գալով ծովեղերեայքի երկայնութեամբը, որոնումեինք Վիրգինիայի մարմինը, որ դուցէ թէ ծովը բերելու էր այն տեղ։ Բայց հողը, ինչպէս սովոր է պատահել փոթորիկների միջոցին, յանկարծ դէպ ի այն կողմը դառնալով, շատ աղէտալի եղաւ մեզ մտածել, թէ կարող չէինք լցուցանել մեր պարտականութիւնքը, թաղելով այդ անրաղդացած աղջիկը։ Մեք հեռացանք այս տեղից, դողի ու սարսափի մէջ, ամէնների վերայ ղարհուրանք բերելով մի հատիկ աղջկայ կորուստ, այնպիսի նաւաբեկութեան մէջ, ուր կորած էր շատ բազմութիւն. և մեծ մասը ականատես լինելով այդ առաքինի աղջկայ այդքան ողբալի կորստին, երկմիտ էր լինում թէ կայ մի նախախնամութիւն. պատճառ, կային աշխարհի վերայ այնպիսի սոսկալի և անարժան ձախորդութիւններ, որ և իմաստունների յոյսը կարող էր խախտվել իւր տեղից։

Բայց Պաւլոսը, որ սկսել էր ուշը վերստին ստանալ, բերած էին մի մօտակայ օթևանի մէջ, մինչև որ հնար լիներ տանել Նորան դէպ ի իւր բնակութիւնը։ Իմ մասին, ես հեռացայ այն տեղից Դոմինիկոսի

հետ, որ դամ պատրաստելու Վիրգինիայի մոր և Նորա բարեկամ կնոջ սիրտը դէպ ի այս աղէտալի պատահարը։ Երբ որ մեք Արմաւաստանի գետաձորի մուտքումն էինք, սեւամորթ մարդիկը ասացին մեզ, թէ ծովը բերումէր դէպ ի հանդիպակաց ջրախորշը խորտակված նաւի մնացուածքը։ Մեք ցած իջանք այն տեղ և մինը այն առաջին բաներից, որ տեսայ ես ծովափումը, էր Վիրգինիայի մարմինը։ Նա կիսով չափ ծածկած էր աւազով, այնպիսի դրութեան մէջ, ինչպէս տեսած էինք Նորան կորնչելու ժամին։ Նորա կերպարանքը շատ փոքր փոփոխված էր, Նորա աչքերը փակ էին, բայց պայծառութիւնը կար դեռ ևս Նորա ճակատի վերայ. միայն թէ մահու դունաթափ մանուշակները խառնվումէին Նորա թշերի վերայ պարկեշտութեան վարդերի հետ։ Նորա մի ձեռքը դրած էր ղգեստի վերայ, իսկ միւսը որ հաստատել էր սրտի վերայ, էր ամուր փակած և գոսացած։ Ես մեծ դժուարութեամբ դուրս հանեցի Նորա ձեռքից մի տուփ. բայց ի՞նչպէս զարմացայ ես տեսանելով, թէ տուփի մէջ դրած էր Պաւլոսի պատկերը։ Այս անբաղդացած աղջկայ հաստատութեան և սիրու վերջին նշանի վերայ արտասուեցի ես դառնապէս. բայց Դոմինիկոսը կոծեց իւր կուրծքը և հնչեցուց օգը իւր ցաւալից աղաղակով։ Վիրգինիայի մարմինը տարանք դէպ ի մի խուղ ձկնորսների և պահ տուեցինք մալաբարեան աղջատ կանանց, որ և իսկոյն հոգ տարան լուանալու Նորան։

Մինչև այս կանայքը կատարումէին այս տխուր պաշտօնը, մեք դողդոջելով ճանապարհ ընկանք դէպ ի բնակութիւնը, ուր գտանք Դը լա Տուր տիկինը և Մարգարիտը, աղօթելով և լուր սպասելով նաւիցը։ Երբ որ Դը լա Տուր տիկինը նկատեց ինձ, ձայն արձակեց. «Ո՞ւր է իմ դուստրը, իմ սիրելի դուստրը, իմ զաւակը։» Նա իմ լռութենից և արտասուքից հասկացաւ իսկոյն, թէ մի ձախորդութիւն է պատահել, և նոյն րոպէին ըմբռնեց Նորան մի խեղդողութիւն և տագնապ. Նորա ձայնը չէր թողում լսել, եթէ ոչ հեծութիւն և հառաչանք։ Եթէ Մարգարիտի որպէսը հարցանես, նա բացագանչեց.—Ո՞ւր է իմ որդին. ես չեմ տեսանում Նորան, և այս խօսքի վերայ սիրտը թուլանալով, ուշաթափ եղաւ։ Մեք վազեցինք Նորա մօտ և ուշը յետ բերելով, հաւատացրեցի ես Նորան, որ Պաւլոսը կենդանի է, և թէ կուսակալը հրամայեց—հոգ տանել Նորա մասին։ Մարգարիտը, ուշը վերան եկած, սկսեց խնամ տանել իւր բարեկամուհուն, որ ժամանակ առ ժամանակ թուլանալով մնումէր երկար թաղկացման մէջ։ Դը լա Տուր տիկինը անցուց բոլոր գիշերը այսպիսի սաստիկ ցաւերով, և դոյա երկարատեւութենից կարող էի ես դատել, թէ ոչ մի վիշտ չէր կարող հաւասարվիլ մայրական վշտի հետ։ Երբ որ յետ էր դալիս սիրտը, նա

դարձուցանումէր իւր սառած ու տխուր հայեացքը դէպ ի երկինք։ Անօգուտ էր թէ Նորա բարեկամուհու և թէ իմ ջանքը, մխիթարել Նորան փայփայելով և զգուելով և ամենաքաղցր անուններ տալով Նորան. Նա երևումէր անդգայ դէպ ի մեր հին բարեկամութեան ցուցակութիւնքը, և ոչինչ բան չէր դուրս գալիս Նորա ճնշած սրտիցը, եթէ ոչ աղօտաձայն հեծեծանք։

Առաւօտուն բերեցին Պաւլոսը հանգստացած պատգարակի մէջ. Նա վերատին ստացել էր իւր զգայարանների գործադրութիւնը, բայց չէր կարող ոչ մի բառ դուրս բերել բերանից։ Պաւլոսի, Նորա մօր և Դը լա Տուր տիկնոջ տեսանելը միաժանց, որ յառաջուց երկիւղալի էր իմ աչքումը, աւելի քաղցրապէս ազդեց երկու մօրերի վերայ, քան թէ բոլոր հոգաբարձութիւնքը որ արած էի ես մինչև այն րոպէն։ Մի միխիթարութեան ճառագայթ փայլեց այս երկու անբաղդ մօրերի երեսի վերայ. Նոքա, որպէս մինը, նոյնպէս և միւսը նստեցին Պաւլոսի մօտ, գրկախառնեցին Նորան, համբուրեցին Նորան, և Նոցա արտասուքը, որ մինչև այժմ փակված էին տարապայման տրտմութենից, սկսեցին այժմ թափվել։ Պաւլոսը շուտով խառնեց դոցա հետ իւր արտասուքը։ Բնութիւնը այսպէս թեթևութիւն ստանալով երեք անբաղդների ցաւակցութեամբը իւրեանց մէջ, մի երկար թուլութիւն եկաւ Նոցա վերայ այդ սաստկահարուած աղէտքից յետոյ և պատճառեց Նոցա մի թմրութեան հանգիստ, որ արդարև նման էր մահու թմրութեանը։

Պարոն Դը լա Բուրդոնէն ծածուկ մարդ ուղարկեց իմաց տալու ինձ, թէ Վիրգինիայի մարմինը Նորա հրամանով բերել էին քաղաք, և այս տեղից պիտոյ է տանէին դէպ ի Պամպըլմուսեան եկեղեցին։ Ես իսկոյն ուղևորվեցայ դէպ ի Պորտ-Լուի, ուր ամենայն թաղերից հաւաքված էին բնակիչներ, որ ներկայ գտանվին Վիրգինիայի թաղման հանդիսին, որպէս թէ կողին կորուսել էր իւր առաւել ընտիր բանը։ Նաւահանգստումը, նաւերը խաչաձև դրած էին իւրեանց պարանները, դրօշակները դէպ ի վեր թողած, և երկար միջոցներով արձակումէին թնդանօթները։ Ռմբաձիգ զինուորները ընկած էին յուղարկաւորութեան առաջև, հրացանքը դէպ ի ցած թողած։ Նոցա թմբուկները, որ պատած էին երկար սգաւոր քօղերով, հնչեցնումէին ցաւագին ձայներ միայն, և վշտութիւնը կենդանագրած էր այս զինուորների երեսի վերայ, որ այնքան յաճախ պատերազմերի մէջ, առանց այլակերպվելու, իւրեանց ճակատը դէմ էին դրած մահուն։ Ութ մանուկ աղջիկ, առաւել երևելիքը այս կողու մէջ, սպիտակ զգեստով, ձեռքերումը արմաւենու ճիւղեր, տանումէին իւրեանց առաքինի ընկերի մարմինը, զարդարած ծաղիկներով։ Մանուկ տղաներ դասաւորված գնումէին Նորա հե-

տեւից, երգելով երգեր. սոցա քամակից գնու�մին կղզու բոլոր երեւելի բնակիչքը և մեծամեծ աստիճանաւորքը. սոցանից յետոյ կուսակալը և Նորա հետեւից ժողովրդի բազմութիւնը։

Ահա թէ կառավարութիւնը ի՞նչպէս հոգաբարձու էր եղած մի քանի պատիւ և մեծարանք ցուցանելու Վիրգինիայի առաքինութեանը։ Վիրգինիայի մարմինը հասած լինելով սարի ոտքին, և բազմութիւնը տեսանելով իւր աչքի առաջև նոյն խուղերը, որ այնքան երկար զարդարել էր Վիրգինիայի կենդանութիւնը, որ և այժմ Նորա մահը ընկղմել էր յուսահատութեան մէջ, իսկոյն խառնակվեցաւ յուղարկաւորութեան հանդէսը. դադարեցին երգասացութիւնքը, և չէր լսելի մի պլ բան, եթէ ոչ հեծութիւն և հառաչանք։ Այնուհետև բազմութեամբ մօտ վազեցին մանուկ աղջիկներ դրացի ընակութիւններից, որ շաշափեն Վիրգինիայի դագաղը իւրեանց թաշկինակներով, օրհնարաններով և ծաղկահիւս պսակներով և բարեխօս կարգան Նորան որպէս մի սուրբ։ Մայրերը խնդրումէին Աստուծուց մի աղջիկ, ինչպէս եղած էր Վիրգինիան, Երիտասարդքը խնդրումէին այնպիսի հաստատամիտ հարսնացուք, չքաւորքը մի այդպիսի սիրելի բարերար, ստրուկքը մի այդպիսի քաղցրասիրտ տիրուհի։

Երբ որ Վիրգինիայի մարմինը բերեցին մինչև թաղման տեղը, Մադագասկարի սեամարթ բնակիչքը և Մոզամբիքի քաֆրերները շրջապատեցին հանգուցեալը մրգալից կողովներով, և կերպասների կոտորներ կախ տուեցին մօտակայ ծառերից, ինչպէս իւրեանց երկրի սովորութիւնն էր։ Հնդկական կանայքը Բենգալիայի և Մալաբարեան ծովեզերեայքի բերեցին այն տեղ թռչուններ, վանդակների մէջ փակած, և դոցա աղատութիւն տուեցին Վիրգինիայի գերեզմանի վերայ. ահա թէ մի սիրելի առարկայի կորուստ ի՞նչպէս գրաւիչ է ամենայն ազգերի համար, և ահա թէ ի՞նչքան մեծ է անարատ առաքինութեան կարողութիւնը, որովհետև միաւորումէր իւր գերեզմանի վերայ բոլոր տեսակ տեսակ կրօնապաշտութիւնքը։

Հարկաւոր եղաւ պահապաններ դնել Վիրգինիայի գերեզմանի մօտ և հեռացնել այն տեղից չքաւոր բնակիչներից մի քանի աղջիկներ, որ կամենումէին իւրեանց անձը բռնութեամբ ձգել այն փոսի մէջ, ասելով թէ Նորա չունէին այլ ևս յուսալու ոչինչ մխիթարութիւն աշխարհի վերայ, և թէ այսուհետև ոչինչ չէր մնում Նոցա, եթէ ոչ, մեռանիլ Նորա հետ միասին, որ եղած էր իւրեանց մի հատիկ բարերարը։

Վիրգինիայի մարմինը թաղեցին Պամպրլմուսեան եկեղեցու մօտ, Նորա արևմտեան կողմումը, բամբուսեան մացառների ոտքին, որ նա

իւր կենդանութեան օրերումը, իւր մօր և Մարգարիտի հետ միասին գնալով ժամ, սիրումէր հանգստանալ, նստած այն աղայի կողքին, որին ասումէր նա իւր եղբայր։

Պարոն Դը լա Թուրդոնէն յետ դառնալով Թաղման հանդիսիցը, եկաւ այս տեղ բերելով հետը իւր բազմաթիւ ուղեկից ընկերների մի մասը։ Նա ցոյց տուեց Դը լա Ցուր տիկնոջը և նորա բարեկամուհուն ամենայն օգնութիւն և նպաստ, որոնց ձեռնհաս էր նա։ Կարճառօտ, բայց դառնացած սրտով խօսք բացեց կուսակալը Դը լա Ցուր տիկնոջ այլանդակ մօրաքուեր մասին, և մատնելով Պաւլոսին, ասաց նորան այնպիսի խօսքեր, որ կարծումէր, թէ կարող էին մխիթարել Պաւլոսի սիրտը։ «Ես ցանկանումէի — ասաց նորան — բարեբաղդ տեսանել քեզ և քո գերդաստանը. Աստուած է վկայ ինձ այդ բանի մէջ. ի՛մ բարեկամ, պիտոյ էր գնալ Ֆրանսիա, ես կ՚աշխատեմ, որ դու այն տեղ պաշտօն ստանաս։ Քո բացակայութեան միջոցին ես խնամատար կը լինիմ քո մօրը այնպէս, որպէս թէ իմ հարազատ մայրն էր.» և նոյն րոպէին տուեց նորան իւր ձեռքը, բայց Պաւլոսը յետ քարշեց իւրը, և դարձուց դէմքը, որ չտեսանէ նորան։

Եթէ իմ մասին հարցանես, ես մնացի իմ անբաղդացած բարեկամների մօտ, որ օգնական լինիմ նոցա, ինչ կերպով և ձեռնհաս էի։ Երկու շաբաթ անցած, Պաւլոսը այնքան զօրացաւ, որ կարող էր քայլել. բայց նորա սրտի ցաւը երևումէր թէ նոյնչափ առաւելանումէ, ինչ չափով նորա մարմինը վերստին կազդուրվումէր։ Ոչինչ բան զրաւիչ չէր նորա համար. նորա հայեացքը շիջած էին, և նա ոչինչ պատասխան չէր տալիս այն հարցուածներին, որ առնումէին նորանից։ Դը լա Ցուր տիկինը, որ մահու տագնապի մէջ էր, ասումէր յաճախ. «իմ որդի, քանի որ ես տեսանելու էի քեզ, պիտոյ է մտածեմ, որ տեսանումէի իմ սիրելի Վիրգինիան։» Վիրգինիայի անունը լսելով, սարսափումէր Պաւլոսը, հեռանումէր նորանից, ուշադիր չլինելով իւր մօր յորդորանքներին։ Պաւլոսը գնումէր առանձնանալու այգու մէջ, և նստումէր Վիրգինիայի կոկոսենու ոտքին, աչքերը անդարձ տնկած աւազանի վերայ։ Բժիշկը կուսակալի, որ մեծապէս հոգարարձու էր Պաւլոսին և նորա մօրերին, ասաց մեզ, թէ Պաւլոսի տխրամտութիւնը փարատելու համար, պիտոյ է թոյլ տալ նորան առնել, ինչ որ կամէր, առանց ընդդիմանալու նորան, և թէ այս էր մի հատ ճանապարհը, որով կարելի է յաղթել այն անխոս լռութեանը, որի մէջ կամակորվել էր նա։

Ես վճռեցի մտքումս, որ հետևիմ բժշկի տուած խորհրդին։ Երբ որ Պաւլոսը զգումէր թէ իւր զօրութիւնքը մի փոքր վերանորոգվել էին,

Նորա առաջին գործը այն եղաւ, որ հեռացաւ իւրեանց օթևանից։ Ես աչքից չթողլով Նորան ճանապարհ ընկայ Նորա քամակից և ասացի Դոմինիկոսին, ուտելիք վեր առնուլ և դալ մեր հետ։ Ինչքան որ այս երիտասարդը ցած էր իջանում այս սարից, այնքան ևս երևումէր, թէ Նորոգվումէին Նորա զօրութիւնքը. Նախ և յառաջ ճանապարհ ընկաւ Նա դէպ ի Պամպըլմուս, և երբ որ մօտեցած էր եկեղեցուն, բամբուսատունկ ճեմելիքումը, դիմեց ուղղակի դէպ ի այն տեղ, ուր տեսանումէր մի Նորոդ փորած հող. այն տեղ խոնարհվեցաւ Նա ծնկերի վերայ և հայեացքը դէպ ի երկինք ուղղելով, կատարեց մի երկար աղօթք։ Այս արարքը երևեցաւ ինձ յուսացուցիչ, թէ վերադառնալու է Պաւլոսի բանականութիւնը. որովհետև մի այդպիսի նշան վստահութեան դէպ ի բարձրեալ Էակը ցուցանումէր, թէ Նորա հոգին սկսանումէ վերստին կատարել իւր պաշտօնքը։ Դոմինիկոսը և ես հետևելով Նորա օրինակին, խոնարհեցուցինք մեր ծունրը և աղօթեցինք Նորա հետ։ Յետոյ վեր կացաւ Նա և ուղևորվեցաւ դէպ ի կղզու հիւսիսակողմը, առանց շատ ուշադիր լինելու մեզ։ Որովհետև յայտնի էր ինձ, որ Նա ոչ թէ միայն չգիտէր, թէ ուր էին ամիոփել Վիրգինիայի մարմինը, այլև չգիտէր, թէ Վիրգինիայի մարմինը դուրս էին հանել ծովիցը, ես հարցրեցի Նորանից,—ի՞նչ խորհրդով աղօթք արեցիր դու դէպ ի Աստուած այս բամբուսների ոտքումը։ Նա պատասխանեց ինձ. «մեք շատ յաճախ եղած ենք այս տեղ միասին։»

Այս յառաջ տարաւ իւր ուղևորութիւնը մինչև անտառի մուտքը, ուր գիշերը վերայ հասաւ մեզ։ Այս տեղ ինքս հաց ուտելով, հարկադրեցի և Պաւլոսին մի փոքր կերակուր վայելել. ապա քնեցինք մեք խոտի վերայ մի ծառի ոտքում։ Վաղուեան օրին կարծումի, թէ Պաւլոսը կը կամենայ վերադառնալ դէպ ի տուն։ Արդարև, մի քանի ժամանակ Նկատեց Նա դաշտավայրի մէջ Պամպըլմուսեան եկեղեցին իւր երկար, բամբուսեան զբօսանքներով և մի քանի ցոյցեր տուեց, որպէս թէ կամէր յետ դառնալ. բայց յանկարծակի ներս վազեց դէպ ի անտառի խորքը, ուղղելով իւր ընթացքը միշտ դէպ ի հիւսիս։ Ես խելամուտ եղայ Նորա դիտաւորութեանը, բայց զուր եղաւ իմ ջանքը դէպ ի այլ կողմ շրջել Նորա միտքը։ Մեք դէպ ի կէսօր, հասանք Ոսկու աւազ անուանով թաղին. Նա շուտափոյթ ցած իջաւ դէպ ի ծովի եղերը, ամենևին դէմուդէմ այն տեղին, ուր խորտակվել էր Սան-Ժերան նաւը։ Ցեսանելով Ամբրեան կղզին և Նորա ծովանցքը, որ այժմ այնպէս հարթահաւասար էր, ինչպէս մի հայելի, ձայն արձակեց Նա. «Վիրգինիա, իմ քաղցր Վիրգինիա», և իսկոյն թուլացաւ սիրտը։ Դոմինիկոսը և ես տարանք Նորան անտառի ներսը, ուր մեծ դժուարութեանով յետ

բերեցինք Նորա սիրտը։ Երբ որ զգաստացաւ նա, կամենուէր միւսանգամ դառնալ դէպ ի ծովեզերը, բայց մեք աղաչելով Նորան, չնորոգել իւր և մեր ցաւը այդպիսի դառն յիշատակութիւններով, նա ընտրեց մի այլ ուղղութիւն։ Ութ օրի մէջ, մեն նկաւ նա այն բոլոր տեղերումը, ուր գտանված էր իւր մանկութեան ընկերակցի հետ միասին. նա միւսանգամ չափեց այն ճանապարհը, որի վերայ եղած էր Վիրգինիան, երբ որ երթուէր մարգասիրութիւն խնդրելու Սեաւ գետի ստրուկի համար. ապա վերստին տեսաւ նա Երեք ստինք անունով գետի եզերքը, ուր Վիրգինիան նստել էր վաստակութենից, և անտառի այն սահմանը, ուր մոլորվել էր նա։ Այն բոլոր տեղորայքը, որ Նորա միտքն էին ձգում իւր սիրածի անհանգստութիւնքը, խաղարկութիւնքը, հացկերութիւնքը, բարեգործութիւնքը, զոր օրինակ Երկայնասարի գետը, իմ փոքրիկ օթեւանը, մեծակայ քարավաղը, դդմածառը որ տնկել էր Վիրգինիան, խոտավայրերը ուր սիրուէր նա վազել, երկճիւղ անցքերը անտառի մէջ ուր սիրուէր նա երգել, փոխ առ փոխ թորեցուցին Նորա արտասուքը, և նոյն արձագանքը, որ այնքան յաճախ հնչեցած էին նոցա հասարակաց ուրախութեան ձայնարկութեններից, այսուհետև ոչինչ կրկնում չէին, եթէ ոչ, այս ցաւալից խօսքերը. Վիրգինիա, իմ քաղցր Վիրգինիա։

Այս վայրենի և շրջմոլիկ կեցութեան մէջ, Պաւլոսի աչքերը խոր ընկան, Նորա երեսի գոյնը դեղնեց և Նորա առողջութիւնը օրէ օր առաւել խանգարվեցաւ։ Ստուգապէս գիտելով ես, որ մարդը կրկին չափով զգուէ իւր ցաւերը, միտք բերելով իւր անցած ու գնացած ուրախութիւնքը, և թէ ախտերը աճուէն և զօրանուէն առանձնութեան մէջ, ես վճռեցի մտքումս, որ իմ անբաղդացած բարեկամը հեռացնեմ այնպիսի տեղերից, որ Նորոգուէին Նորա մէջ իւր զրկանքի յիշատակը և շրջեցնեմ Նորան կղզու մի քանի սահմանների մէջ, ուր կարող էր նա զբօսանք գտանել։ Այս խորհրդով ես տարայ Նորան Ուիլիամ թաղի բնակաւոր բարձրավայրերի վերայ, ինչ տեղ երբէք չէր եղած նա։ Երկրագործութիւնը և վաճառականութիւնը տարածել էին կղզու այս սահմանի մէջ շատ աշխատասիրութիւն և բաղմօրինակութիւն. այս տեղ կային բազմութիւնք ատաղձագործների որ կոփուէին փայտ, և միւսեր որ Նորանից սղոցուէին տախտակներ, սայլեր երթուէին ու գալիս էին Նորա ճանապարհների երկայնութենով. մեծ երամակներ եզների և ձիանների արածուէին այն տեղ լայնարձակ արօտների մէջ, և դաշտը լցուած էր բնակութեններով։ Հողի բարձրութիւնը ներուէր այդ սահմանի շատ տեղերումը տնկել զանազան եւրոպական բոյսեր։ Այս տեղ և այն տեղ տեսանվուէին ցորենի հունձեր դաշտի

վերայ, ելակաբոյսերի օթոցներ անտառի անօսր տեղերումը և վարդի թուփեր ճանապարհների երկայնութեամբը։ Օդի զուարթութիւնը տալով ջերին ձգականութիւն, ձեռնտու էր նոյնպէս և սպիտակամորթ մարդերի առողջութեանը։ Այս բարձրավայրերից, որ գրած էին դէպ ի կղզու մէջ տեղը և շրջապատած էին մեծ մեծ անտառներով, չէր տեսանելի ոչ ծովը, ոչ Պօրտ-Լուէին, ոչ Պամպրլմուսեան եկեղեցին, ոչինչ բան, որ կարող էր Նորոդել Պաւլոսի սրտումը Վիրգինիայի յիշատակը։ Այն սարերը ևս, որ ձևաւորվումէին զանազան ճիւղեր դէպ ի Պօրտ-Լուէին, չեն ցուցանում Ուիլիամսի դաշտերի կողմից, եթէ ոչ, մի երկայն սարաւանդ ուղղագիծ ցածահայեաց, ինչ տեղից բարձրանումեն երկայն ժայռեայ բուրգեր, ուր հաւաքվումէին ամպերը։

Այս դաշտերի մէջ ահա բերեցի ես Պաւլոսը. ես պահումէի նորան միշտ աշխատութեան մէջ, նորա հետ միասին շրջելով արևի և անձրևի տակ, գիշեր ու ցերեկ, և դիտաւորութեամբ մոլորեցնելով նորան դէպ ի անտառներ, արտեր և դաշտեր, որ զբօսնեցնում նորա միտքը, վաստակեցնելով նորա մարմինը, որ դէպ ի մի այլ կողմ դարձուցանում նորա մտածութիւնքը, ըստ որում անծանօթ էր նա այն տեղերին ուր կայինք մեք և ճանապարհին որ կորուսել էինք։ Բայց մի սիրողի հոգի, ուր և լինէր, վերստին դառնումէ իւր սիրածի հետքերը։ Ոչ գիշերը և ոչ ցերեկը, ոչ անապատների հանդարտութիւնը և ոչ բնակութիւնների աղմուկը, ոչ ժամանակը որ անհետացնումէ այնքան շատ յիշատակներ, ոչինչ բան կարող չէր սիրողի սիրտը բաժանել իւր սիրածից։ Ինչպէս ասեղը, որին հպաւորվել էր մագնիսը, թող տարուբերվի սիրողի հոգին, բայց երբ որ դա միւսանգամ ստացաւ իւր հանգիստը, իսկոյն դարձուցանումէ իւր հայեացքը դէպ ի մօտ քարշող բևեռը։ Երբ ես հարցրեցի Պաւլոսից, որ մոլորված էր Ուիլիամսի դաշտավայրերումը. «Ո՞ւր պիտոյ էր մեզ այժմ գնալ». նա դարձաւ դէպ ի հիւսիս և ասաց ինձ. «Ահա մեր սարերը, յետ դառնանք դէպ ի այն տեղ։

Վերահասու եղայ ես, որ իմ բոլոր փորձած հնարները անօգուտ էին, նորա միտքը զբաղեցնելու համար, և թէ ոչինչ ճար չէր մնում ինձ, եթէ ոչ, յարձակվիլ նորա ախտի վերայ, ինչպէս որ դա էր, գործ դնելով իմ ակար խնայականութեան բոլոր զօրութիւնքը։ Ես պատասխանեցի նորան. «Այո, ահա այն սարերը ուր բնակումէր քո քաղցր Վիրգինիան, և ահա այն պատկերը որ դու տուած էիր նորան, որ և նա մեռանելու բոլորովին կրումէր իւր սրտի վերայ, որի վերջին զարկողութիւնքը էին դեռ ևս քո համար։ Այնուհետև ցոյց տուեցի ես Պաւլոսին այն փոքրիկ պատկերը, որ ինքը տուած էր Վիրգինիային կոկոսի

ծառերի աւազանի ափումը։ Ցեսանելով այս պատկերը, իսկոյն մի տըխուր ուրախութիւն երևեցաւ Նորա Հայեցուածների մէջ. Նա կարօտագին ըմբռնեց այն պատկերը իւր տկար ձեռքերով և տարաւ Նորան դէպ ի շրթունքը. ապա ճնշվեցաւ Նորա կուրծքը, և Նորա արիւնախառն աչքերումը կապվեցան արտասուքը, առանց կարողանալու վայր թափվիլ։

Նա ասացի Պաւլոսին. «իմ որդի, լսիր ինձ որ քո բարեկամն եմ, որ եղած էի և Վիրգինիայի բարեկամը, որ և քո յոյսերի մէջ, շատ անդամ աշխատած եմ ամրապնդել քո հոգին ընդդէմ կեանքի անակնկալ դիպուածներին։ Ի՞նչ բանի վերայ արտասվումես դու այդքան դառնապէս. արդեօք քո՞, թէ Վիրգինիայի անրաղդութեան վերայ։»

Եթէ քո վատաղդութեան վերայ. այո՛ անտարակոյս մեծ է դա։ դու կորուսել ես մի ամենապատուական հարստացու, որ պիտոյ է լինէր մի շատ արժանաւոր ամուսին։ Նա յանձն էր առած հրաժարվիլ իւր օգտից քո օգտի համար, և քո անձը Նախապատիւ էր համարել քան թէ հարստութիւնը. մի այնպիսի վարձատրութիւն, որ արժանի է Նորա առաքինութեանը։ Բայց ի՞նչ գիտես դու, թէ այն անձը, որից պիտոյ է սպասէիր դու այդքան մաքուր երջանկութիւն, չէր լինելու քո համար անվերջ տառապառանքների պատճառ։ Նա չունէր գոյք և զրկված էր ժառանգութենից. դու կարող էիր միայն հաղորդակից առնել Նորան քո աշխատանքին։ Նա իւր գաստիարակութեամբը աւելի քըն-քշացած և իւր անրաղդութեամբը աւելի քաջասիրտ դարձած, պիտոյ է ամեն օր հալումաշ լինէր, աշխատելով մասնակից լինել քո վաստակեցուցիչ գործերին։ Եթէ նա մի օր զաւակների մայր դառնար, Նորա և քո տառապանքը պիտոյ է յաւելացած լինէին, որովհետև հարկ էր Նորան քո հետ մենակ հոգաբարձու լինել ծերունի ծնողների և մանուկ զաւակների պահպանութեան։

Դու ասելու ես, թէ կուսակալը օգնութիւն արած կը լինէր մեզ. բայց ի՞նչ գիտես դու, թէ մի գաղթաշէնքում, որի կառավարիչը այնքան յաճախ փոփոխվումեն, ձեզ մօտ կը լինէին միշտ Լա Բուրդոնէի պէս մարդիկ. թէ չէին դալու այս տեղ վատթար և անրարոյական մեծաւորներ. թէ մի ընչին օգնութիւն ստանալու համար քո ամուսինը չէր ստիպվելու սիրու փայփայանք ցուցանել Նոցա։ Կամ, եթէ լինէր Նա թեթեւամիտ և դու լինէիր մի ողբալի ամուսին, կամ, եթէ Նա լինէր խելացի և դու մնայիր չքաւոր։ Երանի՞ քեզ, եթէ քո ամուսնու գեղեցկութեան և առաքինութեան պատճառով չընկնէիր դու հալածանքի տակ այն մարդերի կողմից, որոնցից պաշտպանութեան յոյս ունեցած էիր։

Բայց ասելու ես դու, իմ համար մնալու էր այն երջանկութիւնը, որ ես, առանց հարուստ լինելու, կը պաշտպանէի իմ սիրած կինը, որ նոյնքան ամուր կապով կապվելու էր իւր ամուսնու հետ, ինչքան որ ինքը թոյլ և տկար էր, որ ես կը մխիթարէի նորան, ինքս անհանգիստ լինելով, կ'ուրախացնէի նորան ինքս տրտմութիւն կրելով, և կ'աճեցուցանէի մեր սէրը փոխադարձ աշխատութիւնով։ Արդարև, առաքինութիւնը և սէրը վայելումն այդ դառն քաղցրութիւնը։ Բայց Վիրգինիան չկայ այստեղ։ և քեզ մնում այն բանը միայն, որ նա քեզանից յետոյ սիրած էր առաւելապէս, այսինքն իւր և քո մայրը, որ քո անմխիթար ցաւը կարող էր դիւրացման իջուցանել։ Համարի՞ր քո երջանկութիւնը այն, որ դու լինիս նոցա համար նեցուկ ամրութեան, ինչպէս եղած էր Վիրգինիան։ Իմ որդի, բարեգործութիւնը առաքինութեան երջանկութիւնն է. դորանից առաւել ապահով և առաւել մեծ բան չը կայ երկրի վերայ։ Առաջարկութիւնքը որ լինումն ուրախութիւնների, հանգստութեան, հեշտութիւնների, առատութեան, փառքի մասին, չեն ամենևին սահմանած տկար, պանդուխտ և անցաւոր մարդու համար։ Տե՛ս ահա, թէ ի՞նչպէս մի քայլափոխ դէպ ի բաղդը կործանեց մեզ ամենևին անդունդքից անդունդքի մէջ։ Արդարև, դու ընդդիմացած էիր այդ բանին, բայց ով չէր հաւատում, թէ Վիրգինիայի ճանապարհորդութիւնը պիտի վերջանայ նորա և քո բաղդաւորութեանով։ Մի հարուստ և հասակաւոր ազգականի հրաւիրանք, մի խելացի կուսակալի խորհրդատուութիւնք, մի բաղմութեան հաւանութիւն, մի քահանայի քաջալերութիւն և վկայութիւն վճռեցին Վիրգինիայի անբաղդութիւնը։ Այսպէս ահա, մեք վաղումենք դէպ ի մեր կորուստը, խաբվելով նոյն մարդերի խոհեմութեամբը, որ կառավարումն մեր կամքը։ Ընտրակոյս, աւելի լաւ եղած կը լինէր չհաւատալ նոցա, և ոչ ես ականջ դնել մի խաբեայ աշխարհի խօսքի և յուսադրութիւնների։ Վերջապէս այդքան մարդիկ, որ մեք տեսանումենք այդպէս ղբաղած այս դաշտերի մէջ, այդքան միւսեր, որ դիմումեն բաղդաւորութիւն որոնելու Հնդկաստանումը, կամ թէ առանց դուրս գալու իւրեանց տանից, հանգստութեամբ վայելումեն Եւրոպայի մէջ սոցա աշխատանքները, դոցանից մի մարդ ևս չկայ, որի վերջը չլինէր այնպէս, որ մի օր կորուսանէր իւր ամենասիրելի բանը, մեծութիւն և փառք, հարստութիւն, ամուսին, զաւակներ, բարեկամներ։ Դոցա մեծ մասը, իւրեանց զրկանքի վերայ պիտոյ է յաւելացնեն իւրեանց սեփական անխոհեմութեան յիշատակը։ Բայց քո մասին, եթէ քննես քո սիրտը, չունիս ոչինչ տեղիք յանդիմանելու քո անձը։ Դու եղել ես քո դրած ուխտի վերայ հաստատ, դու քո մանկութեան ծաղկի մէջ ունեցել ես մի իմաստունի խոհակա-

նութիւն, չխոտորվելով ընութեան պարզութենից։ Քո դիտաւորութիւնքը միայն էին օրինապատշաճ, պատճառ, նորա մաքուր, պարզ, անշահանդիր էին, և դու ունէիր Վիրգինիայի վերայ սուրբ իրաւունքներ, որոնց ոչինչ հարստութիւն չէր կարող զուգակշիռ լինել։ Դու կորուսել ես Վիրգինիան, բայց դորա պատճառը չէր ոչ քո անխոհականութիւնը, ոչ ագահութիւնը և ոչ ես քո սուտ իմաստութիւնը, այլ ինքը Աստուած գործ է դրել օտարի ախտերը, քո սրտի սիրածը քեզանից խլելու համար։ Աստուած, որից դու ունիս ամենայն բան, որ տեսանում ամենայն ինչ որ պիտանի էր քեզ և որի իմաստութիւնը չէ տուել քեզ ոչինչ տեղիք ապաշաւանքի և յուսահատութեան, որ սովոր են ծնանել այնպիսի ձախորդութիւններից, որոնց պատճառը եղած էինք մեք։

«Քո յատուկ սիրտը կարող էր քո վատաբաղդութեան մէջ վերկայել այսպէս ահա։—Ես արժանի չէի դորան։—Ուրեմն Վիրգինիայի վատաբաղդութիւնն է, նորա վախճանը, նորա այժմեան վիճակը, որի վերայ արտասվում ես դու։ Բայց նորան հասել է այն վիճակը, որ պահած է և քաջատոհմութեան և գեղեցկութեան և նոյն իսկ թագաւորների համար։ Մարդու կեանքը, նորա բոլոր առաջարկութիւնների հետ, բարձրանում որպէս մի փոքր աշտարակ, որի պսակը է մահը։ Ծնանելով, դատապարտված էր նա, որ մեռանի։ Երանի՞ Վիրգինիային, որ դնաց աշխարհից, յառաջ քան թէ իւր մայրը, ձեր մայրը, յառաջ քան թէ դու, այսինքն չմեռաւ կրկնապատիկ մահով, վերջին օրհասից յառաջ։

«Մահը, իմ որդի, մի բարի բան է ամենայն մարդու համար։ դա է գիշերը այն անհանդիստ օրի, որին ասումենք կեանք։ Մահու քունն էր, որի մէջ յաւիտեան հանգստանումեն հիւանդութիւնքը, ցաւերը, տրտմութիւնքը, ահ ու երկիւղը, որ անդադար չարչարումեն անբաղդ կենդանիքը։ Քենի՞ր այն մարդիկը, որ քեզ երեւումեն շատ և շատ երջանիկ։ դու կը տեսանես, թէ դոքա իւրեանց կարծեցած բարեբաղդութիւնը գտել են շատ թանգ գնով։ Հրապարակական փառք ու պատիւ —ընտանեկան թշուառութիւններով, հարստութիւնը—առողջութեան կորստով։ այն սակաւագիւտ քաղցրութիւնը սիրելի լինելու, անընդհատ զրկանքներով։ և յաճախ, երբ որ մի այդպիսի, օտարի հաճոյքին նուիրած, կեանքը մոտեցած էր իւր վերջին, նորա չեն տեսանում իւրեանց շրջակայքումը, եթէ ոչ, սուտ բարեկամներ և ապերախտ աղգականներ։ Բայց Վիրգինիան երջանիկ էր մինչև իւր կեանքի վերջին բոպէն։ երբ որ մեք ականատես էինք նորա կորնչելուն, տակաւին երջա-

նիկ էր նա. պատճառ, այլ ձգելով թէ մի բռնանդակ դաղթաշէնքի վերայ, որ նորա պատճառով մի ընդհանուր անմխիթարութեան մէջ էր, և թէ քո վերայ, որ այնքան անվեհեր սրտով վաղուձիր օգնութիւն հասուցանելու, տեսած է նա թէ ինչքան քաղցր և սիրելի էր ամենեներիս։ Նա իւր կեանքի անմեղութեամբ գօտեւորեց իւր մէջը ընդդէմ գալոցին, և այնուհետև ստացաւ այն պարծանքը, որ երկնային տեսչութիւնը պահումէ առաքինութեան համար, այսինքն մի քաջահոգութիւն, որ գերազոյն է քան թէ վտանգը։ Վիրգինիան ցոյց տուեց իւր մահուն մի լուսապայծառ երես։

«Իմ որդի, Աստուած տալիս է առաքինութեանը կեանքի բոլոր անցքերը, համբերելու համար, որ դորանով բացայայտ կացուցանէ նա, թէ առաքինութիւնը միայն կարող է օգուտ քաղել նոցանից և նոցա մէջ գտանել բարեբաղդութիւն և պարծանք։ Եթէ Աստուած պահել էր առաքինութեան համար մի ականաւոր անուն, նա դուրս է հանում նորան մի մեծ թէատրոնի մէջ, և թոյլ է տալիս նորան կատարել իւր պատերազմը մահու հետ. այնուհետև նորա քաջասրտութիւնը օրինակ է դառնում և նորա ձախորդութիւնների յիշատակը գալոց ազգերի մէջ մեծարվումէ միշտ ու հանապազ արտասուքի տուրքերով և ընծաներով։ Ահա այն մշտնջենաւոր յիշատակի արձանը, որ պահած է նորա համար մի աշխարհի վերայ, ուր ամենայն բան անցաւոր է, ուր շատ թագաւորների յիշատակը անդամ, թաղվումէ յաւիտենական մոռացութեան մէջ։

«Բայց Վիրգինիան կայ տակաւին։ Իմ որդի, տե՛ս ահա, ամենայն բան փոփոխվումէ երկրի վերայ, բայց ոչինչ կորնչում չէ այն տեղ. ոչ մի մարդկային ճարտարութիւն կարող չէր ոչնչացնել նիւթի և ամենափոքրիկ մասնիկը. և այն էակը որ բանաւոր, զգացող, սիրող, առաքինի, երկիւղած էր, մի՞ թէ պետք է ոչնչանար, երբ որ այն նիւթը որ տալիս էին նորան ձև ու կերպարանք, անկործանելի էին։ Ո՜հ, եթէ Վիրգինիան երջանիկ էր մեր հետ, այժմ և՛ս առաւել երջանիկ է նա։ Կայ մի Աստուած, իմ որդի. բոլոր բնութիւնը քարոզումէ դորան. ինձ հարկաւոր չէ ապացուցանել քեզ այդ։ Մարդերի անզգամութիւնն է միայն, որ թոյլ է տալիս նոցա ուրանալ մի արդարադատութիւն, որ ահացուցիչ է նոցա համար։ Դու զգումես Աստուած քո սրտի մէջ, ինչպէս նորա գործերը քո աչքի առաջև են։ Այլ, կարծումես դու, թէ նա անվարձ կը թողու Վիրգինիան։ Կարծումես դու, թէ սոյն այս կարողութիւնը, որ տուել էր այս ալնիւ հոգուն մի այդպիսի գեղեցիկ կերպարանք, որի մէջ նկատումէիր դու մի աստուածեղէն ճարտարու-

թիւն, չէր կարող հանել նորան ծովի հեղեղների միջից. թէ նա, որ կարգադրել է մարդերի այժմեան երջանկութիւնը այնպիսի օրէնքներով, որոնց դու տեղեակ չես, չէր կարող պատրաստել մի այլ երջանկութիւն Վիրգինիայի համար, այնպիսի օրէնքներով, որ նոյնպէս անյայտ են քեզ. Երբ որ մեք ոչէութեան մէջ էինք, գիցուք թէ հնարաւոր էինք մոռանել, մի՞ թէ կարողացած կը լինէինք պատկերացնել մեզ մեր էութիւնը. և այժմ, երբ մեք գտանվումենք այս խաւար և թուչուն դոյութեան մէջ, կարող ենք նախատեսանել այն բանը, որ կայ միւս կողմումը մահու սահմանի, որի վերայ ոտք կոխելով, պիտոյ է մեզ դուրս գալ կեանքից. Մի՞ թէ Աստուած, ինչպէս մարդը, կարօտ էր այս փոքրիկ երկրագնդին, որ լինէր սա նորա խնամատութեան և բարութեան տեսարանը, և կարողացել է միայն ընդարձակել մարդկային կեանքը մահու դաշտերի մէջ. Եթէ ողկիանոսումը չկայ մի կաթիլ ջուր, որ լցուած չլինէր կենդանի արարածներով որ ստորադիր էին մեզ, մի՞ թէ պիտոյ է ոչինչ չլինէր մեր համար այնքան աստղների մէջ, որ գլորվումեին մեր գլխի վերայ. Մի՞ թէ մի գերագոյն խնամատութիւն և աստուածեղէն բարութիւն պիտոյ է լինի այն տեղ միայն խկապէս, ուր կայինք մեք. բայց այս ճառագայթարձակ և անհամար գունդերի մէջ, այն անչափելի լուսեղէն դաշտերի մէջ որ շրջապատումեն նորանց, որ և երբէք չեն նսեմանում ոչ ամպերից և ոչ գիշերներից, պիտո՞ յ է լինի մի դատարկ տարածութիւն և մի մշանջենաւոր ոչէութիւն։ Եթէ մեք, որ ոչինչ չունենք տուած մեզ, համարձակվենք որոշել այն էակի սահմանքը, որից մեք ստացած ենք ամենայն բան, ապա կարող էինք հաւատալ, թէ գտանվումենք այս տեղ նորա թագաւորութեան վերջին սահմանների վերայ, ուր կեանքը պատերազմումէ մահու հետ և անմեղութիւնը բռնաւորութեան հետ։»

Ընտարակոյս ուր և իցէ կայ մի տեղ, ուր առաքինութիւնը ստանումէ իւր վարձը. Վիրգինիան երջանիկ է այժմ. ո՞հ. եթէ նա հրեշտակների կայանից կարողանար իւր միտքը յայտնել քեզ, ապա պէտք է ասէր նա քեզ որպէս հրաժարական ողջունի խօսք. «Ո՛վ Պաւլոս, «կեանքը ոչինչ բան չէ, եթէ ոչ փորձութիւն։ Ես հաւատարիմ եմ «գտանված բնութեան, սիրու և առաքինութեան օրէնքներին. ես ճա«նապարհ եմ կտրել ծովերի վերայով, իմ ծնողներին հնազանդվելու «համար. ես հրաժարվել եմ հարստութիւններից, իմ ուխտը պահպա«նելու համար, և ես նախապատիւ համարեցի թողուլ իմ կեանքը, «քան թէ խախտել պարկեշտութիւնը։ Երկնային տեսչութիւնը հա«մարել է իմ առպարէզը հերիքապէս կատարեալ. ես յաւիտեան ա«զատված եմ աղքատութիւնից, բամբասանքից, փոթորիկներից, միւսի

«ցաւերի տեսարանից։ Ոչ միմիայն այն ցաւերից, որ սովոր են ահաբեկ
«առնել մարդերի սիրտը, չէ կարող այսուհետև մոռնալ ինձ. և դու
«կոծ ես առնում իմ վերայ. ես այնպէս մաքուր և անայլայլելի եմ,
«որպէս մի լուսի մասնիկ, և դու յի՛ս ես գանչում ինձ դէպ ի երկրա-
«ւոր գիշերը։ Ո՛վ Պաւլոս, ով իմ բարեկամ, մի՛ տար բեր այն մեր ե-
«ղանկութեան օրերը, երբ առաւօտեան պահուն մեք ճաշակումէինք
«հոգեպայծառ քաղցրութիւնը երկնքի, որ արևի մօտ բարձրանումէր
«մեր քարաժայռերի կատարների վերայ և նորա ճառագայթների հետ
«ծաւալվումէր մեր անտառների ներսումը։ Մեք զգումէինք մի հիացք,
«առանց կարողանալու դորա պատճառը հասկանալ։ Մեր անարատ
«ցանկութիւնների մէջ կամենումէինք մեք լինել ամենեին աչք, արևա-
«բացի փառաւոր գոյները վայելելու համար, ամենեին հոտոտելիք,
«մեր բոյսերի խնկահոտութիւնը զգալու համար, ամենեին լսելիք, մեր
«թռչունների քաղցր երգասացութիւնքը լսելու համար. ամենեին
«սիրտ, այս բարեգործութիւնքը խոստովանելու համար։ Այժմս
«նստած այն դեղեցկութեան աղբիւրի մօտ, ինչ տեղից ըղխումէ ամե-
«նայն ախորժելի բան երկրի վերայ, իմ հոգին տեսանումէ, ճաշակու-
«մէ, լսումէ, անմիջապէս շօշափումէ այն բանը, որ յառաջուց կարող
«էր իմանալ միայն թոյլ, հողեղէն զգայարաններով։ Ո՞հ, ի՛նչ լե-
«զու կարող էր նկարագրել այս միշտ արեգակնափայլ ծովեզերեայքը,
«ուր ընակումեմ ես յաւիտեան։ Ամենայն բան, որ մի անեզրական
«կարողութիւն, մի երկնաւոր բարութիւն կարող էր պատրաստել, մի
«անբաղդ արարած մխիթարելու համար. ամենայն ներդաշնակութիւն,
«որ անհամար, մի և նոյն երջանկութեամբ վայելչացած, էակների
«սրտակցութիւն կարող է գոյացնել հասարակաց ցնծութեան մէջ,
«այդ բանը մեք վայելումենք անխառն և անապակ։ Ուրեմն համբերի՛ր
«դու այն փորձանքին, որ գրած է քո վերայ, Վիրգինիայի բաղդաւո-
«րութիւնը աճեցնելու համար, մի այնպիսի սիրով որ վերջ չունի,
«մի սուրբ հարսանիքով, որի ջահերը անշիջանելի են։ Այն տեղ,
«ես կը քաղցրացնեմ քո ցաւերը, կը սրբեմ քո արտասուքը. ով իմ
«բարեկամ, իմ նորափեսայ, վերուզղի՛ր քո հոգին դէպ ի Անեզրակա-
«նը, որ կարողանաս համբերել մի բոպէի տառապանքներին։»

Ու իմ սիրտը շարժվելով, ստիպվեցայ վերջացնել իմ խօսքը։ Պաւլոսի մասին պիտոյ է ասել, թէ նայելով իմ վերայ անթարթ աչքով, ձայն արձակեց.—«Վիրգինիան չկայ, չկայ.» և մի երկար թուլութիւն եկաւ նորա վերայ այս ցաւալից խօսքերից յետոյ։ Ապա սիրտը յետ եկաւ և նա խօսեց այսպէս. «Որովհետև մահը բարի բան է, և Վիրգինիան երջանիկ է, ապա և ես կամիմ մեռանիլ, Վիրգինիայի

հետ անպաժան մնալու համար։» Այսպէս, իմ միսիթարական պատճառաբանութիւնքը ոչինչ ազդեցութիւն չունեցան, եթէ ոչ թեւեր տալով նորա յուսահատութեանը։ Ես մի մարդու պէս էի, որ կամենումէր փրկել իւր բարեկամը որ խորասոյզ էր լինում գետի մէջ, չկամենալով լող տալ։ Ցաւը ընկղմել էր նորան։ Աւաղ. առաջին հասակի տառապանքները պատրաստումեն մարդս դէպ ի մուտքը կեանքի մէջ, բայց Պաւլոսը երբէք չէր առել դոցա փորձը։

Ես դարձուցի նորան դէպ ի իւր բնակութիւնը, ուր գտայ ես նորա մայրը և Դը լա Ցուր տիկինը մի վհատութեան մէջ, որ ևս առաւել սաստկացած էր։ Մարգարիտը առաւել կոտրած ու փշրած էր։ Զուարթ բնաւորութիւնքը, որոնց վերայից սողումեն փոքրիկ ցաւերը, էին այն բնաւորութիւնքը, որ շատ փոքր գիմանումէին մեծամեծ վշտերին։

Նա ասաց ինձ.—«Ո՛վ իմ բարի դրացի, այս գիշերիս երազումս տեսայ ես Վերդիեկան սպիտակ զգեստով, ծառատունկերի և վայելչաշարդ այգիների մէջ. նա ասաց ինձ.—Ես վայելումեմ մի նախանձելի բաղդաւորութիւն. յետոյ քաղցր դէմքով մօտեցաւ Պաւլոսին և առաւ տարաւ նորան իւր հետ։ Ջանագիր լինելով յետ պահել իմ որդին, նկատեցի, որ և ես ինքս թողումէի երկիրս և հետևումէի նորան մի անպատմելի ուրախութեանով։ Այնուհետև կամեցայ ես հրաժարական ողջոյն տալ իմ բարեկամուհուն. խնդոյն տեսայ ես նորան, որ գալիս է մեր քամակից Մարիամի և Գոմինիկոսի հետ։ Բայց ինչ որ ևս աւելի զարմանալին է իմ համար, այն է, որ և Դը լա Ցուր տիկինը այս գիշերիս տեսել է մի երազ նմանապիսի հանգամանքներով։»

Ես պատասխանեցի նորան. «Իմ բարեկամ, ես կարծումեմ որ ոչինչ բան չէ պատահում աշխարհի մէջ առանց Աստուծոյ թոյլտուութեանը։ Երազքը երբեմն ծանուցանումեն ստոյգը։»

Դը լա Ցուր տիկինը պատմեց ինձ մի ամենևին նմանապիսի երազ, որ տեսել էր սոյն իսկ գիշերին։ Ես երբէք նկատած չէի այս երկու կանանց մէջ ոչինչ հակամիտութիւն դէպ ի մնապաշտութիւն, և շատ զարմացայ նոցա երազների համաձայնութեան վերայ և տարակոյս չունէի իմ մէջ, որ դոքա կատարվելու են։ Այս կարծիքը, թէ ճշմարտութիւնը երբեմն պատկերանումէ մեզ երազի մէջ, ծաւալված է երկրի բոլոր ազգերումը։ Հնութեան առաւել հոյակապ մարդիկը հաստատ են ընծայել նորան, զոր օրինակ Ալէքսանդր Մակեդոնացին, Կեսարը, Սկիպիոնները, երկու Կատոնքը և Բրուտոսը, որ չէին թուլահոգի անձինք։ Հին և նոր կտակարանը ցուցանումէ մեզ շատ երազների օրինակ, որ կատարված էին։ Իմ մասին յատկապէս պիտոյ չէր ինձ այլ վկայու-

թիւն, քան թէ իմ յատուկ փորձառութիւնը. և ես աւելի քան թէ միանգամ նկատած եմ, որ երաշները աղգարարութիւնք էին որ ուղարկուում մեզ մի հոգի, որ խնամք ունի մեր վերայ։ Բայց բանաւոր պատճառներով կամենալ հերքել կամ պաշտպանել այնպիսի խնդիրներ, որ դուրս էին մարդու խելքի սահմանից, դա մի անտեղի բան է։ Ի վերայ այդը ամենայնի, եթէ մարդկային միտքը է միայն աստուածեղէն մտքի պատկերը, որովհետև մարդը կարող է արդարև գաղտնի և ծածուկ հնարներով, հասուցանել իւր դիտաւորութիւնքը մինչև աշխարհի ծայրը, ապա ինչո՞ւ համար այն միտքը որ տնտեսում տիեզերքը, չէր կարող նմանապիսի հնարներ գործ դնել նոյն խորհրդով։ Մի բարեկամ մխիթարում իւր բարեկամը մի նամակով, որ ճանապարհ է կտրում անչափ սահմանների միջով, անցանում աղգերի ատելութեան միջից և բերվելով հասուցանում մի հատ մարդու ուրախութիւն և յոյս։ Ինչո՞ւ համար այն գերագոյն իշխանը որ անմեղութեան պաշտպանն է, չէ կարող մի գաղտնի ճանապարհով դալ օգնական լինել մի առաքինի հոգու, որ իւր յոյսը և ապաւէնը ընտրել է նորան միայն։ Մի՞ թէ կարօտ էր նա որ և իցէ արտաքին նշանի, իւր կամքը կատարելու համար, նա որ իւր բոլոր գործերի մէջ անդադար աղդեցող է աներևոյթ ճանապարհով։

Ինչո՞ւ համար պիտոյ է երկմիտ լինել երաշների մասին. մի՞ թէ մեր կեանքը, այդքան անցաւոր և ունայն առաջարկութիւններով լի, մի այլ բան էր քան թէ երաշ։

Գոյ՞ լինի այդ բանը, ինչպէս կամի. բայց իմ բարեկամուհիների երաշը կատարվեցաւ շուտով։ Պաւլոսը մեռաւ երկու ամիս յետոյ քան թէ իւր սիրելի Վիրգինիան, որի անունը անդադար կրկնուում նա։ Մարգարիտը տեսաւ իւր վախճանի մօտենալը իւր որդու մահից ութ օր յետոյ, և մեռաւ այնպիսի ուրախութեամբ, որ տուած է ճաշակելու առաքինութեանը միայն։ Նա շատ քնքուշ սիրով հրաժարական ողջոյն տուեց Դը լա Ցուր տիկնոջը, ասելով նորան. թէ յոյս ունէր միւսանգամ քաղցր և մշտնջենաւոր կերպով միաւորվել նորա հետ։ Մահն է մի ամենամեծ բարի, յաւելացրեց նա.—պիտոյ է ցանկանալ նորան. եթէ կեանքը մի պատիժ է, պիտոյ է փափագել նորա վախճանին. եթէ դա մի փորձութիւն է, ապա պիտոյ է խնդրել, որ այդ փորձութիւնը լինէր կարճատև։»

Կուսակալը հոգաբարձութիւն արեց Դոմինիկոսին և Մարիամին, որ այլ ևս կարող չէին սպասաւորութիւն առնել, որ և երկար չապրեցին իրենց տերանց մահուց յետոյ։ Թշուառ Գիդելի մասին պիտոյ

է ասել, թէ նա ցաւից մեռած էր զրեթէ նոյն միջոցին, երբ որ վախճանվեցաւ նորա տէրը։

Ես տարայ իմ մօտ Դը լա Տուր տիկինը, որ իւր ծանր ծանր զբաղանքներին մէջ պահումէր մի անօրինակ մեծահոգութիւն։ Նա մխիթարել էր Պաւլոսը և Մարգարիտը մինչև վերջին րոպէն, որպէս թէ չուներ տանելու այլ վշտի, բայց միայն նոցա վշտին։ Սորանց չտեսանելով այլևս, ամենայն օր խօսումէր նա իմ հետ նոցա մասին, որ եղած էին քաղցր բարեկամներ իւր մօտակայքումը։ Բայց Դը լա Տուր տիկինը ապրեց մի ամիս միայն, նոցանից յետոյ։ Եթէ խօսեցնք նորա մօրաքուեր մասին, ապա պիտոյ է ասել, թէ Դը լա Տուր տիկինը ոչ թէ յանդիմանումէ չէր սորան իւր ցաւերի պատճառով, այլև խնդրումէր Աստուծուց ներել նորան և մեղմել այն ողորմելի խելագարութիւնը որի մէջ, ինչպէս լսեցինք, ընկած էր նա իսկոյն, յետ ճանապարհ ձըգելու Վիրգինիան այնքան անգթութենով։

Այս այլանդակված աղջականը իւր խստասրտութեան պատիժը երկար չկրեց։ Ես լսեցի հետ ոչնչեմ եկաւոր ֆրանսիական նաւերից, թէ նա չարչարվումէ մի այնպիսի խելացնորութեամբ, որ ոչ կեանքն էր կեանք, և ոչ մահը մահ։ Երբեմն տանջումէր նորան խիղճը, թէ եղած է իւր պատուական մօրաքուեր աղջկայ վաղահաս վախճանի և նորա մօր յետընթաց մահու պատճառը։ Երբեմն ինքը իւր մէջ հաւանումէր իւր արածին, որ իւրեանից հեռացրել էր երկու վատաբաղդ անձինք որ, նորա ասածովը, անպատուել էին նորա աղգատոհմը իւրեանց անարգ ձգտողութենով։ Երբեմն կատաղումէր նա, տեսանելով այն թշուառների մեծ բազմութիւնը որով լցուած է Փարիզ, և աղաղակումէր. «Ինչու չեն ուղարկում այդ ծոյլ և անպիտան մարդիկը, որ մեռանեին մեր գաղթաքաղաքների մէջ։» Նա ասումէր նմանապէս, թէ այն բոլոր մտաւորական գաղափարքը որ ասվումէին մարդասիրութիւն, առաքինութիւն, կրօն, որ և ընդունված էին բոլոր աղգերից, ոչինչ այլ բան չեն, եթէ ոչ, նոցա իշխանների խորամանկ հնարագործութիւնքը։ Ցնոտոյ խոտորվելով դէպ ի սորա ներհակ ծայրը, անձնատուր էր լինումէ նա անապաշտական ահի ու երկիւղի, որ լցուցանումէին նորա սիրտը մահանման տագնապներով։ Այդ խելագար կինը վաղումէր, տանումէր առատ տուրքը հարուստ աբեղաների, որ նորա սիրտը բռնած էին իւրեանց ձեռքումը, և աղաչումէր սորանց հաշտեցնել Աստուած ընծայաբերելով իւր գոյքը, որպէս թէ այն բարիքը որ նա խնայել էր անբաղդներից, կարող էին հաճոյանալ մարդկութեան Հօրը։ Շատ անգամ նորա երևակայութիւնը պատկերացնումէր նորա աչքի առաջև կրակի դաշտեր, բո-

ցավառ սարեր, ուր գարշատեսիլ ցնորքներ վազուռիին այս կամ այն կողմ և բարձրաձայն տալիս էին նորա անունը։ Նա փաթաթվուռիր իւր բարեխոս արեղաների ոտքին, և ակամայ կամքով երևակայուռիր իւր մէջ տանջանքներ և պատուհասներ. պատճառ, երկնային տեսչութիւնը, արդար տեսչութիւնը ուղարկուռիմ անգութ հոգիներին և զարհուրելի կրօնք։

Այսպէս ապրեց նա մի քանի տարի, փոխ առ փոխ անապատուած և անապաշտ լինելով, միապէս դողալով և մահու և կեանքի երեսից։ Բայց այդ ողբալի կեանքը վերջացաւ նոյն բանով, ինչ բանի համար իսկապէս հրաժարվել էր նա ընութեան զգացողութիւններից։ Ցաւալից սրտով տեսաւ նա, որ իւր հարստութիւնը իւրեանից յետոյ պէտք է անցանէ այնպիսի աղգականների ձեռք, որ ատելի էին նորան, և քանք արեց յետ պահել նոցանից առաւել լաւ բաժինը։ Բայց աղգականքը դիպուկ ժամանակ ընտրելով այն խելագարութեան միջոցները որոնց ենթարկված էր այդ պառաւը, տուեցին փակել դորան որպէս մի խելակորոյս կին, և նորա գոյքը յանձնել հոգաբարձուների։ Այսպէս ահա, իւր իսկ հարստութիւնքը պատճառ եղան նորա կորստին. և ինչպէս նոքա քարացուցել էին այդ կնոջ սիրտը, նոյնպէս ևս խստացուցին այն մարդերի սիրտը, որ ցանկանուռիին այդ կնոջ գոյքին։ Վեռաւ դա և անպատմելի աղետալի կերպով. պատճառ, ունէր դեռ ևս այնքան հասկացողութիւն իւր վերայ, որ կարող էր իմանալ թէ նորան կողոպտած ու արհամարհած էին նոյն իսկ անձինքը, որոնց կարծիքը կառավարել էր նորա սիրտը իւր բոլոր կեանքի միջոցին։

Վիրգինիայի մօտ, նոյն եղէգնատունկերի ոտքումը թաղեցին նորա բարեկամ Պաւլոսը, և նոցա շրջակայքումը նոցա դաւակասէր մայրերը և նոցա հաւատարիմ սպասաւորքը։ Ոչինչ մարմարիոնեայ բան չըկառուցին նոցա խոնարհ հողաշէն դերեզմանների վերայ, ոչինչ տապանագիր շնուիրեցին նոցա առաքինութիւններին. բայց նոցա յիշատակը մնացել է անջնջելի այն մարդերի սրտի մէջ, որ շնորհապարտ էին նոցա։ Նոցա ոգիքը կարօտ չեն այն փառահեղութեանը, որից հեռացած էին ինքեանք իւրեանց կեանքի միջոցին. բայց եթէ ոգիքը դեռ ևս մասնակից են այն բաներին որ լինուռին երկրի վերայ, ապա անտարակոյս է, որ նոքա կը սիրէին մեռ գալ այն յարգաշէն յարկերի տակ, ուր ընակուռի աշխատասէր առաքինութիւնը, որ մեխթարեն իւրեանց վիճակից անգոհ չքաւորները, որ պահպանեն փեսայացու երիտասարդների մէջ մի տեսողական ջերմ սիրտ, — ընական բարքերի սէրը, աշխատութեան սէրը և հարստութեան երկիւղը։



ՀԵԳԿԲԿԲԵՆ ԽՈՒԳԸ

ՀՆԴԿԱԿԱՆ ԽՈՒՂԸ։

Մօտ երեսուն տարի յառաջ, Լոնդոնումը կազմուեցաւ մի դիտաւոր ընկերութիւն, որ յանձնառու էր ճանապարհորդել աշխարհի բոլոր մասներումը և բոլոր գիտութիւնների վերայ ծանօթութիւնք ժողովել, մարդկութիւնը լուսաւորելու և աւելի բաղդաւոր կացուցանելու համար։ Այս ընկերութեան ծախքը տալիս էր մի գործակից ընկերութիւն անգլիական ազգից, բաղկանալով վաճառականներից, Լօրդերից, Եպիսկոպոսներից, Համալսարաններից և Անգլիայի արքայական ազգատոհմից։ սոցա վերայ յաւելացան և մի քանի իշխանաւորք հիւսիսային Եւրոպայից։ Այս դիտաւորքը էին թուով քառասուն։ և Լոնդոնի արքայական ընկերութիւնը տուել էր դոցա ամեն մինին մի թերթ, նորա վերայ գրած այն խնդիրների ցուցակը, որոնց բացատրութիւնը (մեկնութիւնը) պիտոյ է բերէին նորա։ Այս խնդիրները հասանուէին մինչև երեք հազար և հինգ հարիւրի։ Թէպէտ բոլորովին այլևայլ խընդիրներ էին սահմանած այս ուսումնականների ամեն մինի համար, և պատշաճաւոր այն աշխարհին ուր պիտոյ էր ճանապարհորդել նոցա, բայց դոքա այնպէս կապակից էին միմեանց հետ, որ մի խնդիրը լուսափայլ կացուցանվելով, պիտոյ է լոյս արձակէր և բոլոր միւսերի վերայ։ Արքայական ընկերութեան առաջնորդը, որ կարգադրել էր այդ խընդիրները իւր եղբայրակիցների հետ, շատ բարուք հասկացել էր, թէ շատ անգամ մի դժուարութիւն լուծանվումէ, լուծանելով մի այլ դժուարութիւն, և սա նոյնպէս, երբ որ փարատած էր մի յառաջընթաց դժուարութիւն։ Այս բանը աւելի շատ յառաջ է տանում ճշմարտաքննութեան ընթացքը, քան թէ սովորաբար մտածումն։ Կարճ ասեմ

և խօսելով այնպէս, ինչպէս առաջնորդը խօսած է իւր տուած պատուէրների մէջ։ Այս գործը պիտոյ է լինի մի համայնարոյր շինուած, որ կարող էր մի ազգ կառուցանել, մարդկային տեղեկութիւնքը յառաջադէմ կացուցանելու համար. և սորանից բացայայտ էր ահա, թէ հարկաւոր էին ակադեմեան ընկերութիւնք, ամբողջութիւն տալու այն ցան ու ցիր ճշմարտութիւններին բոլոր երկրի վերայ։

Այս գիտական ճանապարհորդների ամէն միտը, բաց ի իւր համար սահմանած լուծանելի խնդիրների ցուցակից, ստացել էր նոյնպէս պատուէր ճանապարհի վերայ գնել առաւել հին գրչագիր աստուածաշունչք և ամենայն տեսակ սակաւագիւտ գրչագիր մատեանք, և կամ գոնեայ ոչինչ արծաթ չինայել, նոցա օրինակները հոգալու պատշաճապէս։ Նորանց ընտրողը հոգացել էին նոցա ամենների համար յանձնարարական թղթեր Մեծ-Բրիտանիայի հիւպատոսների, նախարարների և պատգամաւորների վերայ, որոնց պիտոյ է հանդիպէին նոքա իւրեանց ճանապարհի վերայ, և որ ամենից լաւ բանն էր, պատշաճաւոր մուրհակներ, Լոնդոնի առաւել անուանի սեղանաւորների (սարրաֆների) վկայութիւնով հաստատած։

Այս ուսումնականներից առաւել գիտնաւորը, որ հմուտ էր երբայականին, արաբականին և հնդկականին, ցամաքով ուղարկվեցաւ դէպ ի Հնդկաստան, սկզբնաղբիւրը բոլոր արուեստների և բոլոր գիտութիւնների։ Նախ և յառաջ ճանապարհ ընկաւ նա Հոլլանդիայի վերայով և հետ զհետէ այցելութիւն արեց Ամստերդամի ժողովրդանոցին և Դորթրեխտի սիւնհոդոսին, Ֆրանսիայի մէջ Սորբոնիային (աստուածաբանական ֆակուլտետին Փարիզումը) մուզէոնների և գրանոցների, զոր օրինակ, Ֆլորենտի մուզէոնին, Սուրբ Մարկոսի գրանոցին Վենետկի մէջ, և Հռոմումը Վատիկանեան գրանոցին։ Լինելով Հռոմումը, երկմիտ էր, արդեօք, իւր ընթացքը դէպ ի Ասիա ուղղելուց յառաջ, պիտոյ էր նորան Սպանիայի մէջ խրատ հարցանել Սալամանկայի հռչակաւոր համալսարանից. բայց երկիւղ կրելով Ինկվիզիցիոնի երեսից, առաւել բարւոք համարեց նաւ նստել և գնալ ուղղակի դէպ ի Կոստանդնուպոլիս։ Երբ որ այս տեղ էր, մի Էֆենդի, վճար ստանալով նորանից, հնարաւորութիւն տուեց նորան շրջելու բոլոր գրքերանքը սուրբ Սոֆիայի մզկիթումը։ Այս տեղից դիմեց դէպ ի Եգիպտոս Ղփտիների մօտ, ապա Մարոնեան արեղաների մօտ Լիբանանու սարի վերայ և Կարմել սարի վանականների մօտ։ Այս տեղից գնաց դէպ ի Սանա, Արաբիայի մէջ, յետոյ դէպ ի Իսպահան, Կանդահար, Դելհի, Ագրա մայրաքաղաքները. վերջումը, երեքամեայ ճանապարհորդութե-

նից յետոյ, հասաւ նա Գանգէսի գետեղերքի վերայ դրած Բենարէս քաղաքին որ Հնդկացոց Աթէնքն է, ուր և նա խօսք բացեց բրահմանների հետ։

Նորա ժողոված հին տպագրածքը, թէ նախագաղափար մատեանք, թէ սակաւապիւտ զրչագիրքը, օրինակութիւնք և թէ քաղուածք և ծանօթարանութիւնք ամենայն տեսակ բաների վերայ, էին առաւել ճոխ հաւաքածոյքը, որ մի մասնաւոր մարդ երբ և իցէ արած էր։ Հերիք էր ասել, թէ դոքա կացուցանումէին իւնսուն փաթեթ, որոնց կշեռը էր իւն հաղար հինգ հարիւր քառասուն և չորս լիտր։ Նա կամենումէր անգամ նաև նստել և դատնալ դէպ ի Լոնդոն, բերելով իւր հետ այդպիսի ճոխ գիտական բեռներ, և շատ ուրախ էր որ Լոնդոնի արքայական ընկերութեան ակնկալութենից ի վեր գործ էր կատարել։ բայց մի հատ հասարակ մտածումիւն վերայ հասաւ և ճնշեց ցաւով նորա սիրտը։

Նա մտածումէր, թէ այդքան խօսք ու զրոյց ունենալով հրէական ռաբբիների, Պրոտեստանտեան հոգևորների, Լութերական առաջնորդների, Կաթոլիկեան վարդապետների, Փարիզի ճեմարանների հետ, այլև Ֆլորենտի դը լա Քրուսկա անունով ակադեմիայի, Իտալիայի Արկադեան ասած և քսան ու չորս միւս առաւել հռչակաւոր ակադեմիաների հետ, Ցունաց պապասների, Թուրքի մոլլաների, Հայոց վարժապետների, Պարսից սայիդների և դաղիների, Արաբացոց շեյխերի, հին Փարսիների, Հնդկացոց պանդիկների (ուսումնականների բրահմանեան կարգից) հետ։ նա մտածումէր, թէ այդքան տեսակ տեսակ ազգերի հետ խօսք ու զրոյց ունենալով, ոչ թէ լուսափայլ չէր կացուցել ոչ մինը այն երեք հաղար հինգ հարիւր խնդիրներից, որ տուել էր նորան արքայական ընկերութիւնը, այլ ևս առաւել բազմացուցել էր տարակոյսները։ և որովհետև այդ խնդիրները կապակից էին միմեանց հետ, դորանից յառաջանումէր ամենեին հակառակը այն բանի, ինչ որ կարծել էր արքայական ընկերութեան մեծանուն առաջնորդը։ այսինքն, թէ մի բացատրութեան մթութիւն, մթացնումէր և միւսի յայտնութիւնը։ թէ շատ պայծառ ճշմարտութիւններ դարձած էին ամենեին տարակուսական և անհաստատ, և թէ չէր կարելի պարզել և ոչ մինը դոցանից, այսքան միմեանց հակառակ պատասխանների և վկայութիւնների լաբիւրինթոսի մէջ։

Անգլեացի վարդապետը հասկացաւ այդ բանը մի թեթև նկատողութենով։ Այս խնդիրների մէջ պիտոյ է բացատրվէին երկու հարիւր խնդիրք Եբրայեցոց աստուածաբանութեան վերայ, չորս հարիւր ութսուն քննելիք յունական և Հռոմէական եկեղեցիների տարբեր դաւանարանութեան վերայ, երեք հարիւր տասերկու հարցուած բրահման

ների կրօնի մասին. հինգ հարիւր ութ — Սանսկրիտեան կամ նուիրական լեզուի վերայ, երեք — Հնդկացոց ազգի ներկայ դրութեան մասին. երկու հարիւր տասն և մի — Անգլեացոց առուտուրքի մասին Հնդկաստանի մէջ. եօթն հարիւր քսան և ինն հարցուած, հին յիշատակարանների մասին, որ կան Եղեփանտինէ և Սալզետտէ կղզիներումը և Բոմբայի մոտակայքումը. հինգ խնդիր, թէ ի՞նչքան հին էր աշխարհը. վեց հարիւր եօթանասուներեք հարցանելիք, թէ ո՞րն էր մոխրագոյն սաթի ընիկ աշխարհը և, թէ ո՞րպէս էին զանազան տեսակ այծաքարերի յատկութիւնքը. մի քննելի, թէ ի՞նչ էր պատճառը, որ հնդկական ովկիանոսը վեց ամիս հոսումէ դէպ ի արևելք և վեց ամիս դէպ ի արևմուտք, և երեք հարիւր եօթանասուն ութ — Գանգէսի աղբիւրների և ժամանակաւոր հեղեղների մասին։ Այս միջոցին առաջարկած էին վարդապետին, որ իւր ճանապարհի վերայ հաւաքէ ինչքան կարելի էր շատ ծանօթութիւնք Նիլոս գետի աղբիւրների և ջրհեղեղների վերայ, որ այնքան ուսումնականների միտք զբաղեցրած էին այդքան դարեր։ Բայց վարդապետը համարեց այս նիւթը հերիքապէս կշռած ու քննած, այլև իւր պաշտօնից օտար։ Այսպէս, ամեն մի խնդրի համար որ առաջարկած էր նորան արքայական ընկերութիւնը, բերումէր նա, հաշուելով մի առ մի, հինգ հինգ զանազան մեկնութիւնք, որ խնդիրների թիւը լինելով երեք հազար հինգ հարիւր, բաղկացնումէին տասն և եօթն հազար հինգ հարիւր պատասխանիք. և դիցուք թէ ամեն մինը նորա տասն և ինն ընկերներից բերէր իւր կողմից այդքան, այնուհետև արքայական ընկերութիւնը պիտոյ է ուշենար երեք հարիւր յիսուն հազար գժուարութիւնք լուծանելու, յառաջ քան թէ մի ճշմարտութիւն հաստատած էր մի ամուր հիմքի վերայ։ Այսպէս, զոցա բոլոր ժողոված բացատրութիւնքը ոչ թէ ոչ մի խնդիր չէին մնտաւորում դէպ ի մի հասարակաց կենտրոն, ինչպէս ասած կար այն պատուէրների մէջ, որ տուած էին ուսումնական ճանապարհորդներին, այլև այնպէս բաժանումէին միմեանց։ Մի այլ մտածութիւն ասելի ցաւ պատճառեց վարդապետին. այսինքն, թէպէտ նա իւր բաղմաշնատ քննութիւնների մէջ վարվել էր ամենեին այնպիսի սառնարիւն հանդարտութիւնով, որ սեփական է նորա ազգին, և մի քաղաքավարութեամբ որ յատուկ էր նորան, այնու ամենայնիւ անհաշտելի թշնամիք էր շինել իւր համար այն դիտաւորների մեծ մասը, որոնց հետ վիճաբանել էր նա։ «Ի՞նչ կը լինի — ասումէր նա — իմ հայրենակիցների խաղաղութիւնը, երբ որ ես բերած էի նոցա իմ ինն տարի փաթեթի մէջ, փոխանակ ճշմարտութեան, նորանոր նիւթեր տարակոյսերի և վիճաբանութիւնների։»

Այս մտածումը նաև նստել և դառնալ դեպ ի Անգլիա, թէպէտ մեծ դժուարութեան և տաղտկութեան մէջ էր, բայց ահա Բենարէսի բրահմանը յայտնեցին Նորան, թէ բրահմանապետը Ժագրենաթի հըրաչակաւոր մեհենի, որ կայ Օրիքսա գետի ափումը, ծովի եղբումը, Գանգէսի գետաբերաններին մինի վերայ, միայն կարող էր լուծանել Լոնդոնի արքայական ընկերութեան խնդիրը։ Սա էր արդարև առաւել հըրաչակաւոր պանդիկը կամ ուսումնապետը, որի համբաւը լսած էին. Նորանից բան հարցանելու գալիս էին Հնդկաստանի բոլոր սահմաններից և Ասիայի շատ թագաւորութիւններից։

Անգլիական վարդապետը խսկոյն ճանապարհ ընկաւ դէպ ի Կալկաթա, և գնաց յանդիման եղաւ անգլիական ընկերութեան կառավարչին, որ իւր ազգի պատուի և գիտնականութեան պարծանքի համար տուեց Նորան, Ժագրենաթ տանելու համար, մի պատգարակ ծիրանաներկ մետաքսից և ոսկեհիւս փունջերով, երկու լուծ ջուտ ծառայք, ամէն մի լուծը չորս մարդ. երկու բեռնակիր, մի ջրկիր, մի կուժ տանող, ջուրը զովացնելու համար, մի ծխափող տանող, մի հովանի ծածկոց կրող, Նորան պաշտպանելու արևի երեսից, մի ջահակիր գիշերի համար, մի փայտահատ, երկու կերակրեփնացք, երկու ուղտ և նոցա ուղեցոյցքը, վարդապետի պաշարեղէնքը և ծանրութիւնքը. երկու յառաջընթացք, որ իմաց տան, թէ ով էր ճանապարհորդը. չորս զինուորք պարսիկ ձիաների վերայ հեծած, որ ուղեկից լինին Նորան և մի դրօշակակիր իւր դրօշակովը, որի վերայ գրած էր անգլիական տերութեան նշանը։ Դու տեսանելով այս փառահեղութիւնը, պիտոյ է համարէիր վարդապետը Հնդկաստանի ընկերութեան գործակատար. բայց այն զանազանութեամբ, որ վարդապետը փոխանակ գնալու, ընծաներ ստանալու, պարտական էր ընծաներ բաժանել։ Որովհետև Հնդկաստանի մէջ մի անտվոր բան է գատարկաձեռն երևիլ արժանաւոր պաշտօնակալների առաջև, յիշեալ ընկերութեան կառավարիչը իւր ազգի ծախքով տուել էր վարդապետին մի գեղեցիկ հեռացոյց, մի պարսիկ օթոց բրահմանապետի համար. պատուական չիթեր Նորա կնոջ համար և երեք կոտոր չինական թաֆթա կարմիր, սպիտակ և դեղին գունով, որպէս զօտիացուք Նորա աշակերտների համար։ Երբ որ ընծայքը բարձած էին ուղտերի վերայ, վարդապետը ճանապարհ ընկաւ իւր պատգարագով, արքայական ընկերութեան գիրքը ձեռքին։

Ճանապարհին մտածումը նա, թէ որ խնդրի մասին արժան էր յառաջուց խօսք բանալ Ժագրենաթի բրահմանապետի հետ. արդեօք, պիտոյ էր մէջ բերել մինը այն երեք հարիւր եօթանասուն և ութից,

որ վերաբերվումէին դէպ ի Գանգէսի աղբիւրը և հեղեղները, եթէ այն խնդիրը, որ հայումէր դէպ ի Հնդկական ծովն փոփոխական և կիսամեայ ընթացքը, որ կարող էր ձեռնտու լինել յայտնագործելու աղբիւրը և ժամանակաւոր շարժողութիւնը ովկիանոսի, բոլոր երկրագնդի մէջ։ Բայց, թէպէտ այս խնդիրը անհամեմատ աւելի օգտակար էր բնագիտութեանը, քան թէ սկսեալ այնքան դարաւոր ժամանակներից բոլոր մէջ բերած խնդիրները Նիլոսի աղբիւրների և նոյն իսկ աՀելութեան մասին. բայց այդ քննելին դեռ ևս չէր գրաւել եւրոպական գիտունների ուշադրութիւնը։ Այս պատճառով նախապատիւ համարեց նա, հարցանել բրահմանապետիցը ջրհեղեղի համաշխարհականութեան մասին, որ տեղիք էր տուել այնքան վիճաբանութիւնների. կամ թէ, աւելի հեռուից սկսանելով, արդեօք ճշմարի՞տ էր թէ արեգակը շատ անգամ փոխած է իւր ընթացքը, ծագելով արևմուտքից և մտանելով արևելքումը, հետևելով Եգիպտոսեան քուրմերի աւանդութեանը, որ տալիս է մեզ Հերոդոտոս պատմաբանը. այլև աշխարհի նոյն իսկ ստեղծագործութեան մասին, որ Հնդկացոց մէջ համարվումէ շատ միլլիոնաւոր տարիներով հին։ Երբեմն երևումէր վարդապետին աւելի օգտակար հարցանել բրահմանապետից, թէ ի՞նչ տեսակ կառավարութիւն աւելի լաւ էր տալ մի ժողովրդի. այլև թէ ի՞նչ իրաւունքներ ունի մարդը, որոնց մասին ոչինչ տեղ չկայ մի օրինագիրք. բայց այս խնդիրքը նշանակած չէին վարդապետին յանձնած հարցուածների ցուցակի մէջ։

«Ի՞նչ վերայ այսր ամենայնի, — վարդապետը ասումէր ինքը իրեան, — թէ նախ և յառաջ պատշաճ էր երևումէ ինձ հարցանել Հնդկական պանդիկից, թէ ի՞նչ ճանապարհով կարելի է գտանել ճշմարտութիւնը. պատճառ, եթէ դա պիտոյ է լիներ բանականութեանով, ինչպէս մինչև այժմ աշխատել եմ որոնել զորան. Հապա, բանականութիւնը զանազան է բոլոր մարդերի մէջ. երկրորդ, պիտոյ է հարցանել նորանից, թէ ո՞ր տեղ պարտ էր որոնել ճշմարտութիւնը. պատճառ, եթէ դա գրքերի մէջ էր, սրբա ամենեքեան հակառակաբան են միմեանց, և երրորդ, եթէ արժան էր քարոզել ճշմարտութիւնը ադամորդիներին. պատճառ, երբ որ ծանուցանումես նոցա ճշմարտութիւնը, յառաջանումէ խռովութիւն քո և լսողի մէջ։ Ահա երեք նախընթաց քննելիք. որոնց վերայ մեր հոչակաւոր առաջնորդը մտածել չէ։ Եթէ ծագրենաթի բրահմանը կարող է ինձ լուծանել այդ երեք խնդիրքը, այնուհետև կ՚ունենամ ես բոլոր գիտութիւնների բանալիքը, և որ ամենից պատուական բանն է, խաղաղութեամբ կ՚ապրեմ ամենայն մարդու հետ։»

Այսպէս էր մոռածում վարդապետը ինքը իւր մէջ։ Տասնօրեայ ճանապարհից յետոյ նա հասաւ Բենգալեան ծովախորշի եզերքին. նա հանդիպեցաւ ճանապարհին մի բազմութեան որ յետ էր գալիս Ժագրենաթից, ամենևին հիացած այն մեծանուն պանդիկի իմաստութեան վերայ, որի մօտ գնացած էին բան հարցանելու։ Տասն և մի երորդ օրին, արևը բացուած, նա նկատեց Ժագրենաթի հռչակաւոր մեհեանը, կառուցած ծովի ափումը, որի վերայ, ասես թէ, թագաւորում էր նա իւր մեծամեծ կարմրաներկ պատուարներով և ճեմելիքներով, իւր գմբէթներով և փոքրիկ աշտարակներով սպիտակ մարմարիոնից։ Այս մեհեանը բարձրանում էին մշտականաչ ծառազարդ գնացքների միջնատեղումը, որ նայում էին դէպ ի այնքան ևս թագաւորութիւնք։ Այս գնացքների ամեն մինը ձևանում էր մի այլ տեսակ ծառից, զոր օրինակ ընկուզաբեր արմաւի, թեքքա, կոկոսի, մանգոյի, լատանի, քամֆորի ծառերից, բամբուսի, բադամի, սանդալի տունկերից, այլև նայում էր դէպ ի Ցէյլոն, Գոլկոնդիա, Արաբիա, Պարսկաստան, Թիբետ, Չինաստան, դէպ ի թագաւորութիւնքը Ավայի, Սիամի և դէպ ի կղզիքը Հնդկական ծովի։ Վարդապետը հասաւ մեհենին բամբուսատունկ գնացքի վերայով, որ պարզվում էր Գանգէսի և նորա բերանում եղած հրաշալի կղզիների մօտից։ Այս կոքատունը, թէև շինած լինելով դաշտի վերայ, այնքան բարձր էր, որ, եթէ նկատած էիր նորան առաւօտուն, կարելի էր հասանել նորան դէպ ի երեկոյ միայն։ Վարդապետը մեծապէս հիացաւ, մօտից քննելով նորա փառահեղութիւնը և մեծութիւնը։ Նորա բրօնզեղէն դրուները փայլատակում էին արևամուտի ճառագայթներից և արծիւները կախված էին նորա կատարի վերայ, որ անայատանում էր ամպերի մէջ. նա շրջապատած էր սպիտակ մարմարիոնի մեծ աւազաններով, որ իւրեանց պարզ ջրերի յատակումը պատկերացնում էին նորա գմբէթները, ճեմելիքը և դարպասները. բոլոր շրջակայքումը տարածվում էին արձակ գաւիթներ և այգիք, մեծամեծ շինուածներով շրջապատած, ուր ընակում էին մեհենի սպասաւոր բրահմանները։

Վարդապետի վազող ծառայքը գնացին, նորա գալուստը խնայ տալու, և իսկոյն մանուկ քրմուհիք բազմութեամբ դուրս եկան մի այգուց և հանդէպ եկան վարդապետին երգելով և կաքաւելով բոժոժաւոր թմբուկների ձայնի տակ։ Նոքա կրում էին պարանոցի վերայ ծաղկահիւս օղեր և գօտեորված էին յասմիկ ծաղիկների հիւսուածով։ Վարդապետը նոցա խնկահոտութեան, կաքաւքի և նուագածութեան մէջ շրջափակված, յառաջ գնաց մինչև դուռը մեհենի, որի ներսումը նկատեց նա, լոյս տալով ոսկեղէն և արծաթեղէն լապտերներ շատ, Ժագրենաթի արձանը, եօթներորդ մարմնաւորութիւնը Բրահմայի, աշտա-

բակաձև, առանց ոտքերի և ձեռքերի որ կարուսել էր նա, ֆամենալով փրկել աշխարհը կրելով նորան իւր վերայ։ Նորա ոտքումը տարածված էին երեսը գետնի վերայ ապաշխարողներ, որոնց մի քանիքը բարձրաձայն խոստանումէին, կուռքի ուշնախմբութեան օրին ուսերից կախ տալ իւրեանց անձը նորա սայլերի վերայ և միւսերը, իւրեանց անձը խորտակել տալ նորա անիւների տակ։ Թէպէտ տեսարանը այս ցնորամիտ կրոնապաշտների որ արձակումէին խոր հառաչանք, արտասանելով իւրեանց զարհուրելի ուխտերը, մի տեսակ սարսուռ բերեց վարդապետի վերայ, այնու ամենայնիւ սա պատրաստվումէր ներս մտանել կրոքատան մէջ, և ահա գոնապան բրահմանը, որ մի ծեր մարդ էր, դադարեցրեց նորան և հարցրեց, — թէ ի՞նչ էր նորա եկաւորութեան խորհուրդը։ Երբ որ տեղեկացաւ այդ բանին, ասաց վարդապետին, թէ միտ դնելով նորա Ֆրանկ կամ թէ պիղծ լինելուն, կարող չէր նա յանդիման լինել ոչ Ժագրնաթին և ոչ նորա քրմապետին, մինչև նա չլինէր երեք անգամ լուացված տաճարի աւազանի մէջ. այլև պիտոյ էր նորան չունենալ իւր վերայ ոչինչ հագուստ, որ պատրաստած էր մի անասունի կողոպուտից, մանաւանդ թէ կովի մաշկից, որովհետև այդ անասունին պաշտօն էին մատուցանում բրահմանքը, և ոչ խոզի մաշկից, որովհետև դա ատելի էր նոցա։ Ապա ի՞նչ պիտոյ է առնել ինձ, ասաց վարդապետը. Ես ընծայ եմ բերել բրահմանների մեծաւորի համար մի պարսիկ օթոց Անկիւրիայի այծի մաղից, Շինաստանի կերպասներ մոտաքսից։ «Ամենայն բան, պատասխանեց բրահմանը, որ ընծայ էին բերած Ժագերնաթի տաճարին, կամ թէ նորա քրմապետին, սրբած են նոյն իսկ պարգևի խորհրդով, բայց այդպէս չէ բանը ձեր հագուստների մասին։» Ուրեմն պէտք էր վարդապետին հանել իւր վերնագգեստը անգլիական ասուեղէնից, իւր կօշիկները այծի կաշուց և իւր կաստօրեան գդակը։ Ապա ծերունի բրահմանը երեք անգամ լուանալով նորան, հագցրեց նորան բամբակի կտաւ սանդալի գունով և առաջնորդեց նորան դէպ ի բրահմանապետի օթեւանը։ Վարդապետը կամենումէր ներս մտանել, արքայական ընկերութեան հարցուածների գիրքը կռան տակին, բայց նորա առաջնորդը հարցրեց նորանից, թէ ի՞նչպէս էր կազմված այդ գիրքը։ «Նա կազմած է որթոու կաշիով,» պատասխանեց վարդապետը։ «Այդ ի՞նչ բան է, ասաց նորան բրահմանը խռոված հոգով. մի թէ չասացի ձեզ յառաջուց թէ կովը պաշտումէին բրահմանքը, և դուք համարձակվումէք երևել նոցա մեծաւորի առաջև մի որթոու կաշիով կազմած գիրք ունենալով ձեր հետ։» Վարդապետը պիտոյ է յանձն առնուր դնալ և սրբել իւր անձը Գանգեսի ջրերումը, եթէ կամք չուներ կարճ կտրել այդ բոլոր դժուարութիւնքը, մի քանի

ոսկու կոտորներ տալով իւր առաջնորդողին։ Այսպէս, նա թողեց իւր հարցուածների գիրքը իւր պատգարակի մէջ և մխիթարուեցաւ իւր անձը այսպէս խօսելով. Յատկապէս ունէի ես երեք խնդիր միայն առաջարկելու այս հնդկական գլխաւորին. բաւական էր ինձ, ուսանել նորանից, թէ ի՞նչ ճանապարհով պիտոյ է որոնել ճշմարտութիւնը, ուր կարելի է գտանել նորան, և թէ պարտ էր արդեօք ասել ճշմարտութիւնը մարդերին։

Ի՞նչ բրահմանը ներս տարաւ անգլիական վարդապետը բամբակի զգեստով, գլխաբաց և ոտաբոկիկ, ծագրենաթի քրմապետի մօտ, մեծ սրահի մէջ, որ հաստատած էր սանդալի փայտի սիւների վերայ։ Նորա պատերը էին կանաչ, կովի քակորի հետ խառն շաղախով ծեփած, որ այնպէս փայլուն ու կոկած էր, որ հայելու պէս ցուցանուեցաւ մարդու պատկերը։ Յատակը ծածկած էր շատ նուրբ փսիաթներով վեց ոտնաչափ երկայն, և գրեթէ այնքան լայն։ Սրահի ներսումը կար մի բարձրավայր, արանոսեան փայտից շինած վանդակասիւներով շրջապատած, և այս բարձրավայրի վերայ հնդկական եղէգնաբուսից յօրինած և կարմիր ներկած վանդակից, կարելի էր նշմարել պանդիկների պատուելի մեծաւորը, իւր սպիտակ մօրուքով և մի բամբակի գօտի երեքպատիկ փաթեթած մէջքին, ինչպէս բրահմանների սովորութիւնն է։ Նա նստած էր մի դեղին օթոցի վերայ, ոտքերը ծալած, մի այնպիսի կատարեալ անշարժութեան մէջ, որ չէր շարժում և աչքերը անգամ։ Նորա աշակերտներից մի քանիքը հալածուեցին նորա շրջակայքի ճանճերը սրբանարգի տուտից յօրինած հողմահարներով. միւսերը ոսկի տուփերի մէջ ծխուեցին խնկահոտ հալուէ և այլ միւսերը զարկուեցին թմբուկը մի քաղցր եղանակով։ Մնացած բազմութիւնը, որոնց մէջ կային ֆակիրներ (մուրացկան արեղայք), դպիրներ, աշակերտներ նստած էին զանազան կարգերով սրահի երկու կողմերը մի խորին լռութեան մէջ, աչքերը դէպ ի գետին տնկած և ձեռքերը խաչաձև կցած կուրծքի վերայ։

Վարդապետը կամեցաւ իսկոյն յառաջ գնալ մինչև պանդիկների գլխաւորը, որ ողջոյն տայ նորան. բայց վարդապետի առաջնորդողը յետ պահեց նորան ինն փսիաթի բացակայութեանով այն տեղից, և ասաց նորան, թէ ամիրայքը կամ թէ Հնդկաստանի մեծատունքը չունէին համարձակութիւն աւելի յառաջ գնալ, թէ Հնդկաստանի իշխանաւորքը կարող էին ոտք կոխել մինչև վեց փսիաթի վերայ, թագաւորաշներ, Մոգուլի որդիքը, մինչև երեքի վերայ, և թէ Մոգուլին միայն թողած էր այդ մեծարանքը մօտ գնալ մինչև պատկառելի մեծաւորը, նորա ոտքերը համբուրելու համար։

Բայց մի քանի բրահմաններ վարդապետի բերած ընծայքը վեր կալան տարան մինչև սրահի մէջ եղած բարձրավայրի ոտքը· այնինքն հեռացոյցը, չիթերը, մետաքսի կերպասները և օթոյը, որ վարդապետի սպասաւորքը ցած էին դրել սրահի մուտքումը· և ծեր բրահմանը աչքերը ձգելով նոցա վերայ, առանց ցոյց տալու մի հաւանութեան նշան, ծառայքը վեր կալան և ներս տարան նորանց սենեակների մէջ։

Անգլիական վարդապետը կամէր ահա բանալ մի շատ գեղեցիկ խօսակցութիւն Հնդկացոց լեզուով, բայց նորա առաջնորդողը կտրեց նորա առաջը ասելով, թէ պարտ էր նորան սպասել մինչև բրահմանապետը հարցանէ նորանից։ Նա հրամայեց Անգլիացուն չոգել կրունկների վերայ, ոտերը ծալել այն աշխարհի սովորութեան պէս։ Վարդապետը տրանջումէր իւր մէջ այդքան արտաքին քաղաքավարական ձևերի վերայ· բայց որ բանի յանձնառու չէր լինելու մի մարդ, ճշմարտութիւնը գտանելու համար, եթէ եկած էր մինչև Հնդկաստան, որոնելու նորան։

Երբ որ վարդապետը նստած էր, նուագածութիւնը դադարեց և մի քանի բոպէ խորին լռութեան մէջ անցած, պանդիկների գլխաւորը հրամայեց հարցանել նորանից, թէ ի՞նչ էր նորա գալստեան պատճառը դէպ ի Ժագրենաթ։

Թէպէտ Ժագրենաթի քրմապետը Հնդկաստանի բարբառով այնպէս որոշակի խօսած էր, որ կարող էր հասկանալ նորան բազմութեան մի մասը, այնու ամենայնիւ նորա խօսքը բերեց մի փակիր և ասաց միւսին, և սա ասաց մի այլ միւսին, և միւսը հասցրեց անգլիացի վարդապետին։ Սա պատասխանեց նոյն հնդկական բարբառով, թէ նա լսելով Ժագրենաթի մեծ համբաւը, եկել է հարցանելու նորանից, թէ որ ճանապարհով կարելի էր գտանել ճշմարտութիւնը։—

Վարդապետի պատասխանը տարան հասցրեցին պանդիկների մեծաւորին նոյն միջնորդ մարդիկը, որ բերած էին հարցանելի բանը· այսպէս կատարվեցաւ և մնացած խօսակցութիւնը։

Պանդիկների ծեր գլխաւորը մի փոքր ժողովելով իւր միտքը, պատասխանեց։— «Ճշմարտութիւնը չէ կարելի այլապէս գտանել, եթէ ոչ, բրահմանների միջնորդութեամբ։» Բոլոր բազմութիւնը խկոյն գլուխ տուեց զարմանալով իւր մեծաւորի պատասխանի վերայ։

—Ո՞ր տեղ պիտոյ է որոնել ճշմարտութիւնը,—վեր կալաւ խօսքը անգլիացի վարդապետը։

«Միայն ճշմարտութիւն, — պատասխանեց ծեր հնդկացի գիտնականը, — պարունակվումէ հրա Վեդամների (սուրբ գրքերի) մէջ, որ հարիւր քսան հազար տարի յառաջ, գրած են սանսկրիտեան լեզուով, որ և հասկանալի են բրահմաններին միայն։»

Այս խօսքի վերայ, բոլոր սրահը դղրդվեցաւ ծափահարութենից։

Անգլեացի վարդապետը վերստին ստանալով իւր հոգու հանդարտութիւնը, ասաց Ժաղրենաթի քրմապետին. — Որովհետև Աստուած փակել է ճշմարտութիւնը այն գրքերի մէջ, որ կարող էին հասկանալ բրահմանները միայն, դորանից հետևումէ, որ Աստուած չէ կամեցել թոյլ տալ բաղմութեանը վերահասու լինել ճշմարտութենին. եթէ իրաւ էր այդ խօսքը, ապա Աստուած չէ արդար։

«Բրամա աստուածը այդպէս է կամեցել, — ասաց քրմապետը, — և մեք ոչինչ կարողութիւն չունինք ընդդիմանալ Բրամայի կամքին։»

Բաղմութեան ծափահարութիւնքը կրկնապատկվեցան։ Երբ որ հանդարտեցին սոքա, Անգլեացին առաջարկեց իւր երրորդ խնդիրը։— Թէ արդեօք արժան էր ասել ճշմարտութիւնը մարդերին։

«Շատ անդամ, — պատասխանեց ծերպանդիկը, — խոհեմութիւն է ծածկել նորան ամենայն մարդուց. բայց պարտականութիւն կայ ասել նորան բրահմաններին։»

— Այդ ինչ բան է, — բարկութեամբ ձայն տուեց անգլեական վարդապետը. — պիտոյ է ճշմարտութիւնը ասել բրահմաններին, որ ոչ ոքի չէին ասում նորան. արդարև, բրահմանները շատ անիրաւ մարդիկ են։

Այս խօսքերի վերայ մի մեծ խռովութիւն ընկաւ բաղմութեան մէջ, որ այն կարողանալով հանդարտ մնալ, երբ որ Աստուծուն անարդար էին ասած, չկարողացաւ անտրտունջ մնալ, երբ որ լսեց թէ բրահմաններին ասած էին անարդար։ Պանդիկները, ֆակիրները, բրահմաններները և նոցա աշակերտքը կամեցան բոլորը միասին պատճառաբանել ընդդէմ անգլեական վարդապետին. բայց Ժաղրենաթի քրմապետը դադարեցրեց աղմուկը, սաստելով իւր ստորադրեալներին և ասելով մի շատ բացայայտ ձայնով. «բրահմանքը չունին սովորութիւն վիճաբանելու եւրոպական վարդապետների հետ։» Ապա վեր կացաւ և հեռացաւ, բոլոր բաղմութիւնը բարձրաձայն հաւանութիւն տալով քրմապետին և հանդարտակապէս տրտնջելով վարդապետի վերայ, որին այն գուցէ թէ վնասած ևս կը լինէր, եթէ երկիւղ չունենար Անգլեացոց երեսից, որոնց անունը ամենակարող է Գանգէսի սահմանի մէջ։ Վարդապետը դուրս գալով սրահից, նորա միջնորդը ասաց նորան. «Մեր վերապատուելի հայրը հրամայած կը լիներ մատուցանել քեզ շարբաթ ըմեթել բանջարից և խնկահոտ բաներ, բայց դու զայրացուցիր նորան։»

— Ես ունեի տեղիք զայրանալու — պատասխանեց վարդապետը — որ յանձն էր առել այդքան անօգուտ աշխատութիւն։ Բայց ինչ գանգատանքի պատճառ ուներ քո մեծաւորը։ «Այդ ինչ բան է, — կրկնեց

միջնորդը. — դու կամենումես վիճաբանել ընդդէմ Նորան. չգիտե՞ս դու, որ նա Հնդկաստանի պատգամախօսն է, և նորա ամէն մի խօսքը ճշմարտութեան ճառագայթ է։» — Այդպիսի կարծիք երբէք կարող չէի ես ունենալ, — ասաց վարդապետը և վեր կալաւ իւր վերնաձգեստը, կօշիկները և գդակը։

Եղանակը փոթորկային էր և գիշերը մօտ. վարդապետը խնդրեց, որ օթևան տային Նորան կռբատան սենեակներից մինի մէջ, բայց անընդունելի եղաւ Նորա խնդիրը, ըստ որում Գրանկ էր։ Որովհետև արտաքին հանդէսը վաստակեցնելով Նորան, շատ ծարաւեցրել էր, նա խնդրեց ըմպելու ջուր։ Ջուր բերեցին Նորան մի կուժի մէջ, բայց երբ որ անգլիացին խմած էր, փշրեցին կուժը, որովհետև նա, որպէս Գրանկ, պղծել էր Նորան խմելով այն ամանից։ Այնուհետև վարդապետը շատ վերաւորված, գանչեց իւր սպասաւորը, որ մեհենի աստիճանների վերայ տարածված էին կրօնասիրութեան պատճառով, և մտանելով իւր պատգարակի մէջ, վերստին ճանապարհ ընկաւ բամբուսազարդ գնացքների վերայով, ծովի երկայնութեամբը։ Գիշերը հասանումէր ահա, երկինքը պատած էր ամպերով։ Ճանապարհ գնալով ասումէր նա ինքն իւրեան. — Շատ ուղիղ է հնդկական առակը, թէ ամենայն Եւրոպացի գալով Հնդկաստան, ստանումէ հմտերութիւն, եթէ չունէր դորան, և կորուսանումէ հմտերութիւնը, եթէ ունէր։ բայց իմ մասին պիտոյ է ասել, թէ ես կորուսել եմ իմս։ Այս ի՞նչ բան է. մի՞ թէ արժան չէր իմանալ, թէ որ ճանապարհով կարելի է գտանել ճշմարտութիւնը, կամ թէ ուր պիտոյ էր որոնել Նորան, և թէ պարտ էր Նորան ուսուցանել միւսերին։ Ուրեմն մարդս դատապարտված է ցոլոր երկրի վերայ, որ մնայ միշտ մոլորութիւնների և հակառակ կարծիքների մէջ։ Ահա, թէ ի՞նչ ասել է աշխատութիւն յանձն առնուլ և գալ Հնդկաստան, բրահմաններից բան հարցանելու համար։

Մինչև վարդապետը այսպէս խմաստասիրումէր իւր պատգարակի մէջ, վերայ հասաւ մինը այն փոթորիկներից որոնց ասումեն Ցիւփոն։ Հողմը գալիս էր ծովի կողմից և Գանգէսի ջրերը դէպ ի յետ դարձուցանելով զարկումէր Նորա գետաբերանի մէջ դրած կղզիներին և փշրումէր Նորանց փրփուր շինելով։ Այդ փոթորիկը գետի ափերից խլումէր և տանումէր աւազներն սիներ և մեծակայ անտառներից տերևակոյտ ամպեր, ցան և ցիր առնելով սորանց գետի և ցամաքի վերայ մինչև օդերի բարձրութիւնքը։ Երբեմն ներս էր մտանումէ նա բամբուսապատ գնացքների մէջ, և թէպէտ այս հնդկական եղէգնաբոյսքը այնքան բարձր են ինչքան շատ բարձր ծառերը, այնու ամենայնիւ հողմը

շարժումէր Նոբանց որպէս մարգագետինների խոտը։ Փոշու և տերևների պտոյտքների միջից, կարելի էր տեսանել բամբուկների երկար ու ձիգ շարքերը տարուբերվելով ամենևին, որոնց մի մասը դէպ ի աջ ու ձախ դարկվումէր գետնին, բայց միւսը դէպ ի վեր էր բարձրանում հեծեծելով։ Վարդապետի ծառայքը, երկիւղ ունենալով թէ մի գուցէ ջարդուփշուր լինին նոցանից, կամ թէ խեղդվին Գանգէսի ջրերի մէջ, որ ահա դուրս էին վաղում իւրեանց եղերասահմաններից, ճանապարհ ընտրեցին դաշտերի վերայով, իւրեանց ընթացքը ուղղելով պատահմամբ դէպ ի դրացի բարձրութիւնքը։ Բայց գիշերը վերայ հասաւ, և նոքա երեք ժամ ճանապարհ կատարեցին աղջամուղջ խաւարի մէջ, չգիտելով թէ ուր էին գնում. և ահա մի փայլատակութիւն ճեղքելով ամպերը և պայծառազարդելով հորիզոնը, ցոյց տուեց նոցա շատ հեռի, աջ ձեռքի վերայ ծագրենաթի մեհեանը և Գանգէսի կղզիքը, ալէկոծված ծովը, և ամենևին մօտ, նոցա առաջև, մի փոքրիկ ձոր և մի անտառ երկու բլուրի մէջ։ Նոքա վազեցին այն տեղ պատսպարան որոնելու, և որտեղ ահա թնդեցնումէր իւր տխուր շառաչիւնքը, երբ որ հասան նոքա ձորի մուտքին։ Սա պատած էր քայրաժայռերով և նոքա մէջ կային հին ծառեր ահագին մեծութենով։ Թէպէտ փոթորիկը թեքումէր ծառերի կատարքը, ահարկու մռնչիւններ յառաջացնելով, բայց նոցա անճռռնի հաստ բուները անսասանելի էին ինչպէս քարաժայռերը, որ շրջապատումէին նոքանց։ Այս հին անտառը երևումէր հանգստութեան օթևան, բայց դժուար էր ներս մտանել այն տեղ. եղեգնատունկը, որ գալարաձև պատել էին անտառի եղերքը, ծածկումէին ծառերի ոտքը, և պատատուկներ, որ ծառից դէպ ի ծառ ձգվելով ձևացնումէին ամենայն կողմից մի տերևաղարդ պատսպարան, ուր երևումէին մի քանի կանաչապատ քարանձաւներ, ոչինչ ելք չցուցանելով։ Բայց հնդկացի զինուորքը իւրեանց դաշնակներով ճանապարհ բացեցին, և վարդապետի բոլոր ուղեկիցքը ներս մտան այն տեղ պատգարակով։ Նոքա մտածումէին թէ այս տեղ ապահով կը լինին փոթորկի երեսից. և ահա մի տեղատարափ անձրև թափվելով յառաջացրեց նոցա շրջակայքումը հաղարաւոր հեղեղներ։ Այս դժուարութեան մէջ, ծառերի տակից, նկատեցին նոքա առաւել անտառախիտ տեղումը մի ճրագ և մի խուղ։ Ջահակիրը վազեց այն տեղ ճրագը վառելու, բայց շուտով յետ եկաւ շնչասպառ, և ձայն արձակեց. — «Հեռի՛ կացէք այս տեղից. մի Պարիա է բնակում այս տեղ»։ Իսկոյն աղաղակեց զարհուրած բազմութիւնը։ — «մի Պարիա, մի Պարիա։» Վարդապետը կարծեց թէ սա մի վայրենի գազան էր. ձեռքը տարաւ դէպ ի փիշտովները։ — Ի՞նչ բան է այդ Պարիան, հարցրեց նա իւր ջահակիր սպասաւորից։ «Սա, — պա-

տասխանեց նա, — մի անհաւատ և անօրէն մարդ է։» — Սա, յաւելացրեց զինուորների գլխաւորը, մի Հնդկացի է, այնպիսի վատանուն կարգից, որ թոյլ տուած էր սպանել դորան, եթէ մտեցած էր դա մի մարդու։ Եթէ մեք ներս գնանք դորա մօտ, կարող չենք լինն լուսնաչափ ժամանակ ոտք կոխել մի մեհենի մէջ, և մեր անձը սրբելու համար, հարկաւոր էր մեզ լինն անգամ լուացվել Գանգէսի ջրերի մէջ, և նոյնքան անգամ մի բրահմանի ձեռքով լուանալ տալ մեզ ոտքից մինչև գլուխ կովի միզով։ Բոլոր Հնդկացիք աղաղակեցին. — Մեք կամք չունենք ներս մտանել մի Պարիայի տան մէջ։ «Այդ ի՞նչ բան է, — ասաց վարդապետը իւր ջահակիր սպասաւորին. — մի՞թէ գիտես դու ստուգապէս, թէ քո հայրենակիցը Պարիա է, այսինքն անհաւատ ու անօրէն։» — Ահա, — պատասխանեց ջահակիրը, — երբ որ ես բացեցի Նորա խուզի դուռը, տեսայ, որ նա իւր շան հետ միասին հանգստացած էր մի և նոյն փսիաթի վերայ, ինչպէս իւր կինը, որին մատուցանումը նա ըմպելի մի կովի եղջիւրի մէջ։ Վարդապետի բոլոր ընկերքը կրկնեցին, — թէ մեք կամք չունենք ներս մտանել մի Պարիայի մօտ։ «Մնացէ՛ք այս տեղ, եթէ կամիք, — ասաց նոցա վարդապետը. — իմ մասին պիտոյ է ասել, թէ Հնդկաստանի բոլոր մարդակարգերը հաւասար են իմ աչքումը, եթէ հարկաւոր էր ինձ պաշտպանութիւն որոնել անձրևի երեսից։»

Այս բանը ասելով, ցած իջաւ նա իւր պատգարակից և թևի տակ դնելով Հարցուածների գիրքը, ճանապարհի պարկը իւր հետ, ձեռքումը իւր թափանչայքը և ծխափողը, մտեցաւ խուզի դռանը ամենեին մենակ։ Նա կոծեց դուռը և իսկոյն դուրս եկաւ մի մարդ քաղցր երեսով, որ բանայ դուռը և իսկոյն հեռացաւ Նորանից ասելով. «Պարոն, ես մի թշուառ Պարիա եմ, որ արժանի չէր ընդունելու ձեզ իւր օթեւանի մէջ. բայց եթէ պատշաճ էք համարում պատսպարել ձեր անձը իմ մօտ, մեծ պատիւ էր ինձ այդ։»

— Իմ եղբայր — պատասխանեց Նորան Անգլիացին, — ես յօժարակամ ընդունում եմ քո հիւրասիրութիւնը։

Այս միջոցին Պարիան դուրս գնաց մի ջահ ձեռքին, մի բեռն չոր փայտ շալակումը և մի զամբիւղ կոկոսի և բանանի պտուղներով թևի վերայ. նա մտեցաւ վարդապետի ուղեկիցներին, որ մի փոքր հեռի էին Նորանից մի ծառի տակ, և ասաց Նոցա. «Որովհետև չկամիք դուք շնորհ ցուցանել ինձ և ներս մտանել իմ օթեւանի մէջ, ահա՛ ձեզ պատուղներ իւրանց կեղևների մէջ փակած, որ կարող էք ուտել առանց պղծելու ձեր անձը, և ահա՛ ձեզ փայտ, ձեր թաց հանդերձքը չորացնելու և ձեր անձը պահպանելու համար վագրների երեսից։ Ստուած

լինի ձեր պահապանը։» Պարիան իսկոյն յետ դարձաւ դէպ ի իւր խուզը և ասաց վարդապետին. «Ով պարոն, միւսանգամ ասեմ ձեզ, ես մի անբաղդ Պարիա եմ. բայց, ինչպէս երևումի ինձ, ձեր երեսի սպիտակութենից և զգեստից, դուք Հնդկացի չէք. յոյս ունիմ որ դուք փախչելու չէք այն կերակուրներից, որ ձեր թշուառ ծառան դնելու է ձեր առաջև։» Նոյն միջոցին ցած դրեց նա մի փսիաթի վերայ զանազան ուտելի պտուղներ, զոր օրինակ, մանգօ, կաթնահիւթ խնձոր, իզնամ, գետնախնձոր մոխրի տակ եփած, խորոված բանան, և յետոյ գնաց նստեց իւր փսիաթի վերայ իւր կնոջ և երեխայի մօտ, որ քնած էր մօր կողքին օրօրոցի մէջ։

—Երջանիկ մարդ,—ասաց Նորան Անգլիացին.—դու շատ աւելի գերապատիւ մարդ ես, քան թէ ես, որովհետև դու լաւութիւն ես առնում նոցա, որ արհամարհումեն քեզ։ Եթէ դու չմեծարես ինձ քո նստելովը իմ մօտ այս փսիաթի վերայ, ապա կը մտածէի ես, թէ և ինձ համարուես դու մի չարաբարոյ մարդ. և այս բոպէիս դուրս կ'երթամ ես քո խուզից, թէև անպատճառ խեղդվէի անձրևի մէջ, կամ թէ ուտէին ինձ վագրները։

Պարիան եկաւ և նստեց մի և նոյն փսիաթի վերայ հիւրի հետ, և նորա սկսեցին միասին հաց ուտել։ Վարդապետը շատ ուրախ էր, լինելով ապահովութեան մէջ փոթորկի երեսից։ Խուզը կար անսասան. թող որ գտանվումէր նա ձորի առաւել անտառախիտ տեղումը, այլև շինած էր նա մի բանանեան թզենու տակ, որի ցած կախված ճիւղերը գետի մէջ կրկին արմատներ արձակելով, ձևացնումեն այնքան ևս կամարակապք, որ տալիս են գլխաւոր բուներին մի նոր հաստատութիւն։ Այս տերևազարդութիւնը այնքան խիտ էր, որ նորա միջից չէր անցանում և ոչ մի կաթիլ անձրև։ Եւ թէպէտ փոթորիկը հնչեցնումէր իւր սոսկալի մռնչիւնքը, կայծակի փայլատակութիւնների հետ խառն, այնու ամենայնիւ կրակարանի ծուխը ելանելով ծխանցքից և լապտերի ճրագը ամենևին անխռով էին։ Վարդապետը զարմանումէր, տեսանելով իւր շրջակայքումը Հնդկացի Պարիայի և նորա կնոջ խաղաղութիւնը։ Նոցա մանուկը սևաւ և կոկ, որպէս արևանոսի փայտ, քնած էր օրօրոցի մէջ. մայրը օրօրումէր նորան ոտքով և նոյն միջոցին զուարճանումէր, հիւսելով նորա համար մի քառամանեակ, անգօլայի կարմիր և սեաւ ողոներից։ Հայրը փոխ առ փոխ ձգումէր իւր ամուսնու և իւր զաւակի վերայ քաղցրութեամբ լցուած հայեացքներ. երկար ի՞նչ ասեմ, և շունը մինչև մասնակից էր նոցա ընտանեկան երջանկութեանը. դա մի կատուի հետ միասին հանգստացած կրակի մօտ, ժամանակ առ ժամա-

նակ կիսով չափ բացուած աչքերը և հոգոց էր հանում նայելով իւր տիրոջ վերայ։

Երբ որ Անգլեացին դադարեց հացկերութենից, Պարիան բերեց նորա համար մի կրակի ածուխ, որ վառէ նորա ծխափողը (չիբուխը) և նոյնպէս վառելով իւր սեփականը, նշանացի արեց իւր կնոջը. սա փոխարէն վերայ բերեց երկու բաժակ, կոկոսի կեղևից շինած և մի մեծ դդմասրուակ, լցուցած պունշով որ պատրաստել էր նա հացկերութեան միջոցին — ջրից, ցքիուց, կիտրոնի հիւթից և շաքարաբուսի քաղցր քամածքից։

Մինչև նոքա փոխ առ փոխ ծխում էին թաքաք և խմում էին պունշ, վարդապետը ասաց Հնդկացուն այսպէս.

—Ես համարում եմ քեզ այն շատ երջանիկ մարդերից մինը, որոնց երբ և իցէ հանդիպած էի ես, ուրեմն և շատ իմաստուններից մինը։ Թոյլ տուր ինձ մի քանի հարցուածք առաջարկել քեզ։ — Ինչպէս կարող ես դու այդպէս խաղաղ լինել մի այսպիսի ահրնկէց փոթորկի մէջ. պատճառ, ձեր օթևանը ունէր պատսպարութիւն մի ծառից և ծառերը սովոր են մեծ քարշել կայծակը։

«Կայծակը — պատասխանեց Պարիան — երբէք չէ զարկած մի բանանեան թզենու վերայ։»

—Այդ մեծ հետաքրքրութեան արժանի բան է, — կրկնեց վարդապետը։ — դորա պատճառը այն է անտարակոյս, որ այդ ծառը ունի բացասական էլեկտրականութիւն, ինչպէս արմաւենին։

«Ես չեմ հասկանում քեզ, — պատասխանեց Պարիան. — բայց իմ կինը կարծում, թէ դորա պատճառը այն էր, որ Բրամա աստուածը մի օր պատսպարութիւն է գտած նորա տերևների տակ. բայց իմ մտածութենով, Աստուած այս մրրկալից կլիմաների մէջ, տուած լինելով բանանեան թզենուն մի այդպիսի խիտ տերևաղարդութիւն և կամարակապներ, որոնց տակ կարող էին մարդիկ պաշտպանութիւն գըտանել փոթորկի երեսից, չէ թոյլ տալիս, որ հասանէր նոցա կայծակը։»

—Ձեր մտածութիւնը շատ երկիւղած է — ասաց վարդապետը. — ուրեմն այդ ձեր դէպ ի Աստուած վստահութիւնն է, որ խաղաղութիւն է պարգևում ձեզ. արդարև, խղճմտանքը աւելի հանգստացուցիչ է, քան թէ զիտութիւնը։ Ասա ինձ, խնդրեմ, որ ընկերակարգից ես դու. պատճառ, դու Հնդկացի մարդերի ոչ մի կարգիցը չես, որովհետև ոչ մի Հնդկացի չկամի հաղորդակցութիւն առնել քո հետ։ Այն ուսումնական ընկերակարգերի ցուցակի մէջ, որ հարցաքննել եմ ես ճանապարհի վերայ, չեմ գտած ես Պարիաների ընկերակարգը։ Հնդկաստանի որ սահմանումն է ձեր տաճարը։

«Ամենայն տեղ է, — պատասխանեց Պարիան. — իմ տաճարը բնութիւնն է. ես պաշտում եմ նորա հեղինակը արևաբացի միջոցին և օրհնում եմ նորան արևամուտին։ Զախորդութեան դպրոցի մէջ դաստիարակված, ոչինչ ժամանակ չեմ հրաժարվում ես օգնական լինել մի աւելի անբաղդ մարդու, քան թէ ինքս էի։ Ես աշխատում եմ երջանիկ կացուցանել իմ ամուսինը, իմ զաւակը, այո, իմ կատուն և շունը։ Ես սպասում եմ մահուն իմ կեանքի վերջումը որպէս մի քաղցր քնի, օրամուտի միջոցին։»

— Ո՞ր գրքից հանել ես դու այդ հիմնական կանոնները, — հարցրեց վարդապետը։

«Բնութեան գրքիցը, — պատասխանեց Հնդկացին. — միւս գրքի հետ ծանօթ չեմ ես։»

— Լրդաբև, — ասաց Անգլիացին — դա մի մեծ գիրք է. բայց ո՞վ է ուսուցել քեզ կարդալ այդ գիրքը։

«Զախորդութիւնը, — ասաց Պարիան. — ես պատկանելով մի ընկերութեան, որ գարշելի է համարվում իմ հայրենի աշխարհումը, չկարողանալով լինել Հնդկացի, շինել եմ իմ անձը մարդ. ընկերութեան կարգից արտաքսված, որոնել եմ ինձ պատսպարութիւն բնութեան մէջ։»

— Բայց քո առանձնութեան մէջ ունի՞ս դու գոնեայ մի գիրք, հարցրեց վարդապետը։

«Մի հատ ևս ոչ, — պատասխանեց Պարիան. — ես չգիտեմ ոչ կարդալ և ոչ գրել։»

— Դուք աղատել էք ձեր անձը շատ տարակոյսներից, — ասաց վարդապետը, տարուբերելով իւր ճակատը։ — Բայց իմ մասին պիտոյ է ասել, որ ես ուղարկված եմ Անգլիայից որ իմ հայրենիքն է, որոնելու ճշմարտութիւնը ամենայն տեսակ ազգերի մէջ, որ դորանով լուսաւորվին մարդիկ և երջանիկ լինին. բայց շատ անօգուտ որոնելուց և ծանր հակաճառութիւններից յետոյ, եզրափակեցի ես, որ խելագարութիւն էր ճշմարտութիւն որոնելը. պատճառ, թէև գտած էինք դորան, այնու ամենայնիւ չգիտենք, թէ ում կարելի էր ասել ճշմարտութիւնը, առանց թշնամիներ շինելու մեր համար։ Խոսի՞ր իմ հետ պարզմտութեամբ, մի՞ թէ այնպէս չէ քո մտածութիւնը, ինչպէս իմն։

«Եթէպէտ ես մի տգէտ մարդ եմ — ասաց Պարիան — բայց որովհետև դու ներում ես ինձ ասել իմ կարծիքը, ապա իմ մտածութիւնը այսպէս է. թէ ամենայն մարդ պարտական է որոնել ճշմարտութիւնը իւր յատուկ երջանկութեան համար. ապա թէ ոչ, նա կը լինի ագահ, փառամոլ, անապաշտ, չար և մարդակեր ևս, հետևելով այն մոլար կար-

ծիքներին կամ թէ օգտասիրութեանը այն մարդերի, որ եղած էին նորա դաստիարակիչը։»

Վարդապետը, որ միշտ մտածումէր այն երեք խնդիրների վերայ, որ առաջարկած էր Պանդիկների մեծաւորին, հիացաւ Պարիսի պատասխանի վերայ։ — Որովհետև կարծումես դու, — ասաց նորան Անգլիացին, — թէ ամենայն մարդ պարտական է որոնել ճշմարտութիւնը, ապա նախ և յառաջ ասա ինձ, թէ ինչ հնարագործութեամբ պիտոյ է գտանել նորան. պատճառ, մեր զգայարանքը խաբումեն մեզ, մեր խմացականութիւնը ևս առաւել մոլորեցնումէ մեզ։ Խմացականութիւնը գրեթէ այնքան զանազան է, ինչքան զանազան մարդիկ կային. դա, խօսելով ճշդապէս, կարծեմ, էր միայն ամեն մարդու իւր յատուկ ախորժելին ու օգտակարը. այս է ահա պատճառը, որ ճշմարտութիւնը այդքան փոփոխական է բոլոր երկրի վերայ։ Չկայ երկու կրօն, երկու ազգ, երկու տեղ, երկու գերդաստանք, ինչ եմ ասում, չկայ երկու մարդ ևս, որ մտածէին մի և նոյն կերպով։ Ապա որ զգայարանով պիտոյ է որոնել ճշմարտութիւնը, եթէ խմացականութեան զգայարանը ձեռնհաս չէ այդ բանին։

«Ես կարծումեմ, — պատասխանեց Պարիսն, — թէ այդ բանին ձեռնհաս էր մի պարզ սիրտ։ Խմացականութիւնը և հոգին կարող են խաբել իւրեանց անձը, բայց մի պարզ սիրտ կարող էր խաբվել, բայց ինքը երբէք խաբում չէ։»

— Ձեր պատասխանը շատ հիմնաւոր է, — ասաց վարդապետը. — ուրեմն պիտոյ է նախ և յառաջ որոնել ճշմարտութիւնը իւր սրտով, ապա իւր խմացականութեանով։ Մարդիկ զգումեն ամենեքեան մի և նոյն կերպով, բայց տրամաբանումեն (դատողութիւն են գործում) այլապէս, որովհետև ճշմարտութեան հիմնական կանոնները բնութեան մէջ են, բայց եղրակացութիւնքը այնպէս են, ինչպէս ազդումէր նոցա վերայ իւրեանց անձնական օգուտը։ Ուրեմն պիտոյ է պարզ սրտով որոնել ճշմարտութիւնը. պատճառ որ մի պարզ սիրտ երբէք կեղծաւորված չէ, թէ հասկանումէր այն բանը, որ չէ հասկանում և թէ հաւատումէր այն բանին, որին չէ հաւատում։ Նա գործակից չէ ոչ իւր յատուկ անձն խաբելու, և ոչ իւր ընկերը խաբելու. այսպէս, մի պարզ սիրտ ոչ թէ տկար է, ինչպէս առաւել շատերի սիրտը, որ մոլորված են իւրեանց անձնական օգտից, այլև զօրաւոր է, և այնպէս է, որպէս պատշաճ էր նորան լինել, ճշմարտութիւնը գտանելու և պահպանելու համար։

«Դու բացայայտեցիր իմ դաղափարը շատ աւելի բարւոք, քան թէ կարողացայ բացատրել ես, — խօսքը վեր կալաւ Պարիսն։ — ճիշ-

մարտութիւնը նման է երկնային ցօղին. նորան մաքուր պահպանելու համար, պիտոյ է ժողովել նորան մաքուր ամանի մէջ։»

— Շատ լաւ ասացիր դու այդ, պարոնա՛տ մարդ, — կրկնեց Անգլիացին. — բայց առաւել դժուարին մնում է մեզ քննելու։ Ո՛ւր պիտոյ է որոնել ճշմարտութիւնը։ Սրտի պարզութիւնը կախ է մեզանից, բայց ճշմարտութիւնը կախ է ուրիշներից։ Ո՛ւր կարող ենք գտանել նորան, եթէ մեր շրջակայ մարդիկը մոլորված են իւրեանց մէջ կանուխ արմատացած դատողութիւններով կամ թէ աւերված իւրեանց շահասիրութիւնով, ինչպէս նոքա էին արդարև ըստ մեծի մասին։ Ես ճանապարհորդած եմ շատ ազգերի մէջ, վեր ի վայր եմ արել նոցա դրատունքը, խօսք ու զրոյց եմ բացել նոցա վարդապետների հետ, բայց ամենայն տեղ գտել եմ միայն հակառակաբանութիւնք, տարակոյս և հազարապատիկ աւելի տարբեր կարծիքներ, քան թէ ազգերի լեզուքն էին։ Ուրեմն եթէ չէ կարելի գտանել ճշմարտութիւնը մարդկեղէն գիտութեան առաւել անուանի պահարաններումը, ապա ո՞ւր պիտոյ է գնալ որոնել նորան. ի՞նչ օգուտ, եթէ ունէիր դու մի պարզ սիրտ, այնպիսի մարդերի մէջ, որ ունէին խաբեբայ հոգի և աւերված սիրտ։

«Ճշմարտութիւնը կը լիներ ինձ կասկածելի — պատասխանեց Պարիսն, — եթէ նա հասանում էր ինձ մարդերի ձեռքով միայն. դորան չէ պիտոյ որոնել նոցա մէջ, այլ բնութեան մէջ։ Բնութիւնը աղբիւր է ամենայն բանի, որ կայ. նորա բարբառը չէ անհասկանալի և փոփոխական, ինչպէս մարդերի և նոցա գրքերի բարբառը։ Մարդիկը շինում են գրքեր, բայց բնութիւնը իրողութիւնք։ Ճշմարտութիւնը հիմնաւորել մի գրքի վերայ, այնպէս էր, որպէս թէ հիմնաւորէիր նորան մի պատկերի կամ արձանի վերայ, որ կարող էր յարգ ունենալ մի աշխարհի համար միայն, և դոքա ամենայն օր մաշվում են և եղծանվում։ Ամենայն գիրք մարդու ճարտարութեան գործ է, բայց բնութիւնը Աստուծոյ նախասահմանութիւն։»

— Շատ իրաւ է քո ասածը, — խօսքը վեր կալաւ վարդապետը. — բնութիւնը է բնական ճշմարտութիւնների աղբիւրը. բայց, օրինակի աղագաւ, ո՞ւր է աղբիւրը պատմաբանական ճշմարտութիւնների, եթէ չէր դա գրքերի մէջ։ Ապա ի՞նչպէս պիտոյ էր այսօր ստուգել մի գործի ճշմարտութիւն, որ պատահած է երկու հազար տարի յառաջ։ Այն մարդիկը որ այդ եղած գործը աւանդել են մեզ, մի՞ թէ աղատ էին կանխակալ (յառաջուց արմատացած) դատողութիւններից և կողմնապահութիւնից. մի՞ թէ ունէին դոքա մի պարզ սիրտ։ Թող այդ բանը. նոյն իսկ գրեանքը, որ մեզ աւանդումն մի անցք, մի՞ թէ կարօտ չէին

օրինակողների, տպագրողների, մեկնաբանողների, թարգմանողների, և այս բոլոր մարդիկը մի՛ թէ շատ կամ փոքր չէին եղած պատճառ խարդախելու ճշմարտութիւնը։ Ինչպէս դու շատ իրաւ ես ասում, թէ դերք ասած բանը է միայն մարդու ճարտարութիւն, ապա հարկ էր հրաժարվիլ ամենայն պատմաբանական ճշմարտութիւններից, որովհետև դա չէ կարող այլապէս հասանել մեզ, եթէ ոչ, սխալական մարդերի միջնորդութեամբ։

«Ի՞նչ հարկաւոր էր մեր երջանկութեան համար, — ասաց Հընդկացին, — անցած դնացած բաների պատմութիւնը. ինչ որ ներկայումս լինում, եղած է և յառաջ, և կը լինի յետոյ ևս։»

— Հաստ լաւ, — ասաց Անգլիացին. — բայց դու կը համաձայնիս ինձ, թէ բարոյական ճշմարտութիւնքը հարկաւոր են մարդկային ազգի երջանկութեան համար։ Ի՞նչպէս ապա պիտոյ էր գտանել նորանց բնութեան մէջ. այդ տեղ դաղանները պատերազմումն մինը միւսի հետ, սպանումն միմեանց և կլանումն մինը միւսին. նոյն իսկ տարերքը կռիւ ունին տարերքի հետ. մի՛ թէ արժան էր և մարդերին այդպէս վարվիլ միմեանց հետ։

«Դա՛ւ լեցի, — պատասխանեց բարի Հընդկացին. — ամենայն մարդ կարող է այն կանոնը, թէ ի՞նչպէս պիտոյ է վարվէր, գտանել իւր յատուկ սրտի մէջ, եթէ նորա սիրտը պարզ է. բնութիւնը գրել է նորա վերայ այս օրէնքը. — Մի՛ արէք ուրիշներին այն բանը, որ չկամիք թէ ուրիշները առնեն ձեզ։»

Ճշմարիտ է, — խօսքը վեր կալաւ վարդապետը. — բնութիւնը կարգաւորել է մարդկային ազգի պիտոյքը, միտ դնելով մեր պիտոյքներին. բայց կրօնական ճշմարտութիւնքը ի՞նչպէս պիտոյ է բացայայտ կացուցանել այդքան աւանդութիւնների և ծէսերի մէջ, որ բաժանումն ազգ ազգից։

«Այդն իսկ բնութեան մէջ, — պատասխանեց Պարսն. — եթէ մեք կը նկատենք նորան պարզ սրտով, կը տեսանենք նորա մէջ Աստուած, նորա կարողութիւնը, նորա իմաստութիւնը և բարութիւնը, և որովհետև մեք տկար, տգէտ և թշուառ արարածներ ենք, ապա հերիք էր մեզ յանձն առնուլ, պաշտել նորան, աղօթել դէպ ի նա, և ինչքան կենդանի էինք, սիրել նորան առանց վիճաբանութեան։»

— Հրաշալի՜ խօսուածք, — պատասխանեց Անգլիացին. — բայց այժմ ասա դու ինձ. երբ որ մի ճշմարտութիւն յայտնի ենք կացուցել, արժան էր դորանից մասն տալ միւսերին, թէ ոչ։ Եթէ դու կը հրա-

տարակեսս ճշմարտութիւնը, քեզ կը հալածեն անչափ շատ մարդիկ, որ ապրումն այն մոլորութենից, որ հակառակ էր դորան, հաւատացնելով, թէ սոյն այս մոլորութիւնը ճշմարտութիւն է, և թէ ամենայն բան, որ ձգտումէր կործանել Նորան, է նոյն իսկ մոլորութիւնը։

«Պիտոյ է, — պատասխանեց Պարիան, — ասել ճշմարտութիւնը այնպիսի մարդերի, որ ունին պարզ սիրտ, այսինքն բարի մարդերի որ ինդրումեն ճշմարտութիւնը, և ոչ վատթարների որ մերժումեն Նորան։ ճշմարտութիւնը մի ընտիր գոհար է, և վատթար մարդը մի կրոկոդիլոս, որ չէ կարող դնել Նորան իւր ականջներին, որովհետև չունի ականջներ. եթէ դու մի գոհար ձգես կրոկոդիլոսի առաջև, նա փոխանակ զարդարելու իւր անձը դորանով, կը կամենայ կլանել Նորան. նա կը փշրէ իւր ատամները և սրտի կատաղութենից կը յարձակվի քո վերայ։»

— Այժմ մնումէ ինձ մի բանում հակառակել քեզ, — ասաց Անգլիացին. — այսինքն, քո ասածից հետևումէր, թէ մարդիկ դատապարտված են մնալու մոլորութեան մէջ, թէպէտ և ճշմարտութիւնը հարկաւոր էր նոցա. պատճառ, որովհետև նոքա հալածումեն Նորանց որ ասումէին նոցա ճշմարտութիւնը, ապա ով էր այն վարդապետը որ համարձակվէր դաստիարակել Նորանց։

«Այն վարդապետը, — պատասխանեց Պարիան, — որ ինքն հալածելով մարդիկը ուսուցանումէ նոցա, այսինքն ձախորդութիւնը։»

— Ո՜հ, այս անգամ, ով բնութեան մարդ դու, — խօսքը վեր կալաւ Անգլիացին, — կարծումեմ որ դու սխալվումես։ Ձախորդութիւնը ձգումէ մարդիկը մնապաշտութեան մէջ. նա գետնին է զարկում մարդու սիրտը և հոգին. ինչքան որ թշուառ էին մարդիկ, նոյնքան ևս անարգամիտ, թեթևահաւատ և ստորաքարշ են։

«Դորա պատճառը այն է, — ասաց Պարիան, — որ այդ թշուառ մարդիկը դեռ ևս չէին բաւական թշուառ. ձախորդութիւնը նմանումէ թեմբերի սեաւ սարին ԼահՀորի կիզող թագաւորութեան սահմաններումը. մինչև դու վեր ես ելանում դէպ ի այդ սարը, ոչինչ չես տեսանում քո աչքի առաջև, եթէ ոչ ամուլ (անպտուղ) ապառաժներ. բայց երբ որ հասար Նորա կատարի վերայ, այնու հետև տեսանումես դու երկինքը քո գլխի վերև, և քո ոտքի տակ քաշեմիրի ծաղկափթիթ թագաւորութիւնը։»

— Գեղեցի՜կ և ստո՜յգ նմանութիւն, — խօսքը վեր կալաւ վարդապետը. — արդարև, ամենայն մարդ իւր կեանքի մէջ ունի վեր մագլցելու իւր սարը։ Քո սարը, ով առաքինի միայնակեաց, եղել է շատ դժուարելանելի, որովհետև դու վեր ես հանել քո անձը աւելի բար-

ձրը, քան թէ այն բոլոր մարդիկը, որ ծանօթ էին ինձ։ Դու պիտոյ է շատ աղէտքների տարած լինիս. բայց ասա՛ ինձ, ի՞նչ պատճառով քո ընկերակարգը այդպէս արհամարհված է Հնդկաստանի մէջ, և բրահմանների ընկերակարգը այդպէս մեծարված։ Ես դալիս եմ Ժագրենաթեան մեհենի քրմապետի մօտից, որ աւելի խոհական չէր քան թէ իւր կուռքը, որ և իւր անձը պաշտել է տալիս որպէս Աստուած։

«Դորա պատճառը, — պատասխանեց Պարիան — այն է, որ բրահմանները ասումեն, թէ ինքնանք սկզբումը գոյացած էին Բրամա աստուածի գլխից, բայց պարիայքը նորա ոտերից։ Նոքա հաստատումեն նոյնպէս, թէ Բրաման մի օր ճանապարհորդելով եկած էր ուտելի հաց խնդրելու մի Պարիայից և սա տուած էր նորան մարդու միս. սկսեալ այս աւանդութենից, նոցա դասակարգը աւելի պատուելի է, և մերը անիծած է բոլոր Հնդկաստանի մէջ։ Մեզ հրաման չկայ մօտենալու քաղաքներին և ամենայն Հնդկացի զինուոր կարող է սպանել մեզ, եթէ մեք մօտենայինք նորան այնքան, որ մեր շունչը հանդիպէր նորան.»

— Սուրբ Գէորգը վկայ է, — ասաց Անգլիացին, — որ դոքա շատ խելագար ու անիրաւ մարդիկ են. ի՞նչպէս կարողացել են բրահմանքը հաւատացնել Հնդկացոց ժողովրդին այդպիսի տխմարութիւն։

«Ուսուցանելով նոցա մանկութենից և անդադար կրկնելով նոցա այդ բանը, — պատասխանեց Պարիան, — ըստ օրում մարդիկ դաստիարակվումեն որպէս թուխթակները։»

— Ո՛վ անբաղդ դու, — ասաց Անգլիացին, — ի՞նչպէս կարողացար դու քեզ դուրս քարշել այն կեղտ անունի խորխորատից, որի մէջ ներս են ձգել քեզ, աշխարհ մնանելուդ բոպէին։ Ես ոչինչ չեմ տեսանում այնքան յուսահատեցուցիչ մի մարդու համար, ինչպէս անարգ կացուցանել մի մարդ իւր յատուկ աչքին. դա մի այնպիսի բան է, որպէս թէ խլէիր նորանից իւր առաջին մխիթարութիւնը. պատճառ, ամենից առաւել ապահովը այն մխիթարութիւնն է որ դատանում մարդ, քննելով իւր սիրտը։

«Ես նախ և յառաջ ասացի ինքս ինձ, — պատասխանեց Պարիան. — Արդեօք Բրամա աստուածի պատմութիւնը ճշմարի՞տ է. բայց ի այս բրահմաններից, որ օգուտ ունէին իւրեանց անձը երկնածին ցուցանելով, ոչ ոք չէ պատմում այդ բանը։ Անտարակոյս դոքա պատկերացուցել են իւրեանց, որպէս թէ մի Պարիա կամեցած էր շինել Բրամա աստուածը մարդակեր, որ այս պատճառանքով վռնժինդիր լինէին պարիաներից, որ չեն հաւատում այն բանին, ինչ որ նոքա պատմումեն իւրեանց սրբութեան մասին։ Այսպէս խմաստասիրելով, յետոյ ասացի

ինքս ինձ, զիցուք թէ այս անցքը ճշմարիտ էր. բայց Աստուած արդար է, և չէր կարող մի ամբողջ հասարակութիւն մահապարտ շինել նորա անդամակիցների մինի յանցանքի համար, երբ որ հասարակութիւնը մասնակից չէր այդ յանցանքին։ Բայց դնենք թէ պարիսների բոլոր հասարակութիւնը կցորդ էր այդ յանցանքին, բայց նոցա զաւակները չեն հաղորդակից դորան. Աստուած չէ պատժում զաւակների վերայ յանցուածքը իւրեանց նախահօրների, որ երբէք տեսած չէին նոքա, որպէս դարձեալ նախահօրների վերայ չէ պատժում յանցանքը նոցա թոռների, որ դեռ ևս ծնած չէին։ Բայց դնենք դարձեալ, թէ ես կցորդ էի այսօր մի աստուածուրաց Պարիսի պատժապարտութեան, բայց անցած են հազարաւոր տարիներ, առանց մասնակից լինելու նորա յանցանքին. և մի՞ թէ կարող էր մի բան ատելի լինել Աստուծուն և այնու ամենայնիւ հաստատ ու անկործան մնալ։ Եթէ լինէի ես Աստուծու անիծած, ոչինչ իմ անկածներիցս կարող չէր յառաջանալ։ Վերջապէս, ասացի ես ինքս ինձ. զուցէ ատելի եմ ես Աստուծուն, որ բարերար էր ինձ. այնու ամենայնիւ կ'աշխատեմ հաճոյանալ և նմանել նորան բարի առնելով նոցա, որ պիտոյ էր ինձ ատել։»

— Բայց — հարցրեց նորանից Անգլեացին, — ի՞նչպէս ես ճարում դու քո ապրուստը, հալածված լինելով բոլոր մարդերից։

«Այս և յառաջ, — պատասխանեց Հնդկացին, — ասացի ես ինքս ինձ. եթէ բոլորևքեան քո թշնամին են, եղի՛ր դու ինքդ քո բարեկամը. քո վիճակը չէ այնքան մեծ, որ անտանելի լինէր մարդկային կարողութեանը։ Ինչքան և մեծ լինէր անձրևը, այնու ամենայնիւ մի փոքրիկ թռչունի չէր հասանելու մի շիթից աւելի, ամեն մի անդամը։ Ես շրջումի անտառների մէջ և գետերի երկայնութեանով, որ կերակուր որոնեմ ինձ. բայց ես այն տեղ չէի գտանում առաւել յաճախ, եթէ ոչ մի քանի վայրենի պտուղներ, և երկիւղ ունեի պատառող գազաններից. այսպէս վերահասու եղայ ես, թէ բնութիւնը համարեա թէ ոչինչ չէր ստեղծել մարդու համար միայն, և թէ նա իմ կենդանութիւնը կապել է նոյն ընկերութեան հետ, որ ինձ արտաքսել էր իւր ծոցից։ Այնուհետև գնացի ես շրջելու անապատ դաշտերումը, որ շատ կան Հնդկաստանի մէջ, և այն տեղ հանդիպումի ես մի քանի ուտելի բուսականների, որ մնացած էին իւրեանց մշակողների մեռանելուց յետոյ։ Այսպէս ճանապարհորդումի ես դաւառից դաւառ, անկերկիւղ լինելով, թէ գտանելու եմ ամենայն տեղ իմ ապրուստը երկրագործութեան աւերակների մէջ։ Երբ որ գտանումի որ և իցէ օգտակար բուսականների հատիկներ, ես անկումի նորանց, ասելով. Եթէ սա չէր լինելու ինձ օգտակար, լինելու էր գոնեայ միւսերին։ Ես այն-

քան թշուառ չէի համարում իմ անձը, տեսանելով, թէ կարող եմ մի բարի գործ գործել։ Մի բանի անչափ փափագումէր սիրտս, այսինքն ներս մտանել քաղաքների մէջ։ Հեռուից հիանալով նկատումէի նոցա պարիսպները և աշտարակները, նաւերի անթիւ բազմութենով ընթացքը նոցա գետերի վերայ և կարաւաններ նոցա ճանապարհների վերայ, որ վաճառելի բաներով բեռնաւորված հասանումէին այն տեղ, հորիզոնի ամենայն կողմերից. պատերազմական մարդերի խումբեր, որ շատ հեռաւոր գաւառներից դիմումէին այն տեղ, քաղաքի պահպանութեան համար. դեսպանների հանդիսաւոր դնացքը իւրեանց բազմաթիւ ուղեկիցներով, որ հասանումէին այն տեղ օտար թագաւորութիւններից, կամ իմաց տալու ուրախ անցքեր, կամ թէ դաշնաւորութիւնք հաստատելու։ Ես այնքան, ինչքան որ թոյլ էր տուած ինձ, մօտենումէի նոցա մուտքերին, հիացմամբ նկատելով այն երկար փոշեղէն սիւները, որ այդքան եկաւորների անց ու դարձերով բարձրանումէին դէպ ի երկինք, և իմ վերայ դող էր գալիս ուրախութենից, լսելով այս խոսն ի խուռն աղմուկը, որ հնչումէ մեծամեծ քաղաքներից, որ և մօտակայ տեղերումը նմանումէ ալիքների խոխոջիւնի, որ խորտակվումէին ծովեղերեայքի վերայ։ Ես ասումէի ինքս ինձ.— Այսքան զանազան կարգի և աստիճանի մարդիկ ժողոված մի տեղ, որ մէջ տեղ էին դնում իւրեանց վաստակասիրութեան պտուղքը, իւրեանց հարստութիւնքը և ուրախութիւնը, պիտոյ է ձեւացնեն մի քաղաք, որպէս մի հրաշալի ըբնակարան։ Բայց, եթէ թոյլ տուած չէր ինձ ցերեկով մօտենալ քաղաքներին, ով էր, որ խափանումէր ինձ ներս մտանել այն տեղ գիշերով։ Մի հնչեն մուկն, որ ունէր այնքան թշնամիք, գալիս է ու գընում ուր և կամի, հովանաւորելով նորան խաւարը. նա աղքատի խուղից անցանում դէպ ի թագաւորի ապարանքը. իւր կեանքը վայելելու համար, բաւական էր նորան աստղների լոյսը. ի՜նչ հարկաւոր էր ինձ արեգակի լոյսը։ Այս խորհրդածութիւնքը գործումէի ես Դեհլի մայրաքաղաքի շրջակայքումը. դրա այնքան սիրտ տուեցին ինձ, մինչև որ ներս մտայ քաղաքի մէջ, գիշերը վերայ հասած. ես անց կացայ Լահորի դարպասից։ Նախ և յառաջ ման եկայ ես մի երկար անմարդաբնակ փողոց, որ ձեւանումէր աջ ու ձախ կողմի վերայ հողաբլուրներից, որ դեռ եղած էին կամարների վերայ, ուր դտանվումէին վաճառականների խանութքը։ Մի իջևանից դէպ ի միւս իջևան հանդիպումէին ինձ քարվանսարայք ամուր փակած, և լայնարձակ բաղարք կամ հրապարակք, ուր թագաւորումէր ամենամեծ լռութիւն։ Մօտենալով քաղաքի ներսին, անց կացայ ես իշխանների փառաւոր թաղի միջով, որ զարդարած էր ապարանքներով և այգիներով, որ ձգվումէին ջենթայի երկայնու-

թեամբ։ Այս տեղ լսելի էր նուագարանների աղմուկ, և այն Բայազիտների երգասացութիւնքը, որ կաքաւումէին գետափի մօտ, լոյս արձակելով լապտերները։ Ես մնացայ մի այդու դրան, որ վայելեմ այդ քաղցր տեսարանը, բայց ինձ մերժեցին ծառայքը, որ գաւազանի հարուածով բաց էին հալածում աղքատները։ Հեռանալով մեծատունների թաղից, անց կացայ ես իմ կրօնի մեհեանների մօտից, ուր մի մեծ բազմութիւն թշուառականների գետնի վերայ տարածված, արտասուք էին թափում։ Ես շտապով փախայ այն տեղից, տեսանելով այս յիշատակարանքը մնապաշտութեան և ահ ու դողի։ Աւելի հեռի, լսելով ճչաձայն աղաղակքը մոլլաների, որ օդերի բարձրութեանից ծանուցանումէին գիշերի ժամերը, խմացայ, որ գտանվումէի մի մահմետական մզկիթի մինարէթի ոտքում։ Սորա մօտակայքումը էին Եւրոպացոց գործատունքը իւրեանց դրօշակներով և պահապաններով, որ անդադար ձայն էին տալիս խաբեբաբար, այսինքն զգոյշ կաց։ Ապա մանեկայ ես մի մեծ շինութեան կողքերից, համարելով դորան բանտ, ըստ որում լսումէի շղթաների շառաչիւն, և հառաչանք, որ հնչումէին այն տեղից. շուտով լսեցի ես ցաւագին ձայներ մի լայնարձակ հիւանդանոցից, որից դուրս էին բերում սայլեր, մեռած մարմիններով բարձած։ Ճանապարհի վերայ հանդիպեցայ ես աւազակների, որ փախչումէին փողոցների երկայնութեանով, գիշերապահ զինուորներ, որ վազումէին նոցա քամակից. մարդկանների բազմութիւն որ, թէև զարկումէին նորանց գաւազանով, այնու ամենայնիւ ապարանքների դրան առաջև խնդրումէին սեղանների մի քանի փշրանքը, և ամենայն տեղ անառակ կանայք, որ հրապարակաբար բազումութիւն էին գործում, ապրուստ ճարելու համար։ Նոյն փողոցումը երկար թափառելուց յետոյ, հասայ ես մի շատ լայնարձակ տեղի, որ շրջապատումէ այն ամրոցը, ուր բնակումէր մեծ Մոգուլը։ Սորա չորս կողմը կապած էին թիկնապահ Բայեանների կամ նապատների վրանները և նոցա ձիաւորների իջևանքը, զանազանվելով միմեանցից իւրեանց չափերով, դրօշակներով և երկար գաւազաններով, որ վերջանումէին Տիբեթեան կովերի պոչերով։ Մի լայն խանդակ ջրով լի և թնդանօթներ եղերքումը դրած, շրջապատումէր որպէս արձակավայրը, նոյնպէս և ամրոցը։ Պահապանների կրակը լոյս տալով ինձ, նկատեցի ես ամրոցի աշտարակները, որ բարձրանումէին մինչև ամպերը և նորա պարիսպների երկայնութիւնը, որ անյայտանումէին հորիզոնի մէջ։ Ես կամեցած կը լինէի ներս մտանել այն տեղ, բայց տեսանելով մեծ խարազաններ, որ կախած էին ցիցերի վերայ, չունէի և ցանկութիւն անգամ ոտք կոխելու այն տեղ։ Ուրեմն յետ մնացի ես մի բացակայ տեղում, մի քանի սեաւ ծառաների մօտ, որ թոյլ տուե-

ցին ինձ հանդստանալ մի կրակի մոտ, որի շորս կողմով նստած էին ինքնանք։ Այն տեղից հիանալով նկատեցի ես կայսերական ապարանքը և ասացի ինքս ինձ.—Այս տեղ ահա ընակումէ մարդերի առաւել երջանիկը. սորան հնազանդվելու համար, քարոզումէին այնքան կրօնի սպասաւորներ. սորա փառքի համար, գալիս էին այնքան դեսպաններ. նորա գանձարանը լցուցանելու համար, հալումաշ էին լինում այնքան գաւառներ. նորա հեշտակեցութեան համար, ճանապարհ էին կտրում այնքան կարաւաններ և նորա ապահովութեան վերայ, հսկումէին (արթուն էին) այնքան մարդիկ լուռ ու մունջ հնազանդութեամբ (*).

«Այս խորհրդածութիւնների մէջ լսելի եղան ինձ ուրախութեան բարձր ձայներ, և ես տեսայ, որ անցանումէին ութ ուղտեր փաթեթներով ընծուորված. իմացայ, որ այդ ուղտերը կրումէին իւրեանց վերայ ապստամբ մարդերի գլուխներ, որ Մոգուլի զօրապետը ուղարկումէին նորան Դելհանի գաւառից, ուր Մոգուլի որդիներից մինը, որ նա կուսակալ էր կարգել, պատերազմ ունէր իւր հօր հետ, սկսեալ երեք տարուց։ Մի փոքր յետոյ, ձիու սանձը թոյլ տուած վերայ հասաւ մի սուրհանդակ, նստած մի տաճիկ ուղտի վերայ. նա եկած էր իմաց տալու, թէ ձեռքից գնացած է Հնդկաստանի քաղաքներից մինը, որ սահմանակից էր Պարսկաստանին, ըստ որում նորա հրամանատարների մինը անհաւատարմութեամբ մատնել էր քաղաքը Պարսից թագաւորին։ Այս սուրհանդակը հասած ու չհասած, եկաւ մի այլ սուրհանդակ Բենդալիայի կուսակալի կողմից և լուր բերեց, թէ Եւրոպացիք, որոնց շնորհել էր կայսրը վաճառականութեան օգտի համար հաշուէտուն պահել Գանգէս գետի բերանումը, շինած էին այն տեղ մի ամրոց և թէ տիրապետել էին գետի նաւարկութեանը։ Մի քանի բոպէ անցած, այս երկու սուրհանդակների գալուստից յետոյ, տեսան որ մի պաշտօնական պահապանների բազմութիւն վեր առած իւր հետ, դուրս էր գալիս ամրոցից։ Մոգուլը հրամայել էր դնալ դէպ ի իշխանների թաղը և դուրս բերել նոցա միջից երեք գլխաւոր մարդիկ, շղթաներով կապած, ըստ որում պարտաւորված էին որպէս համախոհք տերութեան թշնամիներին։ Նա հրաման էր տուել բանտ դնել մի մոլլա, որ իւր քարոզների մէջ գովասանել էր Պարսից թագաւորը և ասումէր յայտնապէս, թէ Հնդկաստանի կայսրը, անհաւատ է. պատճառ,

(*) Վաղուց անցած ու գնացած է այդ փառաւորութիւնը. վերջին մեծ Մոգուլը մեռաւ 1806 թուականին որպէս Անգլիացոց թոշակառու, և նորա զաւակները աւելի բաղդաւոր չեղան, քան թէ իւրեանց նախահայրը։

Մահմետի օրէնքի ընդդէմ, զինի էր խմում։ Վերջապէս ասումէին, թէ նա մի փոքր յառաջ պատուէր էր տուած, խեղդել և ջնմայի մէջ ձգել իւր կանանց մինը և իւր պահապանների երկուքը, որ, ինչպէս հաստատված էր վկայութեանով, մասնակից էին եղած իւր որդու ապըստամբութեանը։ Մինչև այս արտում անկքերի վերայ մոռածումի ես, ահա մի հրեղէն սիւն վեր բարձրացաւ թագաւորական կանանոցի կերակրատանից. նորա ծխաղտոյտքը խառնվումէին ամպերի հետ, և նորա կարմիր նշոյլը լուսաւորումէր ամրոցի աշտարակները, նորա խանդակները, այն հրապարակը, մզկիթների մինարէթքը, և տարածվումէր մինչև հորիզոնը։ Խակոյն մի սոսկալի ձայնով աղմուկ գործեցին զրնձի մեծ թմբուկները և խոշորաձայն փողերը. ձիաւորների գունդեր ցրուեցան քաղաքի մէջ, խորտակելով ամրոցի մոտակայ տների դռները, և խարաղանների հարուածով ստիպումէին նոցա բնակիչքը վազել դէպ ի հրայրեացքը։ Ես ինքս փոքձով իմացայ, թէ մեծամեծների մերձակայութիւնը, ինչպէս վտանգաւոր էր փոքրիկներին։ Մեծամեծքը էին որպէս կրակ, որ այրումէ նորանց ևս, որ անոյշ խունկ էին ծխում նոցա քթին, եթէ սոքա չափից դուրս մոտեցած էին նոցա։ Ես կամեցայ դուրս փախչել, բայց փակ էին բոլոր ելումուտքը։ Ինձ անկարելի եղած կը լինէր փրկել իմ անձը, եթէ Աստուծոյ նախախնամութեան կամենալովը, այն կողմը, ուր ես կանգնած էի, չլինէր թագաւորական կանանոցի կողմը։ Երբ որ ներքինիքը այս տեղից դուրս էին բերում կանայքը, խարաղանի զարկելով ստիպումէին ժողովուրդը դալ, կրակից փրկել ամրոցը, և փիլերը իւրեանց կնճիթներով զարկելով, յետ էին փախցնում մարդիկը։ Այսպէս, երբեմն հալածվելով միներից և երբեմն միւսերից, դուրս եկայ ես այս սոսկալի խառնակութեան միջից և հրայրեացքը լուսատու լինելով ինձ, հասայ ես քաղաքի նախագաւթի միւս ծայրին, ուր խուղերի տակ, մեծամեծներից հեռի, խաղաղութեամբ հանգստանումէր ժողովուրդը իւր աշխատութիւններից։ Աստ ահա կարողացայ ես շունչ առնուլ և ասացի ինքս ինձ.—Ահա տեսայ ես մի քաղաք, տեսայ ես ազգերի մեծամեծների բնակարանքը. ո՜հ, քանի՜ քանի իշխանների ստրուկք էին գոյն այդ մեծամեծքը. դոքա մինչև իւրեանց հանգստութեան միջոցին ևս ծառայ էին հեշտակեցութեան, փառասիրութեան, անապաշտութեան, ագահութեան. մինչև քանի մէջ ևս պիտոյ էր գոյա զգոյշ լինել անչափ շատ վատթար մարդերից և չարագործներից, որ շրջապատումէին նորանց որպէս գողեր, մուրացկաններ, պալատականներ, հրձիգներ. մինչև այն իւրեանց հայ կերողներից, իշխաններից և քահանաներից։ Ինչ պիտոյ է լինէր մի քաղաքի զրութիւն ցերեկով, եթէ դա այդպիսի խառնակութեան մէջ

էր գիշերով։ Մարդերի թշուառութիւնքը բաղմանումն նոցա վայելչութիւնների հետ միասին. ինչքան ողբալի էր նոյն իսկ կայսրը, որ ունէր ամենայն տեսակ վայելչութիւնք։ Նա պիտոյ է ալէկոծվէր, կասկածելով ներքին և արտաքին պատերազմից և նոյն իսկ բաներից, որ կացուցանումէին թէ նորա միսիթարութիւնը և թէ պաշտպանութիւնը, այսինքն իւր զօրապետներից, իւր պահապաններից, իւր մոլլաներից, իւր կանանցից և զաւակներից։ Նորա ամրոցի խանդակները չեն կարող խափանել մնապաշտութեան ցնորքները, և ոչ իսկ նորա վարժ փիլեսները — հալածել նորա սրտի սեաւ հոգսերը։ Բայց իմ մասին, ես ոչինչ երկիւղ չունիմ այս բոլոր բաներից. ոչ մի բռնաւոր իշխանութիւն չունի իմ մարմնի կամ հոգու վերայ. ես կարող եմ պաշտել Աստուած, առաջնորդ ընտրելով ինձ իմ խիղճը, և տեղիք չունիմ վախենալու ոչ մինից, եթէ ինքս չտանջէի իմ անձը. արդարև, մի Պարիա չէ այնքան թշուառ, ինչքան մի կայսր։ — Այս բանը ասելով, արտասուք եկաւ աչքերս, և խոնարհելով ծնկերիս վերայ, փառք տուեցի երկնային տեսչութեանը, որ ինձ համբերութիւն ուսուցանելու համար, ցոյց էր տուել ինձ աւելի անտանելի ցաւեր, քան թէ իմերս էին։

«Սկսեալ այս օրից, ես ոտք չեմ կոխած, բայց միայն Դէհլի մայրաքաղաքի նախագաւիթների մէջ։ Այս տեղից նկատումէի ես աստղները, որ լուսաւորումէին մարդերի ընակարանքը և խառնվումէին նոցա կրակների հետ, որպէս թէ երկինքը և քաղաքը կացուցանումէին մի և նոյն սահման։ Երբ որ լուսինը պատահմամբ տարածումէր իւր լոյսը այս աշխարհի վերայ, ես նկատումէի այն տեղ այլ փայլիւն, քան թէ ցերեկի գոյներն էին։ Ես հիանումէի աշտարակների, տների և ծառերի վերայ, որ արծաթապատ և քողարկված միանգամայն, պատկերանումէին հեռուից Ջեմնայի ջրերի մէջ։ Ես ազատապէս ման էի գալիս քաղաքի անապատ ու լուռ թաղերումը և ինձ երևումէր այն միջոցին, որպէս թէ քաղաքը իմն է։ Բայց մարդիկը պիտոյ է խնայէին ինձանից և մի լուռն ըրինձ անդամ. ահա թէ ի՞նչպէս ատելի էր շինել ինձ կրօնի հասկացողութիւնը։ Այսպէս, չկարողանալով ապրուստ գտանել ապրողների մէջ, գնացի կենաց որոնելու մեռածների մէջ. ես դիմեցի դէպ ի հանգստարանքը, ուտելու այն մեղրը, որ գերեզմանների վերայ նուիրած էր աղգականների երկիւղածութիւնը։ Այսպիսի տեղերումն սիրումէի ես խորհրդածութիւնք առնել և ասումէի ինքս ինձ. — Աստ է ահա խաղաղութեան քաղաքը. աստ ուրեմն չքացած են կարողութիւնը և ամբարտաւանութիւնը, ապահով են անմեղութիւնը և առաքինութիւնը. աստ մեռած էին կենաքի բոլորը ահ ու երկիւղը և նոյն իսկ մահու երկիւղը աստ է այն հիւրանոցը, ուր սայլապանը արձակել է ձիանքը, ուր և

հանդստանում Պարիան։ Այս մտածութիւնների մէջ, երևումէր ինձ մահը ցանկալի, և երկրաւոր կեանքը արհամարհելի։ Ես նկատումէի արևելքը, ինչ տեղից ամենայն բոլոր երևումէին նորանոր աստղներ. թէպէտ սոցա վախճանքը յայտնի չէին ինձ, բայց ես մտածումէի, թէ դոքա կապակից են մարդկութեան վախճանների հետ. և տարակոյս չկայ թէ բնութիւնը, որ ստորադրել է նոցա պիտառութեանը այն բաները, որ չէին տեսանում մարդիկ, պիտոյ է միմեանց հետ կապակցած լինի այն բաները, որ գրել է նոցա աչքի առաջև։ Այսպէս, իմ հոգին վերասլանումէր դէպ ի երկնակամարը, դէպ ի նորա աստղները. և երբ որ արևարացը սկսումէր իւր վարդակարմիր գունեներով ներկել նոցա քաղցրը և մշանջենաւոր լուսափայլութիւնը, այնուհետև կարծումէի ես իմ անձը երկնքի գունների մէջ։ Բայց երբ որ այս կրակները ոսկեպատումէին մեհեանների կատարքը, ես չքանումէի որպէս ստուեր, ես հեռանումէի մարդերից, որ գնամ հանդստանամ դաշտերումը մի ծառի տակ, ուր քունս տանումէր թռչունների երգասացութիւնից։»

—Ով քաղցրասիրտ և վատաբաղդ մարդ — ասաց Անգլեացին, քո արած պատմութիւնը շատ սրտառուչ (սիրտ շարժող) է. հաւատացէ՛ր ինձ, որ քաղաքների աւելի շատ մասը արժանի է տեսութեան գիշերային պահուն միայն։ Ճիշդ քննելով, բնութիւնը ունի գիշերային գեղեցկութիւններ, որ պակաս սրտառուչ չեն. մի հռչակաւոր բանաստեղծ իմ հայրենի աշխարհից (Ինդը իւր գիշերային խորհրդածութիւնների մէջ) չէ գտնվասանել ոչինչ այլ գեղեցկութիւնք բաց ի դոցանից։ Բայց ասա, ինչպէս կարողացել ես դու վայելել ցերեկի լոյսը։

«Շատ էր ահա երջանիկ լինել գիշերով, խօսքը վեր կալաւ Հընդկացին. բնութիւնը նման է մի գեղեցիկ կնոջ, որ ցերեկով ցոյց է տալիս ժողովրդին իւր սիրուն կերպարանքը միայն, բայց գիշերով բացումէ դորա գաղտնիքը իւր սիրողի առաջև։ Այնու ամենայնիւ, եթէ առանձնութիւնը ունի իւր վայելչութիւնը, նա ունի և իւր զզկանքը։ Նա երևումէ անբաղդին որպէս մի խաղաղ նաւահանգիստ, ինչ տեղից նայումէ մարդկային ախտերի անցուդարձին, բայց ինքը տեղից խախտվում չէ։ Արդարև այն միջոցին, երբ որ Նա երջանիկ էր համարում իւր անձը այս անշարժականութեան մէջ, ժամանակը գալիս է և քարշումէ իւր հետ թէ նորան, որ պատերազմումէ ընդդէմ նորա հոսանքին, և թէ նորան, որ հետևումէ նորա հոսանքին, որպէս իմաստունը, նոյնպէս և յիմարը, և երկուքը ևս հասանումեն իւրեանց օրերի վերջին, մինը չարաչար գործ դրած լինելով ժամանակը, միւսը առանց վայելած լինե-

լու Նորան։ Ես չկամէի լինել աւելի խելացի քան թէ ընութիւնը, և ոչ ես դատանել իմ երջանկութիւնը այն օրէնքներից դուրս, որ դրել է նա մարդու համար։ Ես ցանկանումէի մանաւանդ թէ մի բարեկամի, որ կարող էր մասնակից լինել իմ ուրախութեանը և ցաւին. ես երկար ժամանակ խնդրումէի Նորան իմ հաւասարակից մարդերի մէջ, բայց դոցա մէջ գտայ միայն նախանձոտ հոգիք։ Ինձ հանդիպեցաւ արդարև մի զգացող, երախտագէտ, հաւատարիմ և մոլար կարծիքներից հեռի բարեկամ, բայց դա չէր ինձ սեռակից, այլ անասուններին. դա այս շունն է որ դու տեսանումես։ Դորան անխնամ թողած էին, ամենևին մանուկ, մի փողոցի անկիւնում վայր ձգած, ուր պիտոյ է սովամահ լինէր նա։ Ցաւակցութիւնս շարժվեցաւ, ես վեր առայ և տուցի Նորան. նա սովորեց սիրել ինձ և ես շինեցի Նորան իմ անմեկնելի ընկերը։ Բայց այս բաւական չէր. ինձ պիտոյ էր մի առաւել անրաղդ բարեկամ, քան թէ մի շուն, մի այնպիսի բարեկամ, որ ծանօթ լինէր մարդկային ընկերութեան ցաւերին և օգնական լինէր ինձ համբերելու նոցա, որ չը ցանկանար աւելի բան, քան թէ ընութեան բարիքը, և որի հետ միասին կարող էի վայելել Նորանց։ Երկու նուազ տունկեր ոչ այլապէս կարող էին ընդդիմանալ փոթորկին, եթէ ոչ զուգահառնվելով միմեանց հետ։ Նախանձամութիւնը կատարեց իմ փափագը, պարգևելով ինձ մի բարի կին։ Իմ վատաբաղդութեան աղբիւրի մօտ գտայ ես և իմ բաղդաւորութեան աղբիւրը։ Մի գիշեր, երբ բրահմանների դերեզմանատունն էի, լուսինը փայլելով ցոյց տուց ինձ մի մանուկ բրահմանուհի, կիսով չափ ծածկած իւր գեղեն քողով։ Տեսանելով մի կին իմ բանաւորների ցեղից, յետ քարշվեցայ ես ահ ու դողով, բայց ցաւակցութիւնը մօտեցրեց ինձ Նորան, ըստ որում տեսանումէի այն երկիւղած հոգաբարձութիւնը որով զբաղված էր նա. այդ բրահմանուհին իւր աղջի սովորութեան պէս մեղ էր դնում մի հողաթումբի վերայ որի տակ ամփոփած էր Նորա հանգուցեալ մայրը, և ծխումէր այն տեղ խունկ, իւր մօր հոգին կարդալու համար։ Արտասուք եկան իմ աչքերը, տեսանելով մի անձն, որ աւելի վատաբաղդ էր քան թէ ես։ Ես ասացի ինքս ինձ. «Հ. ես բնաւորված եմ վատահամբաւութեան կապանքով, բայց դու փառքի շղթաներովը. գոնեայ ես ապրումեմ հանգիստ իմ անդունդքի տակումը, բայց դու միշտ դողումես քո անդունդքի ափումը կանգնած։ Նոյն վախճանը, որ հասել է քո մօրը, պիտոյ է մի օր հասանէ և քեզ։ Դու ստացել ես մի կեանք միայն, բայց պիտոյ է մեռանիս երկուապատիկ մահով. եթէ քո յատուկ մահով չէիր դեռ ես իջած դէպ ի գերեզման, քո ամուսնու մահը կենդանոյն քարշելու է քեզ դէպ ի գերեզման։ Ես արտասուեցի և նա արտասուեց.

մեր աչքերը ողողվելով արտասուքի մէջ հանդիպեցին միմեանց և խոսեցին միմեանց հետ, ինչպէս լինում էր միմեանց պատահած վատաբաղդների մէջ։ Նա դարձուց իւր հայեացքը և փաթաթվեցաւ իւր վերարկուի մէջ և հեռացաւ։ Գալոց գիշերին միւսանգամ գնացի այն տեղ. այս անգամ նա դրել էր իւր մօր գերեզմանի վերայ աւելի առատ կերակուր, մտածելով, թէ ես կարօտ էի դորան. և որովհետև բրահմանները շատ անգամ թունաւորումն իւրեանց ննջեցեալներին նուիրած կերակուրը, որ Պարիայքը չմօտենային նորան. այս վտանգից ինձ ազատով կացուցանելու համար, բերել էր նա այն տեղ պտուղներ միայն։ Սիրտս շարժվեցաւ այս մարդասիրութեան նշանից, և ես կամենալով ցոյց տալ թէ յարգումէի նորա երևելական նուէրքը, փոխանակ վեր կալնելու նորա բերած պտուղները, յաւելացրեցի նոցա վերայ ծաղիկներ. սոքա խաշխաշի ծաղիկներ էին որոնց խորհուրդը այն էր, թէ ես մահանկից եմ նորա ցաւին։ Միւս գիշերին ուրախացայ ես, տեսանելով որ նա ընդունել է իմ նուէրքը. խաշխաշին ջուր էր տուած, և բրահմանուհին մի այլ սակառ մրգերով լցրած դրել էր գերեզմանիցը մի փոքր հեռու։ Ցաւակցութիւնը և երախտագիտութիւնը քաջալերեցին ինձ։ Համարձակվելով խօսել նորա հետ որպէս Պարիա, վստահացայ ես որպէս մարդ բացայայտել նորան այն բոլոր սէրը և բարեացակամութիւնը, որ նա զարթուցել էր իմ սրտի մէջ։ Հետևելով Հընդկացոց սովորութեանը, իմ միտքը հասկացնելու համար, գործ դրեցի ես ծաղիկների լեզուախօսութիւնը. ես յաւելացրեցի խաշխաշի վերայ դեղնուցածաղիկը։ Մի գիշեր յետոյ տեսայ ես, որ իմ խաշխաշին և դեղնուցածաղիկին ջուր էր տուած։ Հետևեալ գիշերին ես աւելի վստահացայ ես, յաւելացնելով խաշխաշի և դեղնուցածաղկի վերայ մի փուլսափաթի ծաղիկ, որ մաշկագործները պէտք են ածում կաշին սևաներկելու համար, որպէս մի ցածուն և անբաղդ սիրու օրինակ։ Վաղուը արևարացին, շտապեցի ես դէպի գերեզմանը, բայց փուլսափաթը չորացած գտայ, որովհետև այն կինը ջուր չէր տուել սորան։ Միւս գիշերին, դողդողալով դրեցի ես այն տեղ մի կակաչ, որի կարմիր թերթերը և սեաւ սիրտը բացայայտումէին այն կրակը որի մէջ այրվումէի ես. վաղուը տեսայ ես իմ կակաչը փոխադրած այն տեղ, ուր փուլսափաթն էր։ Ես գետնին զարկվեցայ սրտցաւութենից. բայց միւս օրին տարայ այն տեղ մի վարդի կոկոն իւր փշերովը միասին, որպէս նշան իմ երկիւղածութեան յոյսերի։ Բայց ինչպէս յուսահատվեցայ ես, երբ որ արևաբացին տեսայ, որ իմ վարդի կոկոնը հեռացրած էր գերեզմանի մօտից։ Կարծումէի, թէ կը խելացնորվեմ, բայց մտքումս գրեցի որ, ինչ և պատահելու էր ինձ, խօսք բանամ բրահմանի կնոջ հետ։ Գալոց գիշե-

բրնձի արտերի մէջ։ Վերջապէս հասանք մեք այս սահմանին, որ պատերազմի երեսից անմարդացած է։ Ես ներս մտայ այս անտառի խորքը, ուր շինեցի այս խուղը և տնկեցի այս փոքրիկ այգին. մեք ապրումենք այս տեղ շատ երջանիկ. ես պաշտումեմ իմ կինը որպէս մի արեգակ և սիրումեմ նորան որպէս մի լուսին։ Այս առանձնութեան մէջ, մեք ամենևին լաւական ենք միմեանց համար. մեզ արհամարհումէ աշխարհը, բայց որովհետև մեք սիրումենք միմեանց, այն գովասանութիւնը, որ ես տալիս եմ իմ կնոջը կամ թէ ստանումեմ նորանից, աւելի քաղցր է մեզ, քան թէ մի ժողովրդի հաւանութիւն։ Այս խօսքերը ասելով, աչքը ձգեց իւր երեխայի վերայ օրօրոցի մէջ, և իւր կնոջ վերայ, որ ուրախութեան արտասուք էր թափում։

Անգլեացի վարդապետը սրբելով արտասուքը իւր աչքերից, ասաց հիւրասէր Պարիսային.

— Արդարև, այն բանը որ մեծարումեն մարդիկ, շատ անգամ արժանի է նոցա արհամարհութեանը. և ինչ որ նոքա արհամարհումէին, շատ անգամ արժանի է նոցա մեծարանքին։ Բայց Աստուած արդար է. դու հաղար անգամ աւելի երջանիկ ես քո անյայտութեան մէջ, քան թէ ծաղրենաթեան բրահմանների գլխաւորը իւր բոլոր փառքի ու փարթամութեան մէջ։ Դա և նորա ընկերակարգը կարող էին մի օր անբաղդանալ աշխարհի փոփոխականութենով, բրահմանների թիկունքի վերայ են ընկնում, ըստ մեծի մասին, այն քաղաքական և արտաքին պատերազմների պատուհասները, որ այդքան դարեր աւերումեն ահա ձեր գեղեցիկ աշխարհը. նոքա են, որոնց անունով, ըստ որում դոքա ժողովրդի կարծիքի վերայ ազդեցութիւն ունէին, շատ անգամ հրաման էր արձակվում, երբ որ հարկաւոր էր հարկ ժողովել։ Բայց դոցա ամենաարտում թշուառութիւնը այն է, որ ինքեանք զոհ էին լինում իւրեանց տարդի կրօնին։ Միշտ և հանապազ քարոզելով մոլորութիւնք, ինքեանք ևս ապականվել են նոցանով մինչև այն աստիճան, որ կորուսել էին ճշմարտութեան, արդարութեան և մարդկութեան, երկիւղածութեան իմացութիւնը։ Նոքա կապած ու կաշկանդած են նոյն մնապաշտութեան շղթաներով, որոնցով կամենումեն կալանաւորել իւրեանց հայրենակիցքը. նոքա հարկադրված են ամենայն բոպէ լուսացվել, մաքրվել և հեռի մնալ շատ ու շատ անմեղ ուրախութիւններից. վերջապէս, մի բան, որ չէ կարելի բերանից հանել առանց զարհուրելու, դոքա իւրեանց բարբարոս դաւանութիւնների պատճառով, ականատես են իւրեանց ազգականների, մօրերի, քուրերի և իւրեանց յատուկ աղջիկների կենդանի կենդանի այրվելուն։ Ահա այսպէս պատ-

բրնձի արտերի մէջ։ Վերջապէս հասանք մեք այս սահմանին, որ պատերազմի երեսից անմարդացած է։ Ես ներս մտայ այս անտառի խորքը, ուր շինեցի այս խուղը և տնկեցի այս փոքրիկ այգին. մեք ապրումենք այս տեղ շատ երջանիկ. ես պաշտումեմ իմ կինը որպէս մի արեգակ և սիրումեմ նորան որպէս մի լուսին։ Այս առանձնութեան մէջ, մեք ամենեին բաւական ենք միմեանց համար. մեզ արհամարհումէ աշխարհը, բայց որովհետև մեք սիրումենք միմեանց, այն գովասանութիւնը, որ ես տալիս եմ իմ կնոջը կամ թէ ստանումեմ նորանից, աւելի քաղցր է մեզ, քան թէ մի ժողովրդի հաւանութիւն։ Այս խօսքերը ասելով, աչքը ձգեց իւր երեխայի վերայ օրօրոցի մէջ, և իւր կնոջ վերայ, որ ուրախութեան արտասուք էր թափում։

Անգլիացի վարդապետը սրբելով արտասուքը իւր աչքերից, ասաց հիւրասէր Պարիային.

— Արդարև, այն բանը որ մեծարումեն մարդիկ, շատ անգամ արժանի է նոցա արհամարհութեանը. և ինչ որ նոքա արհամարհումէին, շատ անգամ արժանի է նոցա մեծարանքին։ Բայց Աստուած արդար է. դու հաւատ անգամ աւելի երջանիկ ես քո անյայտութեան մէջ, քան թէ ժապրենաթեան բրահմանների գլխաւորը իւր բոլոր փառքի ու փարթամութեան մէջ։ Դա և նորա ընկերակարգը կարող էին մի օր անբաղդանալ աշխարհի փոփոխականութենով, բրահմանների թիկունքի վերայ են ընկնում, ըստ մեծի մասին, այն քաղաքական և արտաքին պատերազմների պատուհասները, որ այդքան դարեր աւերումեն ահա ձեր գեղեցիկ աշխարհը. նոքա են, որոնց անունով, ըստ որում դոքա ժողովրդի կարծիքի վերայ ազդեցութիւն ունէին, շատ անգամ հրաման էր արձակվում, երբ որ հարկաւոր էր հարկ ժողովել։ Բայց դոցա ամենատրտում թշուառութիւնը այն է, որ ինքեանք զոհ էին լինում իւրեանց տմարդի կրօնին։ Միշտ և հանապազ քարոզելով մոլորութիւնք, ինքեանք ես ապականվել են նոցանով մինչև այն աստիճան, որ կորուսել էին ճշմարտութեան, արդարութեան և մարդկութեան, երկիւղածութեան իմացութիւնքը։ Նոքա կապած ու կաշկանդած են նոյն մնապաշտութեան շղթաներով, որոնցով կամենումեն կալանաւորել իւրեանց հայրենակիցքը. նոքա հարկադրված են ամենայն բոպէ լուսցվել, մաքրվել և հեռի մնալ շատ ու շատ անմեղ ուրախութիւններից. վերջապէս, մի բան, որ չէ կարելի բերանից հանել առանց զարհուրելու, դոքա իւրեանց բարբարոս դաւանութիւնների պատճառով, ականատես են իւրեանց ազգականների, մօրերի, քուրերի և իւրեանց յատուկ աղջիկների կենդանի կենդանի այրվելուն։ Ահա այսպէս պատ-

ժուամ Նորանց բնութիւնը, որի օրէնքը ոտնակոխ են արել նոքա։ Քո մասին պիտոյ է ասել, թէ քեզ թոյլ տուած է լինել պարզամիտ, բարի, արդար, հիւրասէր, երկիւղած. և դու քո ցած վիճակովը յատկապէս աղատ ես բաղդի հարուածներից և հասարակաց կարծիքի վնասներից։

Այս խօսակցութենից յետոյ, Պարիան հրաժարվեցաւ հիւրիցը, որ թողու սորան հանգստանալ, և իւր կին ու երեխան օրօրոցի հետ միասին հեռացան դէպ ի մի փոքրիկ մօտակայ անկիւն։

Միւս օրին արևը բացվելով, վարդապետը զարթեց այն թռչունների երգասացութենից, որ բունաւորված էին հնդկական թզենու ճիւղերի մէջ, և Պարիայի և Նորա կնոջ ձայնից, որ միասին կատարուէին իւրեանց առաւօտեան աղօթքը։ Նա վեր կացաւ անկողնիցը և շատ ցաւեցաւ, երբ որ Պարիան և Նորա կինը բացելով դուռը, Նորան ողջունելու համար, տեսաւ հիւրը, որ այս խուղի մէջ չկար ոչինչ այլ անկողին բաց ի ամուսնական անկողնից, և թէ տանուտէրը և տանտիկինը բոլոր գիշերը անքուն էին մնացած, իւրեանց ննջարանը տալով հիւրին։ Երբ որ սոքա ողջունած էին իւրեանց հիւրը, շտապեցին պատրաստել Նորա համար նախաճաշիկ։ Այս միջոցին գնաց Անգլեացին զբօսանք առնելու այգու մէջ. նա տեսաւ այս տեղ, որ այգին, ինչպէս և խուղը, շրջապատած էր հնդկական թզենու կամարներով, որ այնպէս զուգահառնված էին միմեանց հետ, որ կացուցանուէին մի ցանկ անթափանցելի և աչքի համար։ Նա նկատուէր միայն Նորա տերևազարդութենից դէպ ի վեր առաւօտեան լուսից կարմրափայլ կատարները ժայռերի, որ չորս կողմից ամենևին շրջապատուէին ձորը. այդ ժայռերից բղխուէր մի փոքրիկ աղբիւր, ջրելով այս այգին, որ տնկած էր մի ախորժելի խառնակութեամբ։ Սորա մէջ կային ցանուցիր մանգոստանի ծառեր, նարնջենիք, կոկոսենիք, լիչիք (սապոնատուենք) դուրիոնք, մանդոյի և հացի ծառեր, բանանի ծառեր և այլ տունկեր, ամենը բեռնաւորված կամ ծաղիկներով կամ թէ պտուղներով։ Նոցա բունքը ևս ծաղկապատ ու պտղապարդ էին. բեթելի խոտը օձապտոյտ ոլորվուէր ընկուզաբեր արմաւենու վերայ և պղպեղի ծառը պարզվուէր շաքարատունկի մօտից։ Օդը լցված էր խնկահոտութենով. թէպէտ ծառերի մեծ մասը գտանվուէին ստուերի տակ, բայց արևաբաշի առաջին ճառագայթները ահա լուսաւորուէին նոցա կատարը. նոցա վերայ թռթռուէին կոլիբրի թռչնիկներ փայլատակելով որպէս յակինթ և տպաղիոն գոհարներ, և նոյն միջոցին Բենգալի և Սանտա-Յուլի անուանով թռչուններ կամ թէ հինդհարիբաձայն թևաւորք, խոնաւ տերևապա-

տի տակ ծածկած, իւրեանց բուներին մէջ արձակումէին քաղցր նուագածութիւնք։ Վարդապետը զբօսնումէր այս զմայլեցուցիչ հովանաւորութիւնների տակ, անփոյթ արած գիտական և պատուասիրական մտածութիւնքը. և ահա Պարիան եկաւ հրաւիրելու նորան նախաճաշիկ առնելու։

Ձեր այդին պատուական է, — ասաց Անգլեացին, — ես չեմ գտանում ոչինչ պակասութիւն նորա մէջ, միայն թէ անչափ փոքր է նա։ Եթէ քո տեղումը լինէի, կը յաւելացնէի նորա մէջ և մի դալարավայր, և կ'ընդարձակէի նորան մինչև անտառի ներսը։

«Պարոն, — պատասխանեց նորան Պարիան, — ինչքան փոքր տեղ է բռնում մարդը, այնքան և աւելի ապահով է նա. մի տերև բաւական էր ճանճիկ թռչունի բունի համար։»

Այսպէս խօսելով ներս մտան նոքա խուղի մէջ, ուր գտան նոքա Պարիայի կինը մի անկիւնում նստած, որ դիեցնումէր (ծիծ էր տալիս) իւր մանուկին. դա պատրաստել էր և նախաճաշիկը։ Վարդապետը մի լուռ հացկերութենից յետոյ կամենալով պատրաստվել ճանապարհ ընկնելու, Հնդկացին ասաց նորան.

«Պատուելի հիւր, դաշտերը դեռ ևս պատած են անցած գիշերի անձրևի հեղեղներով, ճանապարհները անպիտան են. անցուցէք այս օրը մեր հետ։»

— Կարող չեմ, — ասաց վարդապետը, — ես շատ սպասաւորք ունիմ իմ հետ։

«Այս տեսանումեմ այդ բանը, — ասաց Պարիան. — դու շտապումես թողուլ բրահմանների աշխարհը, որ վերադառնաս դէպ ի քրիստոնեաների երկիրը, որոնց կրօնը թոյլ է տալիս բոլոր մարդերին ապրել միմեանց հետ եղբայրապէս։»

Վարդապետը վեր կացաւ, յոգոց հանելով։ Այնուհետև Պարիան նշանացի արեց իւր կնոջը, որ աչքերը դէպ ի ցած թողած և առանց խօսելու, մատուց վարդապետին մի կողով, ծաղիկներով և մրգերով լցուցած։ Պարիան իւր կնոջ փոխանակ վեր կալնելով խօսքը, ասաց Անգլեացուն.

«Պարոն, ներեցէք մեր չբաւորութեանը. մեք, մեր հիւրքը խընկաւորելու համար, ինչպէս սովորութիւն է Հնդկաստանի մէջ, չունինք ոչ մոխրաղոյն սաթ, ոչ հալաւ. մեք ունինք միայն ծաղիկներ և մրգեր, բայց յուսով եմ ես, որ դուք արհամարհելու չէք այս փոքրիկ

կողմը, որ իւր յատուկ ձեռքով լցուցել է իմ կինը։ Նորա մէջ չկայ ոչ խաշխաշ, ոչ դեղնուցածաղիկ, այլ յասմիկ, մուգրի և նարինջներ, որ իւրեանց երկարատև անուշահոտութեան պատճառով նշան են մեր բարեկամութեանը, որի յիշատակը անջնջելի մնալու է մեր սրտի մէջ, թէև մեք միւս ևս չտեսանէինք միմեանց։»

— Վարդապետը վեր առաւ կողմը և ասաց.— Ես չեմ կարող ըստ բաւականին շնորհակալ լինել ձեզ, ձեր հիւրասիրութեան համար, և յայտնել ձեզ այն մեծարանքը, որ զգումեմ դէպ ի ձեզ. ընդունեցէք այս ոսկի ժամացոյցը. դորան շինել է Գոհամ, առաւել հռչակաւոր ժամագործը Լոնդոնի. այդ ժամացոյցը լարվումէ տարին մի անգամ։

Պարիան պատասխանեց Նորան. «Պարոն, մեք կարօտ չենք ժամացուցի. մեք ունինք մի մշտագնաց ժամացոյց, որ արևն է։»

— Իմ ժամացոյցս զարկումէ և ժամերը,— յաւելացրեց վարդապետը։

«Ձեր թռչունները երգումեն,» — ասաց Պարիան։

— Գոնեայ, — ասաց վարդապետը, — ընդունեցէք այս մարջանի շարածքը. դորանից կարմիր վզկապեր կը հիւսէք ձեր կնոջ և զաւակի համար։

»Ոչ իմ կնոջը և ոչ իմ մանուկին,— ասաց Հնդկացին, — երբէք պակասելու էին կարմիր վզկապեր, ինչքան որ մեր այգին կը բուսուցանէ անգօլայի ոլորներ։»

— Ուրեմն ընդունի՛ր — ասաց վարդապետը— այս երկու փիշտովները, ձեզ աւազակների երեսից պահպանելու համար, ձեր առանձնութեան մէջ։

«Ողբաւորութիւնը — ասաց Պարիան — է մի պատսպարան, որ հեռացնումէ մեզանից աւազակները. այն արծաթը, որով պատած են ձեր զէնքը, բաւական էր մօտ բերելու Նորանց։ Անունով Աստուծոյ, որ մեր պաշտպանն է, որ և կը վարձատրէ մեզ, աղաչումեմ ձեզ, որ չխլէք մեր հիւրասիրութեան վարձը։»

— Այնու ամենայնիւ — ասաց Անգլիացին, — ցանկալի էր ինձ, որ դուք պահէիք ձեր մօտ մի յիշատակ ինձանից։

«Բարի՛ է, իմ հիւր, — պատասխանեց Պարիան, — որովհետև այդպէս է ձեր ցանկութիւնը, ապա թոյլ տուեցէք ինձ առաջարկել ձեզ մի փոխանակութիւն. տուեցէք ինձ ձեր ծխափողը և վեր առէք իմը. երբ որ ես կը ծխեմ ձեր ծխափողից, կը մտաբերեմ, որ մի եւրո-

պական պանդիկ, անարժան չէ համարել ընդունել մի չքաւոր Պարիսի հիւրասիրութիւն։»

Վարդապետը իսկոյն մատուց Պարիսին իւր ծխափողը անգլիական կաշուց, որի բերանակողմը շինած էր դեղին սամթից, և փոխանակ դորան ստացաւ Պարիսի ծխափողը, որի անցքը շինած էր բամբուսից և կրակատեղը թրծած հողից։

Հիւրընկալեց Անգլիացին իւր սպասաւորքը, որ ամենեքեան մրսած էին բացօթեայ գիշերի խոնաւութենից, և գրկախառնելով Պարիսն, ներս մտաւ իւր պատգարակի մէջ։ Պարիսի կինը որ արտասվումէր, մնաց խուղի սեամի վերայ, իւր մանուկը գրկին. բայց նորա ամուսինը ճանապարհ ձգեց վարդապետը մինչև անտառի եզերքը, հազար օրհնութիւն տալով նորան.

«Թող Աստուած լինի քո վարձը — ասումէր նա — քո մարդասիրութեան համար դէպ ի անբաղդները. թող զոհ լինիմ Աստուծուն քո համար. թող նա ողջ և առողջ հասուցանէ քեզ Անգլիա, այդ աշխարհը գիտուն և բարեացակամ մարդերի, որ ճանապարհորդելով բոլոր աշխարհի մէջ խնդրումեն ճշմարտութիւնը, մարդերի երջանկութեան համար։»

Վարդապետը պատասխանեց նորան.—Ես մեն եմ եկած երկրագնդի կիսամասնումը, և ամենայն տեղ տեսած եմ միայն մոլորութիւն և երկպառակութիւն. ես չգտայ ճշմարտութիւնը, եթէ ոչ, այս խուղի մէջ։

Այս խօսակցութենից յետոյ նոքա հրաժարվեցան միմեանցից, արտասուք թափելով։ Վարդապետը բաւական շատ հեռացած էր ահա, բայց պատուելի Պարիսն կանգնած էր դեռ ես մի ծառի ոտքում և ձեռքով նշանացի էր առնում նորան, «բարեաւ մնա» ասելով։

Վարդապետը վերադառնալով դէպ ի Կալկաթա, նաւ նստեց և գնաց դէպ ի Շանդերնագօր. այս տեղից պարսկց առագաստը դէպ ի Անգլիա։ Եկած լինելով Լոնդոն, իւր գրչագիրների ինքնուն փաթեթքը յանձնեց արքայական ընկերութեան առաջնորդին, որ ամփոփեց նորանց Բրիտանական մուզէոնի մէջ, ուր գիտնականքը և օրագիր հրատարակողները մինչև այսօր պարապած են թարգմանելով նորանց, գովասանելով նոցա յարգը, քննողական ճառեր գրելով և թեթեւանիւթ զրոյցներ առնելով նոցա վերայ։

Բայց վարդապետի կողմից այսքան իմացիր. նա պահեց իւր համար Պարիայի երեք պատասխանքը ճշմարտութեան մասին։ Շատ անգամ ծխուումէր նա Պարիայի ծխափողից. երբ որ հարցանուումէին նորանից թէ ի՞նչ աւելի օգտակար բան ուսած էր նա այդքան շատ ճանապարհորդելով, պատասխանուումէր նա այսպէս.

«Պիտոյ է որոնել ճշմարտութիւնը պարզ սրտով. չէ կարելի գտանել նորան, եթէ ոչ ընութեան մէջ. չէ պիտոյ ասել ճշմարտութիւնը, եթէ ոչ, արդարամիտ մարդերի։» Սոցա վերայ յաւելացնուումէր և այս. «Մարդը չէ երջանիկ այլապէս, եթէ ոչ, ունենալով մի բարի կին։»

ՎԵՐՋ։

ՍԽԱԼԱՏՊՈՒԹԻՒՆՔ.

Երես.	Տող.	Տպած է.	Կարդա.
21	5	Հոգոց Հանեց.	Յոգոց Հանեց.
28	34	Հրաշեկ.	Հրաշէկ.
40	19	Հոգոց Հանեց.	Յոգոց Հանեց.
41	11	որոշել.	որոշելի.
45	34	ի Հարկ է.	ի Հարկէ
47	28	երբ.	երբ.
73	9	Հոգոց Հանեց.	Յոգոց Հանեց.
139	22	զարկելով.	զարկերով.

716

150

2013